

Քաղաք

ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ԼՐ. ՏԱՐԻ 3-4 ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ 1993 ՊԵՏՐՈՒՔ

Վ. ԹԵՐԵԱՆ

Ա Ս Ք Ե Ր Կ Ի Ի Ղ Ի

-ՄՈՒՏՔ-

Մարմնիս համը քարին մէջ
 քաղամբիս վրայ աղը կակուղ
 կարմիր ցուլեր թափնամուռն
 և պատերը որ անընտել տոկացիմ
 մտամ մատներ քարիմ ներքոյ դողիմ մէջ
 և դողելը հեշտախոտով կանգնեցամ
 դողը մտաւ ձեռքի ամսկիցը շարժման մէջ
 դողը դարձաւ գիծ և նրանց
 ամասնի պատում է սա
 ուր յունական քատրոն չկայ
 համակերպում՝ սարսափի հետ

2000

անգիտակցում ժամանակի
այս պատերը չփլամ

Ասք լուրիսամ

Եւ մեծ հովր որ չլոց արձագանգով որոտաբեր
ու խոյամբով սահմանազանց
Յարամուռն ժամանակը ծերուկ ծերուկ հազաց արդէմ
ու մոխրագոյն ամձրեւի զաւագանով տկտկացուց
լեռնալանջի դոճերը փակ
Եւ արեւը՝ Ոարմջագոյն հեղուկ լեցուած թմրած ուղեղ
ծովու արծաթ շեղրերում վրայ վիրահատում
Երկար պոչով կիսատ պոչով իմբնաշարժներ
Ճուկերու երամի պէս փայտած յոյսէն
նողղուած մութին
ամժամանակ մայտառիպեամ ապասպասող
Եւ կիշէններ որոշ ժամեր բացուող փակուող
Թրժաշաղայս պուրի համար
բանալիներ մերահասմող
համ-արձակել հոնդիւնը այս Բարացած հզօրներում

Ու մութին մէջ յամրաբայով
որսորդները որոնք չյոգնեցան ըմաւ
Եւ որսորդները բարձր եկան աղեղնաբեռ
ծռամ մէկմէկ մտան Եւ արեւէն հեռու
մութը զձագրեցին ոսկորներով արմուտ
Եւ Բերձեցին պատը խորհրդարուտ յոյզով
վախի Եւ խեղճութեամ տեղով արբեհայող
Թերեւս երգեր կային ձայներ կային մեծցող
որսորդները թիկմեղ՝ ամղող աղեղներով
սարսափի Եւ մահուամ շունչը դրին պատին

Ե՞րբ շինեցին Օնտեր որսորդներն ամժամամ
Եւ առաջին անգամ արձակեցին դողով
ու երբ տեսան յամկարծ կասեցումը շարժման
վախցա՞մ արդեօք յետոյ այդ մետերը ինկա՞մ

Բայց ինչո՞ր պէտք է իյման Օնտերը

Նետերը մեռած ձայներ կէտադրեցին
տափաստամուկներու անշարժացումէն առաջ

Մահուան Բոյբերը ելան
լուսքեան մէջ միգապատ
զոյգ մը Ոստեր շինեցին
ու թմրասաց բաներով
 եւ տողերով իմքճահատ
 երկու Ոստերը մահուան
 դաստակներու կապեցին
միջմեմատիդ ծայրիմ անած ծառը կեմաց
 չչորմալու
այս Ոստերը պէտք են ըսիմ պարելով
եւ Բոյբերը եօթնոտան
երկարասոյր ճիշերով
ձերուկ հովում մէջ մտան

Եւ արմախում ցուլեր իջան յարձակելու
եկան տասնեակներով եւ վոհմակներ դարձան
դարձան լեղի աչքեր վերջին ճշոց աղի
որ օրէնքը կեանքի՝ ի՛ր մահուան մէջ ապրի
եւ ցաւը՝ բազմակերպ ու բազմամատ եղջիւր
արմատախլուած խորշերէն իր խոր
ակմաբիբին հասնող
Ոկարի պէս թրթռաց

Այս անասունը որ կը Ուայի Բեզի
 սպաննելու համար
ի՛նչ պէտք ունէիր կատաղութիւնդ աչքերուն մէջ իր
 տեղատրելու
իմք պիտի մնայ փորը լեցուած է մահուան հեշտամբով
արարման թոյնն է փորը ապրիլ կ'ուզէ
Ոնդանցք
մահուան ստուերը այմքան լուստոր է
յաջորդական մահերով է որ
 այս յարտեմակամութիւնը շինուեցաւ

Մահուան Բոյբերը մտան
Ոստը վրայ եռակայմ
ու շոյելով գիտերը

մէկգմէկու ապրեցան
 ժայռիմ վրայ աղեհամ
 երկարախոյս հեմբրով
 եովը կարդաց վայժասուն
 եւ պատմիչները հերթով
 եովուն ցաւը հերթեցիմ

Միայնասէր հովում սիրտը մարմնիս մէջ
 բարբախումը երկնողներու
 շնչակոտոր սարսուռնցում
 Հովում շրթները դրի շրթներու
 եւ ըսի՝ ցոյց տար պատկերներդ հիմ
 եով որ ժամանակ ու տարածք չունիս
 որ առեղծուած ես յամի տիանմ այս թուականիմ
 եով ջնջէ սրբէ այս ժամանակը
 որ մտածումս թափանցէ մաշկէդ դառնայ աչք ցուլի
 ոմգեղջիւրի ձայն եղնիկի ծարաւ
 վերյուշի ձիթմով
 փորձեմ մօտեմալ հնազոյն եսիս
 յիշեցոր իմծի
 թէ երբ դուրս եկայ Բարամձամերէմ
 ամբողջացուցի՞ արարումը այս
 իմչո՞ւ ետ դարձայ մութիմ եւ Բեգի
 եւ իմչպէս հե՛տդ մեղքեցի մութը

Եւ հովը սառած ձեռքերս բռնեց
 եւ հովը շոյեց գլուխս յոգնած
 ու մեմք միասիմ
 գիրար տեղչացող սիրողներու պէս
 մտամք Բարամձաւ
 Բարիմ համը մարմնիս մէջ

- Ա Կ Ն Ա Ք Ա Խ Ո Ւ Մ -

Քայլալուստը կը սկսի աչքերով
 ակնթարթը կը սկսի լոյսով
 ակնթարթը
 մախապատմութեամ եւ յետպատմութեամ միջեւ գծիկ
 որում իրաբանչիւր կէտիմ վրայ

Բառը կ'ապրի
 մութը բնորոշող գծիկ
 Բայժայումը կը դադրի մութիմ մէջ
 մութիմ մէջ կը տիրէ գաղափարը
 մախատիպը յետսատիպը
 ամխուգարկելի՛ն
 զոր Բաղաժակրթութիւնը կը վերածէ
 «կամաչ հիւսնդութեամ»
 եւ դարմանումը կը շիճէ
 բանալիի ծակին համդարտօրէն մտած փռշի

Բնածայրի կմբամումերը լսելի
 յետոյ ուրիլ հոնդիւնով ամալումով
 շարունակել ժամանակը

Այս մետերը Բնարներ չեն երգեցին բայց
 անցան ամոնք Սահարայէն Թասիլիէն Լէզէզիէն Սպանիայէն
 վրձիմներ չեն բայց գծեցին երկընտրամբով ու հաստատմամբ
 բառ կամ ձայն չեն բայց յօսեցան ակնածամբով ու հաստատմամբ
 իրենց յօսքը մայրածիփս մէջ

Ասք արարման

Առեղծամեն վերեղծամեն
 յետակոչեմ ծածկագիրն այս
 այբուբենը այլադասան եւ նոյնակերտ

Համակերպում սարսափի հետ
 եւ գթութեան հանդէպ պայքար
 անգիտակցում ժամանակի
 յանկարծահոս ազատագրում
 անկախացում եւ գերամում
 ակնարսխման այս փսրածալ ակնթարթին

Տեսողութեան հպումը այմբան զօրատր է
 յաշորդակամ մահերով է որ
 յախտեմակամութիւնը կը շիճոփ

Պատէն կախեալ
 Բարէ հաստաշեղ ճողուններ
 պտկաբարեր հեծուած արդէն
 ժամառակներ խաւերու մէջ մեքենագիր ազդատմանով
 Երուսի ամուշահոտի շիշը
 չէ բացուած այստեղ
 Երկսի տաբուրեան եւ սնունդի սով
 աղ հող եւ կենդանութիւն
 վերեղծանել մեր հիմ լեզուն
 ուր շուր չկայ ուր շուր չկայ
 ամշարժ ու խիտ պաղտութիւններ կազմած Յեզանց՞
 թարթիչներ տա՞՞ շոյանմի պէս կը թրթում

Երկար սրունքներով թռչում
 որում թեւերը սամտրելու պէս փակած են վիզին
 եւ պարամոցիմ վրայ ցուց մը կը ցատկոտէ
 կարճ ողնայարով ձուկեր
 որում՞ բացառաբար պնակներու մէջ չկմախբացան
 փիղի մթապատում սիրտ փոքփոք մորթով փիղեր
 մերմակ ընծուղումներ սեւ կէտադրութեամբ
 կարմրանակատ առաստաղ
 վայրի մեղուներու Բարայր խայթուած պատեր
 սարդի ուտայններ ուր մեղուներ յարձակած են
 ինչպէ՛ս թէ առանց Օպատակի
 եղմիկ մը գլխահակ կամաչ ջուր կը խմէ
 այստեղ արեւ չկայ կը կարծուի
 եղմիկներ առանց դժմի
 կարծես զարմուելու համար են
 կի՞նը արդէն դարձած է գիծ
 անդիմագիծ ցցուն կուրծքով եւ զիստերով
 եւ հրէշ մը որում շորտիմ տասնեակներով փրթած ձեռքեր
 մեղուներու պէս կ'երկարիմ
 ռեզեղիւրներ երկու խումբով իրարու դէմ
 եւ որսորդներ երկու խումբով իրարու դէմ
 վայրի եզմեր երկու խումբով իրարու դէմ
 կռնակիմ վրայ իմկած ցուլը
 որում միշտ կ'արխիմի դեռ
 եւ շուր չկայ եւ շուր չկայ

Առեղծանել ինչպէ՛ս Բակել
 այս մկտեղումը որ արարողութիւն է
 այս մուտոցը որ արարողութիւն է
 այս ցաւը որ արարողութիւն է
 առանց միջնարարի

ծիսակատարում որ այլակերպում չունի
ուր Ուխտող եւ հսկանելիող տարրեր չկան
եւ յստակ է ու հում
իմչպէս ամբողջութիւնը առեղծուածի

Յաւր յառնող
եզդիւրի պէս բազմատպուած ու բազմամատ
եւ դիրալոյժ այս էութեամբ
Ուայուածքս թող թող պատահի
մութի հովի Ուղեւորի մէջ
արարչութեամ կորիզիմ իսկ
տեղտեղ յամկարծ կեդրոնացած
այս բազմադիպ ու հաշմամատ Ուկարումիմ
այս հաշմածնոմ
եւ ծայրատուած մասմերում իսկ
ու ծէսերու հաստատումի դողերում Բով
սա մասմահատ մատմերում մէջ
եւ սարսափի
կարեկցամբի
եւ յաղթութեամ
ու պարտութեամ

ծէսերէն ետք
Ուայատիպեամ մեր ձեռքերում դէմ հաշմամատ
իմչպէ՛ս կրմամ դեռ պատահիլ աչքով երկու
իմչպէ՛ս մնամ եղծանելու
այրութեմը ձեռնահատմում

Քայբայումը կը սկսի աչքով
կը շարունակուի ձեռքերով

Քայբայումը կ'աւարտի լոյսիմ մէջ

-ՄՏԱԲԱԽՈՒՄ-

Առ Բարանձաւ
զիս զօրաւոր առանձնութեանս մէջ առ
թող մորթս խոյ՛ փակուի վրայ
սկնաշարքս սնշարքս
մումկու է

ես յարացոյց դիտակ չեմ որ
ասդիմ անդիմ ցկարանեմ

իջնելու է

սեւ քարանձաւ
վերամղուէ առանձնութեանս
եւ պատմութիւնց հեզել սկսէ

Այս գիշեր եթէ մախապատմական
փայտամօթներու ձէթերը մարմնիս վրայ քսեմ
արարման բովանդակ պահերը կ'ունենամ
Անիկն

այս շոր հողիմ վրայ մոլթս կը մակարդոյի
եւ քարահանքի խիտ շերտերուն մէջ
Քանդակուած պատմութեան կը վերածուիմ
իմքնիրմէջ սկսող եւ աւարտող
ըլլալու է

Ժամանակը կը բերէ ոտնահետքերս
մատներս բաց են անթէններու պէս
եւ մերձակայ անբռնելի ձայներ կ'անցնին
աղանաթուզի արտերուն քսուող ալագոտն թզուկի մման
կը խոցոյի ժամանակը եւ կ'արիւնտոյի

Ասք երկխօսի

Յեղս կը յիշէ ՀնաՔարեան բոյրը
ՄիջնաՔարեան բոյրը
ՆորաՔարեան բոյրը
ցեղս կը յիշէ պլունգին համը որ տաճար խմբոց
ամալոթիւն խեղդող կրափուշէ մատները
զաղափարաբերէ կուզերու ալտագաղթը
եւ ռոպոթին ողղածից կազմը
որ գեմք հմայեց

Կը յիշէ ռոպոթներու ներգաղթը
իրիկնապահ էր
զգացական արիւնատութեամբ ներկուած շուշանները
լեցուած էին բազմածփում լոռութեամբ
ամոնց մալուածքները
կը պարպուէին հողին մէջ

այդ անսերմ շուշաններով է որ ցեղս իր հուպոթը շինեց
 ճարտարարուեստի գառանցանքին մէջ
 ամէմ անգամ որ արթնցաւ իր երազէն
 ցեղս իր անունը վերստին փոխեց
 զգացական արհմահեղութեամբ մերկուած ամուսնեքը ճետեց
 խուռնամբոյս ամփիթատումի պարսպ սմտուկներուն մէջ

Արեւը իր հրային հագուստները տարածեց
 Բաշեց ամպերու վարագոյրը
 ծովասոյգ եղաւ
 շուրթերը կարնցամ երկրագունդին վրայ
 Դիւրմթաց ձեռքը լուսնի ձերբակալած է Բունս
 Բունս ամշարժ բու դարձած
 կամխասացութեամ սիւնին կը թառի
 բերանը լեցում հրածուփ ջուրով

Այս ամձայն աչքը դատարկ սրտին վրայ

Ճեղքրտուած շրթներս ուր արիւն Բսած կը պոռամ
 Եւ ամբերան մետաղէ կազմը կառոյցներս կը Բանդէ
 ալմբան խոշորցած է
 ուղեղին մէջ Բարիտի խողովակներ կը հոսին

ԻմֆՅակործանման մեսիան
 կերպարը կը հոսի ծովերու վրայ
 տարածութիւններու վրայ
 կը բուրէ Բարիտը
 Մեմֆիս Երուսաղէմ Հոռոմ Փիւնիկէ ճերմակ աստուածներով
 երկինքի կապոյտ խճանկարը ալմբան շատ էր
 երբ սկսեր էիմֆ աստուածներու մատուցուած երգերը թաղել
 երկինքը կապտորակ դիակ է հիմա
 Եւ ծովը՝ տապակ
 ուր արեւը միլիոնաւոր տարիներէ կապոյտ եակիթ կուտրած է
 Պզտիկ տղու մը ձեռքէն բռնած գացի Եւ այն տղան զլուխ շումէր
 ամ չտեսաւ թէ
 ոյբան շուշաններ ինկան երկարաշար պիակներու կողքին
 իսկ արեւը՝ մարմնազոյն հեղուկ լեցուած արթուն ուղեղ
 ուր ումբամիւթ մը կը շարժի

Ասբ ասբասփի

Ձեռքերս ահա կը դողան պղնձադարի թասին վրայ
 ուր նիզակներ փոքրածալ փամփուշտներու վերածուցան
 սրբավայրերու մէջ պատարագներ կը մատուցուին
 իմ ցեղս հումհում խմեց

այդ հրանիւթերը

եւ պայքարներու ծրագիծին վրայ

թանձրաբարդակոտակ

մատենաներու հեռաւոր զառանցանքին մէջ

թափառականի երազներու ցուցադրերը կորսուցան

Սրտանօթներս ջրածոյ դարձան լեռնակողերուս

եւ ռվիխանոսներուս զաղտակուր պատկեր

եթէ օր մը գտնուիմ

երազներս ո՛վ պիտի վերեղծանէ

Մահուան նետը շեղասոյր

բիրակողին խրեցաւ

ծովը ցաւէն թառանցեց

եւ նետերու եւ լերան

լուսինը խզուցաւ

ծառեր դարձան ծաղկաթափ

շուշանները՝ մահասաց

մէկը դրաւ բոլորս

շղթաներու մէջ անաստ

դարպասները ցայգալիւր

մէկը կղպեց ու գնաց

Ամրախցուած խափաններ եմ աչքերս

որոնց մէջէն յանկարծախոյս

տասնեակներով շարժող գոհեր

սա պատերու նկարներուն վրայ կ'իջնեն

Ջարհուրեի աչքեր ունիմ

կայ կախարդանք եւ աղմուկ

Պզտիկ տղայ որ գլուխ չունիս նստէ այստեղ

բայց համբօրէն եւ գգոյշ

պիտի ըսեմ մէկիկ մէկիկ բոլորիդ

այս մահը որ շուրջս է՝ իմ մահս չէ

անոր համար կրցայ գայն նկարագրել

ապահով տեղ մը պահուլտած է հիմա

սա բռնի մէջ տեղ մը նստած է կամազուրկ

եւ մենք որ լեզուի սեռեակներուն մէջ կ'ապրինք

հիանալի խենթերու համախմբում եմք
 մահուան համաճարակէն եթէ վախճանք
 երգ մը կը շինենք ու կը խցկենք
 մեր լայնաբերան տխրութիւններուն մէջ
 մեր սեղանները լիառատ են պատերազմի եւ պայթարի երգերով
 մեր բերաններուն մէջ տաճարա՞ կրիւ հալած է
 Անոր համար այս թասը ձեռքերէս ձգե՛մ պիտի
 գետին պիտի ձգեմ մի սարսափի՛ք
 ճայներուս բոլոր ակօսները գզգզուած
 աչքիս դարպասները փշայարերով պատուած են արդէն
 կրակէ ճայներ կը մօտենան

Տեղ մը պէտք է դեռ հսկայ թուփերը խշշան
 տեղ մը պէտք է թռչումները ընթացակցին իրարու
 տեղ մը պէտք է անձրեւախառն քամին խօսի
 եւ բառերը շնորհածիր շողերու պէս
 մարմնի՛ս ծուծի՛ս պէտք է մտնեն
 ու մարմնիս իր տունէն ներս պէտք է մտնէ

Այս կրայոյց մտերմութիւնը մարմնիս եւ հողին միջեւ
 այս վշտակիր շրջագայութիւնը
 իր պահուզտած տեղէն մեծը իմքնամուղ կը ծառայի մառնիս մէջ
 ու կը սկսի հեռալ ու կը սկսի ըլլալ

Վերապրումի գուգներն առած
 անյուսօրէն կը փխրեմ ափերուս մէջ
 կը խժեմ
 բան մը կը կերպարանափոխուի
 եւ Յայտաձգեմ վերագոտնուած թռչունին դիմաց
 կը բարակնայ կ'ուժարափոփ
 եւ շուշանի գոյնը կ'առնէ

Այս քանի՛ դար է քաղաքներու քաղաքակիրթ պատերը իրենց չտեսած
 արցունքները ուրախութիւն կ'անուանեն՝ Այս քանի՛ դար է Փիւնիկէն
 կը ծծէ հին Հռոմի անքները Այս քանի՛ դար է երկաթամուր մոխիր
 ներս վրայ կը գեղազարդուին քարացած արցունքիս աշտարակները

Դրանս առջեւ աղանի մը կայ որ իր կտուցին խնկաման ունի
 տունն չմտած՝ այդ խնկամանին խունկ մը ծխեցէ՛ք
 որպէսզի աչքերս կարենան վերատեսնել

Քայքայումը կը սկսի աչքերով
 քայքայումը կը հալի խումկին հետ

Իսկ շրթներս՝ խայծէմ խունկի արխառով կը քակուիմ

- Զ Ա Յ Ն Ա Բ Ա Խ Ո Ւ Մ -

Ու թրթռակիր յոյզով
 ինչպէս երաժիշտի ծնօտատակին հանգչած ջութակ
 եւ պղպջում ու մերկ
 ինչպէս ոսկեթոյր փրփուրներու արծաթ արխառ
 եւ աղօտ անփխրուն
 ինչպէս ջերմածոր երազներու մէջ ծաւալած պատկեր
 ձայնն կը յայտնուի մարմինն գրկած

Անա բազմադարեան երկրաշարժներէն բեկուած խոցանք
 հաւաքուած ի մի

հողէ զանգուածն այս
 արփիացնցող խօսքերու մերթն
 բիւր անգամ մեռած
 պէտք է պարուրուի
 իր ճշմարտագոյն պատմութեան խաղով
 այս ընդոստնունով կեանքի եւ մահուան
 կիսագիտակից իր աղօթներէն դուրս գալու համար
 իր տկարութեան նաեւ զօրութեան
 շարափի հոսքը բանալու համար

Կանչեցի անապատին մէջ եւ ինկայ մէջոյ
 կանչեցի մէջոյ եւ ինկայ քարանձաւի մէջ
 կանչեցի քարանձաւի մէջ եւ ինկայ մէջոյ
 բոլոր տարբերութիւններս մոռցայ
 եւ առաջին անգամ ըլլալով մեռայ
 երբոր վերակենդանացայ աշխարհը անկի լաւ չէր
 կանչեցի կապոյտ ոստրէներու մէջ ինկայ
 կանչեցի ճեղքեալ մանրանկարներու մէջ ինկայ
 կանչեցի կիզակիտուած Պշտնագրերու մէջ ինկայ
 բայց հրաշքը այն էր որ վերակենդանացայ

Առտուան կապոյտ բերանը բացուելէ առաջ

կղպուած դարպասները զնգզնգացիմ
 հարիրատոր երկրաշարժներ դիւրախեղ լուսիմներ զծած էիմ
 մարմնագրութեան վերջիմ Բմայքն էր սա
 գիտեմ որ վաղուց
 հնարամիտ սաղրանքներուդ մէջ լուծած էիր զիս երկիր

Սեւ օձ ոռնա անկի
 փայտափորերու եւ կոճղերու ընդհարման ժամն է հիմա
 ոռնա մինչեւ փակամափայտը հասնի

Մէկ հատ անատր դէպք սպասեցի
 եւ գիշերը սոփոկլեսեսան կուրթեանս վրայ
 ճառագայթի պէս ինկաւ
 բացուեցայ արթնցող ձեռներու պէս
 եւ որ վաղուց վաղուց
 կիսագիտակից աղօթքներու մէջ հալած էի երկիր
 եւ որ լուծուեր էի սենեակներուս մէջ
 եւ որ լուծուեր էի խօսքի համեմներու
 եւ ամձկաբեկ աֆիոնի եւ լուսատարափ գիմիներու մէջ
 այս թիւրալուր թափսփուկները հրելով մէկդի
 եւ ինճնոգորման երասանակիմ ամբօրէն կառչած
 եւ եօթնեղեզնեայ սէգերը փառքի թողելով եսփս
 ու ապագայի արծաթ ծուպերու կոյր անհաշտութեամբ
 կը վերարձակեմ պատանքս կիսակէզ
 կարծրացուր սիրտս կարծրացուր երկիր
 որ իր անատր լացը չլսէ

Անա մոր է մոր է որ
 երայրքներուս մոխրաշուրը կը գիտեմ

Խառնէ ըսաւ կախարդը թէժ
 մոխրաշուրին՝ բուխ աչքի բուրբուտ ինկած
 սա ռսպերը խառնէ խառնէ
 եւ մուկերու ակամջի պէս լուպիաները խառնէ խառնէ
 մերմակ լուսն լուպիաները խառնէ խառնէ
 եւ մանրապէտ յետոյքէ սիսեռներն ալ ասոնց խառնէ
 եւ թմբիի կզակն աշուտ
 եւ տէգերն ու սօր արլունը միդակներու
 խառնէ անլուպ
 Դուք բոլորդ Բովնովի
 հաւաքական գետնադամբարաններու պէս կ'ապրիք
 ելիր հօնկէ այս խառնուրդը պատրաստէ

ըստ կախարչը յտէք
 յետոյ աչքերն իր՝ բունատր թրթուրի պէս կկոցեց
 և իժի պէս որ իր ծակը կը մտնէ
 պահեց զանոնք ակնապինի մթութեան մէջ

Ձեռներու մէջ եռանձնութեան պղինձ թաս
 Պրահմա Վիշնու Սիվա
 ամէն անգամ երազներէս շերտ մը կտրած
 թաթխեցի մոլուցքիմ մէջ
 ստեղծումի պահպանումի և անբման
 և տեսայ որ աստի հագած աստուածները
 արեւի և եղանակի
 ցամփի հնձման
 խաղի նաեւ որսորդութեան
 կը փաթթուին կամաց կամաց անցեալիս մէջ
 կը փաթթուիմ կամաց կամաց անցեալիս մէջ
 և անցեալս զիս կը դիտէ
 խղճմտամբի աչքի պէս

Արիւն օդիմ մէջ՝ որ դիակներ կը ծնին
 արզանդս կը ներփակուի արցունքի մէջ
 փտումը լուսնիստ թախծումիմ
 Տայրայտումը կը փակուի արզանդիս մէջ աղեհամ
 կը պաշտպանէ տիեզերքը իր թափանցիկ գողողանքով
 այնպէս լիազօր է և բազմահայեաց աստուածային աչքի պէս
 Արզանդիս մէջ աղկաթիմներ
 արեան թոնթոր
 անդող վիժում
 Մեր երազներու
 ձգտալարերու
 բոլոր հրեռանքներու
 ջարդուած պարունակները
 խրեցիմք մեր արզանդէ աչքերուն մէջ
 ու մենք մեր մէջ վիժեցանք
 մեր անփական աչքերէն դուրս ինկանք
 և Բաղաճներու միբը փնեցիմք

Քաղաքները իրենց յիշողութիւնը կօրսնցուցեր են

Վիժեցանք ի վերջոյ վիժեցանք կամօք և ամենայն ազտեղութեամբ
 վիժեցանք ինչպէս անկամ երիկամ
 վիժեցանք եղբերափոյ խնճոյքներու մէջ

մեր ձեռքերը նզովեցան պոծպատի մէջ
 և մեր նակատները նաքեցան
 լքուած սեմին ինկած պայտերու նման

Դարձամբ լիակատար խորհուրդ ու նզովուած վայր
 և երկագիր և քարագիր և սեպագիր և խորագիր
 վիժումի բոյն դարձանք ապա
 բողբունցանք մքուրեան մէջ անժամուպահ

Լուսապատկերային կենսագրութիւն շինեցինք մեզմով
 և մեր անվիակ ակնարգանդներուն մէջ
 գունատը ոսպնեակներ տեղատրեցինք

Մնանք երկարատեւ և սպաննուեցանք վաղվաղակի
 ծնանեցինք հոգոցով և սպաննեցինք անհոգի

Ո՛վ գիտէ թէ
 որքան անվերջ է կեանքը այն յոգնածին համար
 որ զեռ պէտք է քալէ

Աստղերը փայլուն միջատներու նման մագլցեր են երկինք
 անոր հանդերձը վերստին պիտի կրծեն
 և կապոյտ ներքնագրեստին վրայ պիտի դառնան աննշմար
 ու անուծ սմբին

Յուսապատար ինկայ դուրս

Յօղը բորբոր կը դողար ծաղիկներու ափերուն
 գոբս շտեսայ
 աչքեռս կը կեղաւորուին
 փակուելու է
 այս անպաշտպան անյայտ միաձուլումը
 կախարդանքը և զարհուրանքը աչքերուս
 այս սկիզբը
 պատրաստութեան
 մահուան

Գնչու մը ըսաւ
 որ ամպերը ուզտ դարձած քայեցին իրար ետեւէ



յետոյ բոլորը միատեղ մորթուեցան
 եւ Բամի որ ես
 ժամգակիր արցումքներու սկիհ էի գումագարդ
 եւ Բամի որ պատմութիւնս
 գումահայ արցումքներու սկիհ մըն է ժամգապատ
 իրար համդիպեցանք ա՛յս ակնթարթիմ մէջ
 հողի վրայ
 երկարաշար կարաւաններու միշիմ
 Ֆաղցիմ
 մորթատումիմ մէջ
 եւ Բամի որ սկիհ էի ուզեցի խօսիլ
 ձեզի թող մնան ձեր թատերական փորձերը
 բարձրախօսէ սրահները եւ դիմակները ակնթարթայիմ
 ձեզի՝ ձեր ոգեշունչ խօսքերը
 սուէ՛ք Բարտողարներուն որ թղթածրարներուն մէջ պահուիմ
 մոյմիսկ եթէ մատնահետքերս ձգեմ
 ձեր բազմակերպ ոմիրներուն վրայ
 դուք բացայայտ կամ գաղտուկ
 կ'արե՛ք զամոմք ընդմիջտ
 ու կը փշրէ՛ք զիս
 իբրեւ ուրիշ կրօն
 իբրեւ լեզու ուրիշ

Իմքնագզացողութիւնս պահպանեց զիս
 շարտեցի գորշ սկիհի կերպարամբս
 ձեռքերուս մէջ եռամձութեան թասը առի
 ու հող դրի արեւելեան արեւմտեան
 հարաւայիմ հիւսիսայիմ
 բարձրացուցի բարձրացուցի
 դէպի ձեզի՝ Պրահմա Վիշնու
 թասիմ մէջ ձեր դիակիզուած հողը դրի
 եւ ուղեղէս կեղատրուած սպիմ իմկաւ
 եւ աչքերս լո՛յս տեսան

-ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ-

Օ մեծագար ապրումներու լուսաբարեր
 իզամօթի տարութերող պատրոյզի պէս
 այս հողածուփ աչքերուս մէջ դեռ տատանող
 շաբեր լոյսի

յոյզի դողի ցայտուցիչներ
 Ե՛ւ իմքնակալ Ե՛ւ իմքնակոծ Ոնրքափամցում
 ամտառայիմ խորտարածոյթ
 երկվեղկուամներ ամբեկելի
 կարմիր ոՐսիզ եւ սպիտակ Աերկամիթով
 պատասխաններ ամվերակէտ
 եւ մամոացեալ ամմահութիւմ

Աչքերս այսպէս Ոամբորդեցիմ
 հրաշալի Յշմարտութեամ գաղտնարանէմ
 եւ պնդումիմ դէմ հաշմածեռն Սկարներու
 միակտուց վերջակէտի պէս կանգնեցամ

Այս բերկրամբը սուկահար
 մտա՞ր ոտաբուպիկ յապտեր մը բռնած
 բռնած ինչամօթ տատանող պատրոյզով
 իջան երկար եւ մթազիմ
 վտանգատր Յամբորդութեան
 հողի փորոտիքիմ մէջ

Ի՞նչ կար արդեօ՞ք կերպակից
 Ի՞նչ երկիւղի վարմի մէջ էր իրենց հոգիմ

Երբ ովկիանոսներ սառցակոյտերով պատուած էիմ
 սառնալեռներ գլուխներով անշարժ՝ իրար
 առասպելներ կը պատմէին Քամիաբար
 լեռնադաշտերն ու ամտառները հարուստ էիմ որսախաղով
 մարդեր իջան գետերում
 ժայռակտորներն ու Քարայրաբերանները իբրեւ պատսպարան
 Քսանհիմզ հագար տարի բարդեցիմ
 միասնաբար՝ բազմաձփում եղմիկներու
 մեծագագամ մամութներու եւ հրավարս ձիերու
 հիւսիսայիմ եղջերուի ձկնկիթի օղակածն բռկերու
 լոխածուկերու վայրի եզներու եղնորթներու
 այծճաղի եւ Քարայծի եւ մշկայծեամի
 պտկածամիի եւ բրդապատ ոմգեղջիւրի
 ու խառնախորթ աշխարհմ յանկարծ
 ապահանգոյց իր Մայրածքը ուղղեց մահուան
 եւ կործանման պահպանումի
 սառնահայ եղաւ բարձրացամ ծովեք
 Յարակող կենդանիներ հլուեցան կիսիս
 եւ իրենց մարթը փակեցիմ այցտեղ

Այդ բեկումը անհատների

Փոփոխության ու տարբերության պարբերակները
Սկզբներով վերացական եւ իրապաշտ դրած աչդտեղ
մարդը խոռվ

իր հաստատած բառերն ունէր
եւ աս՛ ունէր երկհաղայի

Ժայռերու վրայ ուրակի մրուտումներ
մտայղացում

հաւաճում

յաջորդապահութիւն

օճապտոյտ գծանկար հասած մինչեւ Պրոնզէ Դար

Դար երկաթի

խորհրդանշա՞ն էի՛ք արդեօք

աստցահայ՛բի եւ հեղեղի

արուագադրին ոսգիներու

կամ ներգաղթին այդ ջրային թռչումներու

ո՞ր խուլ աղմուկն էի՛ք արդեօք

անձաններու տակ գտնուող ջրահոսի

Օ ոսկորներ եւ բեկորներ քաղերու

եւ դանակներ գեղազարդուած

լուսնային նաշիագրութեամբ

ինչպէ՛ս հասաւ ո՛ր խորհուրդով գերերկրային

գաղափարը ժամանակի

լուսինն իբրեւ ձեւընկալում ժամանակի

Այս Յանաչումը

անջատումը

յափշտակութիւնը

բուժման տենդը հարցերու

Ե՛րբ սկսաւ ինչպէ՛ս

եւ հետզհետէ մեզ ո՛ր կը տանի

Բազմահանգոյց մեր աչքերը

ձեր աչքերուն մէջ՝

ո՞ր հասնինք պիտի

Պղնձակարմիր խաչ
 խոն աղմուկի մէջ խուսափող
 ականջիդ մէջ կաթող թափուող
 եղբրաճայն խաչի խնդու՞
 քաղաքներու մէջ ազմկոտ՝ բութ շեղբերով ակնահաստով
 երկնաքներն հողաքներն
 մահուամ խաղալի՞ք խորամարդներ
 բուրգեր սիւներ ուղղանկիւն
 կապարածոյ կոթողներ
 Այս ամապատները
 ուր գաֆրանի դեղնութիւնը կը տարածուի
 այս քաղաքները
 լուսնոտներու փրփուրներով պատսպարուած փոշի
 եւ ամպերը
 բորտոտներու շունչով ձերմկալուած կուծեր
 այս երեքները պատմական պաշտօնական օրերուն
 հեղուեցան կարմիր խաչերու վրայ
 եւ խաչերը երերտկացին
 ձեւաւորուած հրեշտակային թեւերով
 ու սահմուկած պղնձածոյլ արիւնէն
 խաչերն ամբողջ
 ներաթափոյց հառաչները արձակեցին դարու դէմքին գաֆրան
 ու մեծ ճիշով ընդոստնեցան
 երկրապատառ փոսերու մէջ

Կիսամերկող կղձիւարներն քաղաքներու
 ոտներուն տակ՝ թաղուած խաչեր
 ափերուն մէջ լոյսեր դրին երանաւած
 եւ դիցագուններու ծովավճճ մակույկներու դիմաց
 խաչանցեալի իրենց փառքը մանրամասն երկնեցին

Ասք ապանցեալ ոճիրի

Քայլադարձ է
 այս դիրսահերձ երկնումէն ետք
 բազմոտանի եւ բազմակերպ ու բազմափուլ
 վերադարձներ
 Յետազրութիւն՝
 զիշերներս արդէն կարամիտի պէս
 իջան զօրութեան ձեր Մոյմադաւան
 Որքան մերձեմամ մախատիպերու

եւ մեր կցկտուր մրոտումներու այս աշբուբեմիւ
 եւ գոհարբեման
 եւ սպանութեան
 եւ մահուան կեանքի
 յետագիրները պիտեմ սուկամբով
 սսկրայօղերս կը տրամ այնպէս
 կը բանամ ճեղքեր որ լոյսի մնաց վախը բնակի
 իմքնակալման ծերպ
 այս անելապատ պոնձակարմիր անձաններում մէջ
 ընդունէ՛ Սիվա
 արեւկէզ ձեռքիս
 ջգահատումը

- ԶՈՏԱԲԱԽՈՒՄ -

Երկիմքի կապուտ մոգայիքը յայտնուելէ առաջ
 հիմ Եեովայի անյայտ աչի տեղ պէտք է լոյսէ սիւն
 որ ճեղքէ մեռեալ միթք հատումի
 ու միացնէ արեւը՝ հողիւ

Օ խեցքեկ ձայներ ոսկրայօղերու
 եւ երակներու շիկավաւ հիւթեր
 ու մաշկի անցօր փուն աղասպատամք
 եւ խղճմտամբի բարձրագոյն խորհուրդ
 ոչինչով կ'օգնէ բիրտ հատումը ձեր
 իմքնաթելադրման վերին գորութեան
 արարքի լուծ գիշերներէն ետք
 ներանձաններու պատերուն վրայ վաղձեան գրուած
 երբոր միմիայն
 մահացողը իր լացը կը լեճու
 ճիչն իր կ'իմանայ ծնանողը նոր
 գիշերուան սրտէն՝ յոսւ արարքէն ետք
 արեւը կ'անցնի
 իբրեւ հրաշալի
 յուսագլուխ

Օ բորբոխուած հրաշքներու լուսագլուխ
 արտերն հասկի կը ծփծփան
 մարգամաղիկներ փունջփունջ կայնած
 գլուխ գլխի կը յօսուի

Երկու գեղջուկներ յարդի աւգերում
 կէսօրը կ'անցնի հրացոյ սայլով
 ու գով իրիկուան ոտնաձայնը կայ
 աթուղ սենեակին՝ ոտիքը բացած բան մը կը պատմէ
 Եւ հանրագործի Բրտինը սելսիս
 Բրտինը ածուխի մահմ կը վառի
 այդ Բրտինին մէջ իր մայրածիքը կայ խորունկ ու լռիմ
 համբավայրի պէս
 Եւ աղօթք մը սուրբ ու մեծածառալ լազուր համղերձով
 կը ցայտէ յամկարծ հողի բաց կողէմ
 յայտնութեան նման Եւ առասպելի

Եւ առասպելի յայտնութեան նման
 կապոյտ գլուխը հրաշք արեւի
 կը սկսի խօսիլ

Օ խեցքեկ ձայներ ոսկրայօղերու
 Եւ երակներու շիկավառ ճիւղեր
 Բաղանքի անգոր փուն աղապատամբ
 Եւ լսողութեան գերագո՛յն բուպէ

Բուպէ արտահեղձ
 իմքնամերձեցման հզօր ակնբարբ
 վերնահաս շամփուր
 հրալոյծ մարմնի
 ալլաւերձ հատում

Կարծես թէ դուր մը նքուտաց հեռուն

Պզտիկ աղջիկ որ վան կոխի
 ականջը ձեռքերուդ մէջ կ'արիւնի
 բունէ փափուկ ավերուդ մէջ ինչպէս տանալը՝ միտուն իր
 Եւ կամ վարձիր կապոյտ երակ որ արիւնը մէջդ խօսի
 ոսկի արտի բոյրը դարձիք Եւ մայրածիք իր բնէ այտիդ
 ուսերուդ
 ոսկորածո՛յլ կասակիդ
 այս ներքին հեռացումը կամ արտաքին
 թելադրամբ է ա ա ա ըն աղջիկ
 թելադրամբը սիրոյ անբաւ Եւ բաւարար զգ զգումնի
 Դիր ականջը արտիդ՝ հարցուր
 թէ Յուլիսի օրն արեւոտ
 ինչպէ՛ն մարմինն իր անըստեց տիեզերական համադրոյթէն

Ազնուն անա մեղատրի պէս կ'անհետի
 եւ բարութեան եւ մաքրութեան միակսանում
 ձեռներուց մէջ կ'արիւնցի

Քայլաշարժը կ'աւարտի լոյսին մէջ

Մնացիր ու տես ձեռքերդ
 այս տարերային անձամերում մէջ
 ոչ միայն ջուրի մթութեան սովի
 այլեւ արարման
 եւ պահպանումի
 եւ սպանութեան

այլեւ արարքի
 եւ առասպելի
 բարոյագիտութեան

այս գծագրութեան
 այս շրտախաղի
 այս մարմնահատման


Տես ձեռքերն իր
 ականջներուց մէջ կ'արիւնին
 ականջներդ իր ձեռներում մէջ կը ներկուին

Լուսիւնը ուր արեւն ամբողջ ձայնով կը բնակի

1993, Նիւ ժըրզի

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Վ. ՕՇԱԿԱՆ



Պաղ էր գիշերը:

Փախուստի պէս բան մըն էր աչքին տունէն դուրս ելլելը, ու դժգոհ էր: Քալեց սակայն թաղին ամայութեան ու փլատակներուն մէջէն, փորձելով համոզել ինքզինքը, թէ շուրջի մթութեան ներսերը դարանակալ վտանգները արհամարհելը բաշտութեան կը նմանէր, հաւանաբար: Ճամբու եզրին կտտրած ինքնաշարժէ մը խոկալու ձայն եկաւ, փողոցին ծայրը լուսնի լոյսին մէջ մարդկային երկու շուրեր նշմարեց, հեռուներէն՝ զէնքի հարուածի մը արձագանգը: Ամէն ինչ բնական էր: Շարունակեց քայլ:

Առանց բանկոնի էր ու պաղ հովը դող նետեց նիհար սակորներուն: Սակայն գիտէր որ ատիկա վախէն այ կրնար ըլլալ: «Փախուստի պէս բան մըն էր» խորհեցաւ, «սասնկ ատեն տունէն դուրս ելլելը»: Մութը միշտ սոսկում տուած էր իրեն, մանկութեան գիշերներէն ի վեր: «Վախկոտին մէկն է մեր տղան» ըսեր էր հայրը օր մը, պատանութեան, ու ինք կարմրեր էր հիւրերուն առջեւ: Բայց հիմա տարբեր էր: «Ո՛նչ ըլլայ նէ թող ըլլայ» խորհեցաւ, «մենիմ լմնայ-երթայ» անցցուց:

Ոտքի ձայներ լսեց ետեւէն, արագցուց քայլերը, անկիւնը դարձաւ՝ սկսաւ վազել, փոսերու վրայէն ցատկելով: Խունապ չէր, ոչ իսկ վախ, այլ պարզապէս վազել, հեռանալ, փախչիլ անլուծելի տագնապէն, թակարդէն՝ ուր ինկեր էին ինքն ու իր հայրը: Շնչառատ՝ հասաւ ետ իրենց տան մուտքին, նստաւ դրան սեմին, մութին:

Կը դողդոզար ամբողջ մարմնով, պաղէն՝ ու նաեւ ուրիշ, հենուս եւ անմիջական ուրիշ բանէ մը, որուն անունը չունէր, որուն սակայն հանդիպեր էր մէկ-երկու անգամ Պէյրութի կտրուներուն ընթացքին — անհեթեթը, մտքին բացարձակ կալանաւորումը, անկարելիութիւնը մտածումը հրելու, շարժելու: Թեւերը փաթթեց մարմնին շուրջ, դողը կեցնելու համար: Բայց չկրցաւ միւսը կե-

ցըմել — ծուղակ մը ինկած ըլլալու գիտակցութիւնը: Առաջին անգամ գգացքեր էր տարի մը առաջ, երբ հաշմանդամ մ'ուրացկան մը ռմբահար պատի մը տակ մնացեր, ճզմուեր, մեռեր էր, ու ինք՝ սոսկումի էն ուժեղ կէտին՝ խնդացեր էր: Ոչ թէ ջղային՝ այլ բնական խնդում: «Ի՞նչ կ'ըլլայ կոր... մահն ու կեանքը իրենցմէ դուրս ուրիշ անիմաստութեան մը մաս կը կազմեն» խորհեր էր տուն դարձին, «անհեթեթին իմաստը ըլլալու է» եզրակացուցեր էր:

Հիմա միտքը գնաց հոր երեւոյթին, ճզմուած կեանքի հսկաստութիւններուն տակ, իր նախնական գաղափարներով, հերոսական կեցնաճմաներով, իր ջուրէն դուրս ինկած պզտիկ ձուկ մը: Ինչպէ՞ս հասկցնէր անոր որ ինքը օտար էր այդ տան ու աշխարհին, թէ ինքը սփիտօքեան էակ մըն էր ցրուած, ապակեղրոն, ամառմատ ու ազատ, թէ ինքը նոր հայ մըն է...: Անկարելի էր որ ան հասկնար ինչու իր տղան ուրիշ մէկն է, թէ անոր հայրութիւնը, սփիտօքութիւնը հայ մտքին առաջին ազատագրումն է հողին ցեխերէն, պատմութեան քաշողութենէն, աւանդութիւններու ցանցէն, հայութեան նախնախնուտէն...: «Պապա, մտիկ ըրէ ինձի, մտիկ ըրէ, որովհետեւ մեծ, շատ մեծ բան մը փոխուած է քու սիրելի ազգիդ մշակոյթին մէջ» ըսեր էր դեռ անցեալ շաբաթ, հայր ու տղայ հանդէսէ մը վերադարձին: Ցանկարձ կանգ առեր էր, դարձեր իրեն, ու՝ «Մըն է աստիկա, պարոն Պերն» ըսեր էր, քիչ մը հեզմակամ, բայց ինքը անտեսեր էր շեշտը ու պատասխաներ՝ «Գոց մշակոյթէն՝ բաց մշակոյթի վերածուելու վրայ ենք, չե՛ս տեսներ կոր»: Երկվայրկեան մը մտածելէ ետք՝ ըսեր էր՝ «Հո՛ւս, աս դժոխային Պէրութի՛ մէջ»: «Ոչ» պատասխաներ էր ինք, «աշխարհի չորս կողմը, Սփիտօքի տարածքին, պապա, մտածէ...»:

Ձեռքը այտին տարաւ... Ապտա՛կը...: «Ինչքա՛ն ծիծաղելի բան մըն էր աստիկա» անցաւ մտքէն: «Անէ՛ծք, տունէն վորնուտէ՛լը» խնդաց մեղմօրէն: Բայց հօրը կատաղութեան դիմագիծը մնաց աչքերուն առջեւ, ներսը, հիմա, դէպի դուռ դարձած, բոլորովին կարսուած սիրոյ եւ ատելութեան միջեւ, սպասելով հրաշքի մը՝ փրկելու զինքը իր անցեալի նանկերէն: Բայց մայրը չըկրցաւ երեսակայել անոր դէմքին ճշգրիտ պատկերը. «Մայրերը անիրական, երեսակայական էակներ են» խորհեր էր միշտ, «անտեսանելի հիմը տան կեանքին, ամէն ինչի առաջին ու վերջին յոյսը»:

Այդ պահուն էր որ Հիլտան յիշեց, առանց յայտնի պատճառի մեղմ, մայրական արտայայտութիւնը, լեցուն մարմինը ու ծանր կուրծքերը, կապոյտ աչքերը ու այդ նակատագրական զիշերը, երեսային բնանալէն ետք, բովի սենեակը, կիսամութիւն ու

սրտին փոթորիկը: Ի՞նչ գիշեր էր...: «Դու՛ն կի՛նը ինչ ըսել է չես գիտեր, Պերճ... ոչ կի՛նը, ոչ ալ սիրելը» ըսեր էր կատակի ձեռով, ձեռքով մագերը շոյելով, «բայց կարեւոր չէ, դուն սէրը ունիս...»: Աւելի ուշ էր որ ըսեր էր. «Դու՛ն հայերդ ստրուկ ժողովուրդ եղած է՛ք դարերով, մենք ալ ջարդած ենք ձեզի... կեանքը չէ՛ք վայելած, չէ՛ք սիրած... սէրը կեանքի վայելքն է, արանդուրիւն է, ծէս է... եւ ոչ մէկը, ոչ ալ միւսը ունեցած է՛ք»: «Ատիկա հին պատմութիւն է» ըսած էր ինք, խորհելով հօր ու մօր մասին, «սակայն իրատուն ունի» շարունակած էր մտքէն, անոր դէմքը արհեստաբար մէջ առած հիմա, «այսօր ցանկալի կ'ըլլա՛ր, եթէ դարերով արգիլուած չըլլար, բոլոր օտար կիներէն ատելի...»: «Կի՛նը» ըսեր էր Հիլտան ուրիշ գիշեր մը, սուրմի գլուխ, «կի՛նը ձեր էրիկմարդութեան անէծքը եղած է, որովհետեւ հայ կի՛նը կամ հայ աղջիկը երբեք ձերը չէ եղած, ոչ ցերեկը, ոչ ալ գիշերը, այլ՝ թուրք կամ քուրտ տղամարդուն: Ձեզի միայն յանցանքի զգացումը մնացած է, տեսակ մը պատիժ» ու խնդացած էր Հիլտա, թեթեւցնելու համար խօսքին հարուածը: «ճի՛շդ եմ»: «Հին պատմութիւն է ատիկա» արագ պատասխաներ էր ինք: «Ձէ, չէ, ատ բաները դանդաղ կը փոխուին, դար կ'ուզէ» ըսեր էր աղջիկը հանդարտօրէն: «Ձեզի պէս, թուրքերուն վայրագութեան պէս»: «Այո, ճիշդ ես» պատասխաներ էր Հիլտա, «կ'ընդունիմ»: Լուրջիւն մը հոս: Յետոյ՝ «Դու՛ն աս բոլորը ուրկէ՛ր գիտես» հարցուցեր էր լրջութեամբ: «Համալսարանէն, գիրքերէ, հայերու մասին արտասնաո գրած եմ, չըսի՛ր քեզի, մտցեր ես, խելք ուրիշ տեղ է»: Արդէն խնդարով՝ «գիտեմ, գիտեմ, կը մտածես թէ հայերը ի՞նչ պիտի ըսեն, եթէ գիտնան, թէ թուրք աղջիկ կը սիրես»: «Շատ ալ հոգս չէ» ըսեր էր անմիջապէս: «Ձեմ հաւատար» կարճ էր ու վճռական աղջկան խօսքը. «Ահաւոր պատիժը թուրքը սիրողին» խորհած էր Պերճ ու գրկած-համբուրած էր գայն բարկութեամբ ու վրէժով, սա առաջին կի՛նը իր կեանքին, անձանօթ սենեակին մէջ խարխափելով, անոր սեռին կենդանական, մոյմիսկ բուսական հոտովը պարուրուած, աչքերը գոց յանձնուած անապրելի վայելքին, այդ կիսամերկ, տոփոտ ու գուրգուրոտ էգին թեւերուն մէջ...

Սիրաբանող կատուներու աղմուկ մը փրթաւ փողոցի ցանկապատին միւս կողմէն: «Թր՛րուհին միայն սիրելու եւ սիրուելու համար ստեղծուած է» փսփսացեր էր ակամջին անտու կանուխ զինք ճամբու դրած ատենը, «վաղը գործէս ետք կու գամ, ժամը վեցի մօտ, համալսարանի մատուռին բով, ինձի հոն սպասէ»: Եւ Պերճ, օդին մէջէն փայլելով, գալի՛ր գիշերուան խռոնակ պատկերով հասեր էր տուն ու կողպուե՛ր սենեակին մէջ: Յետոյ պատուհանին վարագոյրը փաշեր էր ու նետուե՛ր էր անկողինին վրայ,

յանձնուած կնկան հեշտանքի յիշատակին, անոր երկար մագե-
րուն գարնանային բոյրին, ձեռքերուն ու մարմնին հպումին յա-
մեցող զգայնութեան՝ կործին, առնանդամին ու մանաւանդ
շրթունքներուն վրայ...: Ինչպէ՛ս վագեր էր համալսարան, յա-
ջորդ առտու, ամբողջ օրը անկարող դաս ընելու ու սպասելով
անոր երեւնալուն, պատերու ետեւէն գայն հեռուէն, գաղտնի
լրտեսելով...: Յետոյ, ի՛նչ սրտատրոփ երանութեամբ բռներ էր
անոր փափուկ ձեռքերը ու սեղմեր ուժգին: «Նայէ, Պերն, չըլլայ
որ սիրահարուիս ինծի եւ ամուսնութեան մասին մտածես... սի-
րաբանութիւնը, սէրը եւ ամուսնութիւնը իրարմէ բոլորովին
տարբեր բաներ են, գիտցիր... տարիքի մեծ տարբերութիւն կայ
մեր միջեւ, յետոյ կեանքի փորձառութիւն ալ շատ չունիս, դեռ
համալսարանն իսկ չես աւարտած» ըսեր էր, համալսարանի
մօտ սրճարանին մէջ, դէմը նստած ու խնդուն աչքերով: «Հի-
տա, ես քեզ կը սիրեմ ու պիտի ամուսնանամ հետդ, լմնցած
հարց է» ցած ու տրամաթիփ շեշտով մը: «Նայէ, գիտէի ասանկ
ըլլալը, ասիկա անկարելի է, Պերն, խելքի եկուր, իրար հագի կը
ճանչնանք, ի՛նչ գիտես իմ մասիս...: Յետոյ...»: Լոեր էր Հիլտան
յանկարծ, գոյիքը շարժելով աջ-ձախ՝ «Հայ եւ թուրք... չ'ըլլար,
չի քալեր, խորհե՛ր ես հօրդ մասին, մօրդ մասին, հայ բարե-
կամներդ, հօրդ բարեկամները, բու բարեկամներդ... ասոնք բո-
լորը պիտի փախչին քեզմէ, ես գիտեմ, կարդացեր եմ այդ մա-
սին, շատ ատելութիւն եւ արիւն կայ մեր միջեւ, ջարդ, ցեղաս-
պանութիւն, ինչ գիտնամ... չէ, անկարելի է»: «Ատոր հոգը ինծի
ձգէ» պատասխաներ էր անապարանօք, առանց յստակ գիտնա-
լու, թէ ինչ պիտի ընէր...

Ռոբի ելաւ Սառեր էին ձեռքերն ու ռոբերը. «Ի՛նչ պիտի ըլ-
լայ ասոր վերջը» հարցուց ինքնիրեն, բայց մարմնին դողը զին-
քը դէպի տուն ու ներս կը քաշէր: Կոթնեցաւ դրան ու սպասեց:
Այն ատեն էր որ հեռուներէն հրացանաձգութիւն մը պատուեց
գիշերը, տակաւ ուժովցաւ, ինչպէս միշտ կ'ըլլար. «Կը մօտենայ
կոր» խորհեցաւ, հետեւելով պայթումներու ծանր ցնցումներուն:
Յանկարծ շատ մօտէն գնդացիր մը ծակեց մրուրիւնը: Անզգա-
լաբար կծկուեցաւ դրան մէջ. «Քա՛ջ ես» հարցուցեր էր Հիլտան
իրար դեռ նոր ճանչցած, Համրայի մուտքին, հանրային պար-
տէզին առջեւ երբ յանկարծ, երեկոյեան մութը իջնելուն՝ կրակի
ցանցի մը մէջ բռնուեր էին: «Ձեմ գիտեր» պատասխաներ էր ու
ցանկապատին վրայէն ցատկելով՝ ներս մտեր ու թուփերու բով
կծկուեր եւ իրարու ուժգին փաթթուած՝ պահուրտեր էին: «Կը
դողաս կոր» ըսեր էր Հիլտա, անելի սեղմուելով կուշտին, «Ես
շատ չդային ազգիկ եմ» անեցնելով: «Պատիւն, պատիւն փակիր,
Հիլտա, հոս բովս... հարուածները աչէն կ'անցնին կոր» ու

պաշտպաններ էր անոր մարմինը թուփին ու ցանկապատին միջև, զգացեր էր անոր կուրծքերը եւ նաեւ սրտին հարուածները, այդ ահարկու աղմուկին մէջն իսկ. «Կը վախնամ կոր, Պերն» շշմջացեր էր ան, «բան մը չըլլայ մեզի, քեզի... ինծի բան չըլլար» ըսեր էր դողի բռնուած, բայց անոր տկար, անպաշտպան ու ցանկալի մարմինը գրկեր էր անսահման ուժով ու սիրով, որ գաղտնի արցունք բերեր էր աչքին...: Պաղ, դողողուն շրթունքները դրեր էր անոր ծոծրակին ու համբուրեր. «Ո՛չ, Պերն» փսփսացեր էր աղջիկը ու վտանգին էն տա՛մ փայրկեանին՝ ցանկութիւնը յանկարծ տիրեր էր իր ամբողջ անձին, կարծրացեր էր առնամուկումը ու տղամարդու կիրքի ու հպարտութեան անծանօթ զգայնութիւն մը պրկեր էր գիմքը եւ անլի ուժգին սեղմեր էր անոր կակուղ միսերը, կծկուած մարմինը եւ փամփուշտներու խլացուցիչ աղմուկին մէջ ի վերջոյ՝ «Ա՛խ... կը սիրեմ քեզ, Հիւտա» ըսեր էր, որովհետեւ աղջիկը չէր կրնար լսել իր ձայնը:

Ձէնքի հարուած մը սուրաց տանիքին վրայէն, մէկը պոռաց դիմացի տունէն: Իրե՛ն էր որ կը կանչէին...: Ցանկարծ ինքզինքին եկաւ, հրեց դուռը, ներս մտաւ:

* * *

—Բաց է դուռը:

Ներս մտաւ Անժէլ: Պերն երկնցած էր անկողնին, ձեռքերը ծոծրակին տակը: Սեղանին լամբը պատին դարձած՝ մեղմ, բեթեւ լոյսով ողողած էր սենեակը:

—Փաթըրտըն նորէ՛ն սկսաս:

—Այո: Նստէ, մամա:

Ուրի մնաց, շուրջը քննեց նորէն, մօտեցաւ տղուն:

Պերնին ձայնը բարձրացեր էր, պոթեկալու մօտ ստիպողականութեամբ մը: Բռնեց մօրը թելէն:

—Մամա կը հասկնա՛ս ինչ ըսել է սիրելը, ամէն ինչովդ, ունեցածովդ, չունեցածովդ սիրել մէկ հոգի միայն, անանկ մէկ անգամէն, կամքէդ անկախ, նոյնիսկ կամքիդ հակառակ, չուզելով՝ որովհետեւ գիտես, թէ փորձանքի կը տանի կոր ոչ թէ թուրք-մուրք ըլլալուն, այլ որովհետեւ անանկ է խենթ սէրը, բայց ձեռքդ չէ, քեզմէ հագար անգամ ուժով է...

Անժէլ անոր բառերէն, դէմքէն ու մանտանդ ձայնէն անդին յանկարծ չարագուշակ վախ մը ունեցաւ ու տեսաւ իրենց տունը, լոյսերը մարած, դռները կղպուած, լսեց փեղկերուն պատին զարնուիլը շրախ-շրախ գէնքի հարուածներու աղմուկէն վեր, ու ինքը ննջասենեակը նստած, միւ-մինակը, գլուխը սեւ լաչակ...: Պատկերը անհետացաւ:

—Պերն, տղաս, պապադ...

—Մի խօսիր անոր մասին:

Լոեց Անձէլ, բայց բան մը փոխուած էր: Անձկութիւնը կը կրծէր ներսը տեղ մը եւ արտակարգ անդորրութիւն մը կը տիրէր սրտին մէջ: Առաջ ծոեցաւ ու տղուն մայելով, գրեթէ յանդիմանակամ, հատիկ-հատիկ խօսեցաւ.

—Մտիկ ըրէ ինչ պիտի ըսեմ: Լաւ մտիկ ըրէ:

Պերն իր մօր հանդէպ գութի ու յանցանքի հսկայ զգացումին հետ՝ միշտ գիտցեր էր անոր հասարակ, կրաւորական երեւոյթին ետին ուրիշ անձի մը գոյութիւնը: Հիմա առաջին անգամն էր որ կ'ընդունարէր ստիկա: Նուաճուած՝ մտիկ ըրաւ:

—Պապադ շատ վշտացած է... դուն չես նանչնար պապադ, շատ բարի մարդ է եւ քեզի խենթի պէս կը սիրէ, հոգին կու տայ... բայց աս գիշեր դուն լացուցիր պապադ...

—Բայց ես...

—Մտիկ ըրէ, տղաս... Ես միշտ կու լամ, ամա մայրերուն լացը լաց չէ... դուն հայրդ լացուցիր, եւ ատկէ մեծ ցաւ չի կայ աշխարհի երեսին:

—Ես ի՞նչ ընեմ, մամա:

Առաջին անգամ ըլլալով, Պերն իր կացութեան յուսահատութեան գիտակցութիւնը ունեցաւ, լախտի հարուածի մը նման: Շուարեցաւ մտածումը ու մօրը դարձաւ, գրեթէ պաղատական մայրամբով մը:

—Ի՞նչ կրնամ ընել...

—Հէչ բան մը չես կրնար ընել: Ոչ պապադ, ոչ ալ ես:

Անձէլին ձայնը ծանր տրտմութիւն մը ունէր.

—Դուն քու սրտիդ ուզածը պիտի ընես, տղաս, Աստուծոյ կամքն է ատիկա, քու ձեռքդ ալ չէ:

—Պերն, տղաս, աս ի՞նչ պատմութիւն է, պապայիդ ինչո՞ւ վշտացուցեր ես:

Պերն շտկուեցաւ անկողինին մէջ:

—Նստէ, մամա, խօսիմք:

Անձէլ նստաւ աթոռին: Բարի, արեւ չտեսած, մաշած դէմքով կին մըն էր, տարիքէն առաջ պառաւութեան նամբան բռնած: Տունէն կ'ելէր միայն շաբաթական գնումները ընելու, եթէ կացութիւնը հանդարտ ըլլար, Եկեղեցի կ'երթար առանձին, հոն իր ծանօթներուն հետ քիչ խօսքի կը բռնուէր ու յետոյ կ'աճապարէր տուն՝ իր սեմեակներուն մտերմութիւնը կարօտցած: Ան լաչակին ու վարսագլաններուն վարժուած էր Պերն, սակայն նորէն արտաոտց երեւոյթ մը կու տային իրեն:

—Պատմութիւն չէ, մամա, իրականութիւն է:

—Պապադ...

—Պապային մասին մի խօսիր:
 Կտրուկ, վերջնական՝ բայց մեղմ: Կեց Անժէլ:
 —Քու մասիդ խօսէ միայն, ինչ կ'ըլլայ: Հիմա նստէ, Բեգի պատմեմ:

Ու Պերն պատմեց ինչպէս Երգահանդէսի մը հանդիպեր էր այդ տաք, սրտքաց աղջկան, ան ալ իրեն պէս պատմութեան ուսում ըրած համալսարանը: Խելացի, լուրջ, ներկայանալի աղջիկ մըն էր: Առաջին վայրկեանէն սիրած էր զայն: Յետոյ՝ Բանի մը անգամ դուրս ելեր էին:

—Ամուսնէն բաժնուած է, մանչուկ մը ունի, երեք տարեկան:
 Լոնց Պերն: Անժէլ չէր կրցած լաւ հետեւիլ, բայց միտքը կառչեցաւ երեք տարեկան երեխային, փորձեց երկվայրկեան մը երեսակայել Պերնին պզտիկութիւնը...

—Յետոյ սիրահարուեցայ, մէկէն, չեմ փոքր ինչպէս, բայց օր մըն ալ գիտէի որ ասանկ աղջիկ մը կը փնտռէի միշտ:

Դուրսէն գէնքի աղմուկը սաստկացեր էր: Անժէլ պատուհանին նայեցաւ:

—Ինչո՞ւ կը կոռէիք կոր հայր ու տղայ: Դո՞ւն թերս բան մը ըսիր:

—Ձէ, ճակը: Նայէ, մամա, սա ալ ըսեմ, սա աղջկան պապան թարք է, մաման ալ արար: Առաջ չէի գիտեր, կարծեցի որ Բրիտանոնայ է: Չէջ թուրքի չի նմանիր:

—Պապադ կարգուելու մասին բաներ մը ըսաւ..
 —Այո, եթէ կրնամ՝ պիտի ամուսնանամ:

Անժէլ վայրկեան մը խորհեցաւ, ուրախանա՞ր թէ տխրէր:
 —Տղաս, գիտե՞ս ինչ կ'ընես:

—Մամա...

Լոնց, մտածումը աւարտած: Դուրսէն գէնքի աղմուկը անլի սաստկացեր էր ու Պերնին այնպէս թուեցաւ, թէ այդ վայրկեանին իրմէ դուրս, անձանօթ, անգութ, կեանքի-մահուան հետ խաղող ուժերու ձեռքը գործիք մըն էր միայն:

—Պապադ...

Ձայնը կ'եցաւ յանկարծ յուզումին ծանրութեան տակ, բայց կրցաւ շարունակել.

—...ասկէ վերջ նոյն Արմենակը չէ, զիտցած եղիր, այս գիշեր մեռաւ, զնաց մարդս... իմ աղուոր մարդս... վախ եմ ըսեր...

Չկրցաւ զսպել արցունքները: Սակայն միայն երկվայրկեան մը: Ու շարունակեց.

—Նայէ, տղաս, չեմ ուզեր որ սա ցաւէն երթայ պապադ... Բայց աշխարհ է, չես գիտեր... առողջութիւնը մեծ բան մը չէ արդէն... Երթայ նէ ամմա՝ ամբողջ կեանքդ հարամ կ'ըլլայ, մեղք ես... ատիկա վերջը մինչեւ գերեզման հետոյ պիտի տա-

նիս, գիտցած եղիր... գաակները ի՞նչ կը հասկնան քի իրենց ծնողքին տարտէն...

— Բայց մամա...

— Մտիկ ըրէ, Պերճ, ողաս, պապայիդ խօսքը պէտք է քալէ աս տունին մէջ, հասկցա՞ր:

Երկվայրկեան մը լռի պէս յստակ էր մտքին մէջ ու խօսեցաւ հանդարտ ձայնով:

— Քեզի գնա՛ ըսա՛ պիտի երթաս: Վաղը առտու չէ՞քէն լեցուր գնա՛, աս փաթեղտըն ալ կեցած կ'ըլլայ: Սահակին քով գնա՛, ան լաւ ընկերդ է: Ես քեզի վաղը կու տամ դրամ որ ապրիս, մէջտեղ չմնաս: Եղը մնաս՝ քովս եկուր, ես դրամ ունիմ, Սահակին քով մայրդ որ երկու օրէն անելի չմնաս, գլուխդ տեղ մը պարտկէ, ամմա չըլլայ որ ամչնաս ըրածէդ, սուտ խօսիս հասնոն կամ պապայիդ դէմ մէկ հատ թերս բան ըսես, կը մեռցնեմ քեզի, գիտցած եղիր:

Լուռ նայեցաւ իր տղուն աչքերուն:

— Աս փորձանքնիմ տակէն պիտի ելլենք: Ես ետէն ձեռք կը գտնեմ ձեզի հաշտեցնելու, ամմա ժամանակ պիտի առնէ, պիտի համբերես, պիտի տոկաս:

Ոտքի կանգնեցաւ, գնաց տղուն քով նստաւ, գրկեց անոր գլուխը, սկսաւ շքել երկայն մագերը՝ «Քիմ անուշիկ տղաս» մըրմուսով, «սիրեր ես, յանցաւոր չես... Աստուած տայ որ երջանիկ ըլլաս, խերով-թարով ընտանիք կազմես»: Յետոյ համբուրեց անոր քաց ալտերը, անշարժացաւ...

Որքան մնացին մայր ու տղայ: Գիշերուան մէջ հրացանի եւ ռումբի աղմուկը դադար չունեցաւ ու խեղդեց անոնց հեկեկանքի մեղմ ձայնը ի վերջոյ, Անժէլ շուկեց գլուխը, խոր շունչ մը առաւ ու ըսաւ:

— Լաւ, ես երթամ պապայիդ քով... դուն ինձի ձգէ ամէն ինչ, ես կը կարգադրեմ հօրդ հետ, տարտ մի ընէր, տղաս, Աստուած մեծ է...

Ու վերջին անգամ փաթթուելով իր տղուն, սիրոյ անդիմադրելի, տառապագին կարօտէ մը նուաճուած՝ Անժէլ նորէն համբուրեց անոր ճակատը, աչքերը եւ ալտերը, ուր անոնց արցունքները իրարու կը խառնուէին, գրկեց անոր վտիտ մարմինը իր ուժեղ թեւերուն մէջ ու սեղմեց, սեղմեց կուրծքին: Յետոյ քակեցան թեւերը ու նայեցաւ անոր. «Իմ անուշիկ տղաս» մըրմուսց ու փորձեց ժպտիլ: Ոտքի կայնեցաւ:

Պերճ ամբողջութեամբ կորսուած էր իրմէ գօրսուոր զգացումներու տակ, ու անկարող շարժելու կամ բան մը ըսելու մօր՝ նայեցաւ անոր աչքերուն, վարսագլաններուն, որ կախուէր էին ֆունքերէն, տեսաւ անոր դէմքին տխրութեան եւ հրճուանքի վեր-

չին արտայայտութիւնը, մինչ սնծանօթ վախի մը սլաքը ծակեց սիրտն ու անցաւ: Մօրը մանր կերպարանքը, կոնակը դարձուցած, արդէն կը մեկնէր սենեակէն, դուրը գոցելէ ետք:

* * *

Ոտքի ելաւ, գնաց պատուհան, բացաւ:

Գիշերուան պղտոր աղմուկը, գէմքի ձայներով խառնուած լեցուց պզտիկ սենեակը: Շատ մօտէն կը թուէր գալ, սակայն գիտէր որ ատիկա հեռուի փոճազանցն էր, գիշերուայ մութով տարօրինակօրէն մեծցած:

Դուրս կախուեցաւ, վախի ու վտանգի մը զրգոյի վայելքին յանձնած զգայարանները, քսալուտ աղէտի մը անձկալի նախազգացումը ներսը, տեղ մի պահուրտած: Փողոցին ծայրը իրենց թաղին էն վտանգաւորկէտն էր, հիմա ամայի՝ բայց հոն էր մահը, կը սպասէր: «Մահը» կրկնեց եւ աչքերը փնտռեցին անոր անձանօթ ներկայութիւնը դիմացի խաւար շէնքերուն մէջ, ուր խեղճ, առանձին մարդիկ կը ճգմուէին փող պատերու տակ. տեղ մը տղեկ մը լեղապատ կծկուէր է, պատուհանի մը ետին մէկը, գէմքը պատրաստ՝ կը սպասէ, հեռուն կին մը սարսափէն ու ցաւէն կը պոռայաւն կողմ սոսկում ու մահ, մահ...

Պայթումները կը մօտենային, շէմքը սկսէր էր ջնցուիլ: Պերճ ներս բաշուեցաւ, բայց չգրեց պատուհանը, զով օդին տուած ճակատը՝ փորձեց մտածողները կարգի դնել. «Վերջին գիշերս է հոս...» խորհեցաւ, «բայց անկարելի բան է, չ'ըլլար, ոչ... ի՞նչ պէս կարելի է» շարունակի, «տունս է աս, սենեակս է, իմս է աս... կը սիրեմ ես աս տունը, աս թաղը» ու գնաց նորէն պատուհանին քով, դուրս կառուեցաւ, բնեց վեր-վար փողոցը. հոն՝ դիմացի շէմքին առջին յարկին վրայ կին մը կ'ապրէր մինակը, վարը ծաղկավախտ մը ամբողջ օրը ծաղիկները կը ջրէր... տանիքը Մոհամմէդ աղանի կը թոցնէր...

Փամփուշտ մը սուրպատանիներուն վրայէն, գնդացի մը աչէն սկսաւ հարսածել, ինքերաբար ներս բաշուեցաւ, յանկարծ լոյսը մարեցաւ, մութ նուանեց աչքերը, գիտակցութիւնը եւ մարմինը արձանացաւ: Մեքենաբար դէպի սեղանին լամբը շարժեցաւ, յետոյ ետ եկաւ կայնեցաւ սենեակին մէջուղը, ըսպասեց:

Այն ատեն էր մեծ ոտք մը պայքեցաւ փողոցին մէջ, իր ոտներուն տակէն իսկ...: Դնին այնպէս բուեցաւ որ սենեակն էր, որ օդը ելաւ, բայց նա դուրսէն փշրուող սուրկիներու աղմուկն ալ լսեց, մինչ հայ շունչ մը պարպուեցաւ՝ քէ լեցեցաւ իր մէջ...: Կեանքի կէտէ յայդբան անեղ պայթում չէր

լսած... չհասկցաւ. «Մահն է ասկա» անցաւ մտքէն, «մի մտածե՛ր բնաւ մահուան մասին, երբեք» ըսեր էր Հիլտան, «միայն կեանքը իրական է, ան միայն արժէք ունի... մնացեալը սուտ է... միայն սէրը, կեանքի սէրը բան մը կ'արժէ, Պերն, ամէն մնացեալը պարապ բան է...»:

—Կու գամ կոր,— ըսաւ բարգաձայն, բայց վայրկեան մը վարանեցաւ: Դուրսը հրացանաձգութիւնը կը շարունակուէր ու էն քիչը կէս ժամ պիտի առնէր մինչև հասնէր Համրա բաղը, անոր ֆովը...

—Անկարելի է:

Խորհեցաւ ու երեակայեց արէն հասած էր անոր երկաթէ դրան առջեւ. «Հիլտա, բաց, ես կ', Պերնը» պիտի շշմջար ու անմիջապէս ետք անոր գարնուրակ տոգունած դէմքը, որ պիտի պայթէր դրան մէջ խնդուի ու հարսոյրի մէջ. «Եկուր ներս... խենթ ես դուն, աս դժոխիկն մէջէկիմչպէ՛ս անցար... հերոս ես ինչ ես». իր քրտնած երեսը փակուկ ձեռքերուն մէջ առած՝ «Գիտեմ... ինձի համար եկար... ա՛յ վտանգին մէջէն, ի՞նչ պիտի ըսեն մամադ ու պապադ, անոնց լոր տուր» ու ինք պիտի գոցէր անոր տափ, կակուղ բերանը ի ձեռքով. «Վերջը, ատ ամբողջը վերջը» պիտի ըսէր, «ոչ, ոչ Պերն, հիմա» պիտի պնդէր ան, «չեմ ուզեր որ ծնողդ վշտանն, երբեք» ու ինք այն ատեն պիտի պատմէր հօրը հետ կոխը ժ մօր խոստումը՝ «Մամայիս ձգէ դուն, ան կը կարգադրէ...»:

Վերցուց վերաբերում: Պաղ էր անեակը: Գոցեց պատուհանը, վերջին անգամ կարօտով նայեցաւ անկողինին, սեղանին վրայի Ալեքսանդրի արձանին, պատմութեան զիբերուն, պատի պատկերներուն. «Վերջը կ'առնեմ» խորեցաւ, «ասիկա կնիկի հարց չէ, չի կրնար ըլլալ» շարունակեց. շաղրութիւնը ցրուած, բայց ներսէն, մտքին մէկ անկիւնէն գոծելով՝ «Ասիկա սկզբունքի մասին է, կեանքի իմաստի հետ ֆայ ունենալու է... անպայման... ամէն կեանք նշարտութիւն է կը փաստէ, նայինք մերը ինչ պիտի ըլլայ»: Կամաց մը դուրսացաւ, հիւրասենակը կըտրած ատեն խոշոր բանի մը գարնոցաւ, բայց չկեցաւ, այլ շարունակեց, արագցուց քայլերը: Մէկ փողոցին դուռը կղպէր էր իր մտնելէն ետք: Բացաւ մութին ք. «Մնաս բարով, տունիկ» անցաւ մտքէն ու տարօրինակ ուրտութեամբ մը լեցուն՝ դուրս նետուեցաւ, դուռը ետին մեղմօրէն փակելով:

* * *

Մութը գրկած, էրիկ-կնիկ նստելին անկողինին վրայ, ֆով ֆովի, իրարու ձեռք բռնած, պասնի, անվարժ սիրահարներու

նման: Կը լսէին դուրսի ժխտրային աղմուկը, սակայն ուրիշ տեղ էին անոնց մտածումները, ատոնք ալ քով քովի, պաշտպանելու իրենց միակ գանձը՝ տղան: Անանուն վախ մը կը ճմլէր Արմենակի սիրտը ու չէր համարձակեր խօսիլ կամ նոյնիսկ խորհիլ այդ մասին. «Աստուած իմ, չըլլայ որ տա՛մ գուլիս բան մը ընէ... ինձի քաշած է» մտածեց, խորունկ շունչ մը առնելով:

— Եւրոն է սիրտս, կնիկ:

— Իմս ալ:

— Աստուած տայ որ...

Չկրցաւ տարտել նախադասութիւնը ու լռեց, ականջները սըրած՝ շուրջի իրարանցումին մէջէն տան ներսը ձայները լսելու համար: Անձէլ հիմա սկսաւ անոր սառած ձեռները շփել:

— Դո՛ւն ինչպէս ես:

Յանկարծական մտերմութիւնը ամուսնին հետ ինքնավստահութիւն մը տուեր էր, որ նոր էր իր փորձառութեան մէջ: Պզտիկ ուրախութիւն մը կը բթթար ներսը...: Սիրոյ, գուրգուրանքի պահանջ մը կը լեցնէր սիրտը, պէտքը զգաց անոր դըպնալու, պաշտպանելու, լսելու անոր հին ձայնը: Մարմինը բիչ մըն ալ մօտեցուց անոր:

— Ես լաւ եմ, ինչ պիտի ըլլամ որ:

Բայց գիտէր որ լաւ չէր, որ անոր ալ կոկորդը իրեն պէս տղուն մտահոգութեամբ խցուեր էր: Անոր սրտին մէջ ալ վախը մտեր էր: Անձէլ ճիգ մը ըրաւ վառ պահելու բիչ առաջուայ ուրախութիւնը. «Եթէ միայն, երկու անուշ խօսք ըսէ» խորհեցաւ, բայց այդ երկվայրկեանին արդէն ռումբի աղմուկը փշրած էր մտածումը. «Ասիկա սովորական ռմբակոծում չէ» անցաւ մտէն ու Արմենակին նայեցաւ:

— Ժամը բանի՞ կայ:

— Ձիտեմ, մէկը անցած ըլլալու է:

Ալ չխօսեցաւ: Աղմուկը դադրած էր ու առտուան գործերը կը ծրագրէր. «Մոմ մը պիտի վառեմ եկեղեցին, երբ աս փոթորիկը անցնի» մտածեց հիմա: Անձէլ երբեք ջերմեռանց չէր եղած, երբեք Աստուծոյ մը գոյութեան, հրաշքներու, դրախտի, Յիսուսի յարութեան չէր կրցած հաւատալ: «Ես իմ Աստուծաւ ունիմ» կ'ըսէր ինքնիրեն, «սն կը հասկնայ գիս» կ'աւելցնէր, երբ եկեղեցիին նամբան կը բռնէր ամէն Կիրակի, երգեցողութեան, պատարագին մտիկ ընելու, «ձայուն պատարագը ուրիշ է» կրկնելով:

Այս հանդարտութեան մէջն էին, զօրաւոր պայթումը ցնցեց երկուհին ալ: Իրարու փաթրուեցան, բայց Արմենակ, ձայնին վրժովնը դեռ ականջին՝ լսեց հիւրասրահին կարասին իշնալը: Մարմինը շտկուեցաւ, պրկուած:

—Կնիկ:

Արդէն ոտքի նետուեր էր:

—Տղան դուրս էլա:

Զարհուրագին ձայնը խեղդուեցաւ կոկորդին մէջ: Յետոյ պո-
ռաց:

—Տղան դուրսն է, կրակին մէջ:

Արմենակ առաջ նետուեցաւ, գարնուեցաւ աթոռի մը, բայց վար չիմկաւ: Երկվայրկեան մը անշարժացաւ կիսամութին մէջ, սենեակին կեղրունը շուարած:

—Ես կ'երթամ կոր:

—Աման, Արմենակ, զգոյշ եղիր, հոգիդ սիրեմ...

Զլսեց անոր խօսքը: Խուճապը պլլուեր էր արդէն մարմնին, որ բաշեց-տարաւ սենեակին դուռը ու չհասած արդէն կոկորդէն կը բզկտուէր անոր անունը՝

—Պե՛րն...

Ուժգին բացաւ դուռը եւ առանց շուրջը նայելու՝ փողոց նետուեցաւ, հրացանաձգութեան էն տաբ պահուն: Բնագոգաբար աջ դարձաւ, նորէն պոռաց տղուն անունը: Հրացաններու աղմուկը խլացուցիչ աստիճանի հասեր էր եւ իր ձայնը կորսուեցաւ ժխորին մէջ: Թեւերը լայն բացած, Արմենակ սկսաւ վազել մութին մէջ գառիվարէն դէպի վար...

—Պե՛րն... Պե՛րն, ո՛ր ես:

Զայնը նորէն կորսուեցաւ: Վազեց, վազեց դէպի փողոցին ծայրը, աջ ու ձախ նայելով գետին ինկած քարերուն, կարասիի կտորներուն: Վարէն, շատ մօտէն, նախագահին ապարանքին կողմերէն գնդացիր մը մէկ կտոր կը կրակէր:

—Պե՛րն... Պե՛րն... Պե՛րն... տուն եկուր, ո՛ր ես...

* * *

Փողոցին ծայրը, Պերն կանգ առաւ: Յիսուն մեթր դէպի վար՝ կը հասնէր Սփիրզ պողոտայ, յետոյ նախագահին ապարանքին ետեւէն պիտի գարնէր դէպի հանրային պարտէզ: Քսան Բայլ ատկէ վերջ՝ կը դառնար աջ ու դէպի վար կը վազէր մինչեւ Համրա փողոցի սկիզբը: Մէյ մը հոն հասնէր՝ տասը Բայլ էր մինչեւ Հիլտային յարկաբաժինը:

Շուրջը բնեց: Պուրնի կողմերէն կոիւի աղմուկը կը շարունակուէր, բայց հոս հանդարտ էր հիմա: Զգուշութեամբ դարձաւ անկիւնը ու կամաց-կամաց յառաջացաւ դէպի Սփիրզ: Լուսինը ամպով ծածկուեր էր ու մութ էր ամէն կողմ: Տուները դազադմերու պէս, պատուհանները կոյր աչքեր, ամբողջ տեսարանը անիրական բնոյթ մը ունէր: Բնաւ Բաղաբը չէր տեսեր զիշեր ա-

տեն: Աջէն, մթութեան մէջէն, խօսակցութեան ձայն մը եկաւ, ցած, քանձր, զգուշաւոր. «Պահակներ ըլլալու են»: Շարունակեց քալել դէպի վար: Երագի մէջ ըլլալու տպաւորութիւն մը: Մէկէն թաւ ձայն մը պատռեց խաւարը.

—Հէ՛յ, կա՛նգ առ: Ո՛վ է ան:

Չվախեցաւ, բայց անմիջապէս քաշուեցաւ դուռի բացուածքի մը մէջ, անշարժացաւ: Գիտէր թէ դէպի ետ ամէն տեսակ ճամբայ գոց էր. «Անկարելի է» կրկնեց մտէն: Աջին Մըրրի բարձր աշտարակին պատուհանները կը վխտային մարդոսմներով, գիտէր: Պահակներուն ձայնը կը մօտենար. «Այս ժամուն ա՛վ արթուն կ'ըլլայ» խորհեցաւ, «մէկ կտոր կը վազեմ պատերուն բովէն, մէյ մը Սփիրգ հասնիմ՝ դիրքին է»: Ճիշդ այդ վայրկեանին, նախագահին ապարանքին կողմէն զէնքի հարուած մը լսեց: Այնքան մօտ թուեցաւ որ վար քաշեց գլուխը. «Հիմա» ըսաւ եւ առաջ նետուեցաւ:

Կտրած էր փողոցը: Կանգ առաւ տունի մը մուտքին, սիրտը ուժգին կը զարնէր: Բայց չմնաց հոն — խոր շունչ մը առաւ՝ ու մութին մէջէն, կարն ու արագ ռստումներով՝ վազեց վեր ու հեռու, մինչեւ որ հասաւ հանրային պարտէզի հրապարակին քով: Մարդու չէր հանդիպեր: Նայեցաւ շուրջի խոշոր շէնքերուն. «Բոլորն ալ խոր բունի մէջ» ըսաւ ինքնիրեն, «եթէ պիտի զարնեն, պիտի զարնեն»: Յանկարծ մայրը միտքը եկաւ. «Խեղճ մամաս, ի՞նչ պիտի ըլլայ եթէ ինձի բան մը պատահի... կեանքը իմաստ չունենալէն ետք՝ մա՛հը ինչու իմաստ պիտի ունենայ եղեր... անիմաստին հետ դիրքին է համակերպիլը...» խորհեցաւ, վերջին շէնքին մեծ դրան մէջ կծկուած: Ամայի էր ամէն կողմ, ամայի ու մոայլ: Դիմացը, փողոցին միւս կողմը՝ համրային պարտէզի ծառերը կտրուած էին կոխներու ընթացքին, ցանկապատը տեղ-տեղ փլած էր: «Եթէ պարտէզին ներսէն վար ծուած վազեմ, ցանկապատին բովէն՝ կրնամ միւս ծայրը հասնիլ» խորհեցաւ:

Չով հով մը սկսեր էր փչել ծովէն: Նստաւ քարի մը վրայ — ծանր յոգնութիւն մը կը քաշէր ոտները դէպի վար: Քննեց շուրջը: Գոց գիտէր այս տեղերը, մանաւանդ քիչ մը վերօք, ուր պարտէզին անդի ծայրը, *Լքայի փթըտի* բունին ու թուփին միջեւ առաջին անգամ համրութիւն էր Հիլտան...: Փողոցային, սեւ շուն մը մօտեցաւ, կանգ առաւ աջին. «Պոպի... պոպի» շշմեաց, «հոս եկար... ի՞նչ գործ ունիս մէջտեղերը այս ատեն»: Շունը ծոծեց գլուխը, պոչը շարժեց, բայց չմօտեցաւ ու հեռացաւ, կորսուեցաւ մութերուն մէջ:

Հրացանածգութիւնը դադար էր: Լուսինը երեւցաւ հիմա ու անոր մեղմ լույսով քննեց պարտէզը: Ամայի էր, ինչպէս եւ շըր-

ջակայքը: Ծառերու տերեւներու խարշափ մը, հոս-հոն գիշերային միջատներու չբրտոց մը. «Ի՛նչ խաղաղ գիշեր է» անցաւ մտքէն, «տասը վայրկեան միայն, տասը...» ու մայրուածքը փնտռեց յիշատակի թուփը: Շունը ետ եկեր էր ու քիչ մը բացօ՛ր՝ զինք կը դիտէր: Կարեւորութիւն չտուաւ:

Մէկէն երացաններն ու ումբերը որոտացին, նորէն Պարնի հրապարակին կողմէն: Պահը խիտ, բիրտ ուժի, կոյր կիրքի, մահուան սարսափի ու կեանքի պոռթկումի խառնուրդ թելադրականութիւն մը ունէր, որ դպաւ իր երեւակայութեան: Նոր բաշտութիւն մը, նոր կորով մը զգաց ներսը. — մէկ ոստումով իջաւ փողոց, հինգ քայլով հասաւ պարտէզին մայրը, ցատկեց ցանկապատին վրայէն ու պակեցաւ ներսը, պատին տակը, անշարժացած: Մկաններն ու զգայարանները պողպատ թելի պէս պիրկ՝ սպասեց: Ոչինչ: Աղմուկը կը շարունակուէր: Պաղ քրքրտինք մը կը ծածկէր մարմինը, բայց ուրախ էր: «Եսալա, Պերն» ըսաւ բարձրաձայն ու երկուտակ՝ վազեց պատին բտուելով պարտէզին ամբողջ երկայնքը, հեծիհեծ հասաւ միւս ծայրը, իրենց սիրոյ անկիւնը ու վերջին նիգով մը՝ փռուեցաւ գետին, պատին ու թուփին պաշտպանութեան տակ: Փրկուած էր: Քանի մը վայրկեան սառած մնաց եղած տեղը, յետոյ թուցան մկանները, վեր բաշեց ոտները, կռնակը տուաւ պատին ու այն ատեն յիշատակները եկան ողողել գիտակցութիւնը...

Երբ բացաւ աչքերը, շունը նորէն բովն էր: «Հէյ, պոպի, զգոյշ եղիր... Ես պատեալ ունիմ հոս ըլլալու, դո՛ւն ինչու հոս ես, հէ՛» փսփսաց, խնդալով: Շունը պոչը շարժեց. «Վա, կեցիր հոս, կարելի է բախտ կը բերես» ըսաւ բքին տակէն, ծունկի եկաւ, սկսաւ շարժիլ դէպի պատին փլած մասը, դուրս սողոսկելու համար: Դիմացը նայեցաւ. մայրը բանդուած էր, ետեւի տունը՝ աւերակ: Քիչ մը աւելի վեր, ծախին, խոշոր, մոռալ, չորսյարկանի կիսատ շինուած շէնք մը կար, բարձր ծառերով շրջապատուած: Առջեւը՝ այրած օրօ մը:

Սպասեց որ լուսինը ամպերան ետին երթայ: Յետոյ մօտեցաւ ցանկապատին բացուածքին, դուրս հանեց գլուխը: Շունը բովը եկեր էր: «Հէյ, պոպի» ըսաւ:

* * *

Ուպիտ լմնուց սամտուփշը, ավերում մէջ գլուշութեամբ սկարէր մը վառեց, ժամացոյցին նայեցաւ լուսնի լոյսով. երկամբ բառորդ կ'անցնէր: Զսաարտած պատուհանէն անգամ մը բնկեց փողոցը, հանրային պարտէզի տարածքը, ծախին նայեցաւ մինչեւ Պրիսթոլ պանդակի շրջանը, պատուհանին տակը երկու ա-

դիւս վրայէ վրայ դրտ ու վրամ նստաւ: Քիչ ետք գրպանէն պզտիկ *թրանսպիտոր* մը հանեց, կոխեց կոճակը ու արաբական սիրային երգի մը մեղմ, բմայլոտ էլետջները, հագիւ լսելի՝ լեցուցին պզտիկ, մթին սենեակը: Հրացանը դրտ ծունկերուն վրայ, կոթնեցաւ անծեփ պատին, զոցեց աչքերը:

Ձկնի ու ռումբերու աղմուկը հագիւ պայթած՝ արդէն արթուն էր, դիրք բռնած պատուհանին բացուածքին բռնելով: Վարը փողոցը սակայն ամայի էր: Ճիշդ այն ատեն լուսնի լոյսը թափեցաւ տեսարանին վրայ. ոչինչ կը շարժէր: Քանի մը վայրկեան արձանացած մնաց, աչքը սահելով վարի ամենայետին մանրամասնութեան, իսկ վրայէն, հրացանը թոյլ բռնած: Յետոյ ետ մութին ֆաշուեցաւ, դէմքը փողոց դարձուցած, ու սպասեց:

Երբ Ֆէլյուզի ձայնը լսեց՝ վար իջաւ աղիւսներէն, գետին նստաւ, կոճակը պատին տուաւ, երկարեց ոտներն ու բացաւ իր ներքին աշխարհը անոր երգին կախարհանքին...: Ուայիտ ֆիշով զոհացող, հանգարտ, լառ, առանձնութիւնը սիրող, տան ու ընտանիքին կապուած երիտասարդ մըն էր: Մէկ բարեկամ ունեցած էր կեանքին մէջ, ան ալ ռումբի պայթումի զոհ գացած էր տարի մը առաջ: Եղբայրը Աւստրալիա գաղթեր էր վերջերս: Հայրը արդէն անցնող ամառ հաւահանգիստին մէջ սպաննուեր էր. աչքերն ու ձեռները կապած էին, բերանը խորձ մը պայթուցիկ թխմած, լուցկին տուած, ու՝ «եալլա, ֆալէ հիմա, շուն» ըսած ու դիտած էին անոր պայթիլը:

— Ուայիտ, ամիս մըն է կ'ըսեմ կոր, ալ պիտի չերթաս ատ կողմերը, կ'արգիլեմ:

- Կիները երահանգ չեն տար այս աշխարհին մէջ:
- Ես կ'իմ չեմ, բու մայրդ եմ:
- Ինչո՞ւ պիտի չերթամ:
- Հազար անգամ ըսի, չեմ ուզեր առ դրամը, հարամ է:
- Դրամը դրամ է:
- Ոչ, տղաս, աստիկա արիւնի դրամ է, ես առանկ դրամ չեմ ուզեր որ մտնէ մեր տունէն ներս:
- Է, ի՞նչ պիտի ընեմ, ինչպէ՞ս պիտի ապրիմք:
- Գնա՛ կառէ... Բայց առանկ պահուրտած տեղէդ անմեղ մարդիկ սպաննել՝ չէ, չ'ըլլար: Պապադ անգամ դէմ կ'ըլլար աստոր: Հիմա հարսդ ալ յղի է, բռնիկ պիտի գայ տունը, ես սակ կը փախչիմ-կ'երթամ, հարսս-բռնիկս կ'առնեմ կ'երթամ, գիտցած եղի:
- Ո՞ր կ'երթաս, մամա:
- Ես չեմ խնդար կոր, Ուայիտ: Զառակ պիտի ունենաս, սուրբ բան է աստիկա:
- Ա՛տ ինչ գործ ունի ասոր մէջ:

—Ամէն ինչ գործ ունի մահուան հետ: Ինծի խօսք տուր, այս վայրկեանին, որ ա՛լ մարդ պիտի չմեռնես: Կամիան ալ նոյնը կ'ըսէ կոր:

—Խօսք չեմ կրնար տալ, մամա:

—Խօսք տուր հիմա, տունէն չելած:

—Մի պոռար, դրացիները կը լսեն: Համէ՛ ձեռքդ հրացանին վրայէն:

—Իմ տղաս ո՞նց գործ պիտի չըլլայ: Կ'անհիծեմ բեզ, Աստուած վկայ:

—Լաւ: Համէ՛ ձեռքդ հրացանին վրայէն: Ճամբայ տուր, ի՞նչ է դրան մէջ կեցեր ես:

—Այս ժամուն ո՛ր կ'երթաս կոր: Աստուայ մէկուկէսն է:

—Խոստացած եմ Տաւրոսին: Վերջին անգամ մը երթամ: Պատուոյ խօսք կու տամ բեզի, մարդ չեմ գարներ այլեւս, լմընցաւ, եղա՛ն:

Յէլլուզին երզը հասեր էր թրանգիսթորէն: Ոտքի ելաւ, մօտեցաւ պատուհանին: Ոչինչ փոխուած էր: Հսկայ ծառերը կը քանաւային հակառակ հրացանաճգութեան աղմուկին. «Պուրճէն է» խորհեցաւ, «Իպրահիմը հոն է հիմա... վաղը բովը կ'երթամ, միասին կ'ըլլանք ասկէ ետք»: Ետ իր տեղը պիտի դառնար, երբ պարտէզին ցանկապատին անկիւնին մօտ շարժում մը նշմարեց: Սրեց աչքերը. այո, սեւ բան մը, շուրթի նման, կը շարժէր... Վերցուց հրացանը, նշան առաւ, սպասեց, ամբողջ մարմինը մէկ պրկուածքի մէջ բռնուած:

Յետոյ տեսաւ, որ պատին ճեղքին մէջէն սեւ մարմին մը կամաց-կամաց դուրս կը շարժէր...

—Ա՛ս ինչ է,— մոլտաց, վար իջեցուց հրացանը, զգուշութեամբ դուրս հանեց զլուխը պատուհանէն:

—Շուն է եղեր:

հնդաց...: Միտը հանգիստ էր: «Վայ շուն, վայ» ըսաւ բարձրաձայն, «բեզի լաւ մը վախցնեմ հիմա» ու առանց նշան առնելու, պարպեց հրացանը շան ուղղութեամբ: Մետաղեայ, բութ «թըփ» ձայն մը հանեց հրացանին ձայնագայիչը: Յետոյ լռութիւն...

Սեւ շուրթ ա՛յ չէր շարժեր, մինչ շան կերպարանքը արագ շարժումով մը ետ փախաւ ու կորսուեցաւ մթութեան մէջ:

* * *

Տարուած իր խելայեղ անապարամբէն ու մութը բզկտող կրփի ծխորէն, Արմենակ չտեսաւ երեք պահակներուն կերպարանքը:

ու երբ անոնք զինքը բռնած կեցուցին՝ արաբերէն մէկ բառ միայն գտաւ ըսելու անոնց՝

—Տղաս... տղաս...

Քանի մը վայրկեան առաւ մինչեւ որ կրցաւ հասկցնել, թէ տղան, միակ տղան տունէն դուրս ելած է սխալմամբ. «Հայր ու տղայ պատիկ կոխ մըն էր, գիտէ՛ք, միշտ կ'ըլլան...» բառ հեւի-հեւ իր կող արաբերէնով, «ամէն կողմ կոխ կայ, զէնք ու փամփուշտ... կը վախճամ որ բան մը ըլլայ... գտնեմ որ տուն երթանք» ըսաւ ու պաղատումք աչքերուն՝ անոնց դէմքերը փնտռեց մութին մէջ:

—Դուրս ելլելու ատեն չէ,— ըսաւ կարճահասակ պահակը:

—Այո,— անեցուց պէտաւոր պահակը,— մէկը տեսանք քիչ առաջ, բայց մութին մէջ կորսուեցաւ... Սփիրզէն վեր գացած ըլլալու է:

—Բայց տուն գնա՛, խառանա, շատ վտանգաւոր զիշեր է:

Արմենակ չսեց վերջին խօսքը ու արդէն կը վազէր Սփիրզէն վեր, բոլորովին անգիտակ, անտարբեր իր անձին ապահովութեան: Մայրը չհասած՝ շունչը բռնուած էր, սրունքները կը ցաւէին: Ուժասպառ՝ նստաւ դռնամէջի մը քարին: Երբ գտաւ շունչը, փորձեց մտածել...: «Կեանքիս էն մեծ տագնապն է ասիկա, էն մեծ ողբերգութիւնը» անեցուց ու չէր գիտեր, թէ ինքզինքը պատժելու համար էր որ այս փորձանքին հասեր էր, իր հայրութեան ու հայրութեան գերագոյն ծէնն էր, որ կ'ընէր, թէ տրդուն վրայ հեղինակութիւնը պահելու համար էր...: Միտքը բերաւ իր վերջին խօսքերը՝ «Քեզի կը սատկեցնեմ... կ'անիծեմ... կորսուէ աս տունէն...», բայց ատոնց ներքին կիրքը, գայրոյթին սաստկութիւնը չկար սրտին մէջ այլեւ: «Հարկաւ» խորհեցաւ, «բարկութեան ատեն կ'ըսուին ատանկ խօսքեր, մարդ ապտակ ալ կու տայ, բայց կարեւորը ատ չէ... հայր մը իր գաւակին սրտին մէջ միայն պէտք է թաղուի, որ չմեռնի, որ արժէ կեանքը ապրած ըլլալ...»:

Գլուխը առաւ փետրուն մէջ. «Ա՛յ, տղաս, ո՛ր ես, քեզի ինչպէ՛ս պիտի գտնեմ» հառաչեց ու դժուարութեամբ ստի ելաւ ու շարունակեց իր դանդաղ վազքը ամայի մայքերէն, ամէն կողմէ պայթող, սուրացող գնդակներու մէջէն դէպի հանրային պարտէզ: Հազիւ հասած մայքին ծայրը՝ հրացանաձգութիւնը անլի ես սաստկացաւ ու իրեն տարօրինակ, տարերային ուժ մը տրուաւ, որ զինքը առաջ նետեց հրապարակին մէջտեղը՝ ուր յանկարծ կանգ առաւ: Չորս կողմը նայեցաւ. «Պե՛րն, Պե՛րն... ո՛ր ես» պողոսց աղիւղորմ ձայնով մը, որ խեղդուեցաւ զէնքի աղմուկին մէջ: Գիշերը գրկեր էր զինքը ու անոր գաղտնի, անթափանցելի մարմինը տիեզերքի չափ անսահման բուեցաւ իրեն, ու

իր տղամանկանը, կորսուած առշաւտ...: Կալու չափ տրրտում էր ու խորունկ, անապրելի վախ մը կը տրորէր զինքը: Չըկրցաւ յառաջանալ, գալի՞ր ողբերգութեան մը ցաւէն սարսափած: — Ա՛խ, ինչ ըրի ես...

Ու ողբը քակուեցաւ բերնէն, բայց ան կրցաւ պահել զայն իր տղամարդու գուսպ, անարցունք, ներսը չափին մէջ ու գլուխը աջ ու ձախ շարժելով՝ յառաջացաւ դէպի պարտէզին մայթը: Ո՛ր երթար՝ չէր գիտեր, ի՞նչ օգուտ պոռալը՝ երբ ինք վունտեր էր զայն եւ երբ շուրջի աղմուկէն ոչինչ կը լսուէր: Քայեց՝ մահուան դատապարտուածի մը անվերադարձ, անդիմադրելի կշռոյթով, ափերը գոցած, հագիւ շուրջը նայելով այլեւս, բայց կրկնելով ներսէն, տեղէ մը. «Կու գամ կոր, տղաս, կու գամ կոր, ըսպասէ քիչ մըն ալ... մի վախճար... ա՛խ, իմ մանչուկս...»:

Քրտիմբներու մէջ ու գով հովէն սարսուալով, յոգնութեան տակ ուժասպառ՝ Արմենակ հասաւ մայթին հեռաւոր ծայրը ու փլաւ պարտէզի ցանկապատին անկիւնին հով, կոնակը տուած պատին քարերուն...: Ո՛րքան ատեն անցաւ...: Սեւ շուն մը քակուեցաւ մութին մարմինէն, եկաւ առջին կայնեցաւ, պոչը խաղցնելով: Սպասեց...: Երբ Արմենակ բացաւ աչքերը՝ յանկարծակիի եկաւ, ձեռքը առաջ շարժեց, յետոյ պզտիկ հրճուանք մը խրտեցաւ ներսը. «Հէ՛յ, շուն» շշմջաց, «գո՞ն ուրկէ բուսար, հոս եկուր նայիմ» անեցուց: Առանձին չէր գոնէ, ու մոայլ աշխարհին մէջ կեանքի մտերմութեան մը, ներկայութեան մը պատկերն էր ան, հոն բայլ մը հեռու կամ մօտ, իր տառապանքին մասնակից: Յետոյ խօսեցաւ անոր.

— Հէ՛յ, շուն, տղաս տեսա՞ր աս կողմերը... աղուոր երիտասարդ մը, քիչ մը տա՞ր գլուխ, իր պապայիւն պէս, հէ՛, չունեսա՛ր:

Պոչը նորէն շարժեց շունը: Երկու-երեք մեծ ումբեր պայթեցան նաւահանգիստին կողմերը: Լուսինը նորէն կորսուեւ էր: «Աս ծամուն ո՞ր խենթը այս կողմերը կը թափառի» ըսաւ ինքնին: Ինքնին ու փորձեց հասկնալ ու բացատրել իր կացութիւնը, ինչպէս հոս, մայթին երկայնքին հասեր էր եւ Աստուած գիտէ ուր էր իր տղան, ո՞րչ էր թէ մեռած, տեղ մը ինկած միս-միմակ, մարդորսի մը յիմար գնդակին գոհ կամ ումբէ մը բզիկ-բզիկ եղած:

Նայեցաւ շուրջը — շունը անհետացեր էր: Ու այդ վայրկեանին ան սուր պահանջը զգաց անոր ներկայութեան, ձայն հանեց, կանչեց, փորձեց մութը ծակել աչքերով ու գտնել զայն: Չըկար: Այն ատեն որոշեց ոտի ելլել ու շարունակել քայլել ամէն կողմ, որ կը տարածուէր չորս դիւն, քայլել, նայիլ, փնտրել, հարցնել, մինչեւ որ հատնէր տիեզերքի ծամանակը ու տղան հովը գար, ետ տուն մտնէր...: Ռումբ մը յանկարծ մօտիկ տեղ մը

նման: Կը լսէին դուրսի ժխորային աղմուկը, սակայն ուրիշ տեղ էին անոնց մտածումները, ատոնք ալ բով բովի, պաշտպանելու իրենց միակ գանձը՝ տղան: Անանուն վախ մը կը նմէր Արմենակի սիրտը ու չէր համարձակեր խօսիլ կամ նոյնիսկ խորհիլ այդ մասին. «Աստուած իմ, չըլլայ որ տամ գլուխ բան մը ընէ... ինձի Բաշաձ է» մտածեց, խորունկ շունչ մը առնելով:

— Ծանր է սիրտս, կնիկ:

— Իմս ալ:

— Աստուած տայ որ...

Չկրցաւ աւարտել նախադասութիւնը ու լռեց, ականջները սրբած՝ շուրջի իրարանցումին մէջէն տան ներսը ձայները լսելու համար: Անձէլ հիմա սկսաւ անոր ստուած ձեռները շփել.

— Դո՛ւն ինչպէս ես:

Ցանկարձական մտերմութիւնը ամուսնին հետ ինքնալստահութիւն մը տուեր էր, որ նոր էր իր փորձառութեան մէջ: Պզտիկ ուրախութիւն մը կը բթբթար ներսը...: Սիրոյ, գուրգուրանքի պահանջ մը կը լեցնէր սիրտը, պէտքը զգաց անոր դըպնալու, պաշտպանելու, լսելու անոր եին ձայնը: Մարմինը քիչ մըն ալ մօտեցուց անոր:

— Ես լաւ եմ, ինչ պիտի ըլլամ որ:

Բայց գիտէր որ լաւ չէր, որ անոր ալ կոկորդը իրեն պէս տղուն մտահոգութեամբ խցուեր էր: Անոր սրտին մէջ ալ վախը մտեր էր: Անձէլ ճիգ մը ըրաւ վառ պահելու քիչ առաջուայ ուրախութիւնը. «Եթէ միայն, երկու անուշ խօսք ըսէ» խորհեցաւ, բայց այդ երկվայրկեանին արդէն ռումբի աղմուկը փշրած էր մտածումը. «Ասիկա սովորական ուրախութիւն չէ» անցաւ մտէն ու Արմենակին նայեցաւ:

— Ժամը քանի՞ կայ:

— Չիտեմ, մէկը անցած ըլլալու է:

Այլ չիօսեցաւ: Աղմուկը դադարած էր ու առտուան գործերը կը ծրագրէր. «Մոմ մը պիտի վառեմ եկեղեցին, երբ աս փոթորիկը անցնի» մտածեց հիմա: Անձէլ երբեք ջերմեռանդ չէր եղած, երբեք Աստուծոյ մը գոյութեան, հրաշքներու, դրախտի, Յիսուսի յարութեան չէր կրցած հաւատալ: «Ես իմ Աստուծոս ունիմ» կ'ըսէր ինքնիրեն, «ան կը հասկնայ զիս» կ'աւելցնէր, երբ եկեղեցիին մամբան կը բռնէր ամէն Կիրակի, երգեցողութեան, պատարագին մտիկ ընելու, «հայուն պատարագը ուրիշ է» կրկնելով:

Այս հանդարտութեան մէջն էին, գօրատր պայթումը ցնցեց երկումն ալ: Իրարու փաթթուեցան, բայց Արմենակ, ձայնին վրժովները դէռ ականջին՝ լսեց հիւրասրահին կարասիին իյնալը: Մարմինը շտկուեցաւ, պրկուած:

—Կնիկ:

Արդէն ոտքի նետուեր էր:

—Տղան դուրս ելաւ:

Զարհուրագին ձայնը խեղզուեցաւ կոկորդին մէջ: Յետոյ պո-
նաց:

—Տղան դուրսն է, կրակին մէջ:

Արմենակ առաջ նետուեցաւ, զարնուեցաւ աթոռի մը, բայց վար չիմկաւ: Երկվայրկեան մը անշարժացաւ կիսամութին մէջ, սենեակին կեդրոնը շուարած:

—Ես կ'երթամ կոր:

—Աման, Արմենակ, զգոյշ եղիւր, հոգիդ սիրեմ...

Զլսեց անոր խօսքը: Խունապը պլլուեր էր արդէն մարմնին, որ բաշեց-տարաւ սենեակին դուռը ու շիասած արդէն կոկորդէն կը բզկտուէր անոր անունը՝

—Պե՛րն...

Ուժգին բացաւ դուռը եւ առանց շուրջը նայելու՝ փողոց նետ-
ուեցաւ, հրացանաձգութեան էն տա՛ք պահուն: Բնագոյաբար աջ դարձաւ, նորէն պոռաց տղուն անունը: Հրացաններու աղմուկը խլացուցիչ աստիճանի հասեր էր եւ իր ձայնը կորսուեցաւ ժխ-
րին մէջ: Թեւերը լայն բացած, Արմենակ սկսաւ վազել մութին
մէջ գառիվարէն դէպի վար...

—Պե՛րն... Պե՛րն, ո՛ր ես:

Զայնը նորէն կորսուեցաւ: Վազեց, վազեց դէպի փողոցին ծայրը, աջ ու ձախ նայելով գետին ինկած ֆարերուն, կարասիի կտորներուն: Վարէն, շատ մօտէն, նախագահին ապարանքին կողմերէն գնդացիք մը մէկ կտոր կը կրակէր:

—Պե՛րն... Պե՛րն... Պե՛րն... տուն եկուր, ո՛ր ես...

* * *

Փողոցին ծայրը, Պերն կանգ առաւ: Յիսուն մեթր դէպի վար՝ կը հասնէր Սփիրոզ պողոտայ, յետոյ նախագահին ապարանքին ետեւէն պիտի գարնէր դէպի հանրային պարտէզ: Քսան բայլ ասկէ վերջ՝ կը դառնար աջ ու դէպի վար կը վազէր միմչեւ Համբա փողոցի սկիզբը: Մէյ մը հոն հասնէր՝ տասը բայլ էր մինչեւ Հիլտային յարկաբաժինը:

Շուրջը քննեց: Պուրնի կողմերէն կոխի աղմուկը կը շարու-
նակուէր, բայց հոս հանդարտ էր հիմա: Զգուշութեամբ դարձաւ անկիւնը ու կամաց-կամաց յառաջացաւ դէպի Սփիրոզ: Լուսինը ամպով ծածկուեր էր ու մութ էր ամէն կողմ: Տուները դազաղ-
մներու պէս, պատուհանները կոյր աչքեր, ամբողջ տեսարանը անիրական բնույթ մը ունէր: Բնաւ ֆաղաբը չէր տեսեր գիշեր ա-

տեն: Աջէն, մթութեան մէջէն, խօսակցութեան ձայն մը եկաւ, ցած, թանձր, զգուշաւոր. «Պահակներ ըլլալու են»: Շարունակեց քալել դէպի վար: Երագի մէջ ըլլալու տպաւորութիւն մը: Մէկէն թաւ ձայն մը պատռեց խաւարը.

— Հէ՛յ, կա՛նգ առ: Ռ՛վ է ան:

Զվախեցաւ, բայց անմիջապէս փաշտեցաւ դուռի բացուածքի մը մէջ, անշարժացաւ: Գիտէր թէ դէպի ետ ամէն տեսակ նամբայ գոց էր. «Անկարելի է» կրկնեց մտէն: Աջին Մըրրի բարձր աշտարակին պատուհանները կը վիտային մարդոքաներով, գիտէր: Պահակներուն ձայնը կը մօտենար. «Այս ժամուն ք՛վ արթուն կ'ըլլայ» խորհեցաւ, «մէկ կտոր կը վազեմ պատերուն քովէն, մէյ մը Սփիրգ հասնիմ՝ դիրին է»: Ժիշդ այդ վայրկեանին, նախագահին ապարանքին կողմէն զէնքի հարուած մը լսեց: Այնքան մօտ թուեցաւ որ վար փաշեց գլուխը. «Հիմա» ըսաւ եւ առաջ նետուեցաւ:

Կտրած էր փողոցը: Կանգ առաւ տունի մը մուտքին, սիրտը ուժգին կը զարնէր: Բայց չմնաց հոն — խոր շունչ մը առաւ՝ ու մութին մէջէն, կարն ու արագ ոստումներով՝ վազեց վեր ու հետու, մինչեւ որ հասաւ հանրային պարտէզի հրապարակին բով: Մարդու չէր հանդիպեր: Նայեցաւ շուրջի խոշոր շէնքերուն. «Բոլորն ալ խոր բունի մէջ» ըսաւ ինքնիրեն, «եթէ պիտի գարնեն, պիտի գարնեն»: Յանկարծ մայրը միտքը եկաւ. «Խեղճ մամաս, ի՛նչ պիտի ըլլայ եթէ ինծի բան մը պատահի... կեանքը իմաստ չունենալէն ետք՝ մա՛հը ինչու իմաստ պիտի ունենայ եղեր... անիմաստին հետ դիրին է համակերպիլը...» խորհեցաւ, վերջին շէնքին մեծ դրան մէջ կծկուած: Ամայի էր ամէն կողմ, ամայի ու մռայլ: Դիմացը, փողոցին միւս կողմը՝ հանրային պարտէզի ծառերը կտրուած էին կոխներու ընթացքին, ցանկապատը տեղ-տեղ փլած էր: «Եթէ պարտէզին ներսէն վար ծռած վազեմ, ցանկապատին բովէն՝ կրնամ միւս ծայրը հասնիլ» խորհեցաւ:

Ձով հով մը սկսեր էր փչել ծովէն: Նստաւ քարի մը վրայ — ծանր յոգնութիւն մը կը փաշէր ոտները դէպի վար: Քննեց շուրջը: Գոց գիտէր այս տեղերը, մանաւանդ քիչ մը վերօք, ուր պարտէզին անցիկի ծայրը, *Էթալիֆթը*ի բունին ու թուփին միջեւ առաջին անգամ համբուրեր էր Հիլտան...: Փողոցային, սեւ շուն մը մօտեցաւ, կանգ առաւ աջին. «Պոպի... պոպի» շշմշաց, «ձու եկուր... ի՛նչ գարծ ունիս մէջտեղերը այս ատեն»: Շունը ծոցը գլուխը, պոչը շարժեց, բայց չմօտեցաւ ու հեռացաւ, կորսուեցաւ մութերուն մէջ:

Հրացանաձգութիւնը դադար էր: Լուսինը երեցաւ եիմա ու անոր մեղմ լռյտով քննեց պարտէզը: Ամայի էր, ինչպէս եւ շըր-

ջակայքը: Ծանելու տերեւներու խարշափ մը, հոս-հոն գիշերա-
յին միջատներու չթրտոց մը. «Ի՛նչ խաղաղ գիշեր է» անցաւ
մտքէն, «տասը վայրկեան միայն, տասը...» ու նայուածքը
փնտռեց յիշատակի թուփը: Շունը ետ եկեր էր ու քիչ մը բա-
ցօփ՝ զինք կը դիտէր: Կարեւորութիւն չտուաւ:

Մէկէն հրացաններն ու ռումբերը որոտացին, նորէն Պորնի
հրապարակին կողմէն: Պահը խիտ, բիրտ ուժի, կոյր կիրքի,
մահուան սարսափի ու կեանքի պոռթկումի խառնուրդ թելադրա-
կանութիւն մը ունէր, որ դպաւ իր երեւակայութեան: Նոր Բաջու-
թիւն մը, նոր կորով մը զգաց ներսը.— մէկ ուստումով իջաւ
փողոց, հինգ Բայլով հասաւ պարտէզին մայթը, ցատկեց ցան-
կապատին վրայէն ու պտուկեցաւ ներսը, պատին տակը, անշար-
ժացած: Մկաններն ու զգայարանները պողպատ թելի պէս
պիրկ՝ սպասեց: Ոչինչ: Ազմուկը կը շարունակուէր: Պաղ Բըր-
տինք մը կը ծածկէր մարմինը, բայց ուրախ էր: «Շալլա, Պերն»
ըսաւ բարձրաձայն ու երկուտակ՝ վագեց պատին բստելով
պարտէզին ամբողջ երկայնքը, հեծիհեծ հասաւ միւս ծայրը, ի-
րենց սիրոյ անկիւնը ու վերջին ճիգով մը՝ փոռեցաւ գետին,
պատին ու թուփին պաշտպանութեան տակ: Փրկուած էր: Քանի
մը վայրկեան սառած մնաց եղած տեղը, յետոյ թուլցան մկան-
ները, վեր Բաշեց ոտքերը, կոնակը տուաւ պատին ու այն ատեն
յիշատակները եկան ռոգոյել գիտակցութիւնը...

Երբ բացաւ աչքերը, շունը նորէն Բովն էր: «Հէյ, պոպի,
զոյշ եղիր... ես պատճառ ունիմ հոս ըլլալու, դո՛ւն ինչու հոս
ես, հէ՛» փափսաց, խնդալով: Շունը պոչը շարժեց. «Լաւ, կեցիր
հոս, կարելի է բախտ կը բերես» ըսաւ քիչն տակէն, ծունկի ե-
կաւ, սկսաւ շարժիլ դէպի պատին փլած մասը, դուրս սողոսկե-
լու համար: Դիմացը նայեցաւ. մայթը Բանդուած էր, ետեւի
տունը՝ անբակ: Քիչ մը անելի վեր, ձախին, խոշոր, մոռյլ,
չորսյարկանի կլիսաւ շինուած շէնք մը կար, բարձր ծառերով
շրջապատուած: Առջեւը՝ այրած օթօ մը:

Սպասեց որ լուսինը ամպերուն ետին երթայ: Յետոյ մօտե-
ցաւ ցանկապատին բացուածքին, դուրս հանեց գլուխը: Շունը
Բովը եկեր էր: «Հէյ, պոպի» ըսաւ:

* * *

Ուսկիտ լմնցուց սամուիչը, ափերուն մէջ գլուշուրեամբ սի-
կարէք մը վառեց, ժամացոյցին նայեցաւ լուսնի լոյսով. երկուրը
բառորդ կ'անցնէր: Չաւարտած պատուհանէն անգամ մը կ'անց
փողոցը, համրային պարտէզի տարածքը, ձախին նայեցաւ միւ-
շե Պրիսթոլ պամդակի շրջանը, պատուհանին սակը երկու ա-

դիւս վրայէ վրայ դրաւ ու վրան նստաւ: Քիչ ետք գրպանէն պզտիկ *Քրանդիսթոր* մը հանեց, կռօտեց կոնակը ու արաբական սիրային երգի մը մեղմ, բմայրօտ ելեւէջները, հագիւ լսելի՝ լեցուցին պզտիկ, մթին սենեակը: Հրացանը դրաւ ծունկերուն վրայ, կռքնեցաւ անծեփ պատին, գոցեց աչքերը:

Ձէնքի ու ումբերու աղմուկը հագիւ պայթած՝ արդէն արթուն էր, դիրք բռնած պատուհանին բացուածքին բովը: Վարը փողոցը սակայն ամայի էր: Ժիշդ այն ատեն լուսնի լոյսը թափեցաւ տեսարանին վրայ, ոչինչ կը շարժէր: Քանի մը վայրկեան արձանացած մնաց, աչքը սահելով վարի ամենայնտին մանրամասնութեան, իսկ վրայէն, հրացանը թոյլ բռնած: Յետոյ ետ մուփին քաշուեցաւ, դէմքը փողոց դարձուցած, ու սպասեց:

Երբ Ֆէլրուզի ձայնը լսեց՝ վար իջաւ աղիւսներէն, գետին նստաւ, կոնակը պատին տուաւ, երկարեց ոտներն ու բացաւ իր ներքին աշխարհը անոր երգին կախարդանքին...: Ուստի Բիշով գոհացող, հանդարտ, լուս, առանձնութիւնը սիրող, տան ու ընտանիքին կապուած երիտասարդ մըն էր: Մէկ բարեկամ ունեցած էր կեանքին մէջ, ան ալ ումբի պայթումի գոհ գացած էր տարի մը առաջ: Եղբայրը Աւստրալիա գաղթեր էր վերջերս: Հայրը արդէն անցնող ամառ նախահանգիստին մէջ սպաննուեր էր. աչքերն ու ձեռքերը կապած էին, բերանը խուրձ մը պայթուցիկ թխմած, լուցկին տուած, ու՝ «եալլա, Բալէ հիմա, շուն» ըսած ու դիտած էին անոր պայթիլը:

—Ուստի, ամիս մըն է կ'ըսեմ կոր, ա'լ պիտի չերթաս ատ կողմերը, կ'արգիլեմ:

- Կիները հրահանգ չեն տար այս աշխարհին մէջ:
- Ես կիւն չեմ, Բու մայրդ եմ:
- Ինչո՞ւ պիտի չերթամ:
- Հազար անգամ ըսի, չեմ ուզեր ատ դրամը, հարամ է:
- Դրամը դրամ է:
- Ոչ, տղաս, ատիկա արիւնի դրամ է, ես ատանկ դրամ չեմ ուզեր որ մտնէ մեր տունէն ներս:
- Է, ի՞նչ պիտի ընեմ, ինչպէ՞ս պիտի ապրիմք:
- Գնա՛ կուտէ... բայց ատանկ պահուրտած տեղէն ամմեղ մարդիկ սպաննել՝ չէ, չ'ըլլար: Պապագ անգամ դէմ կ'ըլլար ատոր: Հիմա հարսդ ալ յղի է, թունիկ պիտի գայ տունը, ես ասկէ կը փախչիմ-կ'երթամ, հարսս-թոռնիկս կ'առնեմ կ'երթամ, գիտցած եղիր:
- Ո՞ր կ'երթաս, մտմա:
- Ես չեմ խնդար կոր, Ուստի: Զատակ պիտի ունենաս, սուրբ բան է ասիկա:
- Ա՛տ ինչ գործ ունի ասոր մէջ:

—Ամէն ինչ գործ ունի մահուան հետ: Ինծի խօսք տուր, այս վայրկեանին, որ ա՛լ մարդ պիտի չվեոցնես: Լամբան ալ նոյնը կ'ըսէ կոր:

—Խօսք չեմ կրնար տաք, մամա:

—Խօսք տուր հիմա, տունէն չելած:

—Մի պտտար, դրացիները կը լսեն: Հանէ ձեռքդ հրացանին վրայէն:

—Իմ տղաս ոճրագործ պիտի չըլլայ: Կ'անիծեմ բեգ, Աստուած վկայ:

—Լա: Հանէ ձեռքդ հրացանին վրայէն: Ճամբայ տուր, ի՞նչ է դրան մէջ կեցեր ես:

—Այս ժամուն ո՛ր կ'երթաս կոր: Ատտուայ մէկուկէսն է:

—Խոստացած եմ Տաուտին: Վերջին անգամ մը երթամ: Պատուոյ խօսք կու տամ բեգի, մարդ չեմ գարներ այլես, լմրն-ցաւ, եղա՛ւ:

Ֆէյրուզին երգը հատեր էր թրանգիսթորէն: Ոտքի էլաւ, մօտեցաւ պատուհանին: Ոչինչ փոխուած էր: Հսկայ ծառերը կը բնանային հակառակ հրացանածգութեան աղմուկին. «Պուրնէն է» խորհեցաւ, «Դարահիմը հոն է հիմա... վաղը բովը կ'երթամ, միասին կ'ըլլանք ասկէ ետք»: Ետ իր տեղը պիտի դառնար, երբ պարտէզին ցանկապատին անկիւնին մօտ շարժում մը նշմարեց: Սրեց աչքերը. այո, սեւ բան մը, շուրթի նման, կը շարժէր...: Վերցուց հրացանը, նշան առաւ, սպասեց, ամբողջ մարմինը մէկ պրկուածքի մէջ բռնուած:

Յետոյ տեսաւ, որ պատին նեղիւն մէջէն սեւ մարմին մը կամաց-կամաց դուրս կը շարժէր...

—Ա՛ս ինչ է,— մոլտաց, վար իջեցուց հրացանը, զգուշու-թեամբ դուրս հանեց գուլթը պատուհանէն:

—Շուն է եղեր:

Խնդաց...: Սիրտը հանգիստ էր: «Վայ շուն, վայ» ըսաւ բարձրաձայն, «բեգի լաւ մը վախցնեմ հիմա» ու առանց նշան առնելու, պարպեց հրացանը շան ուղղութեամբ: Մետաղեայ, բուր «թրփ» ձայն մը հանեց հրացանին ձայնագայիչը: Յետոյ լուսին...

Սեւ շուքը ա՛լ չէր շարժեր, մինչ շան կերպարանքը արագ շարժումով մը ետ փախաւ ու կորսուեցաւ մթութեան մէջ:

* * *

Տարուած իր խելայեղ անապարանքէն ու մութը բզկտող կըր-փի ժխորէն, Արմենակ չտեսաւ երեք պահակներուն կերպարանքը

ու երբ անոմֆ զինքը բռնած կեցուցին՝ արաբերէն մէկ բառ միայն գտաւ ըսելու անոնց՝

—Տղաս... տղաս...

Քանի մը վայրկեան ատաւ մինչեւ որ կրցաւ հասկցնել, թէ տղան, միակ տղան տունէն դուրս ելած է սխալմամբ. «Հայր ու տղայ պզտիկ կռիւ մըն էր, զիտէք, միշտ կ'ըլլան...» ըսաւ հեւի-հեւ իր կաղ արաբերէնով, «ամէն կողմ կռիւ կայ, զէնք ու փամփռուշտ... կը վախճամ որ բան մը ըլլայ... գտնեմ որ տուն երթանք» ըսաւ ու պաղատամբ աչքերուն՝ անոնց դէմքերը փնտռեց մութին մէջ:

—Դուրս ելլելու ատեն չէ,— ըսաւ կարճահասակ պահակը:

—Այո,— անլցուց պէտառը պահակը,— մէկը տեսամք քիչ առաջ, բայց մութին մէջ կորսուեցաւ... Սփիրզէն վեր գացած ըլլալու է:

—Բայց տուն գնա՛, *խառանա*, շատ վտանգաւոր գիշեր է:

Արմենակ շլտեց վերջին խօսքը ու արդէն կը վազէր Սփիրզէն վեր, բոլորովին անզիտակ, անտարբեր իր անձին աստիճաններէն: Ծայրը չհասած՝ շունչը բռնուած էր, սրունքները կը ցաւէին: Ուժասպառ՝ նստաւ դռնամէջի մը բարին: Երբ գտաւ շունչը, փորձեց մտածել...: «Կեանքիս էն մեծ տագնապն է ասիկա, էն մեծ ողբերգութիւնը» անլցուց ու չէր գիտեր, թէ ինքզինքը պատժելու համար էր որ այս փորձանքին հասեր էր, իր հայրութեան ու հայրութեան գերագոյն ծէսն էր, որ կ'ընէր, թէ տըղուն վրայ հեղինակութիւնը պահելու համար էր...: Միտքը բերաւ իր վերջին խօսքերը՝ «Քեզի կը սատկեցնեն... կ'անհիծեն... կորսուէ աս տունէն...», բայց ատունց ներքին կիրճը, գայրոյթին սաստկութիւնը չկար սրտին մէջ ալչես: «Հարկաւ» խորհեցաւ, «բարկութեան ատեն կ'ըստին ատանկ խօսքեր, մարդ ապտակ ալ կու տայ, բայց կարեւորը ատ չէ... հայր մը իր զաւակին սրտին մէջ միայն պէտք է թաղուի, որ չմեռնի, որ արժէ կեանքը ապրած ըլլալ...»:

Գլուխը առաւ ավերում մէջ. «Ա՛խ, տղաս, ո՛ր ես, քեզի ինչ-պէ՛ս պիտի գտնեմ» հառաչեց ու դժուարութեամբ ոտքի ելաւ ու շարունակեց իր դանդաղ վազքը ամայի մայթերէն, ամէն կողմէ պայթող, սուրացող զնդակներու մէջէն դէպի հանրային պարտէզ: Հագիւ հասած մայթին ծայրը՝ հրացանաձգութիւնը անելի ես սաստկացաւ ու իրեն տարօրինակ, տարեբային ուժ մը տըլաւ, որ զինքը առաջ նետեց հրապարակին մէջտեղը՝ ուր յանկարծ կանգ առաւ: Չորս կողմը նայեցաւ. «Պե՛րճ, Պե՛րճ... ո՛ր ես» պողաց աղիողորմ ձայնով մը, որ խեղդուեցաւ զէնքի աղմուկին մէջ: Գիշերը գրկեր էր զինքը ու անոր զաղտնի, անթափանցելի մարմինը տիեզերքի չափ անսահման թուեցաւ իրեն, ու

իր տղան՝ անգտանելի, կորսուած առյաւելտ...: Լալու չափ տըր-տում էր ու խորունկ, անապրելի վախ մը կը տրորէր գին՝ Զը-կրցաւ յառաջանալ, գալիք ողբերգութեան մը ցաւէն սարսափած:

—Ա՛խ, ինչ ըրի ես...

Ու ողբը Բակունցաւ բերնէն, բայց ան կրցաւ պահել զայն իր տղամարդու գուսպ, անարցունք, ներսժ չափին մէջ ու գլուխը աչ ու ձախ շարժելով՝ յառաջացաւ դէպի պարտէզին մայթը: Ո՛ր երթար՝ չէր գիտեր, ի՞նչ օգուտ պոռալը՝ երբ ինք վնասեր էր զայն եւ երբ շուրջի աղմուկէն ոչինչ կը լսուէր: Քալեց՝ ման-ւան դատապարտուածի մը անվերադարձ, անդիմադրելի կշռոյթով, ափերը զոցած, հագիւ շուրջը նայելով ալիւս, բայց կրկնելով ներսէն, տեղէ մը. «Կու գամ կոր, տղաս, կու գամ կոր, ըս-պասէ քիչ մըն ալ... մի վախճար... ա՛խ, իմ մանչուկս...»:

Քրտիմքներու մէջ ու գով հովէն սարսուռով, յոգնութեան տակ ուժասպառ՝ Արմենակ հասաւ մայթին հեռաւոր ծայրը ու փլաւ պարտէզի ցանկապատին անկիւնին Բով, կոնակը տուած պատին Բարերուն...: Ո՛րքան ատեն անցաւ...: Սեւ շուն մը Բակունցաւ մութին մարմինէն, եկաւ առջին կայմեցաւ, պոչը խաղցնելով: Սպասեց...: Երբ Արմենակ բացաւ աչքերը՝ յանկար-ծակիի եկաւ, ձեռքը առաջ շարժեց, յետոյ պզտիկ հրնումք մը խլրտեցաւ ներսը. «Հէ՛յ, շուն» շշեցաց, «դո՛ւն ուրկէ բուսար, հոս եկուր նայիմ» անելուց: Առանձին չէր գոնէ, ու մտայլ աշ-խարհին մէջ կեանքի մտերմութեան մը, ներկայութեան մը պատկերն էր ան, հոն Բայլ մը հեռու կամ մօտ, իր տառապան-քին մասնակից: Յետոյ խօսեցաւ անոր.

—Հէ՛յ, շուն, տղաս տեսա՛ր աս կողմերը... աղուոր երիտա-սարդ մը, քիչ մը տա՛ր գլուխ, իր պապային պէս, հէ՛, չտեսա՛ր:

Պոչը նորէն շարժեց շունը: Երկու-երեք մեծ ռումբեր պայթե-ցան նաւահանգիստին կողմերը: Լուսինը նորէն կորսուէր էր: «Աս ժամուն ո՛ր խենթը այս կողմերը կը թափառի» ըսաւ ինքնի-րեն ու փորձեց հասկնալ ու բացատրել իր կացութիւնը, ինչպէս հոս, մայթին երկայնքին հասեր էր եւ Աստուած գիտէ ուր էր իր տղան, ո՛րչ էր թէ մեռած, տեղ մը ինկած միս-մինակ, մարդոր-սի մը յիմար գնդակին գոհ կամ ռումբէ մը բզիկ-բզիկ եղած:

Նայեցաւ շուրջը — շունը անհետացեր էր: Ու այդ վայրկեա-նին ան սուր պահանջը զգաց անոր ներկայութեան, ծայն հա-նեց, կանչեց, փորձեց մուրը ծակել աչքերով ու գտնել զայն: Զը-կար: Այն ատեն որոշեց ոտքի ելլել ու շարունակել ֆալել ամէն կողմ, որ կը տարածուէր չորս դին, ֆալել, նայիլ, փնտռել, հար-ցընել, մինչեւ որ հատուէր սիեզերի ժամանակը ու տղան Բովը գար, ետ տուն մտնէր...: Ռումբ մը յանկարծ մօտիկ տեղ մը

պայթեցաւ. «Ինծի ի՞նչ կրնայ պատահիլ որ, շատ-շատ կը մեռնիմ, կ'ազատիմ» շարունակեց:

Ծիշող որ ոտքի պիտի ելլէր՝ շունը նորէն երեցաւ: Լուսինը դուրս սահեք էր ամպերէն ու մեռած, ներմակ իր մարմինը տարածեք էր փողոցին վրայ: Շունը ձայն մը հանեց: Արմենակ ծունկի եկաւ ու ձեռքը երկարեց:

— Զէ՛յ, շնիկ, հոս եկուր, — ըսաւ մեղմ, անուշ բռնով մը եւ առաջ ծռեցաւ:

* * *

Փամփուշտը ձախ բեւիմ տակէն նեղեց մարմինը ու սուր, կարն, ուժգին ցնցում մը տալով՝ կուրծքին մէջ խրեցաւ, բութ, սեւ ցաւի վերածուելով: Հարուածը սակայն ետ նետեք էր մարմինը, որ վրա գետիմ, պատիմ տակը, բուփիմ ու ծառիմ միջեւ, անշարժացաւ:

«Ձարնուեցայ» անցաւ մտքէն, «ինչպէ՞ս կ'ըլլայ ասիկա»:

Գլուխը ետ կախուեք էր ու աչքերը դժուար կը բացուէին, սակայն կրցաւ հետեւիլ ցաւիմ, որ կոկորդը խցեց ու կեցաւ հոն:

— Զէ, աս չէ մեռնիլը, եւ տեղ պիտի երթամ... կատակ է ասիկա, իրական չի կրնար ըլլալ:

Ննդալ ուզեց, բայց բերանը տաք հեղուկ մը լեցուած էր. «Արիւն ըլլալու է» անցաւ մտածումը: Շունը մօտեցեք էր ու պաղ էր ամէն կողմէն:

— Պոպի, — շշնջաց, — պոպի...

Յետոյ գիտակցութիւնը սկսաւ մարիլ. «Ի՞նչ կ'ըլլամ կոր» կրցաւ մտածել, բայց արդէն դանակի պէս ցաւ մը կը տարածուէր մարմնիմ բոլոր կողմերը, որոնք թեթեցեք էին, իրը չէի՞ն թէ «աս եւ եմ» կրցաւ բառերը բով բովի դնել, «ախ կուրծքս շատ կը ցաւի... չեմ դիմանար» մտածեց ու մարեցաւ ամէն ինչ:

Բայց նորէն վառեցաւ գիտակցութիւնը. «Պէտք է ոտքի ելլեմ... թաց է մարմինս... տաք արիւնս է...»: Մտածումը ուրուագծուեցաւ երկվայրկեան մը ու արդէն դող մը սկսաւ ցնցել մարմինը ամէն կողմէն ու մէկէն պարպել ուժը աագին մէջ անհետացող ջուրի նման: Յետոյ հանդարտեցաւ:

— Պերն, կը մեռնիս կոր, տղայ, ասանկ պէտք չէ ըլլայ, ոչ... ծիծաղելի է, իմաստ չունի, չ'ըլլար... ա՛խ... չեմ դիմանար աս ցաւիմ, մամաս... ո՛ր ես...

Այն ատեն մարմինը կողիմ վրայ դարձաւ, ոտքերը մեքենաբար, մեղմօրէն ցնցուեցան, դող մը եկաւ ու թուցաւ ներսի պըրկումը:

— Յաւր գնաց, չկայ, բան մը չունիմ... ախ, մամաս, ո՛ր ես...

Ականջին տարտամբերէն ու շատ հեռուէն գէմբի ձայնը կու գար հիմա, բայց աչքերը բոլորովին մթնած էին, բունի պէս էր... Անգամ մըն ալ փորձեց արթննալ, սակայն ամէն ինչ կը հատնէր, կը փախչէր: Յանկարծ սուր ցաւի խիթ մը կծկեց ջիղերը ու լուսինը սկսաւ արեւ գիտակցութեան վերջին ծուկնէրը...

—Ոչ, ոչ... չեմ ուզեր մեռնիլ ապուշ տեղը...

Մտածումի վերջին փշրամբն էր, որ տեղէ մը եկաւ, երկվայրկեանի մը համար իմաստ մը տուաւ իր ամբողջ գոյութեան, յետոյ լիեց զինքն ու զնաց:

Արիւնը կը հոսէր բերնէն, կծկուեցան ոտները, շունը եկաւ քովը նստաւ... ու ամէն ինչ մարեցաւ, լոեց, պարպուեցաւ ետ գիշերին մէջ...

* * *

Երբ Ուալիտ նորէն տեսաւ շունը, չկրցաւ զսպել հայտնամբը.

—Մօ, շուն շան որդի... նորէ՞ն եկար:

Նշան պիտի առնէր՝ երբ կենդանին կրկին հալեցաւ մութին մէջ, անյայտացաւ: Վար դրաւ հրացանը, ներս դարձաւ, ծոեցաւ ու սիկարէթ մը վառեց: Զէմբի ձայնը մնայուն կատաղութեամբ կը քայքայէր մութին մարմինը: «Ասիկա մերիններուն գործն է, վստահօրէն» խորհեցաւ:

Այն ատեն Իպրահիմը եկաւ միտքը, կռուի էն տա՛մ վայրկեանին խնդացող ու կատակող կարճուկ ընկերը, որ հիմա հալտէի ճակատը աներ էր իր հսկողութեան տակ: «Հաճոյ՛ք առնելով պիտի կռուիս, Ուալիտ, որ լաւ կռուիս, առանց գութի կամ մտածումի... աղջիկ շինելու պէս քան մըն է կռուիլը» ըսեր էր, «այն ատեն ո՛չ վախ կը մնայ, ոչ ալ կը յոգնիս... մոռցիր մահը, մոռցիր թշնամի կամ բարեկամ ըլլալը... մեռնիս նէ ալ, ուրախ կը մեռնիս... պարզ կռուիլը իմքնին հաճոյ՛ք է...»:

Ետ փողոց նայեցաւ: Շունը ետ եկեր էր ու անշարժացեր էր պատին ետին ու միայն գլուխը կը տեսնուէր: Երկինք նայեցաւ. ամպերը դիզուեր էին ու լուսինը չէր տեսնուեր:

—Վաղա՛հի քաջ է աս շունը, ասանկ ատեն մէջտեղ ելլել... սրտաւ,— ըսաւ ու սուրեց անոր ուշադրութիւնը գրաւելու յոյսով: Աղմուկը խեղդեց ձայնը:

—Եալլա գնա՛ ապրէ,— ըսաւ,— քեզի չեմ կրնար մեռցնել... բայց մէ՛յ մըն ալ վախցնեմ քեզի, նայիմ պիտի փախի՛ս...

Շունը սկսեր էր հեռանալ:

—Հէ՛՛յ, մի՛ փախիր, կեցիր,— ըսաւ բարձրաձայն, վերցուց հրացանը ու նորէն առանց նշան առնելու՝ պարպեց գէմբը

պարտեզի ցանկապատի ուղղութեամբ, մայթին անկիւնին, բա-
ւական հեռու շունէն:

* * *

Երբ փամփուշտը ծակեց կոնակին ճախ կողմը, ճեղքեց մար-
մինը ու ներսը, տեղ մը անշարժացաւ՝ Արմենակ յանկարծակիի
չեկաւ, ոչ ալ ճչաց ցաւէն:

— Բան մը չէ, հիմա կ'անցնի, — ըսաւ ինքնիրեն ու փորձեց
շարունակել իր շարժումը, կանգնիլ ու կտրել փողոցը: Բայց չը-
կրցաւ ելլել...

— Պէտք է ելլեմ, ո՛ր գնաց տղաս, — մոլտաց ու չհասկցաւ
ինչու իր մարմինը չէր հնազանդէր իրեն, ինչու իր ուժերը զինքը
յանկարծ կը լքէին: Երբ ցախն սաստկութիւնը զգաց՝ մարմինը
արդէն փռուած էր գետինը, մայթին ու ցանկապատին անկիւնին
երկայնքին:

* — Ի՞նչ գործ ունիմ հոս, — կրկնեց, նայելով սրունքներուն
մայթն ի վար երկարած: Բայց արդէն ցախ նիքանները կը նետ-
ւէին կոնակէն մինչեւ ուսն ու ատկէ վեր գլխուն ու մութ երկինքի
տարածութեան: Սեղմեց ակոսները, շունչը սկսեւ էր դժուար
առնել եւ ուժերը կը պարպուէին թեւերէն ու սրունքներէն:

— Ի՞նչ կ'ըլլամ կոր...

Յետոյ արեան համը եկաւ բերնին:

— Զարնուած եմ, — ըսաւ շատ մեղմ ձայնով, — մէկը գէնք
բաշեց վրաս... աս ի՞նչ մութ է... Բիչ մը լոյս ըլլար... ոտքի
պէտք է ելլեմ... Պերճը պէտք է գտնեմ, փորձանքի չեկած... ո՛ր
ես, տղաս...

Մատնեղով տկար նիզ մը ըրաւ հողը ճանկելու, տեղ մը բըռ-
նելու, բանի մը կառչելու, փորձեց գլուխը, ուսը վերցնել, բայց
սպարդիւն էր: Ետ ինկաւ մայթին քարին վրայ:

Վայրկեան մը իրեն թուեցաւ որ ցաւը մեղմացեր էր, պիտի
լքէր զինքը, ոտքի պիտի ելլէր: Գերազոյն նիզով մը բարձրա-
ցուց գլուխը քարէն ու շուրջը բննեց: Փողոցը ամայի էր, հոն
էին ծառերը, բովի պատը:

— Բան մը չունիմ, ... ո՛ր գնաց շնիկը, — հարցուց, փորձելով
բնական վիճակ մը գտնել, — վիրատորուած եմ, հոգ չէ... հիմա
կ'անցնի: — Այն ատեն էր, որ մարմինն մէջ տարածուած ցաւը
հաւաքուեցաւ, խուսցաւ, կարծրացաւ ու հարուածը իջաւ գիտակ-
ցութեան էն փափուկ կէտին: Ճիչ մը արձակեց, փորձեց աչ ձեռ-
քը ուսին տանիլ, բայց չկրցաւ:

Վախը յանկարծ իջաւ սրտին:

— Զէ, չէ... կարելի չէ որ... պիտի մեռնի՞մ արդեօք:

Հարցումը լախտի հարուած մըն էր ու պահ մը շշմեցուց գիմքը.

— Ասա՞նկ պիտի մեռնիմ, շան պէս, մայթի մը վրայ...

Ու յիշեց հօր վերջին վայրկեանը, դաշնակցական ծեր ֆետային, Հակապի հին Բաղաֆի աղտոտ, յիմար փողոցի մը փոշիներում մէջ, գինովի մը դանակէն ինկած... Երբ իր վերջին ուժերով սեղմեր էր իր ձեռքը ու փսփսացեր էր. «Արմենակ, տղաս, սիրէ սա ազգը», երեք պարզ տղայական բառեր եկած հիմա սա թշուառ անկիւնը...

Հօր պատկերը երկվայրկեան մը յստակ ուրուագիծ առաւ մտքին մէջ. «Սիրեցի գիտցած միակ ձեռով» մտածումը եկաւ ու գնաց: Ու հիմա կոտտացող ցաւերուն հետ անդորրութիւն մը կը տարածուէր իր ներսը:

— Կը մեռնիմ կոր, պապա...

Զտխրեցաւ ու բողոքի ոչ մէկ զգացում այցելեց իր տատանող գիտակցութիւնը: Շուրջի ձայները տակաւ կը նուազէին, մտով մը եկեր էր վրան, անծանօթ ուժ մը տէր կ'ըլլար իր անձին ու ինք չէր կրնար դիմադրել:

— Տղաս ո՛ր է...

Գոցուեցան աչքերը: Զէնֆի աղմուկը հեռուէն կու գար միայն, կոտտացող ցաւին պէս: Որքան մնաց կէս-գիտակից այս վիճակին մէջ: Բացաւ աչքերը վերջին անգամ. «Նայիմ իմ աշխարհիս... ա՛յ տեսնելիք չունիմ... կէս մնաց գործս» ու կիսախուփ աչքերը վերջին անգամ տեսան սեւ, պզտիկ կեմդամին անշարժ կայնած, ծառերու պէս բաներ... ամէն կողմ մութ. «Կը սառիմ կոր» լսեց հեռուէն...: Պղտորեցան աչքերը հիմա, բայց արթնութեան շշուկը դեռ կը վժժար ականջներուն մէջ ու բերնին արեան կծու համը դեռ հոն էր:

Ու գիտակցութեան վերջին նշույլով, Արմենակին այնպէս թըւեցաւ, թէ պարպուած իր բոլոր մտածումներէն, իր բառերէն, լրուած իր ինքնութեան բոլոր զէնքերէն՝ ան ի վերջոյ զտեր էր միակ գանձը, որուն համար ապրեր ու տառապեր էր — գոհուիլ իր սիրոյ առարկային համար...

Անկենդան փոռուած էր Արմենակ, գոհունակութեան շատ տարտամ դրոշմ մը դէմքին վրայ:

* * *

Տիկին Անձէլ տան դուռը չկոպեց: Դանդաղ Բայերով գնաց իր սենեակը, ակնոցները փնտռեց վայրկեան մը եւ առաւ աչքերուն անցուց, պզտիկ, մաշած Նարեկ մը հանեց բարձին տակէն ու ետ եկաւ Արմենակին սենեակը, նստաւ անոր անկողինին վրայ ու սկսաւ անշուշտ կարդալ: Մէկ էջը չմնացած՝ վար դրաւ

գիրքը ու նայուածքը սառեցաւ անորոշ կէտի մը վրայ: Անսահման վստահութիւն ունէր իր ամուսնոյն վրայ ու անկարելի էր որ ան սխալէր: Փորձեց կացութիւնը կշռել ու չսփիւլ. «Օրէնքին մէջն է» անցաւ մտքէն, պզտիկ աղօթք մը թփրտաց շրթունքներուն վրայ ու հիմա բիչ մը անելի ապահով կը զգար:

Ելաւ թէյ մը շինեց — ձեռները կը դողային ու թափեց շաբարը: Գուաթը առած ետ եկաւ Արմենակին սենեակը ու անկողինին վրայ հին տեղը նստաւ ու լուռ՝ խմեց, կէս ականջ մը տուած դուրսի գէնքի աղմուկին: Յետոյ ձեռքը փափկութեամբ Արմենակին բարձին վրայէն անցուց ու կրկին անշարժացաւ: Պղտոր անձկութիւն մը սողոսկեր էր ներսը, աչքը դրան վրայ՝ բառական առեմ մտիկ ըրաւ ձայներուն, ձեռները կը պաղէին, մտով մը ցնցեց միտար կոնակը: Ելաւ սեւ շալը նետեց ուսերուն, եկաւ նոյն տեղը նստաւ, կուզը տնկած, ձեռները գոգը ծալած, գլուխը կախ...: Քիչ ետքը բունը եկաւ ու կարճ պահ մը մրափեց:

Երբ արթնցաւ շուրջը բնեց արագ մը, մարդ չկար. «Ո՛ր մնացին, Աստուած իմ». վախի մօտ բան մը հիմա բիչ մը անելի տարածուած էր Բաղկեղի պէս, բայց միտքը դեռ կառչած մնաց կեանքի լուծումներուն: Յետոյ գնաց դուռ, բացաւ, չորս կողմը նայեցաւ. պարտէզը, փողոցը, ամբողջ թաղը գիշերուան մէջ պահուրտած էր: Պէյրուսի հայաշատ շրջաններէն մին, ծեմարանի շուրջը հաւաքուած՝ բառական անխռով մնացեր էր կոխներուն:

Շալը փաթեց մարմինին շուրջ ու պարտէզ իջաւ, յիշատակներ պաշարեցին զինքը, Պերճին պատանութենէն մնացած... ու մօտեցաւ ցիրուցան ծառերուն մութին մէջ յանկարծ թելադրական, ապրող ներկայութիւններու վերածուած: Կեանքի մօտիկութեան պահանջ մը ունէր. դպաս է՛քալիսիթըսներու բուններուն, զնաց կոթնեցաւ էն մեծին, ցանկապատին քով: Եղերականին կասկածը, այլեւս անծածկելի՝ սկսաւ շարչրկել զինքը: Ներս անպարեց իր տան ապահովութեան, ու բազկաթոռին նստած՝ աղօթք մը մոլտաց: Յետոյ, Նարեկը ուժգին սեղմած կուրծքին ու լոյսը վառած թողելով՝ զնաց իր սենեակը, նստաւ մութին ու սպասեց...

.....
Աստուծոյ բացուեցաւ տոգոյն ու խոփ: Հագարատր նման օրեր եկեր էին ասկէ առաջ Պէյրուսի բնատ բնակիչներուն ու Անժէլ միշտ ամենքէն առաջ ոտքի ելեր էր, անշուշտ, անտրտունջ՝ նախանաչ ու ճաշ պատրաստեր էր տղուն, ամուսնին ու ճամբայ դնելէն անմիջապէս ետք՝ սկսեր էր հաշուել վայրկեանները ան-

նոնց ետ գալուն: Հիմա ալ նոյնը ըրաւ, միայն թէ անոնք այսօր առտուն պիտի վերադառնային: Վստահ էր ատոր այնքան՝ որքան վստահ էր, թէ մահը կեանքի մէկ կերպարաններէն, հագուստներէն էր, թէ մարդիկ չեն մեռնիր, թէ մահը *օթոսիս* փոխելու պէս բան մըն էր, ինքը ամէն օր ատանկ կը ճամբորդէր, գիտէր... Եւ Աստուծոյ հետ ալ կապ չունէր, որովհետեւ Աստուած ինչ էր՝ տակաւին չէր հասկցեր...: Գիտէր որ սէրն ալ չի մեռնիր, որովհետեւ ինքը միշտ սիրած էր ու սիրելը միշտ տալ, նուիրել եղած էր իրեն համար: «Ատոր համար է որ սէրը պիտի շարունակէ կեանքէն շատ վերջն ալ... ինծի պէս տգէտ կիներու համար... որքան ատեն կը սիրես՝ այնքան ատեն հէջ պէտք չունիս վախճալու ոչ կեանքէն, ոչ ալ մահէն» մտածեց կէս-բուն կէս-արթուն, օրորուելով բազկաթռոհն վրայ:

Անանկ որ, մինչեւ ոստիկաններուն դրան մէջ երեւնալը՝ գիշերուայ վախն ու խուճապը անհետացեր էին տունէն, ու մնացեր էր միայն կեանքը, կեանքի սրբութիւնը ու սրբութեան սէրը: Ներս հրամցուց, աթոռ եւ սուրճ առաջարկեց որ անոնք մերժեցին: Բայց ամէն ինչ պատրաստեր էր իրեն համար... բացի մէկ բանէ՝ գաղտնի ուժ մը՝ որուն ներկայութիւնը նոր կը զգար իր կեանքին մէջ: Ու կտորած արաբերէնով ըսաւ անոնց.

— Գիտեմ, գիտեմ, պարոն ոստիկան, տղաս եւ ամուսինս մեներ են:

— Ուրկէ՞ գիտես, մայրիկ:

— Ո՞ր մեներ են:

— Հանրային պարտէզին անկիւնը գտանք, բով բովի:

— Ի՞նչ...

— Այո... հայրը ցանկապատին դուրսը, տղան՝ ներսը:

Երկվայրկեան մը ուրախութիւնը փրփրեցաւ սրտին մէջ. «Ուրեմն հաշտուած էին» եզրակացուց:

— Ինչպէ՞ս մեռան:

— Կարծես թէ մարդորսէ մը... հոն հանրային պարտէզին շրջանը շատ կայ այդ սատանաներէն: Անցեալ օր ալ մէկը զարկին, երիտասարդ մը... մեղք եղաւ տղուն:

Զփոխուեցաւ դէմքին արտայայտութիւնը՝ «Ազալու ատենը կու գայ, վերջը, անչի ուշ... հիմա իրենցն է ժամանակը, իրենց մարմիններուն, իրենց յիշատակին... իմ ցաւս կրնայ սպասել, ատոր ժամանակը չէ եկած տախա...»:

— Ո՞ր են մարմինները, — հարցուց, հազիւ լսելի ձայնով մը:

— Մեռելատունն են, մամա... Բեզի հոն պիտի տանինք, եթէ կրնաս քիչ ետքը...

— Այո, կրնամ, — ըսաւ Տիկին Անժէլ՝ իր գալիկն կարօտն ու դիակին երկիւղը իրարու խառնուած: Բայց դէմքը պահեց իր ե-

դերական լրջութիւնը, մինչ անդիմադրելի պահանջ մը իր տղան գրկելու, համբուրելու, սիրելու, նորէն աշխարհ բերելու նուանեց շիղերը: Հագիւ կրցաւ լացը զսպել, օտարներու առջես:

* * *

Երբ առանձնութիւնը զոցուեցաւ շուրջը, քաշեց դուռը ու պահ մը շուարած՝ կայնած մնաց սենեակին մէջտեղը. յետոյ դանդաղօրէն ոտները շարժեցան դէպի իր սենեակը, նստաւ անկողնին վրայ ու սկսաւ լալ, անձայն, անհիգ, գլուխը բռնած ձեռքերու մէջ: Սրտին էն խորունկ ակունքներէն լացը հոսեցաւ ալիքալիք եւ յանձնեց ինքզինքնը անոր իրաւութեան գրեթէ անգիտակից հանոյժով մը, մեղմ օրօրուելով աջ ու ձախ, շատ բարակ ողբի թել մը լսելի դառնալով, կամաց-կամաց: Ոչ մէկ մտածում կամ պատկեր այցելեց իրեն՝ միայն անսահման, անսպառելի հեղձուցիչ վիշտի մը խաւարը, որուն տուաւ ինքզինքը...: Յետոյ եկան, մէկ-մէկ, իր կեանքին բովանդակութիւնը կազմող մարդիկը իրենց կատարեալ, երջանիկ դէմքերով. նախ՝ Արմենակը, քանի մը ժամ առաջուայ իր գգուանքին գոլը վրան. «Ե՛րբ պիտի տուն դառնաս, մարդ» ըսաւ մտէն ու ան զրկեց զինքը, դրաւ իր յոգնած գլուխը կուրծքին ու միասին լացին...: Յետոյ հայրն էր իր ծերութեան տակ ճնշուած, հիւանդ ու լիւած Հալէպի տան մէջ ու ինք գայն առած թեւերուն մէջ՝ «Ի՞նչ աղէկցիր, պապա, ես քեզի ներէն քու պիտակներու ժողովին կը տանիմ, տարտ մի ըներ», սակայն զիտնալով որ մահը ճոճ, դրան բովը, կը սպասէր անոր, բայց հայրը ուրախ էր, կը հասատար իրեն ու կը խնդար... «Հա, աղջիկս, ելեմ մէ՛կ կ'երթանք ժողովարան, ես եւ դուն»... բայց արդէն շարքս մը ետքը... «Նայէ, Անժէլ, ա՛յ լըմնցաւ, ես կ'երթամ կոր... պիտի չի լսա հա... կեանքս դուն առ շարունակէ...» եւ այդպէս ալ ըրեր էր, պահելով իր յիշատակը եղածին պէս անփոփոխ, մտերիմ, ոչ իսկ հարցնելով, թէ զո՞ւք էր, սէ՛ր էր, թէ եղած-չեղածը միայն ինքն էր ու հայրն էր նոյն ատեն ապրող իր մէջ, իրեն հետ, միայն թէ կեանք ըլլայ, ամէն ինչ օրէնքին մէջ կը մտնէ...:

Վերցուց գլուխը ու արցունքոտ աչքերով փնտռեց բովի սեղանիկին վրայ ընտանեկան հին, դեղնած պատկերը: Լացը յանկարծ սաստկացաւ, բայց առաւ պատկերը, տարաւ շրթունքին ու մեղմօրէն համբուրեց: Ու նոր ուժ եկաւ իրեն, հանդարտեցաւ մեղմօրէն համբուրեց: Ու նոր ուժ եկաւ իրեն, հանդարտեցաւ մեղմօրէն համբուրեց: Ու նոր ուժ եկաւ իրեն, հանդարտեցաւ մեղմօրէն համբուրեց: Ու նոր ուժ եկաւ իրեն, հանդարտեցաւ մեղմօրէն համբուրեց: Ու նոր ուժ եկաւ իրեն, հանդարտեցաւ մեղմօրէն համբուրեց:

մտածեց երկննալ անկողինին վրայ ու քնանալ, բայց ուրիշ պահանջներ կը կրծէին միտքը:

Ոտքի ելաւ ու դանդաղ բայերով հիւրասենեակէն անցաւ անց շուրջը նայելու ու Պերնին սենեակը մտաւ: Միշտ սիրած էր այս սենեակը, այդքան գիրք ու թուղթ՝ հպարտութիւն կու տար իրեն ու հօր յիշատակը կ'արթննար, ան էր, որ կը շարունակէր հոս սորվելու, մեծ մարդ ըլլալու իր խենթ երազը: Անըզգալաբար, արցունքը սկսեց էր հոսիլ, բայց տխուր չէր հիմա — սեղանին գիրքերուն ու թուղթերուն դպաւ, անցաւ հագուստներու պահարանին, ձեռքը բաց հոս-հոն...: Յանկարծ յուզումը պոռկաց ու ձեռքերով երեսը գոցած՝ նստաւ անկողինին վրայ: Ու ողբին թելը նորէն քակուեցաւ անի ուժգին՝ «Ախ, տղաս, ո՞ր ես, ո՞ր ես» ու այն ատեն էր որ մայրական անդիմադրելի յուզում մը բռնեց կոկորդէն, եւ ետ եկան խառնիխառն հիմ-հիմ յիշատակներ, որոնք մոռցեր էր լուսեանն ու մորմոճին տակ տարիներուն, ու իր հարսնութիւնը թողեր էր. «Անժէ, հոգիս, տոբթորին հրահանգն է, մէկ գաւակ միայն, մարմինդ չի տանիր եղեր... սա վիժումէն ետք կրնայ փորձանք բանալ գլխուդ... ա՛տ է ուզածդ», մինչ աշխարհը կը փլէր վրան այդ վայրկեանին՝ «Հապա ի՞նչ եղաւ ան տասը հատը, որ պիտի ծնէր, Արմենակ, հէ՛». ամիսներով գիշերներն արթուն պառկած էրկանը կուշտին ու գսպելով լացին ձայնը ու մայրութեան անդիմադրելի պահանջը, ախորժակը, կանչը. «Բախտերնիս մէկ հատ է եղեր, կնիկ, ինչ ընենք, Աստուած տայ որ խերով-բարով գաւակ ըլլայ... շէն-բով-շնորհե՛ով մեծնայ տէ մեզի թոռնիկներ տայ, հէ՛, կնիկ, ի՞նչ կ'ըսես, սանկ բանի մը ասլան տղայ շարէ». աչքերը կը խռնամային նորէն. «Արդեօք ի՞նչ տեսակ հարս պիտի ըլլար սա աղ-չիկը... խեղճ տղաս, մուրազը փորը մնաց...»:

* * *

Տղուն սենեակին դուռը բաց ձգելով՝ շարժեցաւ դէպի Արմենակին սենեակը: Հիւրասենեակին մէջտեղն էր ինկած աթոռը, ծոնցաւ, վերցուց ու տեղը դրաւ. «Արմենակս ձգեց ասիկա» ըսաւ ինքնիրեն, «գաւ կնիկ եղայ քեզի, մարդ, տա՛րին, պաղին...» ու անոր սենեակը մտաւ. «Դուն այ ինձի երջանիկ ըրիր, Պերնին խօսէրուն շատ ակամջ մի կախեր, ան տղայ է, կը խօսի» ու մօտեցաւ պատին հայելիին: Հոն վայրկեան մը տնտնաց. «Աս ե՛ս եմ... սա ինչ յոգնած աչքեր են» ըսաւ, «նիշդ Պերնին աչքերն են» ու գնաց ամուսնին գրադարանին բով, անցաւ սեղանին առջեւ, խառնուկեց թուղթերը, գիրքերը, բայց չգտաւ ամոր պատկերը: Ետ եկաւ հայելիին ու այդ վայրկեանին, իր քսանհինգ տարուայ ամուսնին կերպարանքէն միայն անոր ձայնը ե-

կա ետ, խորունկ, դանդաղ կամ բարկացած ու խիստ, եւ որում ելեւէջներէն կախուեր էր իր կեանքը տարիներով: «Նսեղն մարդս» շարունակեց, յիշելով յանկարծ անոր կատաղութեան ձայնին հետ Բայբայուած դէմքը Պերնին դեփ-դեղին երեսին դիմաց ու թուրք աղջկայ մը անունը սենեակին մէջ տեղ մը ու յիշեց ինչ որ ըսեր էր անոր. «Միայն թէ մահ չըլլայ, մարդ, մնացած ամէն ինչը կը շտկուի» ու լսեց անոր սպառած, պարտուած ձայնը այդ գիշեր. «Կնիկ, սիրէ ինձի...»: Լեցունեցան աչքերը, հեռացաւ հայելիէն ու գնաց կայնիլ անկողնին ոտին: Ինչքան սէր յանկարծ ծներ էր իրենց միջեւ այդ գիշեր, ամբողջ կեանք մը բաւելու չափ, ամէն ինչ ներելու չափ, նոյնիսկ թուրք աղջիկը. «Ան ալ մօր գաւակ է, անոր ալ հոգին կ'արիւնի» մտածեց ու նորէն փորձեց երեւակայել անոր հարսանեկան կերպարամբը, առաջին գաւակը, որ ինք պիտի գրկէր, յետոյ Արմենակին պիտի անցընէր... յետոյ միասին պիտի տօնէին անոր առաջին տարեդարձը...

Հեռաձայնը զարնուեցաւ Յնցունցաւ Անժէլ, վերցուց գործիքը վախով, տարօրինակ ակնկալութեամբ մը.

— Այօ...

Ուտիկանն էր, պիտի գային գինի մեռելատուն տանելու, ստուգելու ինքնութիւնը: Շատ բան չհասկցաւ մարդուն ըսածէն ու քանի մը բառ բով բովի դնելով խօսեցաւ.

— Կէս ժամ ետք, եթէ կարելի է... Բիչ մը գործեր կան:

Զգուշութեամբ վար դրաւ ընկալուչը: Անձկալի փութկոտութիւն մը մտեր էր շարժումներուն մէջը. «Պիտի երթամ մարդս ու տղաս տեսնեմ» մտածեց ու նստաւ, Բիչ մը ինքզինքը հաւաքելու համար: Ու հիմա, կեանքին ու աշխարհին վրայ կախուած սեւ ամպին շուրջը իրեն թուեցաւ որ փայլ մը, դէպի գալիք օրերը բացուող լոյս մը կար...: Վերցուց հեռաձայնին ընկալուչը անփորձ ու վարանոտ, կազմեց թիւը: Մտիկ ըրաւ սրտի ուժգին զարկին, կը դողային ձեռքերը...

— Տէր Յարութի՛ւն...

Կմկմալով, բայց զուսպ՝ խօսեցաւ Բահանային հետ գիշերուայ դէպքերուն մասին ու խնդրեց որ իրեն հետ ուտիկանութեան մեռելատունը գայ: Յետոյ անհամարձակ ու յստակ իր ձայնով թաղումի եւ հոգեհաշի կարգադրութիւնները ըրաւ: Արմենակին հեռաձայնի տետրակէն գտաւ ակումբի թիւը, գարկաւ ու նոյն հանդարտութեամբ խօսիլ ուզեց կոմիտէին հետ: Հոն չէր: «Ատիկա վերջն ալ կ'ըլլայ» խորհեցաւ, վար դրաւ գործիքը ու սիրտը հանգիստ ու ծանր՝ գնաց նստաւ իր աթոռին ու սպասեց Բահանային գալուն:

(Շար. 2 եւ վերջ)

ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՆՑԵԼԱՅԱՅՏ ՎԱՅԵԼՉՈՒԹԵԱՄԲ

Օրերէն ետք
 եւ հողմերէն ետք վայրագ,
 պիտի օր մը մենք հանդիպինք վերստին,
 նոր յոյզերու յորձանուտին մեզ տանող՝
 նոյն համբերին անպայման:

Եւ Աէրն այդ օր,
 պիտի յառի աչքերուդ՝
 ցօղածպիտ անմեղութեամբ,
 մկրտութեան սուրբ խորհուրդով մաքրաշրուած՝
 մանկան մը պէս միտոնադրոշմ...

Եւ Յոյսն այդ օր,
 պիտի հոգիդ վարակէ
 Բերդեհէմի խայտախորհուրդ աստղերուն
 յորդ խնդրեամբն օրհնաբեր,
 ուր շաւիղներ աստղալոյս
 պիտի ծնունդն աւետեն
 տեսիլի մը մշտաբոյր...

Եւ Կեանքն այդ օր,
 պիտի փոխէ համակարգն իր էութեան,
 ուր նոր մարմին պիտի առնեն
 մեր գոյութեան ռազմադաշտին մէջ ինկած
 անբջանքներ դարսուր.

ուր ո՛չ մէկ խոհ չարախինդ
 պիտի առնէ մեզ կրկին
 ոգեհմայ իր ցանցերուն մէջ ժահրուտ.
 ուր կարօտներ հեռայուշ
 պիտի բերեն արծագանգներն հողմաշունչ՝
 տենչանքի մը դափներոյր...

Եւ Լոյսն այդ օր,
 նոր պատգամ մը պիտի յղէ՝
 լեռնահայեաց մատուռի մը գմբէթէն.
 պիտի մոռնանք բախտի տաժանքն անհեթեթ.
 եւ նոր Պիրոյ գորովանքով մօտենանք,
 ծածկախորհուրդ հաշիւներով կանխագրուած՝
 խառնաշփոթ վիճակներուն աշխարհի...

Վայրկեանները պիտի կանգնեն
 շատրուան մը լուսացայտ,
 որուն վնիտ ջուրերէն
 պիտի յառնէ կախարդ ոգիմ մեր անցեալին,
 գերթ ջրահարս պարմանի...

Պիտի դիտենք տեսանկիւնէն միեւնոյն,
 մեզ իրարու շողկապող՝
 տառապանքի տեսլապատկերն յարափոխ.
 եւ ընդգրկենք նոյն բերկրութեամբ բաբախուն՝
 իղձերուն մեր ցնորագեղ
 դաշտանկարը երփնախայտ.
 եւ ըմբռնենք արժեչափով միեւնոյն՝
 աստղաքառալ խորհուրդներու
 դրութիւնը անմեկնելի...

Պիտի կազմենք նոյն տարրերով բաղադրիչ՝
 ապրումներուն մեր հովուական
 նախապատկերն անաղարտ.
 եւ հին թուրքեր,
 մտածումի մագաղաթեայ բեկորներ,
 պիտի դառնան էատարրը կենսագործ,
 ժամանակի խորութեան մէջ կորսուած՝
 ձգտումներուն մեր լուսառենդ.
 դառնան մորմոքը ծնուցիչ
 խորշակահար մեր սէրերուն
 անցելայայտ վայելչութեամբ...

Օրերէն ետք
Եւ հողմերէն ետք վայրագ,
Ես դեռ կը գգամ,
որ հանդիպումն այդ չճնաղ
պիտի օր մը առնէ կերպար շնչաւոր,
մոր յոյզերու յորձանուտին մեզ տանող՝
նոյն նամբեզրին անպայման.
Եւ գուգակցինք մենք այդ օր,
Եւ վշտակցինք՝
հոգեհաղորդ ջերմութեամբ,
դարձած եզրերն անբաժան
մեր գոյակից բնութեան
պատրանայեղջ առասպելին.
Եւ դարձած ցամ էակից,
Մեծ Լուսեան խորհուրդին մէջ արտասուող՝
աղբիւրի մը ոգեմրմունջ սիրերգին...

ՅԱԿՈՅ ՄԱՆՈՒԿԵԱՆ

1

Վ. ՇՈՒՇԱՆՆԱՆ

Տ Ե Ն Ն Դ Ե Ր

* Ու կրկին մեր բայերը ամէն անկիւնէ կը վերադառնային իրարու: Բայց ո՛չ դուն, ոչ ալ ես մերել չէինք ուզեր այլեւս: Գուցէ՛ որովհետեւ իրար շատ կը սիրէինք:

Սպիտակ գիշերներով՝ կը նստէի պատուհանիս առջեւ ու կ'ունկնդրէի անձրեւին ձայնին: Եւ որովհետեւ աշխատիլ կարելի չէր, բազմաթիւ գրքերէ բառեր կը հաւաքէի, երգեր հիւսելու համար: Անշուշտ լուրջ մարդու զբաղում չէր ատիկա, բայց հոգիս խելագար էր սիրով:

Ժամը կը յառաջանար, Բաղա՛մը կը սկսէր զարթնուլ: Եւ ես կ'որոշէի, որ քիչ յետոյ պիտի բախեմ դուռդ, պիտի անցար ու շատ սիրահար տղայ մը ըլլամ ու ձեռներուդ վրայ մտնամ բոլոր քեզմէ ստացած վշտերս:

—Հելլա՛, Հելլա՛...

Ատտուան զով շունչը սակայն կը վերադարձնէր ինձ իմ անբողջական հպարտութիւնս: Տխրութիւնս հեղձամղձուկ կու լար: Գէշ օրեր էին, սիրելի՛ս...

* Կ'ըսեմ

Որ բոլոր էրգերը բնկղմեցան մոռացութեան խորը, հովը
 Կր բարձրանայ արեւմուտին,
 Կր հնչէ ժամացոյցը պատի: Կ'անձրեւէ:
 Ան է խաւարը, անփարատելի, կ'ընկ ցուրտ: Չանձրոյցք
 Կր սպրփի բու եւ իմ միջեւ...
 Սպրեւու տխրութիւն, անկարողութիւն
 Ըրիս պատկանելու իրար, բնգմիշտ սիրելու...
 Ուրախութիւնները կը հեռանան հապնեպով,
 հոգիքը կը վերադառնան...

Հեռատր ծովերու վրայ, կարծես թէ
 Սեւ թռչուններ մեծ ճիչեր կ'արձակեն:
 Գիշերը կը պատռի,
 Լուսինը նույնպէս,
 Անձրեւը ծանրօրէն, մելամաղձաօրէն
 Կ'իյնայ ֆաղափին գորշ տուներուն,
 անաիշ ծառերուն ու մարդոց վրայ...
 Գթութիւն,
 Այս որբա՛ն տղա՛ք անյուսօրէն կը սիրեն...
 Տխրութիւն հոս մնալու, անկարելիութիւններ...
 Ի՞նչ ընել, ի՞նչ ըլլայ, ո՞ր մեկնիլ...
 Ժամացոյցը կը հնչէ
 Կէս գիշեր ու կէս...
 Սալայատակներուն վրայ շումբեր կան սողուն, սահուն:
 Գթութիւն...

Կ'ըսեմ
 Որ աչքերդ կը շննան, կը մեծնան, կը վշտանան սիրով,
 Անձկութեամբ ջերմ է ձեռքդ,
 Կուրծքդ տրոփում, մեծ ելեւէջներով կը նեղէ բեզ,
 Արիւնդ կը շրջի
 Առանց յոգնութեան տենդահար ու փխրուն մարմնիդ մէջ...
 Վիշտը սեւ է,
 Աչքերըդ նույնպէս — զի գիշեր է...
 Ձեռքդ կ'ուզես տալ ինձ, կ'ուզես գայն թողուլ ափիս մէջ...
 Նայէ՛
 Ծանր է, հեղձուցիչ է գիշերը: Երկինքը կ'իյնայ
 սալայատակին վրայ...
 Մտիկ ըրէ՛
 Ժամացոյցը կը հնչէ
 Դանդաղօրէն մէկ...
 Շրթներդ կը դողողօջե՛ն սիրով, ծարա՛ն եմ,
 Ծարաւ տխրութեան, լիութեան...
 Փնտռէ՛, նախագգա՛ր զիս, գտի՛ր զիս...
 Կ'ըսեմ
 Որ իրանդ տա՛ք է ու ես կը ցանկամ բեզ, Հելլա՛...

* Հիմ վիշտ, կ'ըսէ մէկը, հիմ վիշտ,
 Ան մեկնեցաւ անվերադարձ բեզմէ, անվերադարձ...
 Զորս օրէն
 Գարունը պիտի երթայ իր վախճանին...

Եւ դուն պիտի վերադառնաս, կ'ըսես,
 ծեծես դուս, ուշ գիշերին...
 Քանի որ կ'ըսես թէ, պիտի ըլլամ առանձին,
 Չորս օրէն, կ'ըսես,
 Գարունը պիտի փակէ իր հաշիւը,
 Ուրեմն, վերադարձի՛ր,
 Վերագրաւէ՛ հին տեղդ, տեղադրուէ՛...
 Երեւ ամիսէ ի վեր մոռցած էի քեզ, հի՛ն ընկեր,
 Կը տեսնե՛ս, ապերախտ եմ մարդիկ, կը մոռնան...
 Բայց հիմա,
 Գարունը կը փակէ իր հաշիւը
 Եւ դժբախտ ուրախութենէդ ահա՛ կը վերադառնաս
 դուն այս խարխուլ պատեանին,
 Ծեր ու քաջ ընկերոջ պէս՝ կ'ըլլաս յեմարան,
 Ծերո՛ւկ,
 Վերադարձի՛ր, գրկէ՛ զիս, ներէ՛ ինձ,
 Քեզ հետ լաւ է օրը, աեղի լաւ է...
 Վերադարձի՛ր, անապարէ՛
 Հի՛ն վիշտ, հի՛ն վիշտ...

* Ձեռքերու քաղցին համար կը հայցեմ,
 սեղմումները հի՛ն տենչայոյզ
 Եւ գունատ, անարիւն բերնիս համար՝
 շրթներուդ ջերմ տազնապը,
 Տե՛ս, անդամներս գուրկ՝ ծարաւ եմ տենդերուդ,
 Շնորհէ՛ ինձ տակաւին սնունդըս հանապազօր,
 Սնուցանէ՛ զիս դեռ սեղանիդ համադամներով...
 Արհամարհելով անօգուտ ժուժկալուրիւնը, եղի՛ր տա՛մ,
 գինով ու յանցաւոր,
 Խանդավառ բազուկներով, շելլա՛,
 խեղդէ՛ այս ծեր թշուառութիւնը...
 Քրքշա՛ պիրկ ծիծաղով, յաղթանակէ՛,
 Կոխկրտէ՛ ոտքերուդ տակ այս հիւանդ տխրութիւնը,
 Գինով, խելագար սիրով, եղի՛ր տենդահար,
 ամբողջովի՛ն մերկ, շոտյլ, եղի՛ր սիրայեղջ
 Եղի՛ր յաղթակամ
 Եւ տո՛ւր ինձ հանոյ՛քը խենթ, եւ տո՛ւր ինձ խոնջէ՛նքն անուշ...

* Իրա՛ւ է, իրա՛ւ է,
 Տա՛մ եմ ձեռքերդ քու, սպիտակ եմ ձեռքերդ քու,

Նուրբ են՝ հաւատարիմ
 Եւ համաձայն...
 Շրթներդ սիրագեղ ու ջերմէ բռնուած
 Օ՛, իրա՛ւ է,
 Շրթներդ քաղցր են ու դիւրահաճ...
 Երկարատե՛ն՝
 Գգուանքներդ...
 Գգուանքներդ երկարատե կը մմանին
 ուրախութեան հին գիւնի,
 Կ'իշխան վրաս՝ երգերու պէս:
 Երկարատե ու ամոհիչ համբոյրներդ
 են՝ իրա՛ւ է...
 Ու երբ խօսիս ձայնովդ տաք, բառերդ բու,
 Անհանգիստ եմ, տագնապահար...
 Ու դողոցուն՝ մարմինդ մերկ,
 Առանց գեղչի՝ հոգիդ անեղծ,
 մատներուդ վրայ կը ծլին միշտ գուրգուրանքներ,
 Մարթդ քաղցր է ու սպիտակ,
 Առանց քէնի, անոխակալ է բու ձայնդ,
 Ձայնդ, ձայնդ
 Գարնանային անձրեւի պէս կը թափի վար, արտերուս վրայ:
 Ու սիրայեղց, ու սիրայեղց
 են ազդրերդ հեշտագրգիտ ու սէրդ բու՝
 Առանց թղմի, սուտ խոստումի եւ գղջումի
 Օ՛, իրա՛ւ է, բայց հաւատա՛,
 այս բոլորէն շատ անելի թանկ է, Հելլա՛,
 Ու գեղեցիկ, մնացեալը որ կու տաս ինձ,
 որ սյիտի մնայ քոփս հարկաւ, մնացեալը՝
 Որ սահմանել կարելի չէ...

* Կը յիշէի, կը յիշէի, դիւանին վրայ
 յիշատակներ կային հնուց,
 Ու հին վշտեր սեւագգեստ, ցանկութիւններ...
 Կային երգեր գարնանային ծառերուն մէջ,
 հեծկրտումներ թափառական, կուրծքերու տակ,
 Ու ասուպներ որ վար ինկան...
 Կը յիշէի, կային սէրեր պատանեկան կամ յանցապարտ
 եւ ծաղիկներ սրսփալով, ցօղաթաթախ
 Ձեռներուդ մէջ: Գիշերային սեղանին վրայ՝ գլանիկներ...
 Գիտե՛ս արդեօք, ինչո՞ւ համար թերթերումներդ թաց էին...
 Կը յիշե՛ս դեռ անունըս իմ — Օ՛, գուցէ ոչ...

Կը յիշէի անձկութիւններ ուշ գիշերին,
 գուարթ բաներ առաւօտեան,
 Ու կտորներ հին երգերու անկարելի:
 Հիւանդ մարդոց տժգոյն ձեռքեր, աղչիկներու
 Ձեռքեր անգութ: Եւ սրունքներ դողողագին,
 պատերուն վրայ:
 Պատերուն տակ, ծեր բանուորներ արբած՝
 խառնակ, գէշ գիւնիով ու յանկերզը քինախնդիր
 Հին երգի մը — «Բարձանեօջ»ին...
 Կը յիշէի, կը յիշէի, հին օրերը յաւտ մեռած,
 Վերլէնի պէս ու կու լայի...
 Ու կտորներ հին բաներու, իրեր անպէտ...
 Ու լոյսին մէջ գեղածիծաղ,
 տաք լոյսին մէջ առաւօտեան լոգանք առնող
 Աղաւթ մարմինը տաք, Հելլա՛,
 Իրանըդ լի, գծերըդ կոր. —
 ծունկերուդ կափարիչներն: Ծոծրակիդ վրայ՝
 Վարսերուդ Բաղքը ջերմութիւնը:
 Ու կուրծքերուդ ցայտը ներմակ...
 Գիշերուան մէջ կը ծլէին, կը դառնային մեր մեծութեան
 Մեր գորովներն վաղուց հինցած,
 Գիտե՛ս որքան...
 Օ՛, պիտի գաս, պիտի ըլլաս չճնաղ հրաշք,
 պիտի ըլլաս անհպելի
 Ո՛վ երազ իմ,
 Պիտի ըլլաս կնոջ պէս տաք, երիտասարդ ու սիրահար:
 Ու տխրածայն պիտ՛ ըլլաս երգ ու լեցընես
 Լռութիւնը, խաւարը գէշ...
 Պիտի լուսա անցեալըս հին՝
 առաւօտեան պէս Մայիսի պիտի բացուիս,
 Գարնանային պիտ՛ ըլլաս դուն ու նորածագ...
 Կը յիշէի թոթովանքներըս մանուկի,
 լացըս՝ մօրս ծունկին վրայ, հին օրերուն,
 Ու լճումներըս՝ սիրոյ մէջ, բոլոր՝ Բայերըս
 ձախտեր ու գումարներ որ կը պարտիմ,
 — Թշուառութիւն...

* Գիշերուան դէմ, երբ կը բաժնուիս ինձմէ, երբ չեմ կրնար
 ընկերանալ Բեգի ու ստիպուած Բեգ կը յանձնեմ փողոցին, երբ
 կը հեռանաս մեծաբայլ՝ աչքերուդ մէջ այդ խախտ ու վայրագ
 ցոլիովը ու շրթներուդ վրայ կարծես երկդիմի ու ծածուկ բառե-

բով, վայրի ու նկուն կատուի շարժումներովդ եւ այն բոլոր վտանգատր կարելիութիւններով՝ զորս հանութեամբ կը կրես վրադ, Հելլա՛, քեզմէ ստացած վախս կը վերագառնայ ինձ եւ կը տեղաւորուի մարմնիս մէջ: Նշածես աչքերուդ մէջ կարծես դեղին բիծերը կը շատնան ու ամբողջ մարմնէդ յաղթական ու յանդուգն բան մը կը փրփջայ երեսիս: Այն ատեն թէ եւ մութ ու անորոշ, այլ գօրատր կերպով՝ ազատագրութեան, փախուստի, տեսակ մը վերջնական խզումի փափամ մը կը գրաւէ զիս: Հեռաւորութիւնը կը թուի ցանկալի ու խաղաղասէր: Բայց քանի մը վայրկեան յետոյ հոգիս կը վերագառնայ անապարանքով իր տառապանքին: Օ՛, հաւատա՛, տխուր, շատ տխուր է ասիկա...

Օր մը, գիտե՛մ — ու շատ լաւ գիտե՛մ ատիկա — փողոցը քեզ պիտի խլէ ինձմէ: Քաղաքը ու բոլոր միւս քաղաքները, իրենց բոլոր կարելի ու անխուսափելի արկածներով, քեզ պիտի ընծայեն հեռաւոր, օտար գուցէ: Բոլոր արունքնաւ նայուածքին տակ՝ ազոտը աղջիկ մը պիտի ըլլաս ու մարդոց ապօրէն ցանկութիւնները պիտի գան, խլրտին, մեծնան մարմնոյդ վրայ: Ու գուցէ դուն եւս պիտի ուզես դիմաւորել արկածը: Պիտի վերագառնաս վտանգատր այն անկախութեան՝ որ յանախ աղջիկները կը տանի տառապանքէ տառապանք: Իրապէս կ'ուզե՛ս այդ ազատութիւնը, Հելլա՛: Ի՞նչ մեծ ուրախութիւն, ի՞նչ ազատագրութիւն, ի՞նչ լիութիւն կը յուսաս այդ անկախութենէն՝ որ չի պայմանաւորուիր ապահով բարեկամութեամբ մը: Ձէ՛ որ երբեք մեր յարաբերութիւնը անելի ծանր չէ կշռած վրադ՝ քան կարմիր ցփսիդ, որ այնքան լաւ կը յարմարի դէմքիդ եւ կամ ծաղկուն գօտի մը մէջքիդ վրայ, սիրելի՛ց իմ...

* Քեզմէ ստացած վախս ասի՛ կը վերագառնայ կրկին ու կը տեղաւորուի: Կը կշռե՛մ բառերս՝ արտասանելէ առաջ, որովհետեւ չեմ ուզեր դէմս զինել քեզ: Ինչո՛ւ, Հելլա, հարկ կը զգամ պաշտպանուելու դէմք, հակառակ հոգիիս ամբողջ նուիրումին: Ինչո՛ւ քեզ կը կարծեմ ընդունակ զիս տառապեցնելու:

Գէշ օրեր են, սիրելի՛ս...

Մինչդեռ կ'ուզէի գալ առ քեզ բացարձակ վստահութեամբ, ուրախութիւնը աչքերուս մէջ, երկչուտ մանուկի մը պէս՝ որ կը վազէ իր մօրը թեւերուն: Կ'ուզէի քեզ փսփսայ ծածուկ ու քաղցր խօսքեր. բառեր՝ որոնց ետին երջանկութիւնը թռչունի պէս կը թափահարէ, բայց այդ բառերը կը մտնէ շրթներուս վրայ, ինչո՛ւ որ քեզմէ ստացած վախս կը վերագառնայ ինձ անապարանքով ու կը կրպէ հոգիս:

Գեշ օրեր են, սիրելի՛ս...

Երբեմն կը փորձեմ այս բոլորը ըսել քեզի, կողմնակի կերպով ու բառերս կը դողան ներքին սպառումէ: Կը թուի, թէ կը հասկնաս, բայց յաջորդ օրը, կարելի՞ց կ'ընես հաւատացնելու համար ինձ՝ որ մոռցած ես ու ընդունակ ես ամէն ինչ մոռնալու: Ու նո՛յն վայրագ ու խախտու ցոյ՛քը կը վառի բիրբերուդ մէջ: Ո՛չ, չեմ հաւատար քեզի, բայց յետին միտքը՝ որ կը ծածկուի բառերուդ ետին, բու ամբողջական, բու լրիւ անկախութիւնդ պահելու մնայուն հոգը, հպարտութիւնդ՝ ինձմէ անլի գօրատը ըլլալու՝ զիս կը ստիպեն ըլլալ զգոյշ, նուազ հաղորդական ու չյանձնուիլ քեզի ամբողջովին: Թէ՛ս գիտեմ, որ սէրը կրնայ ապրիլ միայն մթնոլորտի մը մէջ՝ ուր կասկածն ու վերապահութիւնը չեն կրնար շնչել, ուր վատահոսութիւնը օրէնք է, ու անձնը սիրութիւնը՝ նախապայման:

Հանգչեցնել քանի մը վայրկեան՝ հպարտ մարդու այս ծանր գլուխը տամ ու մերկ կուրծքիդ վրայ, թողո՛ւ այս գէշ ու տկար ձեռքերը՝ ձեռքերուդ մէջ, գուցէ տկար մարդ մը ըլլալ քանի մը վայրկեան ու կարծել թէ մանկութեան օրեր են անհա՛, հանգչիլ քիչ մը՝ հաւատալով, որ յաջորդ օրը կարելի է անլի գօրատը ըլլալ, գօտեպնդուած բու մեծ սիրով, անհա՛ ինչ որ հոգիս կը յուսայ քեզմէ: Բայց վախս կը վերադառնայ միշտ, ամէն տկարութեան պահու ու կը մնամ նո՛յն ցուրտ տղան: Ինչո՞ն համար աչքերուդ մէջ սահմանագծումներ կան միշտ, եզրափակուած կարելիութիւններ, հորիզոնը նեղ է կարծես ու դեղին ժպիտ մը անհա՛ կը բուսնի, կնոջ գէշ ժպիտ մը՝ որ կ'ուզէ ծաղրի առնել ամէն գեղեցիկ բան եւ որ կը յաջողի վիրաւորել զիս...

Ո՛չ, մեր ուրախութիւնն ու գարունը՝ այդ գեղչերուն եւ սահմաններուն մէջ չէ, Հելլա՛: Ան այլօր է: Զայն գուցէ գտնես ձեռքերուս վրայ՝ որ գիշերներով կը սպասեն բու սեղմումիդ, աչքերուս մէջ՝ ուր հոգիս անձնատուր է բու հայեացքիդ, ու ձայնիս մէջ, ու բառերուս՝ որ կամովին աննշան են ու գաղտնապահ: Բայց դուն չե՛ս փնտռեր զայն, գուցէ որովհետեւ կը կարծես ունենալ, ափիդ մէջ, մանկութեան խաղալիքի մը նման, միջատի մը անգօր մարմնին պէս, երգի մը պէս՝ որ գոց գիտես: Բայց, կրնաս հաւատալ, զգացումներ կան՝ որ չեն կրնար առանց սնունդի ապրիլ: Ու իմ սէրս կը տառապի անօթութենէ, շերտ ու անուշ գարնանային լոյսի պակասէ: Բոյսի մը պէս նիհար ու գուրկ՝ գայն կը ձգես առանց խնամքի ու ապահովութեան: Հելլա՛...

* Կարծես հարկ է նորոգել բառերուն մաշած հենքը, վերադարձնել անոնց սկզբնական գեղեցկությունը առաջին անգամ մարդկային շրթունքներէ արտասանուած վանկերու, որպէսզի զգաս խռովք՝ որ կ'ալեկոծէ հոգիս ու կեանքիս ամբողջ խառնակ ու անհանգիստ ընթացքը, քեզ շատ սիրելիս ի վեր, Հելլա'...

Ահա՛ օրերէ ի վեր անընդունելի հրամանի պէս է այս անառաքելի նամակը շարունակելու պահանջը մարմինէս ներս: Ահա՛ օրերէ ի վեր այս ցանուցիր թղթերը պատռելու փափաքը անհանգիստ կ'ընէ զիս: Այս յարատե հակասութիւնը՝ մտերմօրէն քեզի, խօսելու հրամայական պէտքիս եւ արդէն արտասանուած բոլոր սիրոյ բառերը ջնջելու, ուրանալու յարանուն ցանկութեան միջեւ, ներկայութիւնդ կը դարձնէ դառն, եւ բացակայութիւնդ՝ անհանդուրժելի: Ինչո՞ւ հարկ է հեռու ըլլալ աչքերուդ ծածկուած ու խենթ բոցէն, վայրի կատուի քու գրգռիչ շարժումներէդ ու չլսել ձայնիդ ջերմ ելեւէջը կարեմալ խաղաղօրէն քեզի, խօսելու համար, Հելլա'...

Քանի անգամ, սիրոյ եւ գուրգուրանքի ժամերէ յետոյ, զիս ձգած ես աւելի՛ գուրկ, աւելի՛ տխուր, աւելի՛ ծարսու քեզմով, քան առաջ: Մինչդեռ առաջ, մեծ ուրախութիւն մը կը մնար միշտ, օղին մէջ, քու մեկնումէդ յետոյ: Առողջ շունչ մը կարծես կը մաքրէր ամէ՛ն բան: Ու ատիկա ուրախութիւն մըն էր առանց գեղչի, առանց խղճահարութեան ու կարծես առանց սահմանի: Գգուամբներդ կը յապաղէին ամէնուրեք: Հիմա՛՝ քեզմէ ստացած վախս կայ միայն, որ կը տեղատարուի հոս: Կարծես ձայնիդ մէջ զգամ ձանձրոյթը, գեղջը, գուցէ ե՛ւ թշնամին, որ դարանակալ կը սպասէ պատեհ ժամուն...

* Դիր գլուխդ կուրծքիս վրայ, զգաս՝ արեանս տենդն ու հոգի-իս մակընթացութիւնը: Թռչլ տուր շնչեմ մարմնիդ խելացնոր բոյրը ու մտիկ ըրէ՛ զիս:

Անառարկելիօրէն տխուր օրեր են, սիրելի՛ս: Ու տխուր է նաեւ՝ միշտ որեւէ տխուր բան ունենալ քեզի ըսելիք, եւ ի՞նչ տխրութիւն չկարենա՛լ ըսել այս բոլորը՝ բարձր ու քաջ ձայնով, նայելով ազուտ աչքերուդ ու սպաստամիլ այս անիծեալ ու թշուառ թղթի կտորներուն ու չնչին բառերու՝ որ դամբան են միայն յուզումներու:

Գէշ օր մըն էր կրկին երէկ, օր մը՝ առանց քեզի: Բայց ինչ օգուտ կրկնելէ, երբ երբեք կարելի չէ համոզել քեզ՝ որ առանց քու ներկայութեան անկատար է կեանքը եւ իրերուն ու մարդոց վրայ կայ ձանձրոյթի եւ գորշ միօրինակութեան ընդարձակ մառախուղ մը:

Բարեկամուհի՝ յուզիչ ձեռքերով ու աչքերով, ուր ամէն վայրկեան կեանքս վտանգի տակ է, բարեկամուհի՝ աղօտք իրանով, որուն վրայ ցանկութիւնս հիւանդ շերմութեամբ մը կը բարձրանայ, չա՛ր, սպիտակ գայլ, ներ՛ այս բոլոր անօգուտ խօսքերը, որ շրթներս կ'արտասանեն, բոլո՛ր գուր ու փցուն բաները՝ որ կը պատահին, եւ բոլո՛ր ձանձրոյթները՝ որ նանչցար հետս: Տե՛ս, յաղթական գեղեցկութեանդ առջեւ թրջած աչքերով մանուկի մը պէս եմ՝ որ բացի իր երջանկութենէն անգէտ է ամէն բանի:

Հաւատա՛ ինձ: Տխրութիւնս վերադարձած է կրկին ու հաստատուած սենեակիս մէջ: Տեղադրուած է մարմնիս մէջ՝ Բաս եւ վատ Փասկածի պէս: Մի՛ ըսեր, թէ կեանքի մէջ ո՛չ մէկ վերջնական ու բացարձակ բան կայ, Բանի որ սեւ՝ օրերէ ի վեր ան կը տիրէ հոս եւ իր տիրապետութիւնը երկարատեւ է ու առանց սահմանազուտի, Հելլա՛...

Ան աւելի ծանր է, ճնշելու գորատը, Բան ֆրանսական քա՛ֆարը, դատարկապորտ ուսանողներու եւ բանուոր աղջիկներու այդ թափառիկ ու անակնկալ թախիծը, բոլորովին մասնատըր ու կարծես Բիչ մը թեթեւ մելամաղձոտութեամբ այդ սիրելի խոսվ՛քը՝ որ կը գեղեցկացնէ նոյնիսկ ամէնէ՛ն դժման դէմքերը: Մեծ ու զէշ ցաւ մըն է ասիկա, աւելի խոր ու դժուարատար, Բան անգլիական մառախլապատ ու միտրինակ սփռիչը, որ աշնան անձրեւի պէս անյայտ, կ'իյնայ մարդոց սրտերուն վրայ: Ծանր է, լուրջ է ու կը ճնշէ՛ անդամների չարիքի մը պէս: Կարծես յամառ ու աներիչ ժանգ մը՝ որ կը կրծէ կործմ, կարծես Բինախնդիր մագիլներ են՝ որ կը ճանկոտեն մարմինս, յամառ, խիստ ու անողոքելի բան մըն է ասիկա, Հելլա՛...

Այս բոլորը, յիմար ու մանուկ տղու ցաւեր են անշուշտ, սիրելի՛ս, բայց ո՛չ մէկ ատարկութիւն կարելի է: Բառերը վաղուց է անզօր են, եւ իմաստութիւնը՝ անգործածելի: Տխրութիւնը, Հելլա՛, բարեկամ մըն է, որմէ՛ մարդ ազատագրուելու իրաւունք չունի: Կարելի չէ դուրը բանալ ու ըսել ~ Գնա՛...

* Ու յետոյ, գարունը չէ վերջացած դեռ եւ ոչ ալ իմ վախս այս լուսաբարձի առաւօտներէն: Գիտե՛ս, վախս գարունէն ուրան մասին յանախ խօսած եմ Բեզի, վախ՝ այս բոլոր արբեցող ու յարանուն գեղեցկութիւններէն, վախ՝ անհունութենէն եւ դեռ չաւարտած, չծլած բաներէն, վախ՝ սրախութեան այս անհուն ծարախին առջեւ երեւակայլ, երէկ մանկութիւնս ոյճման արբուն էր, որ վախցայ պարտէզին ցանկորմին առջեւէն անցնելու սիրտս կը նմուրք անորոշ ցաւով մը եւ կարծես աչքերուս մէջ

անշրջագիծ վիշտ մը կար ու այս բոլորը դառնացուցին հոգիս, կարծես շրթներուս վրայ մահուան նախահամը ըլլար ու ի՛նչ որ հեռաւոր ու յոյլ մահերգ մը հծծէին, տարօրինակ գործիքներու վրայ, հեռու տեղ մը:

Ծառերուն փափուկ ու ցոլաթուրմ կանաչը, փթթումը՝ խոտերուն եւ ծաղիկներուն, բիչ մը ծանր ու կարծես սպառնալից երկինքը անձրեայեղց, թռչումներուն կարօտահար ճիչերն ու աղմուկը թաւտուններուն մէջ, մանուկներն ու անոնց յուզիչ եւ անուշ ձայները եւ երիտասարդ բանուորուհիներու ցուցական ուրախութիւնը, խառնուած էր բացակայութեանդ՝ զիս ամբողջ օրուան համար ապերջանիկ ըրին: Որովհետեւ, ինչպէս երեկոյ մը կ'ըսէի քեզի, անանցանելի խրամատի պէս բան մը կայ, շատ մեծ տարածութեան մը նման՝ երջանկութեան բոլոր կարելիութիւններուն, որ կը վերադառնան ու կը հաստատուին մարմնիս մէջ, արմատ կը նետեն դէպի զիս, այս սիրայեղց գարնան հետ եւ մերկ, սգեղ, բշուռ իրականութեան միջեւ:

Աղջիկներու վայրի ու անգուր աչքերուն մէջ՝ շատ են դեռ չհանգչած կամ գէշ նուաղած լոյսերը, ինչպէս բուկիներուդ՝ ուր օտար ուրախութիւններ յանախ անգուսպ պայծառութեամբ մը կը վառին: Պատանիներու ձեռներուն վրայ կան բազմաթիւ վտանգաւոր կարելիութիւններ ու կիրքեր, որ հազիւ կը սկսին, ինչպէս բուկիներուդ՝ որոնց վրայ երկդիմի գգուանքներ կարծես ճամբայ կ'ուզեն: Կարծես անտարտ, այլ հրամայական սիրոյ պահանջներ կան եւ այլ անձնատուութեանց, զիս լ'ելու եւ անգործեան ստոյգ հաւանականութիւններ: Բերնիդ վրայ՝ բազմաթիւ համբոյրներ՝ որ իմս չեն եւ որ գուցէ պիտի ըլլան ուրիշին: Ու այսօր հրեւանքի ու հպարտութեան մէջտեղ, աղբատ ու գուրկ եմ եւ, հանդիպող առաջին մուրիկին պէս խոնար փողոցի մը անկիւնը կեցած՝ որ կը նայի մեռեալ նայուածքով մը՝ անգորդ աղջիկներուն:

Կ'անցնին, կ'երթան, թեանցուկ, պլլուած իրարու: Եւ բազմութեան մէջ՝ նաեւ եւ, ո՛վ զիտէ հպելով որքան ցատերու կամ ուրախութեանց: Ու երբ երեկոյեան կը բարձրանամ սանդուխներէն, մի՛շտ նոյն տղան եմ՝ ծարաւ սիրոյ ու գուրկ ներքին լիութեան: Այո՛, կը վախնամ այս բոլոր գարթնող բաներէն, ինչո՛ւ որ շատ մը ծածկուած, ննջած ծարաւներ կը բարձրանան ու կը մեռնին անսուղ՝ նորածին մանուկներու պէս: Թարթիչներս կը թրջին ու դառնութիւնս կը բարձրանայ շրթներուս: Տխուր օրեր են, Հելլա՛...

* Եկայ տուն՝ խոնջ ու դժկամ: Մարմինս յոգնած էր՝ այս յարածուն ծարաւէն ու անդամներս խելագար էին Բու իրանիդ կարօտէն: Հոգիս սակայն հեռուն էր ու խոով Բեզմէ: Ինչո՞ւ համար նոյնիսկ Բեզի հետ հեշտութիւնը տխուր է հիմա ու երջանկութեան ծարաւս անյագ: Ի՞նչ ընել:

Միս բոլո՞ր արկածները ո՞չ մէկ հրապոյր ունին այլեւս: Նայուածքս ո՞չ մէկ ուրիշ դէմքի վրայ կրնայ իր ուրախութիւնը գտնել: Կ'ուզէի ազատագրուիլ Բեզմէ, բայց պատահական բոլոր հաճոյքներէն անկարելի կերպով յոգնած եմ, բոլոր աղջիկները ինձ կը թուին հասարակ ու առանց ներքին խռովի, կարծես զուրկ այն հրատոյչոր տենդէն՝ որ մեզ կը տանի խանդավառ սպասույթներու եւ մեր պզտիկ կեանքը կը դարձնէ ջերմ ու արժանի ապրելու:

Այս անարձագանգ ու ամայի տարածութեան մէջ, մնացի առանձին:

Անձկալի ձայնով կը կանչեմ հոգիդ, կ'ուզեմ որ վերադառնաս ինձ առաջին օրերու Բու մակընթաց նուիրումովդ: Կրկին բանաս բոլոր մտացումներուն ու երկրային ուրախութեանց դուռը եւ ըսես. — Մտի՛ր...

★ ★ ★

* Հելլա՛, ներէ՛ ինձ...

Անտարակոյս ես եմ յանցաւորը ու ինձմէ է, որ բարձրացաւ անվստահութեան ու փոխադարձ կասկածի այս թանձր մէզը ու պատեց երկիւնը: Կը զգամ՝ որ մեծ է հպարտութիւնս ու կարծես հիւանդ: Հոգիս դեզ է ու պահեր կամ, երբ ամէ՛ն բրտութիւն կարելի է սպասել իրմէ: Ահա՛ դաժան բնատրութեամբ տղայ մըն եմ կրկին, հեզնոդ, կասկածամիտ, այլեւ ծածուկ: Լեզուս՝ զէշ է ու թունատը եւ բառերուս տակ յաճախ երկուութիւն կայ եւ յետին միտք: Ու նաեւ տեսակ մը սատականութիւն, մեղաւոր ու զորշ վայելք: Առանց այն բնական անկեղծութեան ու ինքնաբոյի խանդավառութեան՝ պիտի ըլլայի տաժանելի ու դժուար բնատրութեամբ մէկը: Բայց դուն զէթ լաւ գիտես, Հելլա՛, որ երբեմն ալ հեզ եմ, լի, Բաղքր ու բարի նոյնիսկ ու թրջած՝ բերկրութեամբ ու զորովով, ինչպէս դաշտերու խոտը առաւօտեան:

Հելլա՛, ներէ՛ ինձ...

Ահա՛ կրկին յաճախողէ՛ս եմ, առանց պատճառի ու անորոշ տեղերէ եկած վշտերս: Երբեմն, յանկարծ, Բայլերուս սոջեւ, սեւ տարածութիւն մը կը բացուի, անեզր՝ զիշերուան պէս ու առանց

արեւածագի յոյսի: Հասարակ բան մը կը թուի կեանքը ու բոլոր իրերուն եւ մարդոց վրայէն ամէն բանաստեղծութիւն կը հեռանայ: Սիրած էակներս յեղակարծօրէն կը գրկուին իրենց ինքնայատուկ գեղեցկութենէն: Ամէն նպատակ կը կորսնցնէ իր գոյութեան իրաւունքը: Պայքարը անգամ կը գրկուի իր գրաւչութենէն: Այդ պահերուն բոլոր ազդու ձեռքերը անգամ, Հելլա՛, զիս չեն կրնար ազատ ափ հանել: Բազմաթիւ գղջումներու մէջտեղը, կը մնամ անուղի մարդու պէս ու չեմ գիտնար, թէ ո՛ր կարելի է պուտ մը ուրախութիւն գտնել: Անձեւ, անդարմանելի ու առանց անունի վիշտ մը կը նստի հոգոյս վրայ ու կը թուի, թէ երբե՛ք ապրելու ուրախութիւնը չպիտի վերադառնայ ինձ:

Ո՛չ գրքերը կրնան փրկել զիս, ո՛չ բոլոր յոյսերը եւ ոչ իսկ դուն, սիրելի՛ս: Յուսահատութեան թագաւորութիւնն է ատիկա՝ անեզր ու անհասկնալի:

* Զգայարաններու հասողութեան մէջ լրիւ կերպով պահել փորձել յետոյ բեզ, ահա՛ կը զգամ, որ բազմաթիւ մասերով հեռու ես ինձմէ: Սիրելիդ ի՛մ, դուն զիտես, որ ստանալու համար բոլոր ամբողջական սէրդ, բեզ անլի մտերմօրէն, անլի խորութեամբ, անլի վերջնական ձեռով ունենալու համար զիջումներ ըրի՛՜ որոնցմէ հոգիս երբեմն կ'ամչնայ: Դուն զիտես, որ անկարելին փորձեցի բեզ սահմանափակելու համար իմ շրջագծէն ներս, բայց բոլոր սահմաններդ անորոշ էին ու ես կորսուեցայ խաւարին մէջ: Երբեմն թուեցաւ, թէ ամէն բան կրկին կորսուած է, բայց կանչեցիր զիս ու ձեռքէս բռնած զիս վերադարձուցիր սկզբնական ուրախութեան: Օր մը ըսիր ինձ՝

—Գէշ ու խորամիտ տղայ մըն ես ու միշտ կանխելով զիս՝ կը սկսիս դժգոհիլ ու անլին պահանջել, երբ ես է որ իրատուի ունիմ վշտանալու բեզմէ: Ձեւ զիտեր շնորհակալ ըլլալ ու կարծես թէ այն համոզումը ունիս՝ որ պարտաւոր եմ ամէն բան տալ բեզի: Իրաւանչիւր փոքր գոհաբերութեան համար կը պահանջես վարձատրութիւն: Ու միշտ կը ստանաս: Գէշ տղայ մըն ես, Աշո՛տ...

Յետոյ, երբ ես լռեցի, որովհետեւ խորապէս վշտացուցած էիր զիս, գրեթէ բռնի գլուխս առիր ափերուդ մէջ ու անլցուցիր՝

—Կրնա՛ս պնդել, Աշո՛տ, որ դուն անլի ամբողջական կերպով հոգիդ տուած ես ինձ, քան ես բեզի: Պահեր են եղած, երբ ապրած եմ արեւան վերջին կաթիլովը բոլոր վշտերդ ու տառապանքդ, լրիւ պատկանած եմ բեզի ու չեմ գիտեր, թէ դեռ որքան կրնամ սիրել բեզ՝ որպէսզի չաշխատիս անընդհատ ազատութիւնս սահմանափակել...

— Հելլա՛...

Երբեմն, տուն վերադարձիս, կ'երկնամ տիւանիս վրայ, ուշ գիշերին ու անչար բառերով կը խօսիմ հետոյ: Դուրսը գիշերը կը գոցէ իր թեւերը քաղաքին վրայ: Ու ես բարձրաձայն խօսք կ'առնեմ քեզի: Կ'ըսեմ՝

— Տե՛ս, պզտիկ սիրելի՛, քեզ կը կրեմ հետս ու ներկայութիւնդ իմ միակ ուրախութիւնս է: Հելլա՛, աւելի՛ սիրէ գիս ու աւելի՛ շռայլ աղջիկ մը եղիր...

Անշուշտ «պզտիկ յիմար» մը միայն ընդունակ է այսպէս տառապելու, բայց ի՞նչ կարելի է ընել: Ինձմէ հեռու՝ դուն շատ գեղեցիկ ես ու կարծես մատչելի՝ քո անառարկելի գեղեցկութեամբդ: Վստահիլ քեզ փողոցին՝ միշտ մեծ վախ մը կը պատճառէ ինձ: Ինձմէ հեռու՝ կարծես թէ քեզ կը խլեն ինձմէ: Գլուխս պահած բարձին մէջ, մեղմօրէն կը խօսիմ քեզի: Կ'երեւակայեմ, որ հոս ես ահա՛, մարմնիս մերձ, քո աղուոր իրանիդ անկումովը՝ այս ցած տիւանին վրայ, ամբողջովին թրթուս եւ մերկ ու շատ հեռու միաժամանակ ու ձեռքերուս հասողութենէն դուրս: Վարսերդ թեթևօրէն կը թափին ճակատդ ի վար ու կը խնդաս՝ քո արձակ, լի ու անկեղծ քրքիչովդ՝ որ այնքան յուզիչ է որոշ ժամերու եւ այնքան մատնիչ: Քեզ կը տեսնեմ տենդի մէջ ու քաղցր, գուրգուրալի եւ քիչ մը շփացած, ձայնիս դիտարանքէն, քո սրտատու, քաջ բառերովդ շրթներովդ վրայ: Քեզ կը տեսնեմ հպած, կպած մարմնիս, ամբողջովին իմս, ինչ փայլք թէ քանի մը վայրկեաններու համար ըլլայ ատիկա — յախուճականութիւն, պիտի ըսէր միւրը:

* Վաղը, գիտե՛մ որ պիտի բախես դուրը: Ամբողջ մարմնովս տապալած տիւանիս վրայ՝ պիտի սիրես դողայ սանդղակներուն վրայ լուսած ամէն շշուկէ ու օտնաձայնը պիտի անհարկերութեամբ խելագար ընէ զիս: Պիտի բախես դուր ու առիս ներս — գուցէ ոչ սակայն, ու այս անորոշ կասկածը կը բաւ ամբողջ գիշերը զիս զարթուն պահելու եւ արիւնս թունաւորելու համար: Կոթնած իբրարու՝ սանդղակներէն պիտի իջնենք ու թեւանցուկ, սեղմուած իրարու, լուրսեամբ պիտի քայլենք փողոցներէն, ունկնդրելով ներքին ձայներու եւ քաղաքին անորոշ ու խալ աղմուկին: Գուցէ քիչ մը վշտացած պիտի ըլլամ քեզմէ կրկին ու դեզ մանուկի մը պէս խոսով պիտի կենամ՝ հակառակ լա, անչար ու հանելի տղայ մը ըլլալու ամբողջ փափաքիս, մինչեւ որ հոգիիդ ջերմութեամբը յաղթես ինձ, սիրելի՛ս: Դուն պիտի ըլլաս մերձ ու հեռու նոյն ատեն, թոյլ տալով, որ մարմնիս զգայ մարմնիդ յարանուն ծարարը: Պիտի խօսինք ցած, զաղտնի,

խոովայոյց ձայնով, պիտի ոգեկոչենք անկորնչելի յիշատակներ, դուն՝ Բուկիններդ, իսկ ես՝ իմիններս: Ու երկուքով պիտի մոռնանք մեր երջանկութիւնը:

Վաղը պիտի բախես դուր ու հազուստներուդ շրշիւնովը պիտի սահիս ներս...

* Երեկոյեան անգալտ ժամերէն մէկն է, Հելլա՛ ու այս նամակը քեզի կը գրեմ նստած «Սեւ ծղորթ» յառաջամասը, ուր առջին անգամ զգացի, թէ կրնամ շահիլ քու թանկ բարեկամութիւնդ, ուր այնքան ներուժ ու լի ժամեր ապրեցանք, ես ու դուն, անջատուած մարդոց բազմութենէն ու անդառնալիօրէն սիրելով այս վաղնջական Բաղափին ներշնչող գեղեցկութիւնը: Ահա՛ մեզ լամադճիկ անկուրով մը կը սպառի երեկոն, կ'իյնայ անփութօրէն, սալալատակներուն վրայ, կարծես թէ բաժանումի, լիման ու անկարելի բաներու՝ անծայր տխրութիւն մը ձգելով գետին: Ծառերը կը դողան՝ երեկոյեան գաղջ թներուն մէջ: Գիշերը մերձ է, ան պիտի գայ՝ ջիւջ ու կենսամորոգ: Աստղերը հատհատ պիտի բուսնին կրկին ու թռչուններուն ձայները պիտի շատնան — Ո՛ր ես հիմա, Հելլա՛, ի՞նչ կ'ընես, որո՞ն վրայ կ'իյնայ աչքերուդ մահուր ու տա՛մ հայեացքը: Որո՞ն կը ժպտիս, գուցէ անտարբեր մարդոց: Որո՞ն հետ է քու մուրը, քու թափառիկ հոգիդ:

Խուլ է ու հանելի Բաղափին շշուկը: Բազմութիւնը կը հոսի համդարտ հապնեպով մը, մերթ ընդ մերթ կարծես հանգչելով: Քաղաքային ժամացոյցը ինը կը հեչէ: Տխուր է հոգիս ու արտասուելու չափ թշուառ է մարմինս: Դատարկապորտ մը, իր խառնիխառն մօրուրը կուրծքին, նստած է դէմը, նստարանի մը վրայ ու թշուառ մատնէրով զլանիկ մը կը փաթթէ: Մանուկներ կը խաղան քիչ մը հեռուն, ցայտաղբիւրի մը առջեւ, իրենց ուրախ աղաղակներով ասպարէզ կարգալով աշխարհի ցաւերուն: Հելլա՛, ինչքա՛ն աշխոյժ ու մանուկ եմ դեռ: Կարծես իրենց աչքերուն խորը կարելի է գտնել ամէն կորսուած երազ, ամէն գէշ մեռած ուրախութիւն ու ամէն ծարաւ: Կարծես ապրելու մեծ հրճումները բռնած կը տանի, իր ալեկոծ թներուն վրայ, այս բոլոր էակները ու միայն ես եմ, որ չեմ զգար գիշերամուտին գաղջ ու անդորր գեղեցկութիւնը ու տրտում է անձս, հիւանդ անասունի մը պէս: Ի՞նչ ընել խցելու համար այս ներքին լռութիւնը, սիրոյ նիշով մը փարատելու համար այս դժնէ առանձնութիւնը: Ի՞նչ ընել ամէն բան մոռնալու համար: Կարողա՞յ կարելի չէ ու քունը՝ հեռուն կը մակաղի: Հեռանալ՝ այս տխրութեան սեւ թներուն վրայ, մեկնիլ ու չվերադառնալ՝ այլեւս, չվերադառնալ:

Վաղը պիտի բախես դուստ, սիրելի՛դ իմ եւ գուցէ գուարք ու շատ շուայ աղջիկ մը պիտի ըլլաս կրկին, բայց կասկածը, սեւ ստուերի մը պէս պիտի սպրդի մեր երկուսին միջեւ ու դժուար պիտի ըլլայ ազատագրուիլ անկէ: Պիտի վշտացնենք իրար եւ շատ պիտի տառապինք: Մեր մեծ տխրութիւնը պիտի վերադառնայ այս սենեակը ու պիտի զգետնէ մեզ առաքուր:

Ժամացոյցը կը հնչէ ու կ'անցնին, կը սահին պահերը: Ի՞նչ կրնամ ընել, Հելլա՛, ի՞նչ վերջին փորձ մերձեցնալու համար առ քեզ, այս փխրուն բարեկամութենէն եւ սիրոյ այս զուր յիշատակներէն անելի մնայուն ու թանկ ի՞նչ կրնամ տալ քեզի: Տե՛ս, տխուր է հեշտութիւնը ու առանց հօր գեղեցկութեան ու բոլո՛ր բառերը մաշած են ալ: Հելլա՛, անողո՛քեի՛, անգո՛ւք սիրելիս, իմ անյագ, սպիտակ գայլ՝ քիչ մը գարնան ծիլ բեր վաղը ինձ ու աչքերուդ մէջ անխարդախ ու շինչ ուրախութեամբ մը եկո՛ւր, վերադարձո՛ւր զիս մեր սկզբնական երջանկութեան:

Եկո՛ւր, եկո՛ւր: Ու լո՛ւ՝ եւ ներմապէս մտիկ ըրէ՛ զիս: Թոյլ տո՛ւր, որ քեզ երկարածգուին՝ ըստած բոլո՛ր այս բաները, լրանան վերջին գեղեցկութեամբ մը ու արմատ արձակեն: Ի՞նչ որ ըսի, զիտես, չնչին բաներ են: Ի՞նչ որ գեղեցիկ է, մնացեալն է, Հելլա՛, մնացեալը՝ որ կարելի չէ արտայայտել բառերով: Զգա՛ հոգիիս վերելքը ու ձեռներու ջերմութիւնը, փնտո՛ւ՛ զիս, գտի՛ր զիս: Եկո՛ւր, Հելլա՛ ու լո՛ւ՛, ոչինչ ըսէ, որ կրնայ եղծել հետոյ ըլլալու ուրախութիւնս: Ու քիչ մը անելի՛ սիրէ զիս, Հելլա՛...

(Շար. 4)

ՎԱԶԳԷՆ ՇՈՒՇԱՆՅԱՆ

ՈՔԵԿՈՉՈՒՄ

Միստիք հովեր կը բերէ լուսինը՝ հոգիիս,
 Որ անսոսի մերկութեամբ կը թրթռան սարսուռներ...
 Գողտրիկ սէր մը անցեալի կ'ոգեւորուի վերստին,
 Կը քաղցրամայ անգամ մ'ապ, քաղցրացումով ամմեկին...

Ճամբաներէն յոյզերու մէկիկ-մէկիկ կը քալեն
 Բոյրերու մէջ օրօրած ոսկեայ յուշեր հեռաւոր...
 Հոգիէս կայծ մը բոսոր անունդ կ'ոտրագծէ,
 Տարտղմուած տարրերու համադրումով հրաշային...

Խորիւրդին մէջ անունիդ՝ անձուկ դողն է վայելիք,
 Որ հեշտամեկ կը լեցնէ մեծութիւն տխրամած...
 Կը թափառի մարմնիս մէջ այրող կարօտ մ'ահալի,
 Որ անցեալէն շերմացած՝ կու գայ ներկա՛ն պարտրել...

ԴՈՒՆ

Երբ դուն կու գաս,
 Տառակ գիշերներու մեծութեամբ մէջ
 Աքշալոյսներ՝ կ'ոտրագծուին...

Երագներս կը հագնին մարմին,
 Ու տենչանքներս — ոգեզէն տեսիլք —
 Թախիծս կ'օրրեն քաղցր մրմունջով...

Ճամբաներէն արիւնիս
 Կը կառուցես անէացաման գմբէթներ,
 Ու սրբացած հոգիները մեր,
 Կապոյտ բացեր կը ծորեն
 Խորանին մէջ Գաղտնիքին...

Ու պահը կ'ըլլայ անհունօրէն բանաստեղծական...

Շրթներու վրայ կը ծնի բառը,
 Բառը՝ կեանքի, սիրոյ, վայելիքի,
 Բառը՝ զխաղիւր երագի...

Ա. Դ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



ԱՆՀԵՏԱՑՈՂ ԴԷՄԵՐ

Բանաստեղծ, թարգմանիչ և լրագրող Նորայր Բաղդասարյան ծնած է 1 Յունւար 1951ին, Ղուկասեանի շրջանի Կրասար գիւղը (նախապէս՝ Ղուրջրուլազ): 1978ին կ'աւարտէ Երևանի պետական համալսարանի բանասիրական ճիւղի հայոց լեզուի և գրականութեան բաժինը, ապա՝ Մոսկուայի Մ. Գորկիի անուան համալսարանային գրականութեան ինստիտուտը:

Երջան մը Ղուկասեանի շրջանային «Դարուն» թերթի խմբագրութեան մաս կազմելէ ետք, վերջին տարիներուն կը

նուիրուի մշակութային գործունէութեան իրրիս Ղուկասեանի շրջանի մշակութային բաժնի վարիչ:

Քսան տարեկանին (1971) «Գարուն» ամսագրի մէջ իր առաջին բանաստեղծութիւնը ստորագրելէ ետք, Նորայր Բաղդասարյան քանոսմեակ մը շարունակ կ'աշխատակցի հայրենի գրական մտային, ստորագրելով ինքնատիպ բանաստեղծութիւններ: Ան նաեւ կը հրատարակէ բանաստեղծական քանի մը պրօզայի:

Ռոմբու ծաղկման շրջանին՝ 1991ի Յունիսի տառչին օրերուն, մահը կը կտրէ երեսասարգ բանաստեղծին կեանքի թիւը:

Ն Ո Ր Ա Յ Ր Բ Ա Ղ Դ Ա Ս Ա Ր Ե Ա Ն

Հագարների մահ տեսանք ու այդպէս էլ շտկորեցիմք միտքարտեր Այդպիսի գիտութիւն էլ չկայ՝ միտքարտի եւ այդպիսի միտքիւն չկայ՝ միտքարտողները: Ինչ ասում-խօսում ենք, ինչ քում ենք՝ մակերես է, Արտաւ ցամ է իր ճիւղերով, եւ ամէն ճիւղից Ար ցաւ է ծնում՝ նոր ճիւղերով, միմեյն գրաւում են հոգիդ ու մարմինդ ամբողջութեամբ: Հէնց այդ պահից էլ կորստի մամիչը սողում է Քեզ, կրացնում, փոքրացնում է...: Հէնց այդ պահից էլ գգում եւ կորստի չափը, որին Արտաւդ տեղատրել չես կարող, հախից գալ չես կարող ու դրա համար էլ չես հաւատում, չես ուզում հաւատալ:

Ո՞նց հաւատաս, որ Նորայր Բաղդասարեանն էլ չկայ, մի Բանի օր տառչ կար, բանաստեղծութիւններ էր տանում-բերում, յօդածների համար էր պայմանատրում ու հիմա չկայ:

Կապուպէայ, գանգրսներ, ժպտեքեւ մեր Նորայրը, որ... Աստուած նրան տեղծելու շնորհ էր տուել եւ Աս քազում երաշայի գործեր արարեց: Միայն թում էր, թէ Աստուած նրան տեղծել էր երկարատեւ կեանքի համար, բայց նրա կեանքը միմեյն առաջիմ փորձութիւնն էր:

Բայց ինձ շարունակում է շերտացնել նրա՝ իր լեռնաշխարհի հանդէպ մեծ սէրը, որը բանաստեղծական պատկեր չէ միայն:

Ինձ շարունակում են ջերմացնել նրա անմիջականությունը, կենսասիրտությունը, կանեցողությունը, մարդասիրտությունը, բարոյականությունը, որոնք յափտեանս զլանցուել են նրա պոեզիայում:

Ինձ շարունակում են ջերմացնել նրա բանաստեղծությունները, որոնք նրա հաւատն էին ու Աստծոյ կողմից կանխորոշուած նրա ուղին:

Եւ ուզում եմ, շատ եմ ուզում հաւատալ, որ այդ ուղին շարունակում է, որ նրա կեանքն է շարունակում, որ մեր աշխարհից դուրս ուրիշ կեանք էլ կայ, քանի որ Լորսայրի համար, մեր միւս վաղամեղիկ բանաստեղծների համար, լաւ մարդկանց համար կայ:

Ուզում եմ, շատ եմ ուզում հաւատալ, բայց ծանր, ցաւոտ է այդ հաւատը:

Շրեկի մարդկային յիշողութեան մէջ աւելի ապահով է:

Նրան չեն մոռանայ իր յեռնաշխարհում սուրող մեծաբն ու հզօր մարդիկ, այդ յեռնաշխարհի դաժան ձմեռն ու իր կեանքի պէս կարեւատեւ ամառը:

Վերջապէս նրան չի մոռանայ հայ գրականությունը:

Ու չեն մոռանայ մենք... (*«Գրական» թերթ», 1991, թիւ 8*)

ՍԱՄՈՒԷԼ ԿՈՍԵԱՆ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԵՆԱՑ ՋԱՀԵՐ

(Նուիրում եմ Մեարոպ պապիս եւ Ռսկեհատ տառիս)

Այս դէպքը, գիտե՞ք,
Շուտ էր պատահել,
Պապն իմ ձի նստեց,
Երբ շատ էր ջահել:
Պապն իմ ձի նստեց ու գնաց յարդի,
Գնաց Մշոյ դաշտ, չվերադարձաւ,
Տասն ցած նետեց սնդուկը դարդի,
Սակայն սնդուկը երկինք բարձրացաւ:
Ես էլ գնացի պապիս Ետեւից,
Բայց ոչ ձի տեսայ, ոչ Մշոյ դուրան,
Պապս ձեռքով էր անում ամպերից,
Ամպերը ելան՝ ծածկեցին նրան:
Ամպերը ելան, սարից փոքր ու մեծ,
Զկար ոչ մի ձի հեծեալին բերող...
Ու պատմությունը այստեղ աւարտուեց,
Ինձ լսող մարդիկ, մնացէ՛ք ներող...

ԵՏՀԱՐՈՒԱԾ

Կանչեր եմ լսում, ձիերի դոփիւն,
Քարերն են անգամ գայրոյթից խօսում,
Նոյն բշնամփն է եւ կոխն է նոյն,
Նոյն սատանան է դեռ ապրում փոսում:

Հէ՛յ, Միերի թոռ, հէ՛յ, Դաթի ցասում,
Հէ՛յ, Անդրանիկի անխորտակ ոգի,
Ջրադացֆարը այնպէս են կիսում,
Որ ո՛չ հայք, ո՛չ բուրբը բողոքի...

Այնպէս են ծեփում, այնպէս սուադում,
Որ չես հասկանում՝ տակը ի՞նչ դրուեց—
Մեզ են կրակում, սակայն քեզ թաղում,
Այդ քո երկիրն է մեռնում, Պետրոս Մեծ...

ՏԱԳՆԱՊ ՀԱՅՐԵՆԻՔԻ

Ինչ եմ անում այս ձիւնառատ շրջանում,
Գարունն անցաւ, բայց զարնան հոտ չի գալիս,
Կիսատ անձրեւ, իսկ ձիւնը չի վերջանում,
Գարնան վերջ է, ամառը մօտ չի գալիս:

Գաղափարներն, ինչպէս ջրերն հալոցֆի,
Իջնում են ցած եւ հովտին տէր են դառնում,
Վա՛յ նրան, ով հայրենիքի օրօցֆում,
Նոր աչք բացեց ու նոր լեզու է սոնում:

Քո բախտի հետ հիմա շատերն են խաղում.—
Մաֆիաների, թայֆաների կուտակում,
Մաքրուելու համար ձեան մէջ ինձ թաղում,
Յայտնում եմ պաղ ջրերիդ յատակում...

Հէ՛ք հայրենիք, լացս է գալիս, իսկապէս,
Ո՞վ է տէրդ եւ ում ես դու հաւատում,
Ո՞վ է խցկում յոյգերիդ բաց դռնից ներս,
Եւ դաւադիր թոյն լցնում քո գաւաթում:

Այնպէս հեշտ են գոռում-գոչում ամէնուր,
 Նրանք, ովքեր մի ծառ անգամ չեն տնկել,
 Սուրբ-սրբութիւն էլ չմնաց՝ ֆուսեց մուր,
 Մեծերդ հեռու, համբակներն են մէջ ընկել:

Մէզ հայրենիք, սիրտս է ցաւում վշտակէզ,
 Բախտդ ո՞ւր են ձգում ձուկն ու կարասը,
 Խեցգետինն է նստել շնչիդ, տանջում բեզ,
 Գողը՝ տնից, եզն երդիկից դուր է քաշում պարասը...

ՏԱԳՆԱՊ ԳԱՂԱՓԱՐԻ

Նորից հանգչում են գաղափարները,
 Փիլիսոփան է անգործ տառապում,
 37ի կաղապարները
 Բռնապետութեան պատկերն են թափում...

Ձկան հերոսներ... գոհեր անհամար,
 Բաժանիր՝ տիրես... էլ ուրիշ բաներ,
 Երկրաշարժը խուժում է ամառ,
 Դատարկ գլուխներ եւ լիք գրպաններ...

Դէ կրակում են, հերն էլ անիծած,
 Գնդակն ո՞ւր թռաւ կամ էլ ո՞ւմ խոցեց,
 Ոչ մի պատասխան, սակայն հազար հարց,
 Կատղած ամբոխը սրբին ֆարկոճեց...

Իսկ հայրենիքը մնաց բռունցֆում՝
 Ձայներ են լսում՝ միայն միացում,
 Վերջին գնդակը խրուեց իմ բունքում,
 Եօթը բալը դեռ իմ տունն է ցնցում...

ՆՈՐԱՅՐ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ



ԻՎայական Հարժուկ

«ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐՂԸ ԱՊՈՒԵ Է» (ԱԳՈՋ ՆԵՍԻՆ)

«ՉԿԱՐԾԵՆՔ, ՈՐ ԱՅԽԱՐՀԸ ԱՊՈՒԵ Է» (ԱՄԵՏՏԱՆ)

Հնապաշտ էջերուն արուած հարցադրոյցին մէջ թուրք գրազէտ Ազիզ Նեսինի բնորոշումը, թէ՛ «Թուրք ժողովուրդը ապուշ է», անկասկածայ չէ գրազէտներու եւ անոնց ծնունդ տուած ժողովուրդներու փոխադարձութեան մէջ: Արամատիքեան սիրոյն կատարուած են երբեմն անոնք, սրբապրութեան կարտոյլ բանաձևուած են մերթ, չլազեցած փառամոլութիւններ այ կաւտուած են անոնց նոյն եւ ընդհանրապէս ոճած են հոգեկան անպուայ շարութեան աղբիւններուն մէջ:

Մէկ ժողովուրդի գրազէտին եւ միւս ժողովուրդի գրազէտին միջև տարբերութիւնը ոճային եղած է միայն: Արդարեւ, մինչ ոճանք ճակատային ոճով մը կատարած են իրենց ախտաճանաչումներն ու յարձակումները, միւսները, ընդհակառակն, արուեստով բաւած են իրենց խօսքը: Ազիզ Նեսին ճակատային ըլլալ կը թոյն, ինչ կը թոյն, է՛, վասնզի մերկ են իր բառերը, թէ՛:

«Թուրք ժողովուրդը ապուշ է»:

Մեր տպատրութեանք, թուրք ժողովուրդի բնութեանկան այդ գիծը անընդունակութեան յայտարար նշան մը ըլլալէ անկէ, բաւականութեան ցոյցանիշ մըն է, որ մէկ կողմէ մտաւորական դասուն անպատասխանատու յայտարարութիւններով գրեւորուեցաւ ու կը շարունակէ գրեւորուիլ, միւս կողմէ՝ մտաւորական անմտութիւններուն հաստաց ընծայող ամբոյխին ամբոյխային զիւրահաճութեանք: Վերէն ու վարէն Գառմութիւնը, օրինակ, կ'անգիտանայ թուրքերուն բարոյական նպատար աշխարհին, մինչ իրենք ի ճային փողոց եւ թմբկի կը շարակնին օրրանը եղած ըլլալ քաղաքակրթութեան ու ժախջիթին եւ այլ սուտով, ինչպէս բտեցաւ, կը ժպտնին սնուցանել թէ՛ մտածող տարրը եւ թէ՛ խաւարակու խուժանները:

Ուրիշին ստեղծած քարին իրենց վերագրող եւ իրենց գործած չարքին համար ուրիշը յանցատուր նկատելու այս գարաւոր խաբէրայութեան դէմ շատ, բայց շատ քիչ թիւով թուրքեր ծառայան, մէկը նոր ճանչցանք, Ազիզ Նեսին, իսկ մեզի ծանօթ միւսը 1919ին Պոլիս հրատարակուած «Ալեմուտալ» թիւրքին խմբագիրն էր, որ հայապատկանութեան աւագ ոճրագործներուն դատաւարութեան ստին թրքութեանէն մերկանալով գրից:

«Չվարձեմք եւ շերտմ վերագրել յամցամբը, որովհետեւ չկարծեմք, որ աշխարհը ապուշ է»:

«Թուրք ժողովուրդը ապուշ է» յայտարարող Ազիզ Նեսինի միտքը ո՛չ կրրունանք ամբողջութեանք հաստատել մենք եւ ոչ այ ամբողջութեանք հերքել: «Ալեմուտալ» թիւրքին հաստատուածը վճարկան է սակայն Այն օրերուն, անկէ առաջ ու անկէ ետք, ո՛չ եղած է թուրքերուն վերաբերուծը աշխարհի նկատմամբ, եւ օր մը անպայման, ու ամէնքը մէկ, պիտի անդրապառնան, որ աշխարհը ապուշ կարծելու ապուշութիւնը չի կրնար յախտեանս յախտեանց անպատիժ մնալ...



Բանաստեղծ, պատմագետ եւ գրող Մուհամէտ Նուր Էտտին ծնած է 1954ին, Հարաւային Լիբանանի Նըբպէթ Սըլըժ գիւղը: Լիբանանեան պետական համալսարանի պատմաքանասիրական ճիւղին շրջանաւարտ ըլլալէ ետք, իր բարեկրթայն ուսումը կը շարունակէ Պուլկարիոյ Գիտութիւններու Ակադեմիային մէջ, որ 1982ին իրեն կը շնորհէ պատմութեան պետական տղթժողայն տիտղոսը՝ իբրեւ Օսմանեան կայսրութեան եւ թրքական պատմութեան մասնագետ:

Պուլկարիա ուսանած շրջանին, արտօբրէնի եւ ֆրանսերէնի կողքին, Մուհամէտ Նուր Էտտին կը ծանօթանայ նաեւ պուլկարերէնի, ռուսերէնի ու իթթերէնի, եւ լիբանանեան ու արաբական մամուլին մէջ կը ստորագրէ թուրք արդի գրականութիւնը ներկայացնող յօդուածներ ու թարգմանութիւններ:

Պատմական, քաղաքական եւ գրական բազմաթիւ յօդուածներու հեղինակ Մուհամէտ Նուր Էտտին հրատարակած է «Այս մտիք մերն է» քերթողագիրքը, «Թրքական արդի գրականութիւնը» ժողովածուն եւ պատմաքանասիրական ու թարգմանական այլ հատորներ:

Մուհամէտ Նուր Էտտին ներկայիս կը պաշտօնավարէ Պէլքուիթի մէջ գործող Ռազմավարական Ռուսմասիրութեանը, Հետազոտութիւններու եւ Փաստագրութիւններու կենտրոնին մէջ, ուրկէ իր պատրաստութեամբ լոյս կը տեսնէ թրքական ազգիւրներու վրայ հիմնուող «Թրքական հարցեր» պարբերականը: Միաժամանակ՝ Լիբանանեան համալսարանի Զահլէի մասնաճիւղին մէջ ան կը դասուանէ Թուրքիոյ պատմութիւն եւ իթթերէն լեզու:

Նուրը մէկուկէ տասնամեակէ ի վեր թրքական ժամանակակից գրականութեան եւ թուրքիոյ քաղաքական անցողաբաններուն շուրջ բազմաթիւ յօդուածներ տողադրած Տղթթ, Մուհամէտ Նուր Էտտին ծանօթ անուն մըն է արաբական եւ լիբանանեան մամուլի շրջանակներուն: Գլխաւորաբար թրքական ազգիւրներու վրայ հիմնուող իր յօդուածները, որքան ալ փորձեն ընթերցողին ներկայանալ առարկայական դիմագիծով, կամայ թէ ակամայ պարտադրուած են դասուարտ այսպէս ըսած թրքական տեսակետները արտացոլող գրութիւններ, իրողութիւն մը՝ որուն անդրադարձած է Լոյսիլըն Մուհամէտ Նուր Էտտին, մէկէ անէի յօդուածներու մէջ:

Հակառակ Թուրքիոյ շահադիտական տրամադրութիւններուն նըկատմամբ մերթ ընդ մերթ կատարած իր մատակերպումներուն, իբրանանցի այս թրքագետ մտաւորականին ճիշդ ցարդ չէ յաջողած տուածել անկողմնակալ ու առարկայական խօսքի նախանձնի մակարդակը՝ հասկնալի պատճառներով: Այնուամենայնիւ, Լոյսիլակ պատմական խնդարթիւրումներու եւ սխալ տուածակներու վրայ հիմնուած իր յօդուածներուն մէջ, ան միշտ ալ պահած է մտաւորականի իր վերապահութիւնը, ընթերցողին ուշադրութեան յանձնելով, թէ ինք պարզապէս կը ներկայացնէ թրքական տեսակետները, համաձայն թրքական ազգիւրներու:

Այսպիսի գրութիւն մըն է նաեւ «Հիւրիթէթ» օրաթերթէն քաղուած եւ միջազգային հրատարակութիւն մը նկատուող արաբական «Այ-Հայաթ» օրաթերթին մէջ լոյս տեսած Մուհամէտ Նուր Էտտինի «Ազիթ Նեպին...» Թուրք ժողովուրդը «սպող է»... յօդուածը, գոր մեր ընթերցողներուն կը հրամցնենք, անոր կցելով «Բապին»ի համար գրած իր «Ազիթ Նեպին եւ Սայման Ռուշտիի հարցը» խորագրեալ գրութիւնը եւ հատուած մը քանաստեղծական վաստակէն:

ԶՐՈՑԵԸ, ՈՐ ՅԱՐՈՒՑԵՑ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԶՃԱՆՉՅՈՂ ՓՈԹՈՐԻԿ ԱՐԻ
ԹՈՒՐԲ ԱՍԵՆԷՆ ԿԱՐԿԱՌՈՒՆ ԳՐՈՂԻՆ ԳԼԽՈՒՆ

**ԱԶԻԶ ՆԵՍԻՆ.- ԹՈՒՐԲ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ
“ԱՊՈՒՇ Է” ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԿԱՐԵՒՈՐ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԶՈՒՆԻ**

ԱՆԳԱՐԱ, ՍՈՒՀԱՍՄԷՏ ՆՈՒՐ ԷՏՏԻՆԷՆ.— Ազիզ Նեսինը, եաշար Քեմալին հետ անշուշտ, ամենէն հռչակաւոր թուրք գրողն է Թուրքիոյ տարածքին եւ անկէ դուրս: Ան հիմա եօթանասունեօթը տարեկան է (1915ի ծնունդներէն) եւ իր հրատարակած գործերը 95 խորագիրներէ աւելի են: Անոնց մեծ մասը թարգմանուած է 29 լեզուներու: Չորս զաւակներու հայր է: Սակայն կեդրոնը, զոր իր անունով 1972ին հիմնեց՝ որք մանուկներու ուսում ջամբելու համար, կ'ընդգրկէ 32 մանուկներ, որոնք հոն կ'ուսանին, կ'ուտեն եւ կը քնանան:

Ազիզ Նեսին գրագէտ մըն է, որ գործ ունեցաւ բառին եւ քաղաքականութեան հետ: Չախակողմեան է, այդ իսկ պատճառով ան զոց զիտէ դէպի բանտ առաջնորդող ուղիները եւ զնդաններու մանրամասնութիւնները: Եւ ճնշումը երբեք չյաջողեցաւ իր սրտին մէջ տնկել ատելութեան տունկերը: Իր գրութիւններուն մէջ, ան ցատումք, ճնշիչ բանութիւնը եւ անտիրութեան զգացումը կը գունաւորէ երգիծանքի ոգիով եւ դասն հեզնանքով: Առհասարակ ան եղած է թիրախը ուրիշներու նետերուն եւ կողմ՝ բազմաձայն գրոյցներու մէջ, որոնք բանավեճէ աւելի սուտերամարտի մօտ են:

Կարճ ժամանակ մը առաջ, յրագրական իարցագրոյցի մը միջոցաւ, Ազիզ Նեսին արտայայտեց այնպիսի տեսակէտներ, որոնք քննադատութիւններու եւ հակադարձութիւններու փոթորիկ մը ստեղծեցին: Ըսաւ ա՛յն՝ ինչ որ աշխարհի վրայ ո՛չ մէկ գրագէտ կրնայ ըսել. «Թուրք ժողովուրդը յիմար է»: Այսպէս, ամենայն պարզութեամբ: Եւ ինչո՞ւ. «Որովհետեւ ան միս չ'ուտեր եւ ի մասնաւորի՝ խոզի միսը. հետեւաբար, փրոթէիկի պակաս ունի»: Նեսինը քննադատող ամենէն նշանաւոր դէմքը «Հիւրիկէթ» օրաթերթի մեկնաբան Օքթայ Էքչինը եղաւ, որ ըսաւ, թէ Նեսինը արդար չէր գտնուած թուրք ժողովուրդին տուած իր արժեւորումին մէջ: Տայն դատապարտած էր յիմարութեամբ, փրոթէիկի պակասի պատճառով, ինչ որ սխալ է: «Հնդկաստան տուած այցելութեանս ընթացքին ես անձամբ տեսայ, որ հնդիկները բուսակեր են եւ անտրութեանս ընթացքին ես անձամբ տեսայ, որ հնդիկները բուսակեր են եւ անտրութեանս ընթացքին ես անձամբ տեսայ, որ հնդիկները բուսակեր են եւ անտրութեանս ընթացքին ես անձամբ տեսայ: Սակայն բոլորն ալ խելացի են եւ մեծ թիւով հնդիկներ Նոպլեան մրցանակներու արժանացած են. արդեօ՞ք անոնք ապուշ են»:

Ազիզ Նեսինի հետ կատարուած այն զրոյցին մէջ, որ յոյս տեսաւ լայն տարածում ունեցող «Հիւրիկէթ» օրաթերթին մէջ, Թուրքիոյ եւ աշխարհի սեւ հեզ-

նանքի առաջին ներկայացուցիչը արտայայտուեցաւ բազմաթիւ նիւթերու մասին եւ իր երգիծանքին մէջ շննայեց նոյնիսկ թրքական հանրապետութեան հիմնադիր Մուսթաֆա Քեմալին, երբ զայն դատապարտեց հայ անձի վը ստորագրութիւնը ընդօրինակելու մեղադրանքով:

Ստորեւ կու տանք հատուածներ վերոնշեալ գրոյցէն:

★ ★ ★

● Ըսիր, թէ աչեւս վստահութիւն չունիս թորք ժողովուրդին հանդէպ եւ զայն յիմար որակեցիր: Ինչո՞ւ:

— Ի սկզբանէ վստահութիւն չունէիս թորք ժողովուրդը սխալեցաւ ամէն բանի մէջ: Իր ամէնէն նշանաւոր անձը, Մուսթաֆա Քեմալը, այդ սխալը գործեց, երբ ըսաւ. «Թորք ժողովուրդը խելացի եւ լուրջ աշխատող է»: Այն ատեն ժողովուրդը ընկճուած ու տկար էր եւ բարոյական կորովի ու քաջախեղանքի պէտք ունէր: Մակայն Մուսթաֆա Քեմալ զիտէ, որ թորքերը ո՛չ թէ խելացի, այլ «թեմալեւներ են»:

● Դուն գրող մըն ես, որ մեծ ժողովրդականութիւն ունի եւ այս քառերդ մեզ կը մղեն ենթադրելու, որ յուսախաբութիւն մը կ'ապրիս...

— Ասիկա չի նշանակեր, որ ժողովուրդը չեմ սիրեր, կամ թորքիան ամբողջութեամբ ապուշներէ կազմուած է: Բայց թորք ժողովուրդը խելացի չէ: Խելացութիւնը պայմաններ ունի. օրինակ՝ թորք ժողովուրդը բաւարար սնունդ կը ստանայ. սո՛ւտ: Բաւարար չափով փրօթէին կը ստանայ. սո՛ւտ: Քոյի միս կ'ուտէ՛: Ինչպէ՞ս կրնայ խելացի ըլլալ:

● Ի՞նչն է, որ ցեզ իրապէս մղեց ըսելու. «Այս ժողովուրդը յիմար է»:

— Ընկերութեան մը տերը այն անձն է, որ բաժնեթուղթերուն 51 առ հարիւրը ունի: Մեր ընկերութիւնը պարզամիտ է: Հետեւաբար, յիմար է...: «Դուն լաւ ես» ըսելով, խօսքով ժողովուրդին օգնած չես ըլլար. անհրաժեշտ է որ իրեն ըսես, թէ ինք յիմար է, ապուշ է...

● Ինչո՞ւ համար ասկէ առաջ եւ յստակ ու պայծառ բառերով ասիկա չըսիր:

— Մարդ որքան տարիքը առնէ՝ ատելի գիտակից կը դառնայ: Այն խօսքը, թէ թորք ժողովուրդը քաջ է, սո՛ւտ է: Թորք ժողովուրդը քաջ չէ: Թէ ան ալ քաջեր ունի, ասիկա ուրիշ հարց է: Ազգային Ազատագրական պատերազմի ընթացքին, որո՞նք թխով ատելի էին, փախուստ տուողն՞րր, թէ մասնակիցները: Մասնակիցներէն ի՞նչ համահմատութիւնը պարտադրաբար բերաւ իր մասնակցութիւնը: Ղեկավարութեան կեդրոնացեալ գործութեան պատճառով թորք ժողովուրդը վերածուեցաւ ապուշներու: Թորք ժողովուրդը ոչ մէկ ստեղծագործ մտածում կամ պատկերացում տուած է: Ի՞նչ չափով թորքերը իրենց մասնակցութիւնը բերած են մասնակալից քաղաքակրթութեան...

● Ո՞ր կը գտնես դուն ցեզ՝ «այս յիմար ժողովուրդին մէջ»:

digitised by A.R.A.R.@

— Ես չեմ կրնար յիմարութիւնը ընդհանրացնել բովանդակ ժողովուրդին վրայ: Իբրեւ օրինակ առի ընկերութիւնները: Ես չեմ կարծեր, որ աստուածատուր նպաստով մը թուրք ժողովուրդը խելացի է: Թերութիւններ կան: Եւ ես, իբրեւ մայր, կ'աշխատիմ այդ թերութիւնները սրբազրել:

● Իբրեւ այս ընկերութեան մէկ անդամը՝ ինչպէ՛ս ազդուեցաք այս թերութիւններէն:

— Ապրեցայ եւ ցարդ կ'ապրիմ այս թերութիւնները: Ամալի մը կեդրոնը չեմ գտնուիր: Ոչ ոք կը համարձակի խօսիլ իր թերութիւններուն մասին: Ժողովուրդին հանդէպ պարտական ըլլալու եմ, զգացումս մեծ է եւ ծայրայեղ: Եւ որպէսզի կարենամ վճարել այս պարտքը, ժողովուրդին անկեղծ յստակութեամբ պէտք է ներկայանամ:

● Եւ արդեօ՞ք այս անկեղծութիւնը մարքսականութենէն կ'անցնի:

— Ուրիշ կ'ուզէ թող անցնի: Այս պարագան զիս չի հետաքրքրեր: Ես ո'չ մտնուկները կը ճանչնամ, ոչ ալ իրենց հայրերն ու մայրերը: Անոնք հոս կ'ուտեն ու կը խմեն:

● Դուն անոնց չես ըսեր, որ ձեր ծնողները «պառններ են», եթէ անոնց կրօնամոլ են:

— Կ'ըսեմ, եւ ինչո՞ւ պիտի չըսեմ. սակայն ոչ թէ որովհետեւ կրօնամոլ են: Իրենց կ'ըսեմ. «Ի՞նչքան անմիտ էք, խելացի եղէք»: Օրինակ, ես չկրցայ մանուկներուն սորվեցնել, թէ ինչպէս դուրս կը գոցեն: Արձակուրդով 15 օր անցուցի հանգստարանի մը մէջ, ուր մտատրականներ կային: Բայց դուրս գոցել չէին զիտեր: Արդեօք իրենց կրնամ ըսել. «Ի՞նչքան որքա՞ն լաւ էք»:

● Ինքզինքդ երբեիցէ չե՞ն ձաղկած:

— Կրնա՞յ ըլլալ որ այդ մէկը չպատահի: Ես այն անձնատրութիւնն եմ, որ քողարկուած կը գտնես իւրաքանչիւր իտալացիի հտին:

● Չմնաց գրող մը, զոր չընկաղատես իր տկար կէտերուն պատճառով: Դուն ի՞նչ տկար կէտեր ունրս:

— Իմ տկարութիւններս հեռո՞հեռ է կը շոգիանան: Ես իմ անձիս դէմ պատերազմ կը մղեմ՝ գայն մաքրագործելու նպատակով: Քեզի սիրտի յիշեմ իմ տկար կէտերէս մէկը: Օրինակ, ես իմ ժամանակս կը մտնեմ: Երբէկ մէկուկէս ժամ օթոպիսը սպասեցի: Ասիկա մտամբ իմ ստատածեանութեանս արդիւնքն է:

● Գեղեցիկ եւ երիտասարդ կիներու հանդէպ որոշ հակում ունենալը տկարութիւնն է:

— Ես գեղեցկութիւնը կը սիրեմ, եւ անիկա՝ ո'չ միայն կիներու մօտ, այլեւ՝ բոլոր մարդերու մէջ, կարեւոր է, որ Իսթեանգրուր բլայզ գեղեցիկ նայուպէս՝ բնակարանս եւ ընկերուհիս:

● Ի՞նչ է ձեր այժմու ընկերուհիին տարիքը:

—Այդ մէկը չեմ կրնար ըսել: Որոշ չափով գեղեցիկ է:

● Ստատանշտփոխ շահարի՞ր սիրտդ, երբ կը կենակցիս երիտասարդուհի-
ներու հետ:

—Մի՞րտա պիտի կենայ, թող կենայ, ես ի՞նչ կրնամ ընել: Ոմանք կը վախնան օգնուա նստելէ: Ո՞ր մեռան ձեր հայրերը. մահճակալին մէջ: Ձեր մայրե՞րը. մահճակալին մէջ: Ձեր հօրեղբայրնե՞րը. դարձեալ մահճակալին մէջ: Մահճակալ մտնելէ չէ՞ք վախնար:

● Արդեօք մահէն կը վախնա՞ս:

—Ամէն մարդ կը վախնայ: Ա՛ն՝ որ «ես չեմ վախնար» կ'ըսէ, կը վախնայ: Բայց ես տաքնապ մը չեմ ապրիր:

● Դուն ծանօթ ես քու առատաձեռնութեամբդ: Ո՞րն է կեանքիդ մեծագոյն պերճանքը:

—Ես կծծի եմ անձիս նկատմամբ եւ առատաձեռն՝ ուրիշներու առի-
թով: Ամենամեծ առատաձեռնութիւնս այս կեդրոնն է (32 մանուկներու պատասպարում եւ ուսուցում): Ծշուած օրեր կան, երբ այս մանուկները ոսկիէ զգալով կ'ուտեն իրենց ճաշը: Ասիկա իմ պերճանքս է: Ես ա՛յս ձե-
տով իմ վրէժս կը լուծեմ զրկանքէն ու աղքատութենէն:

● Ըստ քեզի ո՞րն է այն առանձնախտկութիւնդ, որ կիները քեզի կը քաշէ:

—Անոնք չեն կրնար դիմանալ, երբ կը զտնուին զրաւիչ տղամարդուն առջեւ (քահ-քահ կը ծիծաղի):

● Պիտե՞նք, որ մանկութեանդ եւ պատանութեանդ շրջանին ունեցած չքա-
ւորութեան զգացումը մեծապէս կ'ազդէ արարչներու վրայ: Ի՞նչ է աս զգա-
ցումին անդրադարձը՝ գրած 96 գիրքերուդ մէջ:

—Ես միայն այս զգացումով չեմ գրեր, պէտք է շատ դրամ շահիմ: 32 որդի ունիմ ես եւ իրենց ապրուստի եկամտաբեր միակ աղբիւրը զիրքերս
են, ուրիշ ոչ մէկ աղբիւր:

● Արդեօ՞ք կարելի է ըսել, որ տակաւին այս զգացումին ազդեցութեան
տակ կը գտնուիս:

—Ես այս զգացումին պատճառով զրագէտ չեղայ: Այս զգացումին
պատճառով ես միայն հրգիծագիր եղայ: Բոլոր երգիծագիրներու գրու-
թիւններուն մէջ այս զգացումը գոյութիւն ունի:

● Դուն շատ զգուանք ունիս «Աթաթիւրք» անունին նկատմամբ, այնպէս
չէ՞:

—Այո՛: Աթաթիւրքին մակարդակով մեծ անձ մը այս տիտղոսը պէտք
չէ որդեգրէր: Մարդը, իրրեւ մարդ, բնական թերութիւններ ունի: Եւ այս
թերութիւնները իրրեւ յատկանիչ տեսանելի կը դառնան: Երբ Անգլիոյ
էտուրլու Ը. Թազաւորը Թուրքիա եկաւ, սպասեակիին ձեռքէն բան մը ին-
կաւ սեղանին վրայ: Եւ Աթաթիւրք բսաւ էտուրլու Ը.ին. «Ես այս ազգին
ամէն բան սորվեցուցի, բայց չսորվեցուցի ծառայ ըլլալ»: Այս կեցուածքը

Աթաթիւրքին չի վայելի: Նման խօսք չ'ըսուիր: Այն իրողութիւնը, որ Մուսթաֆա Քեմալ որդեգրեց Աթաթիւրք (այսինքն՝ «թուրքերու մեծ հայրը») ծածկանունը, երբեք իմ համակրանքիս չ'արժանանար: Եղածը մտահոգիչ է: Ան հաւաքեց զինք շրջապատող մարդիկը եւ անոնց փոխանցեց ինքզինք «Աթաթիւրք» անունակոչելու հրահանգը: Եղածը երբեք գեղեցիկ չէ: Այս իսկ պատճառով ես կը նախընտրեմ Մուսթաֆա Քեմալը: Ասիկա մէկ: Յետոյ, Աթաթիւրքը ընդօրինակեց հայու մը ստորագրութիւնը: 5-10 հայ անձերու ստորագրութիւնը բերել տուաւ եւ անոնց մէջէն ընտրեց իր հաւնածը: Թէ՛ հայու մը ստորագրութիւնը հաւնեցաւ, կարելոր չէ: Թող ըլլայ հայ կամ թուրք՝ նոյնն է: Ձեռագիրը թող ըլլայ վատորակ, բայց թող ըլլայ միայն քո՛ւ գիրդ:

(«Այ-Հայաթ» օրաթերթ, 3 Փետրուար 1993)

ԱԶԻՉ ՆԵՍԻՆ

ԵՒ ՍԱԼՄԱՆ ՌՈՒՇՏԻՒ ՀԱՐՑԸ

Ազիզ Նեսինը, Եաշար Քեմալին հետ, ապրող թուրք գրողներուն ամենէն հռչակաւոր ղեմքն է՝ Թուրքիոյ տարածքին եւ անոր սահմաններէն դուրս: Ան երգիծական գրականութեան անմրցելի թագաւորն է՝ իբրեւ պատմուածագիր եւ վիպագիր: Տասնեակ գիրքեր ու մրցանակներ կապուած են իր անունին: Աւելի՛ն. ան նաեւ քաղաքական երեսոյթ մըն է՝ իր տեսակէտներով եւ կեցուածքներով, որոնք առհասարակ ծնունդ կու տան երկարատեւ փոթորիկներու եւ քանալեճերու:

Ազիզ Նեսին ծնած է 1915ին, Իսթամպուլի մէջ: 1937ին, սպայից վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք, ութ տարի իբրեւ սպայ կը ծառայէ թրքական բանակին մէջ: Սակայն, 1944ին, զինուորական ասպարէզէն հրաժարելով՝ ինքզինք կը նուիրէ գրականութեան եւ քանի մը տարիէն կը յաջողի զառնայ թուրք գրականութեան կարեւորագոյն անուններէն մէկը: Այս շրջանին, ան առանձինն կամ ուրիշներու գործակցութեամբ կը հրատարակէ մէկէ աւելի երգիծաթերթեր: 1956ին կը հիմնէ իր հրատարակչատունը, իսկ 1972ին՝ «Ազիզ Նեսին Կեդրոն» բարեսիրական հաստատութիւնը, որ ամէն տարի կ'որգեզրէ որք կամ չքաւոր շորս մանուկներ, որոնք նախակրթութենէն մինչեւ իրենց համալսարանական բարձրագոյն ուսման աւարտը կամ մինչեւ կեանքի ասպարէզ նետուելու ժամկէտը կը վայելեն վերոյիշեալ հաստատութեան նիւթաբարոյական հոգատարութիւնը:

Բանաստեղծական նախափորձերով գրականութեան անդաստանէն ներս մուտք գործելէ ետք, Ազիզ Նեսին անցաւ արձակի կալուածը եւ զը-

րեց պատմուածքներ, վիպակներ ու վէպեր, որոնք յատկանշուեցան կեանքի մանրամասնութիւնները վերհանող իրենց իրապաշտ շունչով ու նկարագիրով: Մարքսեան գաղափարաբանութեան իր անդամագրուիլը մէկ կողմէ նպատեց, որ Ազիզ Նեսինի գործերուն մէջ տիրապետեն իրապաշտ գրականութեան երանգները, իսկ, միւս կողմէ, պատճառ դարձաւ, որ ան ենթարկուի թրքական իշխանութեանց հետապնդումներուն եւ մերթ քնդ մերթ կը ճանչնայ Թուրքիոյ բանտերը: Նեսինի հետ կա-

ՅԵՏԱԳԻՄԱԿԱՆՆԵՐՈՒ ՆՈՐ ԶՈՂԸ

**«ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ
ԱՀԱԲԵԿԶԱԿԱՆ ՆԱԽԱՃԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՄՊԱՆՆԵՑ
«ՃՈՒՄՉՈՒԻՐԷԹ»-Ի ԲՐՈՆԻԿԱԳԻՐ ՈՒՂՈՒՐ ՄՈՒՄՃՈՒՆ**

Յունուարի 24ին, Պոլսոյ մէջ եւ յետադիմական-կրօնամոլ կազմակերպութեան մը անաբեկչական նախաձեռնութեամբ գործադրուած ականատարումի մը հետեանցով, սպաննուեցաւ թուրք լրագրութեան յառաջապահ դէմքերէն Ուղուր Մումճուն, «Ճումհուրիէթ» օրաթերթի քրոնիկագիրներէն 1975էն ի վեր:

Հանրապետական կարգուսարքի եւ ժողովրդավարական իմացումներու շքերտ պաշտպան՝ վերջին տասնհինգ տարիներուն պայքարեցաւ մոլեռանդական հակումներու եւ կրօնամոլական իտանքներու դէմ, քննադատութիւն բառի առողջ թելադրանքներով՝ իր առօրեայ քրոնիկներուն մէջ անիրատւներ, անտեսումներ, ժամանակավրէյ կեցուածքներ ու վերաբերումներ կրօն դարձուց իրապարակային արծարծումի, աննպիսապաշար եւ առողջ դատումներով: Թուրք մըն էր, բայց թրքութեան բոլոր ատելի հակումներէն զերծ մնաց: Եւրոյ, խորացումի եւ ծաւալումի ընդունակ, միշտ պատմական հիմնատրուներով եւ անկողմնակալ՝ պայքարեցաւ կրօնամոլական խմբաւորումներու ընկերային եւ քաղաքական այն բոլոր նախաձեռնութեանց դէմ, որոնք մարդ էակի ինքնութիւնը, մտածումի ազատութիւնը, ընկերային-քաղաքական դատումի անկախութիւնը կապտելու եւ ժողովրդապետական կարգուսարքը քանդելու միտումով կը գործեն: Որոնումը կիրք մըն էր իրեն համար: Վերջին տասնհինգ տարիներու իր քրոնիկներուն մէջ, «Ժուրք»-ին զուգահեռ եւ թրքական մէկնակէտին առընթեր, կը տեսնես աննպիսապաշար դատողը, ճշմարտութեան որոնումը:

Իր սուր քննադատութիւններուն կիւք դարձած են Թուրքիոյ գիւտորապետական հարուածները, գաղափարական անկախութեան դէմ իշխանութիւններու կողմէ գործադրուող ճշումները եւ հայածանքները, կրօնամոլութեան շարժումը նեղմտութիւնն ու անհանդուրժողութիւնը, բանտարկութեանց եւ չարչարանքներու գործադրութիւնը:

Ինք գիտակ էր իր հակառակորդներու ատելութեան, համոզուած էր, որ մահուան վտանգը իրեն հետ կը քայլէ, զգոյշ այ էր՝ զերծ մնալու համար հաւանական մահափորձերէ: Բայց ո՞ր մտատրականը կը հաշտուի, իր կեանքի ապահովութեան համար սուտին, սխային ու չարին դէմ... պայքարը նուազեցնելու հարկադրանքին հետ:

Հայ մըն է, որ կ'ըստ այսբանը՝ Ուղուր Մումճունի արժանատրութեան մասին Անսխալական մը չ'ըր անշուշտ. ո՞վ կրնայ այդ յաւակնութիւնը ունենալ: Բայց «կողում»ը արժեւորող շատ քիչերէն մէկն էր: «Թուրք» մըն էր, բայց չ'ընթացաւ իր քրոնիկներուն մէջ («Իրօշակ», ԻԳ տարի, թիւ 22, 24 Փետրուար 1993):

Ա.

տարուած գրոյցի մը ընթացքին ան անգամ մը ըսաւ ինծի, որ բանտէն դուրս գտնուած շրջանին իր ժամանակը կ'անցընէ նախապատրաստելով վերստին իր բանտ մուտքը:

Ազիզ Նեսինի ստեղծագործութիւնները 30 հատորէ աւելի են: Անոնք կը բաղկանան պատմուածքներու ժողովածուներէ, վէպերէ, թատերախաղերէ, ուղեգրութիւններէ, յուշերէ եւ մանուկներու համար գրուած գրքոյկներէ:

Նեսինի գրական վաստակը գնահատուած է բազմիցս, զանազան անիթներով. ան արժանացած է Իտալիոյ, Պուլկարիոյ, նախկին Ռուսրդալին Միութեան եւ այլ երկիրներու կողմէ իրեն շնորհուած մրցանակներու, ինչպէս նաեւ՝ «Լոթուս» մրցանակին՝ 1975ին:

Ազիզ Նեսինի յարուցած վերջին խնդիրը ծագումով հնգիկ, բրիտանացի վիպագիր Վալման Ռուչտիի նշանաւոր «Աատանայական տողեր» հատորը թրքերէնով հրատարակելու հարցն էր: Ծանօթ է, որ Ռուչտին ըսպաններու Իմամ Ռումէլիի «արքայան որոշում»-ը իր արձագանգը ունեցաւ նաեւ Թուրքիոյ մէջ, եւ թրքական հրատարակատուները որոշեցին հետոս մնալ վերոնշեալ հատորը թրքերէնի թարգմանելու եւ հրատարակելու արկածախնդրութենէն: Եւ «Ճումհուրիէթ» օրաթերթի հանրածանօթ քրոնիկագիրներէն՝ Թուրք անուանի լրագրող Ուզուր Մումճուի 24 Յունւար 1993ին սպանութենէն եւ ծայրայեղ խլամականները իբրեւ պատասխանատու ամբաստանուելէ ետք, երբ հակադրութիւնը անգամ մը եւս արեցաւ Թուրք աշխարհականներու (լայիքականներու) ու ծայրայեղ խլամականներու զոյգ հոսանքներուն միջեւ, Ազիզ Նեսին վերստին արձարեց Սալման Ռուչտիի հատորին հրատարակութեան հարցը, պահանջելով զայն անպայման թրքերէնով լոյս ընծայել Թուրքիոյ մէջ:

Փաստօրէն, հարցը սկսաւ Յունուարի վերջին օրը, երբ «Ճումհուրիէթ» օրաթերթի 31-1-1993ի թիւին մէջ լոյս տեսաւ Ազիզ Նեսինի մէկ յօդուածը, որուն միջոցաւ ան կ'ոչ կ'ուզէր Թուրք գրողներու միութեան, որ այս Մարտին կայանալիք իր համագումարի ընթացքին առէ «Աատանայական տողեր»-ը թրքերէնով հրատարակելու որոշումը, այլապէս ինք պիտի նախաձեռնէ խնդրոյ առարկայ վէպին լոյս ընծայման, ինչ ալ ըլլան պայմաններն ու հետեւանքները:

Ո՛չ միայն խլամական ծայրայեղութեան, այլեւ ամէն տեսակի կրօնական ու գաղափարական մոլեռանդութեան նկատմամբ իր ընդդիմութիւնը յայտնելէ ետք, Ազիզ Նեսին աւելցուց.

«Ի յառաջագումէ եւ ընդդիմացայ Սալման Ռուչտիի դէմ մահապետ արձակած Իմամ Նումէլիի որոշումին, եւ պաշտպանեցի արտայայտուելու իրաւունքը այն գրագէտին, որուն ծանօթացած էի Լոնտոնի մէջ: Թուրք գրողներու միութեան վերջին համագումարի ընթացքին եւս արդէն առաջարկեցի, որ գրողներու միութիւնը ինք հրատարակէ Ռուչտիի հատորին թրքերէնէն, որ գրողներու միութիւնը ինք հրատարակէ Ռուչտիի հատորին թրքերէնէն, որ ոչ ոք պիտի ունենայ զայն լոյս ընծարգմանութիւնը, նկատի ունենալով, որ ոչ ոք պիտի ունենայ զայն լոյս ընծարգմանութիւնը՝ վախճալով մահուան սպառնալիքէն: Այն ատեն եւս Գալիպի լոյս տեսաւ, որ լուր մնալը կը վիրատրէ թուրք գրողներու արժանապատուութիւնը:

«Ես ցարդ չեմ ունեցած «Աատանայական տողեր»-ը կարգաւ պատեհութիւնը, բայց կ'ուզեմ որ այս գիրքը հրատարակուի թրքերէնով, ո՛չ թէ որով»

ինտելեկտուալ կամ օգտակար է, այլ պարզապես անոր համար, որ ես դեմ եմ ամեն տեսակի արգելի: Եւ հատորիմ լոյս ընծայումէն ետք մենք պիտի գիտնանք, որ անկազմ գեղեցիկ է, թէ վնասակար: Վերջապէս, ուրեք մահմտականի իրատունքն է հրատարակել Ռուստիի վէպը քննադատող գիրք մը, սակայն ոչ ոք իրատունք ունի սպաննելու Սարման Ռուստիմ եւ անոր գործին թորք հրատարակիչը»:

Եզրակացնելով, Ազիզ Նեսին ծանրացաւ այն կէտին վրայ, որ մտաւորականի մը, ուրեք մտաւորականի, առաջին առաքելութիւնը ամէն տեսակի մոլեռանդութեան դէմ պայքարիլն է, ինչ բնոյթ եւ զոյն ալ ունենան այդ ծայրայեղութիւնները: Որովհետեւ, թուրք գրողին բնութագրումով «հարցը բարոյական է» եւ ոչ մէկ առնչութիւն ունի իսլամութեան հետ:

Մահազմէրէն չվախնայու եւ Ռուստիի հատորը ի գին ամէն գոհողութեան հրատարակելու իր կեցուածքը Ազիզ Նեսին արտայայտեց նաեւ «Ճումուրիէթ»ի յօդուածէն ետք, մէկ անկի հարցազրոյցներու միջոցաւ: Օրինակ, հիմնուելով ականահարումի մը հետեւանքով սպաննուած Ռուզուր Մումնուի ահարեկման հակազդեցութիւններուն վրայ, «Նոքրա» շաբաթաթերթին հետ ունեցած հարցազրոյցի մը մէջ (31-1-1993) ան ըսաւ, որ վերջին տարիներուն թուրքիոյ մէջ սպաննուեցան անկի քան 40 մտաւորականներ, եւ թէ՛ այս ոմիրներուն կշիռն ու տարողութիւնը անկի մտահոգիչ պիտի դառնան, մա՛նաւանգ Մումնուի ահարեկումէն ետք: Սակայն, ան մատնանշեց, որ Մումնուի սպանութեան առիթով ժողովուրդին հակազդեցութիւնը սխալ էր: «Կ'ըսեն, թէ «Թուրքիան աշխարհիկ պետութիւն է»: սակայն իրականութիւնը այն է, որ Թուրքիան ցարդ աշխարհիկ երկիր մը չէ: Ինչպէ՛ս կրնայ աշխարհիկ ըլլալ, երբ պետութեան մէջ գոյութիւն ունի հաստատութիւն մը, որ կը կոչուի «Կրօնական հարցերու ճախագահութիւն»: Պարզապէս մենք մեզ կը խաբենք», ընդգծեց Ազիզ Նեսին:

Այս յայտարարութիւններէն ետք, Նեսին եւս ստացաւ մահուան ըսպանալիքներ, որոնք ո՛չ միայն զրազեցուցին Թուրքիոյ մամուլը ու զրական շրջանակները, այլեւ փոխադրուեցան մինչեւ թրքական կառավարութիւն, որ իր կարգին բաժնուեցաւ երկուքի. ազատախոհ ճախարարները զօրավիզ կանգնեցան Նեսինի, իսկ ուրիշներ թելադրեցին թուրք անուանի զրազէտին ըլլալ համբերատար, հեռու մնալ հասարակութեան զգացումները վիրաւորող դիրքորոշումներէ եւ հրատարակութեան հարցին հետ վարուիլ առարկայական մօտեցումով: Ետաւիկայ օրերը, անկասկած, մեզի ցոյց պիտի տան, որ այս հարցը ինչպիսի՛ վախճան մը պիտի ունենայ:

ՄՈՒՀԱՄԵՏ ՆՈՒՐ ԷՏՏԻՆ

Ծ Է Ս Ե Ր

-1-

Կը շալկեմ արեսս
դիակը իմ յուսահատութեան

-2-

Իր մոմերն են աչքերս
որ կ'որոնեն զիշեր մը
եւ կաթիլ մը արցունքի

-3-

Գիշերուան կիսուն
կը բարձանամ նորոգեալ
իբրեւ պատանձ աշխարհին կամ... տօն մը

-4-

Ճակատս կանթեղ էր
եւ աղօթ՛ս ալ՝ ձեք
ճակատս եղաւ թաշկինակ
թաշկինակի ճօճումը մեռեալին

-5-

Մտայ ալիւրին մեհեանէն ներս
ջուրը սուրբ մըն է
եւ այս աղը՝ մէկ շարականը ջուրին
կարդացի դէմքս անօթին մէջ՝
հացը երկինքին
եւ առաքեալներուն...

ՄՈՒՀԱՄԱՐԷՏ ԵՈՒՐ ԷՏՏԻՆ

Ռ. ՈՐՈՍՐԵՆՆ

« ԵՍ ԱՅԴ ՇՈՒՆՆ ԵՄ »

Հայաստանի գրողներու միութեան կումայրիի մասնաճիւղի «Շիրակ» երկամսեայ հանդէսի առաջիմ րիւիմ մէջ ամբողջութեամբ վերահրատարակուելէ ետք (տե՛ս «Բազմ», րիւ 7-8, 1992), Լոս Անճելըսի «Նոր կեանք» շաբաթաբերրի Յախաննոսութեամբ 1992իմ առանձիմ հատորով լոյս տեսաւ Պօղոս Մնակեանի «Ես այդ շունն եմ» գործը:

Այդ առիթով, «Նոր կեանք»-ի կազմակերպութեամբ եւ «Համազգայիմի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանայիմ Վարչութեամբ հովանաւորութեամբ» Երեւշաբթի, 22 Դեկտեմբեր 1992ի երեկոյեան տեղի ունեցաւ գրական երեկոյ-գիմնեօմ մը, որում ըմբացրիմ հանդիսավար Սարգիս Մանանեանէն ետք, խօսք առիմ Համազգայիմի Շրջ. Վարչութեամբ առեմապետ Զարեհ Մարգարեանն եւ «Նոր կեանք»-ի խմբագիր Գրիգոր Շէմեան, իսկ վերահրատարակուած հատորը մերկայացուց «Բազմ»-ի աշխատակիցներէն Ռիքա Որբերեան:

Ստորեւ կու տամք Ռ. Որբերեանի խօսքիմ գլխաւոր քամիմները:



1983ին Փարիզի մէջ իր վերջակէտը ստացած Պօղոս Մնակեանի «Ես այդ շունն եմ» 100 էջնոց հատորիկը այսօր կ'արժանանայ երկրորդ տպագրութեան:

Խորագիրը՝ «Ես այդ շունն եմ», սքանչելի գիտ մըն է, որ նախ կը շշմեցնէ ընթերցողը, ապա՝ գայն կը մղէ վիրրը մէկ շունչով կարդալու, տեսնելու համար, թէ ո՞վ է շունը, իրական կամ այլաբանական ի՞նչ պատկեր կը ներկայացնէ շուն յորջորջումը, դրական, թէ միտական քնութագրում է, եւայլն:

Հինգ-վեց էջերով տրուած մուտքի պատմութիւնը, եթէ ամբողջութեամբ չի լուսարաներ վիր-

քին բուխանդակութիւնը, նուազագոյնը կը թացատրէ, թէ «չունք» հայուն արեան կանչն է, որ կ'ապրի իւրաքանչիւր հայու հոգիին խորը եւ երակներուն մէջ եւ ինքզինք յաճախ կը յայտնաբերէ՝ առաւել կամ նուազ ուժգնութեամբ, բայց որ, ինչպէս պիտի հաստատենք ընթերցման վերջաւորութեան, հեղինակին՝ Անապեանի ներսիդին անդադար կը հաղէ, կ'ոտնայ, կը կաղկանձէ եւ, վերջին հաշուով, կը դառնայ ուզեցի՞ծը իր սեփական կեանքին ու գրականութեան:

Առաջին վայրկեաններու փափաքս՝ գուգահեռ մը տեսնելու Հարդարեանի «Փամփոք» պատմրւածքի հերոսին եւ այս շան միջեւ, կամաց-կամաց կը տկարանայ, հակառակ կարգ մը նմանութիւններու, մինչեւ որ ես ինձի կը խոստովանիմ, որ այս մէկը տարբեր շունն է, զտարիւն գամփո մը, որ կ'անցնի ազգային հպարտութիւնէն ալ անդին եւ կը դառնայ հեղինակին «raison d'être»-ը, գոյութեան նպատակը:

Ի յառաջագունէ ըսեմ: Ով որ չէ կարգացած վերջին եօթանասունամեակի կամ յիսնամեակի խորհրդահայ գրականութիւնն ու մամուլը, ով որ չէ հետեւած վերջին երեսնամեակի «Բազմ»-ներուն, զժուար թէ հասկնայ «Ես այդ շունն եմ» գիրքը: Ով որ ծանօթ չէ խորհրդահայ մտաւորականութեան այն խմբակի կեցուածքին, որ չէր կրնար ընդունիլ Անապեանի գրչով յայտնուած ճշմարտութիւնները, մերկացուած բանագոյութիւնները եւ հայ գրականութեան արդէն նուիրագործուած երկերու վերաքննութիւնն ու սանձարձակ կերպով զանոնք մալքսեան-լենինեան

«Իրապաշտութեան» յարմարընեյու ճիգերը, պիտի չկարենայ հասկնալ Անապեանի այս գիրքը: Բայց, վստահ եմ նաեւ, թէ բոլորս ալ, առաւել կամ նուազ չափով, առաւել կամ նուազ հմտութեամբ վերոյիշեալ երեւոյթներուն ծանօթ ենք: Երեւոյթներ՝ որոնք վիրաւորեցին մեր գրականութիւնը, որոնց հետեւանքներն ու սպիները կը տեսնենք մինչեւ այսօր: Հայու ոգիին խորթ զազափարախօսութիւն մըն էր մեզի պարտադրուածը եւ մեր գրողները գրեցին առանց ոգիի, մտածեցին առանց երեւակայական թոյլիքի եւ մեզի ըսին բաներ, որոնց ո՛չ իրենք կը հաւատային, ոչ ալ՝ մենք: Լէյսօր այչեւս անցնային պատկանող խորհրդահայ գրականութեան ողբերգութիւնը ուղղակի կողոպտան էր հայ ստեղծագործ մտքին եւ փառաբանութիւնը կեանքի մը, որ գոյութիւն չունէր: Փակակերի տակ գրուած էր ամէն բան, — յեզու, միտք եւ գրիչ: Խորքին մէջ մենք չունէինք հայ գրողներ, այլ՝ մէկ զրոյ միայն, որուն անունն էր համայնավար գաղափարախոսութիւն, որ գրողներու փոխան՝ իր ձեռքին տակ ուներ յաճախ գործիքներ ու մեքենաներ:

Գծրախոսութիւնը հոն էր սակայն, որ այդ գործիքները ա՛յնքան կրկնեցին «մեծ գրողին» թեւադրութիւնները, որ ատեն մը եկաւ, ուր իրենք ալ սկսան հաւատալ իրենց արտաբերած ոչ-ճշմարտութիւններուն: Հետեւարար, սկսան մեղադրել վիրենք քննադատողները եւ յաճախ հայհոյել անոնց: Հայհոյանկը տկարին զէնքն է եւ մեր գրողները մեծաւ մասամբ անկոր էին: Ըլմարտութեան յայտնարկումը իրենց համար

մահ կը նշանակէր՝ ֆիզիքական, հոգեւոր եւ մտային մահ:

Ահա՛, այս ահաւոր վիճակին առջեւ եւ հայ մշակութի ճաւաճարակշռութիւնը պահպանելու նախանձախնդրութեամբ մը կը պայքարէր Պօղոս Սնապեան, Սփիւռքի մէջ: Իր այս ճիգերուն պատասխանը, խորհրդային հայրենիքէն՝ եղաւ ոչ-հայրենասերի եւ դաւաճանի պիտակ մը, որովհետեւ ան անտեսած էր խորհրդային «ճշմարտութիւնը» եւ իր մէջ կ'ետար հայ մտաւորականի ճշմարտութիւնը: Այսուհանդերձ, ոչինչ կասեցուց զինք, ոչ ոք կրցաւ լռեցնել, որովհետեւ շունը իր մէջ կը հաչէր անդադար եւ հանգիստ չէր տար իրեն:

Անհանգիստ էր Սնապեան: Մէկ կողմէն շունը, միւս կողմէն՝ պարսաւները, մեղադրանքը եւ «գաւաճան» կոչումը անընդհատ կը փոթորկէին իր հոգին: Իրեն եւ իր նմաններուն հասցէին, հայրենիքի շարքային գրողները կ'ըսէին.

«Ձեր վնասքեր ժառուսներէն զատ՝ ուրիշ ի՞նչ ըրած էք դուք հայրենիքին համար», եւ կը թրէին Հայաստանի ժողովուրդին կատուցումները ու հակադրաբար անոնց շալլ արդիւնաբերութիւններուն՝ իր անհայտ կեցուածքը կը յիշէին, «ոչ» ըսելու իր հետեւողական մղեալներով: Սփիւռքին պատճառած վնասները, մարդոց աչքերուն վարագոյր քաշելու ճիգերը, անշատողական տրամադրութիւնները...

Սնապեանի պատասխանը այս յարձակումներուն դիմաց կ'ըլլար կտրուկ.

«Բայց դուք իրապէս կը ճանցնա՞ր արդեօք մեզ: Մենք հայրենիքիմ համար իմկող հերոսներու խն-

կարկու ամբօխ, մենք հայրենիքի տեսիլը պայծառակերպող բանաստեղծներու ամխոնջ ունկնդիր, հայրենիքիմ համար սիրտը ճրագ դարձուցած մարդոց ամփատ ուղեկից՝ ինչպէ՛ս կրնայիմք հերոս մը պաշտամունքի բարձրացնել՝ հայրենիքը անկէ անջատելով, բանաստեղծ մը սիրել՝ առանց բանաստեղծութեան ոգիիմ հաղորդակից գառմալու, անձ մը խորհրդանիշ դարձնել՝ անոր անձնատրուքեան շաղախը ամուսնելով: Դուք իրապէս կը ճանցնա՞ր մեզ արդեօք: Մենք հերոսներ ունինք, բանաստեղծներ ունինք, խորհրդանիշ անձեր ունինք, բաբախող սիրտ, թեւտոր խօսք, տարածուն հմայք, մեզի համար այրած, մեր հոգիներում մէջ այրող, չսպառող անկէզ մորեմիներ, որոնցմով է ու շաղախ է հայրենիքը մեր մէջ, էութիւմ է, մեր արիւնը անոր ջուրերում տեսիլքով կը կարկաչէ, մթնոլորտ է մեզի համար հայրենիքը, մեր սիրտը անոր հողերում մայրութիւնը կ'որոնէ ու միտքը ծարաւի է հայրենակամ աստուածներու ուսուցումիմ: Կրնա՞յ տարբեր ըլլալ, դու կրնա՞ս տարբեր բան ընել, շո՞ւն իմ, կրնա՞ս տարբեր վայր ընտրել, շո՞ւն իմ, անաբեկէ զիս կրկիմ, կազկանձէ՛, խլացուր զիս...»:

Գիրքը որքան կը կարգամ, կը փորձեմ ժամրի մը պիտակը փակցընել ճակատին: Դժուար նախաձեռնութիւն: Արձակ բանաստեղծութիւն է, պատմութիւն, թէ պատմական ողբ, — չեմ գիտեր: Տակաւին՝ նամակագրութիւն է, պարսաւագի՞ր, թէ բաց նամակ, — չեմ գիտեր: Գիտեմ, սակայն, որ այս բոլորին խառնուրդն է եւ, անկասկած, մաս պիտի կազմէ մեր արդի պատմութեան:

Հեռանալով զրականագիտական քիչչներէն, պիտի ըսեմ, որ

այս գիրքը ուժը մըն է, որ կը պայթի, երբ կարգաս: Ենչը հեղինակին պէս: Մնացեալը ճանչցողները գիտեն, թէ իր արտաքին հանդարտ երեւոյթին տակ, ան դարակին վրայ դրուած պատրաստ ուժը է եւ զսպուած կիրք՝ «կիրք»-ը իր դրական բոլոր ստորոգելիներով առած:

Նախապէս յիշեցի, թէ գիրքին սկիզբը կայ կարճ, սրտառուչ պատմութիւն մը՝ աղէտէն ետք Ֆրանսա ափաստանած հայ բեկորներու, որոնք այդ օտար հողին վրայ իրենք իրենց համար կեանք մը շինեցին, թուրքէն ու թրքութենէ հետո եւ այդպէս երջանիկ ըզգացին իրենք գիրքէն: Ժամանակի ընթացքին, անոնք աճեցան եւ բարգաւաճեցան, ժամանակակից քաղաքակրթութեան բարիքները վայելեցին, կալուածներու տեր եղան, սակայն իրենց կեանքին մէջ մնաց պարապ բան մը, զոր չկըրցան լեցնել: Ուրեմն, տառապեցան այդ այրող պարապով, մանաւանդ որ յաճախ ստիպուեցան օտար կողակիցներով ընտանիք կազմել եւ երբեմն, երկար տարիներ, առիթը չունեցան մայրենի լեզուով խօսելու կամ հայօրէն ապրելու:

Պարապը յամառեցաւ գոյատեւել: Եւ հեղինակը, ամփոփ գիծերու մէջ, կու տայ այդ պարապը խորապէս սնուցանող Ֆրանսա ապաստանած հայ բեկորի մը կեանքը, որ, ինչպէս ինք կը հաստատէ, իրական պատմութիւն է, հեքիաթ չէ: «Վաւերական է պատմութիւնը ու վտերաբոլորը տպուած է «Յառաջ»-ի մէջ: 50ի թիւերէն մէկու մէջ է կարծեմ», ինչպէս կը հաստատէ հեղինակը զբջոյկին տասներորդ էջին վրայ:

Անմիջապէս ըսեմ, որ այս պատմութեան եւ անոր հետեւող

գիրքի բովանդակութեան միջեւ ուղղակի կապ մը պէտք չէ փրնտնել: Առաջինը իրական, կենդանի շուն մըն է, որ երկրորդին մէջ վերածուած է արեան, որ կը վազէ մեզմէ իւրաքանչիւրիս երակներուն մէջ եւ, հակառակ առատ ջուրին, կը խառնուի անոր, կը յամառի մնալ թուող եւ անեղծ:

Եունը պարզապէս պատրուակ մըն է՝ հեղինակին ներքին ուժը պայթեցնելու, միաժամանակ առիթ տալու, որ ան իր ծանր սիրտը պարպէ: Եունը նաեւ բախտորոշ գիտն է՝ այս գիրքին տալու համար ընթերցողին հետաքրքրութիւնը սրող խորագիր մը: Մենք գիտենք, թէ խորագիրները ի՞նչ գեր կը խաղան հրատարակութիւններու ճակատագրին մէջ, մինչեւ որ այդ հրատարակութիւնները դառնան ընթերցողներու սեփականութիւնը: Անկէ ետք, արդէն այլեւս գիրքի բովանդակութեան կը մնայ ճշդիլ իր արժէքը եւ իր տեղը գրականութեան մէջ: Վստահ եմ, որ, այս առումով, Պողոս Սընապեան երախտապարտ է «շուն» բառի գիտին:

Գիրքին բովանդակութիւնը կոփ մըն է, զոր հեղինակը կը մղէ առաւելաբար ինքն իր դէմ, իր զգացումներուն դէմ, իր ներսը ապրող շան դէմ, որ կրնայ ըլլալ որոշ անհատ մը կամ անհատներու ամբողջ խումբ մը: Կարեւոր չէ: Կարեւորը ա՛յն է, թէ ան չի կռուիր երեւակայական ուժերու, այլ, ընդհակառակն, չափազանց իրական ուժերու դէմ, որոնք գինք կը խռովեն եւ կ'ըմբոստացնեն: Ինքզինք հայկական շրջապատէն արուեստականօրէն անջատած եւ Փարիզի փողոցներուն ու համալսարաններուն մէջ իր հայութիւնը մոռնալ ուզող եւ մոռնալ չկրցող

երիտասարդ մտաւորականի մը պայքարին պատմութիւնն է «Նս ալդ շունն եմ» գիրքը, որ կը բաղկանայ II գլուխներէ:

Առաջին գլուխի առաջին իսկ էջին վրայ հեղինակը կ'ըսէ.— «Ակսած եմ արդէն շուն մը կրել մէջս, յորմէնտէ լսեցի այս պատմութիւնը, շուն մը սկսաւ հաջել մէջս, շուն մը ոռնալ»:

Այնուհետեւ, մօտ 100 էջ, ականջալուր եւ ականատես գրողին հայրենասիրական բորբ զգացումներուն, հոգեկան զեղումներուն եւ, մէկ խօսքով՝ հայրենիքը շտեմած, անկէ հետո, այլ անով ապրողի իր տառապանքին: «Նս ալդ շունն եմ» գիրքը զեղօնն է՝ ի պատիւ Հայաստանի, եւ ձօնը՝ նուիրուած տառապած, տառապող եւ տառապեցնող հայրենիքին:

Այստեղ, արդէն, այս վերլուծման մէջ դժուարութեան կը հանգիպիմ: Իր ո՞ր զգացումը աննեմ եւ խորանամ անոր մէջ, իր ո՞ր մտածումը աննեմ եւ զարգացնեմ բացատրելու համար զայն: Ա՛յնքան խիտ են այդ զգացումները, ա՛յնքան գիրար հրմշտկող՝ իր բազմերանդ եւ բազմապիսի խորհրդածութիւնները, որ ծաւալուն վերլուծումն անգամ կը դառնայ անաւարտ ու թերի: Ուրիշ գրողի մը, աւելի ծանծաղ գրողի մը համար, անոնցմէ իւրաքանչիւրը կրնայ վէպի մը կամ դրացաներգութեան մը նիւթ հայթայթել: Ամէն մարդ ի՛նք պէտք է ունենայ այդ խռովիչ ընթերցման փորձառութեան հաճոյքը: Ամէն հաւանական ընթերցող ի՛նք պէտք է քաղէ իր ուզածը անկէ: Հոն կան հայոց պատմութիւնը՝ հին ու նոր, մեր պայծառագէմ ֆետայիները, մեր բանաստեղծները, մեր ունե-

ցած եւ չունեցած հայրենիքը, մեր խելագար խռովքը: Փոխն ի փոխ կան այլաբանական պատումներն ու բանաստեղծական յանկարծակի պոռթկումներ կամ տառապանքով շարուած խորհրդածութիւններ:

Տամ նմոյշ մը.

«Ո՛վ կրնայ մեզմէ լեռ մը դիտել ու շիշել լեռներուն ամէնէն կախարդը, հողի մը վրայ ոտք դնել ու չդողալ մեր հողերուն կարօտով եւ դրօշակի մը ի տես իր հոգիին մէջ անծածան պահել մեր գրօշակը: Այդ քանի մը բառերը կը վարեմ մեր հոգին: Մենք հիմա այդ բառերը միայն ունինք: Փիլիսոփայութեան կը հրաժարիմք՝ այդ բառերուն վրայ զուրգուրալու համար, գիտաթիւնը մէկ կողմ կը դնենք՝ եւ այդ բառերը կ'արտասանենք, արուեստը կը մոռնանք, երբ ամոնց հունը իմանանք եւ ամոնց զգողութիւնը աստղերէն վար կը բերէ մեզ:

«Ունինք միայն քեզ՝ երկիր հայոց, քեզ՝ լեզու հայոց, ազատութիւն հայոց ու քանի մը հերոսներու անուններ ու այդ ամէնուն համմ ու ուժը համադրող մեր թեւաւոր երգը»:

Մօսքը, անշուշտ, մեր խռտական հայրենիքի մասին է, ա՛յն հայրենիքին, զոր միայն Սփիւռքի հայը կրնայ կրել իր մէջ, շան կողքին: Ա՛յն հայրենիքը, որ մեզմէ իւրաքանչիւրին մէջ կը կառուցուի երազներով, երգերով, աղօթքներով: Հայրենիք մը, որ անպայման պայծառ է, հարուստ եւ գեղեցիկ: Երազային հայրենիք մը, որ կը դառնայ աքսորեալ հայուն անթացուպը եւ յենարանը, երբ ան կը թափառի «տար եւ ամայի ճամբաներուն վրայ»: Հայրենիք մը, որ յոյս կը նշանակէ հայրենագուրկին, եւ առօրեայ անունը՝ զրկեալի իր տառապանքը կենդա-

նի պահելու եւ աստով գոյատեւելու համար:

Եւ ասա՛, յանկարծ, իրական, շօշափելի հայրենիքէն կը լսուին խորթ ձայներ: Փարիզի նամակաբերը գրողին կը յանձնէ նամակ մը, նամակներ, որոնք իրենց հետ կը բերեն խորթ վարչակարգի մը «քարէքներով» անանդ հայ գրողի մը, հին ընկերոջ մը, հին ընկերներու զգացումները, բեռնաւոր թունալից կեցուածքներով՝ հանդէպ Արտերկրի միամտօրէն հայրենասէր գրողին: Այդ կեցուածքները՝ երբեմն կարծր, երբեմն մեղմ, երբեմն համոզիչ նրբերանգներով կը բաւեն, որ Մնասեան-ուսմբը պայթի, եւ այդ պոռթկումը, ճերմակի վրայ սեւով տարածուի էջերուն վրայ: Որովհետեւ՝ շունք կը սկսի հաջել, ոռնալ եւ կաղկանձել իր մէջ, ըմբոստանալ իր դէմ, աշխնքն՝ շան դէմ, իբրեւ բողոք հայու արեան դէմ գործադրուած բռնաբարումին եւ լկումին: Մէկը պէտք է ըմբոստանար, մէկը պէտք է իր ձայնը բարձրացնէր մշակութային նախճիրին դէմ, որ տեղի կ'ունենար Ռուսիոյ հարաւր գտնուող մեր հայրենիքին մէջ, որուն պատկերը հետզհետէ կ'աղօտէր եւ իր նմանութիւնը կը կորսնցնէր իրենց սրտին խորը շուն մը պահող հայուն հայրենիքի մտաստիպարին հետ:

Գրողը, սակայն, դեռ յուսահատ չէր: Թուահատը չի կրնար ըմբոստանալ: Ան կը լռէ եւ կը համակերպի: Բայց ո՛չ ինքը՝ հեղինակը: Տեղ մը ան կ'ըսէ, երբ կը կարդայ իր լակերտեալ բարեկամ-գրողին նամակը.

«Կարդացի: Տառապեցայ: «Մեր առաջին սուրբիմ ծննդեան

տարեդարձիմ բեղմնատրուած տղոց բափը խորտակող ազդարարութիւմներ եղած էիմ եայրեմիքի մէջ, ազդարարութիւմներու դէմ վրդովումս յայտնած էի մեր բերքերում մէջ: Կ'ըսես զայրոյթ պատճառած է բեզի վրդովումս: Կ'ըսես թշնամակամ է շարժադիս: Կ'ըսես վերադարձուցած ես իմ ստորագրութեան տեղ տուող թերթերը: Կ'ըսես մի պատասխաներ, կ'ըսես վերք, վերք...»

«Չմայեցայ թերթերում, չթղթատեցի «տումարը», մամակը ձեռքս ու անոր ծանրութիւնը հոգիիս՝ երկաքեցայ Պորէմ ամկողմի վրայ եւ երկարօրէմ, ցաւագիւորէմ մտածեցի այս խզումիմ մասիմ՝ որ մեր մէջ մտտի գործած օտար ոգին դեռ կը շարունակէ հոգիներում մէջ իր անբիշ գործունէութիւնը»:

Այնուհետեւ, հեղինակը կը սկսի ճանապարհորդութիւն մը՝ դէպի անցեալ եւ կը փորձէ գծել կարծեցեայ իր բարեկամին դիմապատկերը: Եւ խօսքը անոր ուղղելով կ'ըսէ.

«Դում գիս լաւ կը ճամջնայիր: Ես դիմակ բնաւ չեմ կրած: Քու պատկանելիութիւնդ ամծամօք էր ինձի: Եշուկներում կարծութիւն չէի ըմծայեր: Աը բաւէր, որ կարգ բանքը կը սիրէիր, կարգ մը երեւոյթներ կ'ատէիր, վիճելու տրամադրութիւն ունէիր, կիրք ունէիր, բանաստեղծութեանէմ համ ատուող ճաշակ մը, բաղձամբներ, երագներ...»:

Եւ հիմա, հեղինակին համար կու գար հրատափութիւնը: Եւ իր յիշատակներու փշրանքներէն կը կազմէ բարեկամին նոր դիմանկարը: Չայն ամբողջացնելու համար, դարձեալ ձեռք կ'առնէ անոր բոլոր նամակները եւ մէկիկ-մէկիկ կը կարդայ: Դարձեալ կը տառակը տարօրինակ յուսալքում մը

կ'ապրի եւ նամականերուն պատճառած խոցին ակնարկելով կ'ըսէ.

«Առանձին-առանձին այս աստիճան չէիմ վերադարձ գիտնումք: Ամէնքը մէկ աչքէ անցընելու պարագան ստեղծեց թերեւս այս ցուրտ տպատրուփներ, քուցէ վերջին որոշումդ ծանրացուց անոնց վերադարձական բնոյթը: Ով գիտէ: Բայց դրժար է կրել այս կսկիծը: Աիրտս սկսած է ճշպ արդէն, շուն մը սկըսած է հաջել մէջս, շունը սկսած է ունայ, եւ որովհետեւ դուն որոշած ես շտեղ մեր աղաղակները, ես կը գրեմ այս բաց թողթը, քո նամակներուդ ի պատասխան գրուած հիմնաւորներէս յիշողութեամբ կը վերականգնեմ մաս մը, կը միացնեմ ասոր ու կը յամօձնեմ բոլորին»:

Այդ օրերուն, գրականութեան մէջ ազգայնականութեան դէմ տարուող պայքարը հասած էր սարսափելի համեմատութիւններու: Ազգայնականը կ'ըլլար ժողովուրդի թշնամի եւ ամէն ձեւով կ'ենթարկուէր հաշուեյարդարի: Ոստիկանական պետութեան մը կամ ոստիկանական գրաքննութեան մը արարքներն ու անոնց բնական հետեւանքներն են, որ կը դառնացնէին հեղինակը: Ինչպէ՞ս չվիրաւորուէր ան, ինչպէ՞ս գապէր իր դառնութիւնները, երբ իր երբեմնի բարեկամ-գրողը, որ այլեւս հաշտուած է խորհրդային հայրենիքի իրականութեան հետ, զինք կ'որակէ «հոգեկան հայրենիքի ցնորեալ քաղաքացի, իրական հայրենիքին թշնամի, դաւաճան»:

Բայց, «Ի՞նչ է հայրենիքի իրականութիւնը», — կը հարցնէ հեղինակը: «Քաղաք է, շէ՛մք է, պողոտա՛յ է, ջրա՛նցք: Հոս ալ քաղաք ունիմք, շէ՛մք ունիմք, պողոտաները չեն մերժեր մեզ ու ջրանցքներուն բարիքներէն ամուսն չենք»:

«Ի՞նչ է հայրենիքի իրականութիւնը: Գո՞րծ: Բնագոյական պահանջներուն գոհացում տուող հմարաւորութիւն: Բայց հայրենիքի սահմաններէն դուրս անօթիներ ու ծարաւներ հաշուող բազմութիւններ չենք»:

«Ի՞նչ է հայրենիքի իրականութիւնը:

«—Ոգի է, — կ'ըսէ մոգական ձայն մը, — ըմբռում, ապրում, սրլացք, անմահ ազատ հնարաւորութիւններ ստեղծող նախապայման, ձարձակման թեղմնափոշի:

«Ես չեմ ուզեր ձեզի չափ իրապաշտ ըլլալ»:

Եւ այսպէս, «հայրենիքի դաւաճանը» կը շարունակէ պաշտպանել իր եւ իրեն պէս մտածող բոլոր հայերուն դատը: Յուսահատութիւն չի ճանչնար: Ամէն անգամ, որ բարեկամին նամակը ձեռք կ'առնէ, հոգեկան նոր իլլըրտում մը, նոր պոթիկում մը կ'այլեկոծէ իր հոգին եւ վերստին կը ճշգէ իր դիրքը իր բանաւոր կոհներուն դէմ, յայտարարելով. «Ես կը մնամ այսպէս, ոչ ըսելու համար կը մնամ, բռնի պատուաստներում դէմ բարկամարու համար կը մնամ, սեփական Յակատագրի մը սպասարկելու համար կը մնամ»:

Եւ ինչպէս արժանի է իրենց արիւնով գրողներու, հեղինակը յստակ գուշակութիւններ կը կատարէ հայրենիքի ապագայի ներկատմամբ.

«Մեր հողերուն վրայ ապրող մարդը օր մը լեզու պիտի ելլէ, պիտի իմանա՞ր, ամբողջ հասակով պիտի կանգնի շարաշահներուն դէմ, պիտի տեսնէ՞ր, ու գոտայ պիտի վիրատու հողներուն հոգեցունց գայրոյթը: Իմ երեւակայութիւնս նախանձելի կացութիւն մը չի սահմաներ ձեզի, հաշուեյարդարի այդ օ-

րերում քէ ի՛նչ գոյնով պիտի հանդերձուի՞ր՝ չեմ գիտեր»:

Ես կը կարծեմ, որ Տեղինակը շատ լաւ գիտէ, թէ ինչպէ՛ս պիտի հանդերձուին անոնք, շատ լաւ գիտէ, թէ ի՛նչ կը սպասէ անոնց, երբ հայրենիքը դուրս գայ իր բանտէն եւ հայրենի գրողները հաշուեյարգարի ենթարկեն իրենց գրական ժառանգը: Ան գիտէ, թէ ի՛նչ տեսակի ամօթ պիտի զգան անոնք: Իր արեան կանչին դաւաճանողի ի՛նչ ապաշխարանք, ի՛նչ ինքնակոծում: Տեսարանը պիտի ըլլայ ցաւալի, բայց մաքրող, բիւրեղացնող: Յետոյ, անոնք իրենց մընացեալ կեանքը պիտի անցընեն կա՛մ այդ ժառանգը այրելով, անհետացնելով, կա՛մ մէկական մեղայագիր գրելով իրենց գործած իւրաքանչիւր մեղքին համար:

Իններորդ գլուխին մէջ, Տեղինակը խօսքը կ'ուղղէ Երկրին, որուն սիրովը տոչորուած է իր իմացական ծնունդէն ի վեր, եւ կ'երեւակայէ, թէ ինչպէս ոտքը առաջին անգամ պիտի դնէ այդ պաշտելի հողին վրայ եւ այն ատեն ի՛նչ պիտի պատահի: Այդ խօսակցութիւնը կը վերջացնենք հետեւեալ խօսքով. «Սպանելիս առաջ՝ ամբողջանայի՛ր: Առեկիր երազիս պատկերը, կանչէիր գիւ, ապրէի ծոցիդ, իյնայի հողերուդ, փռչիւնայի, յաւերժամայի հիւլէներուդ բեղմնատոր տրոփիմ մէք, Երկի՛ր, կանչէիր, արձագանգէի՛...»:

Գիրքին տասներորդ գլուխը յատկացուած է այսպէս ըսած «դարձի եկած բանաստեղծներուն» եւ հրատէրի մը, որ ինք՝ Տեղինակը եւս դարձի գայ, հաշտուելով նոր կարգերու իրականութեան հետ: Ահաւասիկ առիթ մը եւս, որ Մնասպեան անհրաժեշտութիւնը

տեսնէ դարձեալ «իր սիրտը պարպելու», բնականաբար մերժելով յամառ հրատէրը եւ դարձեալ փոթորկելով արդէն դարձի եկած բանաստեղծներու պարզած երեւոյթին դիմաց:

Գիրքին 11րդ գլուխին եւ միաժամանակ ամբողջ գիրքին վերջին պարբերութիւնը, զոր հոս պիտի վերարտադրեմ ամբողջութեամբ, կու տայ Մնասպեանի գրական եւ բարոյական հաւատամքը: Նախորդ պարբերութենէն առնուած «Քշուտ մարդ» որակումը նկատի ունենալով, ահ այսպէս կը փակէ գիրքին ամբողջ տարածքին երկարող փոթորկած եւ փոթորկայոյզ իր մտորումները.

«Վաղուամ երիտասարդը թող արտասանէ իմ հասցէիս այս բառերը, գտնէ ու պոռայ տեղի առողմերը, երբ մուրացիկ թուրքիմներ երեւան խառնուածքիս մէջ եւ ասկէ ու անկէ մետուած փշրանքները կաշառեն ցեղայիմ բնագոյն: Երբ մեր հոգիներում վրայ կատարած փղըշտացիներում արշաւանքները օրհնութիւն համարեմ ու լռեմ: Թող փնտրէ բառերում ամէնէն դաժանը, կիզիչը, անբիշը ու անբէ գիւ, երբ դադրիմ արեանս հաւատարմութիւն ըմբել, ժառանգութեանս վրայ պարուն հրակելի: թող գտնէ բառերում ոչմըաց՝ Ողբ ու ոչմըաց՞ գիւ, երբ դադրիմ հաշիլէ, ռոնայէ, կաղկամենի՛ երբ դադրիմ...»:

Ահա, այսպիսի շուն մըն է, որ կը հաջէ Մնասպեանի գրականութեան մէջ: Ահա՛, այս շունն է, որ որոշած է գրողին ճակատագիրը՝ իբրեւ մարդ եւ զրոյ: Եւ այնքան ատեն, որ շունը կը շարունակէ հաշիլ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ մեր գրականութիւնը, հոս թէ հոն, տէր ունի եւ պահակ:

* * *

Եթէ անդրազարձաք, հակառակ սովորութեանս, բնագրէն բաւական թիւով բառացի մէջբերումներ կատարեցի: Ասիկա ա՛յն պատճառով, որ, վստահ էի, թէ զանոնք իմ բառերովս բացատրելով մեծ անարդարութիւն մը պիտի ընէի բուն բնագիրին (text) դէմ, տրուած ըլլալով, որ այդ մէջբերումները կը բովանդակեն զգացումներու այնպիսի՝ խտութիւն, զոր անզամ մը քակելէ ետք, պիտի չկարենամ հոս քով քովի բերել: Եթէ փորձէի քակել, մեծ վնաս պիտի հասցնէի գիրքին արժէքին: Պէտք է կարգաւ գի՛րքը, կարենալ ըմբռնենելու համար անոր հիմքը ծառայող գրողին հոգեկան աշխարհն ու վերիվայրումները, կարենալ հետեւելու համար անոր մտքի թելին եւ, մա՛նուանդ՝ վայելելու համար անոր անթերի ու զեղեցիկ ոճը:

Գրական թեքնիքներուն շատ վարժ, Պօղոս Մնայեանի ոճը ոչինչ ունի բռնազբօսիկ: Իր իսկ նկարագիրն է, որ կը յայտնուի

ընթերցողի մտքին առջեւ: Երկրաչափական կուռ կառոյց ունի այս գրութիւնը, ուր, առանց աւելորդարանութիւններու, կը վիտան զեղեցիկ պատկերներ, զուգահեռներու եւ հականիշներու յաջող գրացնութիւն, նմանաձայն բառերու մէկտեղում եւ կշռոյթ: Նսեւ, հակառակ նիւթի յաճախակի կրկնութեան, ընթերցողը երբեք չի ձանձրանար, որովհետեւ ա՛յնքան հարուստ է զրոյթի ոճի երանգապնակը եւ ա՛յնքան ինքնատիպ: Վերջին հաշուով, զրոյ մը իր սեփական ուրոյն ոճն է, մինչ բառերը սեփականութիւնն են ունէ զրոյի-կարգաւ գիտցողի: Սոսկական բառերը փոխ կ'առնուին եւ փոխ կը տրուին: Ո՞ճ մը՝ երբե՛ք:

«Մնայեանական ոճ» բտուած բան մը կայ, որ իր դրոշմը ձգած է այն ամէն ինչին վրայ, որուն հպած է Պօղոս Մնայեան:

«Ես այդ շուճն եմ» գիրքով, Պօղոս Մնայեան գրած է մէր բոլորին անունով եւ իր խօսքը ուղղած մեր բոլորին: Ան առանձին երկնած է այս գործը եւ առանձին տառապած՝ մէր բոլորին կողմէ, մէր բոլորի՛ն համար:

ՀՈՍ ԱՆՃԵԼՍ, 1992 ՊԵՏԵՄԲԵՐ

ՌԻՔԱ ՈՐԲԵՐԵԱՆ

Դ ԳԱՊԱՐԵԱՆ

**ՄԻ ԳՐԻԻ
ԵՒ ԴՐԱ ՇՈՒՐՋ ՎԱՄԱԽՄԲՈՒԱԾ
ՄԱՐԴԿԱՆՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

«ԱՆՏՈՒՈՒԳԻԱ ԱՐՄԵԱՆՍԿՈՑ ՊՈԵԶԻԻ»
(«ԱՆՏՈՒՈՒԳԻԱ ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅԻ»),
«ՌՆԱԳՈՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ԴԻՆՃԷԱ ՄԵՐ ՕՐԵՐԸ»,

Մոսկուա, 1940, ռուսերէն

*Բայց այս ամէնը իր Տերթին: Իսկ հիմա Կ. Միքայելեանի հետ մեկ-
տեղ վերադառնանք բազմաշարքար անթոլոգիայի հոգեւորին:*

*1936 թ. Դեկտեմբերի 25ին «Academia» հրատարակչութեան վարիչ
Յակոբ Եանսոնը Կ. Միքայելեանի հետ պայմանագիր է կնքում, ըստ որի՝
վերջինս «պարտաւորում է կատարել «Հայաստանի պոեզիան» ժողովածուի
բնագրերի ընտրութիւնը 33 հրատարակչական մամուլ ծաւալով»: Միա-
ժամանակ նշում է, որ «Ձեռագիրը ներկայացուած է» (ԳԱԹ, ԿՄՅ, թիւ
181):*

*1936 թ. Դեկտեմբերի 27ին Ամատունուն հասցեազրած նամակից ու
ծրագրից յետոյ Կ. Միքայելեանը նամակով դիմում է նաև Ջ. Բաշինջադ-
եանին եւ վերստին խնդրում մինչև Յունուարի 20ը ետ ուղարկել շար-
ւածքասիւնները, միաժամանակ հաղորդում, որ արձակուրդի մեկնող Ստա-
վրոսու փոխարէն ԽԱՀՄ գրողների միութեան պատասխանատու քարտու-
ղարի պաշտօնը զբաղեցնելու պատճառով Կիրպոտինի խոստացած առա-
ջաբանը դրում է հարցականի տակ: Գրքի վերնագիրը «Հայ պոեզիայի
անթոլոգիա» վերափոխելու կապակցութեամբ անհրաժեշտութիւն է առա-
ջանում ձեւաւորման համար նորից դիմել Կոլոյեանին:*

*1937 թ. Յունուարի 17ին Ամատունին հեռագրում է ՀամԿ(բ)ի Կենտ-
կոմ Տալին եւ «Academia» հրատարակչութեան վարիչ Յ. Եանսոնին ու
նրանց դիմում անթոլոգիայի բովանդակութեան վերանայման նոր առա-
ջարկով. «Academia» հրատարակչութեամբ ռուսերէն լոյս է տեսնում հայ
պոեզիայի անթոլոգիան: Խմբագրական նախկին կազմը վերջը շարուածքի
է յանձնել՝ անուշադրութեան մատնելով բուսականին արժեքաւոր նիւթ,
մասնաւորապէս ինչպէս նախախորհրդային, այնպէս էլ խորհրդային
չըջանի բանահիւսութիւնը: Նոր նիւթը նկատելիօրէն փոխում է անթոլո-*

գրայի բնույթը, այն դարձնում ժողովրդական, լիարժեք: «Academica»-ն պահանջում է նիւթերը ներկայացնել Յունուարի 20ին: Բայց այս տեսքով ժողովածուն տպագրել չենք կարող: Թախանձագին խնդրում ենք նոր թարգմանությունների, նաև նոր նախաբանի պատրաստման համար նիւթի ներկայացման ժամկետը երկարաձգել երկու ամսով» (Փ. 1, ց. 16, գ. 212):

1937 թ. Յունուարի 20ին լրանում է անթոլոգիայի շարունակումը եւս վերադարձնելու ժամկետը: Նոյն օրը Եանսոնը հեռագրով դիմում է Ամատունուն. «Ոնորդում ենք Ձեր կողմից արագացնել անթոլոգիայի պատասխանատու ստուգումը, նաև՝ առաջաբանի նախապատրաստումը: Վրտանդ կայ, որ բանահիւսական նիւթի յանելումը կը կատարեն հրատարակուիները, կը յետաձգի զրքի տպագրուիները մինչև յաշորդ տարի: Ուղարկում ենք «Academica»-ի նամակը» (Փ. 1, ց. 16, գ. 212):

Չանցած մի քանի օր, Յունուարի 23ին ԽՍՀՄ գրողների միությունն փարչուիթեան պաշտօնաթղթի վրայ գրուիթեամբ Ամատունուն է դիմում Կիրպուտինը. «Միջայլեանի միջոցով ինձ ուղարկուած Ձեր գրուիթները, դժբախտաբար, ստացել եմ աւելի ուշ, քան՝ Երևանից Ձեր հեռագիրը: Ես համաձայնուիթիւն եմ տուել զրելու հայ պոեզիայի անթոլոգիայի առաջաբանը: Ձեր գրուիթներից պարզ է շաննում, որ Հայաստանի ղեկավար կազմակերպուիթուների կողմից այդ անթոլոգիայի կազմը ղեռնու հաստատուած չէ: Ինքնըստինքեան հասկանալի է, որ առաջաբանը ես կարող եմ յանձն առնել միայն այն դէպքում, երբ անթոլոգիայի եւ նրա վրայ աշխատող ընկերների կազմը ամբողջուիթեամբ եւ լրիւ հաւանուիթեան կարժանանայ Ձեր կողմից» (Փ. 1, ց. 16, գ. 212):

1937 թ. Փետրուարի 7ին «Academica» հրատարակուիթեան պաշտօնաթղթի վրայ Եանսոնը Ամատունուն է ուղարկում խոստացուած նամակը եւ, ի լրացումն հեռագրում ասուածի, աւելացնում. «Հայ պոեզիայի անթոլոգիան նախատեսուել է երկու տարի առաջ, ղեռնու Ա. Մ. Գորկու կենդանուիթեան օրօք: Գրքի ձեռագիրը նայուել եւ հաւանուիթեան է արժանացել Ա. Մ. Գորկու կողմից: «Անթոլոգիա»-ն բանահիւսական նիւթերով լրացնելու Ձեր առաջարկը փոխում է հրատարակուիթեան մտայղացումը, եւ այդ դէպքում հրատարակուիթուին իրաւասու չէ անուանաթերթի վրայ ղնել Ա. Մ. Գորկու ազգանունը ու զրքի սկզբում ղետեղել նրա առաջաբանը:

Միւս կողմից նոր նիւթերը իրենց հետ կը բերեն նաև ձեւաւորման լրացուցիչ աշխատանքներ, ինչը կապուած է ժամանակային մեծ կորուստների հետ: Ի վերջոյ, զգալի ժամանակ կը խլի նաև բանահիւսական նիւթերի թարգմանուիթեան նախապատրաստումը: Այս պատճառների հետեւանքով «Անթոլոգիա»-ն բուականին կ'ուշանայ, եւ զիրքը լոյս կը տեսնի 1938 թուականին:

Ինձ աւելի նպատակայարմար է թոււմ «Անթոլոգիա»-ն հրատարակել այն փոփոխուիթուներով, որոնք Դուք առաջարկել էիք սկզբում, այսինքն՝ տալ նոր նախաբան եւ զրքից հանել մի քանի ստեղծագործուիթուներ: Ինչ վերաբերում է բանահիւսականը, ապա լաւ կը լինի առանձին ժողովածուով հրատարակել նախախորհրդային եւ խորհրդային շրջանի Հայաստանի բանահիւսական լուսագոյն նմուշներ, նախապատրաստական ամ-

բողջ աշխատանքը կազմակերպելով Հայաստանի գիտական հիմնարկութիւնների միջոցով:

Սպասում եմ Ձեր պատասխանին»
(Ֆ. 1, ց. 16, գ. 212):

1937 թ. Մարտի 21ին Ամատունուն հասցեագրում է մի նոր հեռագիր, ըստ որի «Academia»-ին առաջարկում է մինչև «ուղղումների և առաջաբանի ստանալը» ձեռնպահ մնալ անթուղիայի տպագրութիւնից: Վերստին խնդրում է արագացնել նիւթերի առաքումը (տես՝ նոյն տեղը):

Գործի ընթացքը կազմաւորող այս բազմակողմանի նամակագրութեան մէջ ամէն ինչ նպատակի շուրջ կենտրոնացնող դէմքը վերստին Միքայէլեանն էր:

1937 թ. Մարտի 25ին Ամատունուն հասցեագրած նամակում նա թրւարկում է լրացուցիչ նիւթերի թարգմանութեան համար ներգրաւում բանաստեղծների անունները և իրօք մեծ ջրած արած մարզու խանդավառութեամբ արձանագրում. «Այսպիսով անթուղիային իրենց մասնակցութիւնը կը բերեն բոլոր խոշոր բանաստեղծները՝ սկսած Բրիւսովից, վերջացրած մեր օրերը: Իր տեսակի մէջ այն կը լինի միակ զիրքը, որը կ'ընդգրկի վերջին տասնամեակների ուսւ պոեզիայի լուսագոյն ներկայացուցիչների անունները: Դա կը լինի ուսւ բանաստեղծների կողմից մեր պոեզիայի հանդէպ ցուցաբերած բարեկամութեան և ուշադրութեան դրսեւորում և նկատելիօրէն կ'ընդարձակի մեր պոեզիայի հետաքրքրութեան շրջանակները: Եւ դա նկատելի է նոյնիսկ հիմա, քանզի գրողների մոակութեան և լենինգրադեան լիազումար նիւտերում մեր անթուղիան բազմիցս յիշատակուել է որպէս խորհրդային պոեզիայի նուանում: (...) Այսպիսով, ինչպէս որոշուած էր խորհրդակցութեան ժամանակ, անթուղիան տպագրութեան կը յանձնուի Ապրիլի 1ին...»:

Վերջում Միքայէլեանն աւելացնում է, որ հայ արձակի պատմական անթուղիան տպագրութեան պատրաստելու հարցով Լենինգրադում գրուցել է ակադեմիկոս Օրբելու հետ, ստացել նրա հաւանութիւնը և համաձայնութիւնը՝ իր վրայ վերցնելու գրքի ղեկավարման գործը, դառնալով գլխաւոր խմբագիր և գրելով ներածական յօդուածը:

Չանցած մի քանի օր, 1937 թ. Ապրիլի 12ին Բաշինշադեանին նա գրում է. «Հայ պոեզիայի անթուղիան վերջնականապէս պատրաստ է տրպագրութեան»: Ամատունուն յղած նամակի տրամադրութեամբ նա նաեւ յայտնում է, որ ներգրաւում նոր թարգմանիչների շնորհիւ «կ'ունենանք վերջին տասնամեակների գրեթէ բոլոր ուսւ բանաստեղծների մասնակցութիւնը՝ սկսած խորհրդապաշտներից, վերջացրած մեր օրերը»:

Նրկու դէպքում էլ Միքայէլեանն այս փաստը հաղորդում է պարծանքով, որովհետեւ, յիրաւի, գրապատմական մեծ իրողութիւն է ազգային բանաստեղծութեան ամբողջ ժառանգութիւնը մէկ այլ ազգի բանաստեղծների բոլոր ուղղութիւններն ընդգրկող լուսագոյն ուժերի միջոցով թարգմանելը:

Միքայէլեանը խօսում է նաեւ թարգմանիչներին բարձր հոնորար վճարելու մասին, որովհետեւ միւս հանրապետութիւնները «վճարում են կրկնակի»:

Ամատունին ջանք չի խնայում աւելացնելու խորհրդային բանահիւսութեան բաժինը, քանի որ ժամանակակից եւ շինծու այդ յօրինուածքներում փառաբանում էին յեղափոխութեան «քաջարի առաջնորդները»: Այդ նպատակով 1936ի վերջերին պաշտօնական գրութեամբ դիմում է Միւլիսին, որի տրամագրութեան տակ կար հայ խորհրդային բանահիւսութեան 2.000 տող թարգմանութիւն եւ խնդրում զրանցից 500 տող յատկացնել անթողոցիային:

1937 թ. Յունուարի 4ին հետեւում է Կ. Միքայելեանի նոր նամակը՝ ուղղուած Զ. Բաշինջաղեանին: Միքայելեանը հաղորդում է, որ իրեն յաջողուել է բանակցել Կիրայտիկի հետ առաջարկելու աւելի շուտ՝ Մարտի վերջերին ստանալու համար, յիշեցնում նիւթերի ողորկման վերջնական ժամկէտները եւ խնդրում վերադարձնել Գորկու նամակը: Բայց զրա փոխարէն նա հեռագիր է ստանում անթողոցիայի տպագրութեան լրացուցիչ յետաձգման վերաբերեալ. անթողոցիայի հրատարակութիւնը 1937ի պլանից փոխադրում է 1938ի պլան: Իրանից յետոյ հրատարակութեան վարիչ Ծանոնը, ինչպէս յայտարարել էր, հրաժարում է գիրքը տպագրել «Գորկու խմբագրութեամբ», քանի որ վերջինիս կողմից հաւանութեան արժանացած եւ խմբագրուած գիրքը ենթարկուել էր վերափոխութիւնների: Անհոնջ Միքայելեանը շարունակում է գործել յօգուտ զրքի տպագրութեան արագացման, կազմակերպում է լրացուցիչ նիւթերի թարգմանութիւնը, ինչի մասին պատմում է 1937 թ. Յունուարի 22ին Բաշինջաղեանին հասցեագրուած նամակում:

Այսքան չարաբանութիւց յետոյ Միքայելեանը վերջապէս յանդգնում է Բաշինջաղեանին «անհանգստացնել անձնական հարցերով» եւ ասել՝ «Եմ աշխատանքն առ այսօր չի վարձատրուել: Ուղիղ 18 ամիս ես աշխատում եմ առանց հատուցման: Իմ միջոցներից էլ ծախսել եմ 800 ոտրի: (.....) Ես հիմա ամբողջովին պարտքերի մէջ եմ եւ չգիտեմ ի՞նչ անեմ: Աշխատանքը թողնել ոչ մի կերպ չի կարելի: (.....) Վերջին մէկուկէս ամիսների եւ անթողոցիային եմ յատկացրել իմ ժամանակի հարիւր տոկոսը, ինչը զրկում է ինձ իմ նիւթական ճեղքուածքը լրացնելու կողմնակի աշխատանքով, թէեւ ես ունեմ պայմանագրեր»: Եր աշխատանքի մասին պատկերացում տալու համար նա ասում է, որ «երկու հնգամեակ» հրատարակչութիւնը երեք զրքերի նիւթեր պատրաստելու համար ունի 11 աշխատակից, որոնք երկու տարում թարգմանել են 10.000 տող, իսկ ինքը միայնակ՝ 15.000 տող: Այսքանից յետոյ նա համեստօրէն պահանջում է իր աշխատանքի հատուցումը եւ կրկնում. «Մէկ անգամ եւս ներեցէք անհանգստութեան համար, քանզի ուրիշ էլք ես չունեմ, իսկ ընկ. Աբովին այլեւս չեմ փտահում»:

«Ընկ. Աբովը» այդ տարիներին Հայաստանի գրողների միութեան վարչութեան նախագահն էր եւ արդէն հասցրել էր Միքայելեանին մեղադրել նացիոնալիզմի մէջ: Ելոյթ ունենալով ԽՍՀՄ գրողների միութեան վարչութեան չորրորդ լիազումար նիստում՝ Աբովը նախ քաղաքական անփստահութիւն է յայտնում Բակունցի, Թոթովենցի, Դ. Տէր-Սիմոնեանի, Ալազանի, Նորենցի, Վանանդեցու, Մ. Արմէնի եւ Վ. Անանեանի նկատմամբ եւ ապա քննադատում 1935 թ. Մոսկուայի «Պուղոժեստովենայա լիտերատուրա» հրատարակութեամբ լոյս տեսած Կ. Միքայելեանի ոտուե-



«Ընկ. Արովը» այդ տարիներին Հայաստանի գրողների միութեան վարչութեան նախագահն էր և արդէն հասցրել էր Միջաշէլեանին մեղադրել նացիոնալիզմի մէջ: Ելոյթ ունենալով ԽՍՀՄ գրողների միութեան վարչութեան շրջորդ լիագումար միստում՝ Արովը մախ քաղաքական ամփոփանքներն է յայտնում Բակունցի, Թոթովենցի, Դ. Տէր-Սիմոնեանի, Ալազանի, Նո-

րենցի, Վանանդեցու, Մ. Արմէնի և Վ. Անանեանի նկատմամբ և այլա: ԲԱՈԱդատում 1935 թ. Մոսկուայի «Յուդիստիկեցիա» լիտերատուրա» երատարակութեամբ լոյս տեսած է. Միջաշէլեանի ռուսերէն ժողովածուն: ...Արովի ելոյթը տպագրուել է Օսնի «Գրական թերթ»ում (1937, թիւ 7, 20 Մարտի), ուր Միջաշէլեանը ներկայանում է որպէս նացիոնալիստ-արոցկիստների ազդեցութեան տակ գտնուող դաշնակցական նացիոնալիզմի մոսկովեան արձագանգ:

Դ. Գ.

րէն ժողովածուն. «Գրքի առաջարկում տրուում է Միջաշէլեանի բնութագրերը, թէ նա իբր 1905ին եղել է հայ մտաւորականութեան առաջադէմ մասի ներկայացուցիչը»,— ասում է Արովը և անցնում քաղաքական մեղադրանքների. «1905 թուականի անմենաառաջադէմը մենք համարում ենք այն հայ մտաւորականութեանը, որը գնում էր Լենինի ու Ստալինի և նրանց զիտարութեամբ Եասունեանի ու Սպանդարեանի զինակիցների գրօշի ներքոյ: Միջաշէլեանի հասցէին դա չի կարելի ասել: Կարելի է հակառակն ասել, որ նա այդ ժամանակ և յետոյ գտնուում էր միւս ճամբանում» (Ք. 1, ց. 16, գ. 212): Արովի ելոյթը տպագրուել է նաև «Գրական թերթ»ում (1937, թիւ 7, 20 Մարտի), ուր Միջաշէլեանը ներկայանում է որպէս նացիոնալիստ-արոցկիստների ազդեցութեան տակ գտնուող դաշնակցական նացիոնալիզմի մոսկովեան արձագանգ:

Այս ծանր տպարարութիւններով 1937ի Ապրիլի 20ին Միջաշէլեանը նամակով դիմում է Ամատունուն: Վերստին իօսելով անթոյրոգիայի խրնդիրների մասին՝ ներկայացնում է լրացուցիչ նիւթերի թարգմանութեան ընդհանուր վիճակը և յոյս յայտնում, որ այն լոյս կը տեսնի 1937ի աշնանը ի նշանատրումն Հոկտեմբերեան յեղափոխութեան 20ամեակի: Խմբագրութեան կողմից Միջաշէլեանը յայտնում է, որ ցանկալի է Թումբազրութեան կողմից տպագրել ոչ թէ հատուածաբար, այլ՝ լրիւ: Նաև տեղեկացնում է, որ Աննա Ախմատովայից ստացել է Չարենցի «Մորս համար զակեթի նախապէս պատուիրուած թարգմանութիւնը և թոյլտուութիւն խնդրում այն գետեղելու անթոյրոգիայի մէջ: Խնդրում նաև թոյլատրել մեծաքանակու Եիրազին յատկացուող ծաւալը, քանի որ Նիկոլայ Ասէիւր շատ է հաւանել նրա գործերը և թարգմանել նախատեսածից շատ:

Այսքանից յետոյ նա անդրադառնում է իրեն հասցեագրած Արովի մեղադրանքին, նաև գրում, որ մասնաւոր գրոյցի ժամանակ Արովն իրեն դատապարտել է նաև այն բանի համար, որ մինչև յեղափոխութիւնը զատապարտել է նաև քանի համար, որ մինչև յեղափոխութիւնը բայց է հաստատում, որ եղել է այդ հրատարակութեան կազմակերպիչը: Բայց մի՞թէ դա շարժառիթ է իրեն արոցկիզմի ու նացիոնալիզմի մէջ մեղադրելու և իր հանդէպ անվտանգութիւն տարածելու համար: Միջաշէլեանը

նաեւ նշում է, որ Արովի կրթից յետոյ իր նկատմամբ վերաբերմունքը վատացել է. «նորհրդային Հայաստան» թերթը անթուրողիայի մասին տեղեկութիւններ է տպագրում եւ անտեսում իր վաստակը, նոյն թերթը տրպագրում է իր յօդուածը Ֆրիկի մասին՝ առանց հեղինակի ստորագրութեան, եւ դա այն դէպքում, երբ Ֆրիկի ծննդեան 700ամեակը նշելու գաղափարը ինքն է արծարծել: Նա շարունակում է. «Եթէ իմ աշխատանքը ինչ-որ չափով չի բաւարարում ընկ. Արովին, ապա նա պիտի ազնուօրէն ինձ ասէր այդ մասին, եւ ես հաճոյքով կը հրաժարուէի դրանից, որովհետեւ ստեղծագործական առումով այն ինձ ոչինչ չի տալիս: Հայ եւ ռուս բանաստեղծների միջեւ ես դարձել եմ ինչ-որ միջնորդ, բայց եթէ ես այս գործն արել եմ, ապա առաջին հերթին այն բանի համար, որ, որպէս խորհրդային գրողների միութեան անդամ, ինձ պարտաւորուած էի համարում օգնել մեր խորհրդային հայրենիքի գրական շինարարութեանը: Ընարուէր է, որ ես սխալներ ունենամ, բայց նա, որպէս գրողների միութեան քարտուղար, պիտի ցոյց տար ինձ դրանք՝ ժամանակին վերացնելու համար եւ ոչ թէ քաղաքականապէս վարկաբեկէր, ինչը կարող է միայն փասել այն մեծ գործին, որը հիմա ես անում եմ: (.....) Հիմա ես տարակուսանքի մէջ եմ, ինչպէ՞ս շարունակել հետագայ աշխատանքը Հայաստանի գրողների միութեան այդպիսի վերաբերմունքի պայմաններում»: Այս կապակցութեամբ եւ հայ պատմական արձակի անթուրողիան Մոսկուայում տպագրելու առնչութեամբ նա ցանկութիւն է յայտնում Ապրիլին գալ Երեւան: Յետգրութեան մէջ Միքայելեանն աւելացնում է, որ Ն. Տիտնովից ստացել է գրուող առաջարկութիւն՝ Լենինգրադում կազմակերպելու հայ պոեզիային նուիրուած մեծ երեկոյ, որին պետք է մասնակցեն անթուրողիայի բոլոր բանաստեղծ-թարգմանիչները: «Զգիտեմ ինչպէ՞ս վարուել», - նոյն տարակուսանքով հարցնում է Միքայելեանը:

Ամատունին Միքայելեանի այս նամակը մակագրում է... ո՞ւմ Արովին, նրան, ումից զժողում էր նամակագիրը: Մակագրութիւնը դրական է. «Հեռագրէք Կ. Միքայելեանին, որ պոեզիայի անթուրողիայի հարցերի լուծման համար ժամանի Մայիսին: Տիտնովի առաջարկը պետք է ընդունել» (Ք. 1, ց. 16, գ. 212):

Ամէն ինչ փակ շրջան է գործում՝ զոհն ու դահիճը մնում են միայնակ, դէմ-յանդիման: Արովն արդէն իր սեւ գործն արել էր եւ այնպէս էլ պետք է շարունակէր: Միքայելեանի հանդէպ ունեցած շարութիւնն ըստ երեւոյթի գալիս էր նաեւ նրանից, որ նախապէս ծրագրուած երեքի փոխարէն անթուրողիայում Արովը պիտի ներկայանար մէկ բանաստեղծութեամբ, նաեւ նրանից, որ ինքը «որպէս ազդեցիկ դէմք» (կազմող, առաջաբանի հեղինակ) չէր երեւալու անթուրողիայում: Եւ դա այն դէպքում, երբ գրադեցնում էր գրողների միութեան ղեկավարի աթոռը:

Մրանից յետոյ Կ. Միքայելեանը 1937 թ. Ապրիլի 30ին մի վերջին նամակ է հասցէագրում Ամատունուն եւ ուղարկում նոր թարգմանութիւնների պատճենները: Միաժամանակ յայտնում, որ Մելիսի թոյլտուութիւնից յետոյ մեծ գծարարութեամբ ստացել է 300 տող հայ խորհրդային բանահիւսութեան թարգմանութիւն: Վերստին նա տեղեկացնում է, որ զիրքը գտնուում է արտագրութեան մէջ, պակասում են միայն կազմի ձեւաւորումն ու տիտղոսաթերթերը, նաեւ՝ Կիրպոտիի առաջաբանը, որն



Ինչպէս պարզ երևում է՝ Միքայէլեանը կարողանում է գործնականացնել կազմակերպչական գործը 1937ի պլանից չհանուի: Բայց...



յին-բուրժուական անկախ պետութեան ստեղծումը: Միքայէլեանի գրգռումը է Եղիա Չաբարը, որի հետ բանտում կազմակերպել են աներեսում: Միքայէլեանի գործը բնուում է քաղաքական էն Երեսնում եւ Մոսկուայում՝ այդ կապակցութեամբ նրան ութ անգամ մի քաղաքից տեղափոխելով միայն: Մեղադրական եզրակացութիւնը կայացուել է 1940 թ. Մարտի 15ին: Դրանից յետոյ կինը նրա մասին միջնորդագրեր է հաւաքել՝ մտածելով ինչ-որ կերպ փրկել ամուսնուն: Ի պատիւ Միքայէլեանի եւ նրան ճանաչողներին՝ բոլորն էլ զբաղվում են արտայայտուի:

Բայց այն, որ դրանով էլ Կ. Միքայէլեանն աւարտում է իր լայնահուն գրական-մշակութային գործունէութիւնը՝ դառնալով ստալինեան հալածանքների հերթական զոհը: Նա ձերբակալուել է 1937 թ. Յուլիսի 26ին, մեղադրուել շնորհակամբ օրենսգրքի 69, 18-65, 88 յօդուածներով՝ որպէս Հայաստանի նացիոնալիստական կազմակերպութեան մասնակցի և աշտրոցկիստական խմբակի մասնակցի, որի գործունէութեան ճակատակը Հայաստանի անջատումն էր ԽՍՀՄից եւ ազգայնաբանական ինքնիշխանութեան ստեղծումը: Միքայէլեանին զրկարտել է Եղիա Չաբարը, որի հետ բանտում կազմակերպել են աներեսում: Միքայէլեանի գործը քննում են Երեսնում եւ Մոսկուայում՝ այդ կապակցութեամբ նրան ութ անգամ մի քաղաքից տեղափոխելով միայն: Մեղադրական եզրակացութիւնը կայացուել է 1940 թ. Մարտի 15ին: Դրանից յետոյ կինը նրա մասին միջնորդագրեր է հաւաքել՝ մտածելով ինչ-որ կերպ փրկել ամուսնուն: Ի պատիւ Միքայէլեանի եւ նրան ճանաչողներին՝ բոլորն էլ զբաղվում են արտայայտուի: Քանի որ նշանաւոր մարդիկ են՝ բերենք նրանցից մի քանիսին կարծիքները:

Նուարկուած էր Ամասունուն նայելու: Այնուհետեւ. «Հրատարակութեան գլխաւոր խմբագրութիւնը շատ զոհ է անխնայից եւ յոյս ունի, որ այն կը լինի իր լաւագոյն գրքերից մէկը»: Ինչպէս պարզ երևում է Միքայէլեանը կարողանում է գործնականացնել կազմակերպչական գործը 1937ի պլանից չհանուի: Բայց...

Բայց այն, որ դրանով էլ Կ. Միքայէլեանն աւարտում է իր լայնահուն գրական-մշակութային գործունէութիւնը՝ դառնալով ստալինեան հալածանքների ճակատակալ զոհը: Նա ձերբակալուել է 1937 թ. Յուլիսի 26ին, մեղադրուել շնորհակամբ օրենսգրքի 69, 19-65, 88 յօդուածներով՝ որպէս Հայաստանի նացիոնալիստական կազմակերպութեան մասնակցի և աշտրոցկիստական խմբակի մասնակցի, որի գործունէութեան նպատակը Հայաստանի անջատումն էր ԽՍՀՄից եւ ազգային-բուրժուական անկախ պետութեան ստեղծումը: Միքայէլեանին զրկարտել է Եղիա Չաբարը, որի հետ բանտում կազմակերպել են աներեսում: Միքայէլեանի գործը քննում են Երեսնում եւ Մոսկուայում՝ այդ կապակցութեամբ նրան ութ անգամ մի քաղաքից տեղափոխելով միայն: Մեղադրական եզրակացութիւնը կայացուել է 1940 թ. Մարտի 15ին: Դրանից յետոյ կինը նրա մասին միջնորդագրեր է հաւաքել՝ մտածելով ինչ-որ կերպ փրկել ամուսնուն: Ի պատիւ Միքայէլեանի եւ նրան ճանաչողներին՝ բոլորն էլ զբաղվում են արտայայտուի: Քանի որ նշանաւոր մարդիկ են՝ բերենք նրանցից մի քանիսին կարծիքները:

«Արձակագիր Կարէն Միքայէլեանին եւ ճանաչում եմ շատ վաղուց, մօտաւորապէս 1910 թուականից, որպէս Վահան Տէրեանի առաջադէմ խմբի հետ հանդէս եկող երիտասարդ գրող, որը ետանդուն մասնակցութիւն է բերել Վալերի Բրիւսովի խմբագրութեամբ հրատարակուած «Հա-

յաստանի պոեզիան» ժողովածուին: Հետագայում, յետհոկտեմբերեան շրջանում եւս՝ շատ, որպէս խորհրդային հրատարակչութիւնների աշխատակից: Եւ նրան զիտեմ որպէս ազնիւ, օրինապահ խորհրդային քաղաքացի:

3. 04. 1940, Մոսկուա

Մ. Սարեան»:

«Հայ գրող Կարէն Միքայէլեանին զիտեմ մի քանի տարիների ընթացքում (մօտաւորապէս 1932 թուականից). նրա հետ ունեցած իւրաքանչիւր հանդիպումից եւ ստացել եմ շիտակ օրինապահութեան, հայ գրականութեան ու մշակութի հանդէպ նրա տաժած մեծ սիրոյ, օգտակար մշակութային աշխատողի տպաւորութիւն:

8. 04. 1940, Մոսկուա

Մ. Շահինեան»:

«Կարէն Սերգէյի Միքայէլեանին եւ զիտեմ մի քանի տարիների ընթացքում՝ սկսած 1934 թուականից, որպէս հայ պոեզիայի անթոլոգիայի խմբագիր: Անկասկած ինձ վրայ նա միշտ թողել է խորհրդային մարդու տպաւորութիւն: Հայրենի հայ եւ գրանով իսկ մեր ընդհանուր մշակութիւն ծառայելու նրա եռանդն ու հնարաւորութիւնները արժանի են լաւագոյն վերաբերմունքի: Կ. Ս. Միքայէլեանը խորհրդային մշակութի իսկական նուիրեալ աշխատող է:

30. 04. 1940, Մոսկուա

Պ. Անտոկոլսկի»:

1940 թ. Մայիսի 14ին գրած կարծիքում նրա հասցէին բարձր գնահատանքի խօսք է ասել Բրիտոմի այրին՝ Իոննա Բրիտովան. նա վկայում է, որ Միքայէլեանը եղել է ո՛չ միայն ամուսնու, այլեւ՝ իր հայերէնի ուսուցիչը, Բրիտովի համար հայերէնից արեւ տողացի թարգմանութիւններ, նրան վերապատմել հայերէն տպագրութեան գրքերի ու յօդուածների բովանդակութիւնը: Ասում է նաեւ, որ Միքայէլեանը համեստօրէն հրաժարուեց իր անունը «Հայաստանի պոեզիան» գրքի առաջաբանում որպէս Բրիտովի օգնական նշելու վերջինիս առաջարկից: Միքայէլեանի մասին գրական եւ արտայայտուել նաեւ գրականագէտ-թարգմանիչ Ա. Իյլինսկին եւ Ն. Զարեանը (այս կարծիքները գրուած են ոտաներէն եւ պահուում են ԳԱԹ, ԿՄՖ, թիւ 174-179):

Կարծիքները չեն օգնել գործին: 1940 թ. Հոկտեմբերի 19ին կայացել է Միքայէլեանի դատավերոյ՝ «...ազատագրել հինգ տարով ուղղիչ-աշխատանքային ճամբարում»: Ժամկէտը հաշուելում է ձերբակալման օրուանից: Երեւանի բանտում պետական գրականութեան ժողովի թոյլտուութեամբ նա հնարաւորութիւն է ստացել գրադուելու գրական գործունէութեամբ, որի արդիւնքն է «Ամուսնութիւն» վերնագրուած արեւելեան բանահիւսական մտիւնների մշակումը (գործերը թուագրուած են 24. 04. 41-4. 07. 41, Երեւան, միայն մէկ գործ՝ 13. 01. 34, Մոսկուա): Նովելների այդ շարքին նա կցել է 1941 թ. Յունիսի 3ին եւ 6ին գրած երկու առաջաբան, վայրը նշելով՝ «Երեւան, քաղաքային բանտ»: Յայտնի է նաեւ 1941 թ. գրած «Նամակ» պատմուածքը, որը 1963 թ. «Գրական թերթի Փետրուարի 8ի համարում տպագրութեան է ներկայացրել Ստ. Զօրեանը:

1941ի Յուլիսին Միքայէլեանն աքսորուել է Սոլիկամսկ, այդտեղից՝ այլ վայրեր: Հետագայում կինը պարզել է, որ ամուսինը մահացել է 1941

թ. Դեկտեմբերի 13ին, Վոլոգդայի մարզում, «սրտի անբնականաբարությունից»:

Արդարացուել է 1956ին: Կնոջն են վերադարձուել նրանից բռնազրուած նիւթերի մի մասը, նաեւ՝ «Ամմահութիւն» գրքի ձեռագիրը: Կինն այն ուղարկել է Հայաստանի գրողների միութիւն՝ Յ. Սալախեանի եւ է. Թովչեանի միջոցով հրատարակելու: Բայց առ այսօր ժողովածուն անտիպ է: Անտիպ է նաեւ նրա շատ ուշագրու մի վէպը՝ վերնադրուած «Սրբ եւ խելագար էի...» եւ նուիրուած պետքազգիւթեան հետապնդման կասկածների տակ հոգեկան խանգարման հասած մարդու հիւանդագին ապրումների պատկերմանը: Այդ մարդը հէնց ինքն է՝ Կ. Միքայէլեանը եւ բացառուած չէ, որ այդ վէպը եւս նա գրած լինի բանտում:

Գ

Անթոլոգիայի տպագրութիւնը, կապուած հանրապետութիւնում կատարուող քաղաքական նոր փոփոխութիւնների հետ, յետաձգուած է: Նոր ախբը ասպարէզից հեռացնում է Ամատունուն եւ նրա գրածոների:

Հայաստանում իշխանութեան գլուխ է բարձրանում Գրիգոր Յարութիւնեանը: 1937 թ. Հոկտեմբերի 2ին «Academia»ի պաշտօնաթղթի վրայ զլիւսուոր իմբացիր Մ. Լիֆշիցը նրան է հասցէագրում հետեւեալ գրութիւնը.

«Յարգելի ընկ. Յարութիւնում

Ձեզ եմ ուղարկում «Անթոլոգիա հայ պոեզիայի» մամուլները: Այս զրբում արուել են բազմաթիւ ուղղումներ՝ հիմնականում հանուել են առանձին գրողներ եւ կատարուել կրճատումներ:

Բոլոր դէպքում մենք վստահ չենք այս գրքի բացարձակ բարձրորակութեանը եւ կը ցանկանայինք, որ այն ստուգուէր Հայաստանի Կենտկոմի նոր ղեկավարութեան կողմից:

Մեզ մասնաւորապէս կասկած է յարուցում պոեզիայի արեւելահայ եւ արեւմտահայ բաժանումը: Ընկ. Կիրպոտինի յօդուածում այն պահանջուած է ամբողջութեամբ, իսկ բնագրում պայմանական է (նոր ժամանակի պոեզիա, մասն I եւ II):

Սպասում եմ հնարուորին չափ արագ պատասխանի» (Ք. I, ց. 16, գ. 212):

Գործին միջամտելու հերթը հասնում է Գ. Յարութիւնեանին: 1937 թ. Դեկտեմբերին գրքի հրատարակիչներին նա հասցէագրում է հետեւեալ գրութիւնը.

«Մուկուա

«Academia» հրատարակչութիւն, ընկ. Լիֆշիցին

Ստուգելով «Հայ պոեզիայի անթոլոգիա»-ի տպագրական թերթերը, անհրաժեշտ ենք համարում՝

1. Հանել բանաստեղծներ Նահապետ Ռուսինեանի, Ռուբէն Որբերեանի, Վահան Թէքէեանի, Ազատ Վրտունու, Սիպիլի, Սիամանթոյի ստեղծագործութիւնները:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՄ - ԱՄԱՏՈՒՆԻ



Ա. ԱՄԱՏՈՒՆ

1936 թ. Յուլիսի 9-ին, Խանջեանի գոհունելուց յետոյ, Ամատունի Սիմէոնի Ամատունիով գտնուեալ է Խանջեանի անկողնէն անկողնէն անցնելու համար ԼԿ(Բ) Կենտրոնի անկողնէն անկողնէն անցնելու համար Ստալինի ստորագրութեամբ հրապարակուեալ է ԼԿ(Բ) Կենտրոնի հետագիւրջ Ամատունու Կենտրոնի առաջին Բարտուղար Խանջեանի մասին:

Ուղիղ մէկ տարի մա ղեկավարեց Խորհրդային Հայաստանը: Այդ ընթացքում «ժողովրդի թշնամի» պիտակով մէկը միտի յետեւից ձերբակալուեցին Խանջեանի համար Խորհրդային Կենտրոնի անկողնէն անկողնէն անցնելու համար աշխատողները, զինուորական գործիչները, մշակույթի ներկայացուցիչները: Ասկայն դա էլ անբարար էր թում: «Պրազա» թերթը 1937 թ. Մայիսին գրում էր. «Հայաստանում թագաւորում է վնասակար ինքնահանգստութիւն»: Ամատունին փորձում է արդարանայ պատրաստուել է ընդունելութեան մեկնել Ստալինի մօտ: Ասկայն սեւեռները կուտակուեցին նաեւ Ամատունու գլխավորութեամբ, իսկ հեղեղը սկսուեց յամկարծակի: Օգոստոսի 19-ին Ներքին գործերի ժողովատի 2-ին հրրորդ յարկից դուրս նետուեց Սահակ Տէր-Գարրիէլեանը: Անկողնէն անկողնէն մի խումբ յեկատուների հետ Հայաստան ժամանեցին Ա Միկոյեանը եւ Գ. Մարտիկովը: Ամատունու նակատագիրը վնասուած էր, մա արժանացաւ իր մախորդների բախտով մետուեց գնդամ: Ձերբակալուածներին Մոսկուա տեղափոխելու Ամատունին իր արիւնով թաշկինակի վրայ գրում է, որ իրեն ծածկել են ստիպելով գրպարտել իրեն եւ այլ անձանց, Ստալինին խնդրում է միջամտել եւ ազատել: Թաշկինակը կայարաններէ մեկուս փորձում է վագոնից դուրս գրցել, բայց պահուպանները այն գրտում են ու վերցնում: 1938 թ. Յուլիսի 28-ին, ժամը 10-ին Մոսկուա քաղաքում սկսուեց ԽՍՀՄ Գերագոյն դատարանի գիմնուորական կոլեգիայի դատական փակ միտը, որը տեւեց 20 րոպէ. Ամատունին դատապարտուեց գնդակահարութեան, դատաւճիւմ ի կատարածուեց անմիջապէս... («Գարուե», 1981, թիւ 5):

ԱՄԱՏՈՒՆԻ ՎԻՐԱՊԵԱՆ
Պատմական գիտութիւնների թեկնածու

(1) Իսկական ազգանունը Վարդապետեան էր, 1920 թ. հրաժարուեց եւ դարձաւ Անօ Ամատունի:

2. Բանաստեղծների բաժանումը արեւելահայ եւ արեւմտահայ հաստածների քաղաքականապէս համարում ենք սխալ: Աւելի ճիշտ կը լինի ըստ շրջանների բաժանել նաեւ նոր շրջանի բանաստեղծութիւնը, բաժանել ոչ թէ մասերի, այլ հեղինակների ստեղծագործութիւնը դասաւորել ըստ ժամանակագրութեան:

3. Գրքի մէջ գետեղել Ա. Իսահակեանի «Արու լալա-Մահարի» պոեմը:

4. Խնդրել ընկ. Կիրակոսին համապատասխանաբար վերակառուցել առաջարանը: Խնդրում է նաեւ վերակառուցել ծանօթագրութիւնները: ԼԿ(Բ) Կենտրոնի քարտուղար Գ. Յարութիւնեան» (Ք. 1, ց. 16, գ. 212):

Բարեբախտաբար թէ դժբախտաբար, սա վերջին հրահանգը չէ: Նշուած բանաստեղծների մի մասը դուրս են մնում անթողոզիայից, բացառութեամբ Սիամանթոյի եւ Վլադուսու. վերջինս կարողանում է վերականգնել իր վտանգուած քաղաքական վարկը: Աւելացում է Իսահակեանի պոեմը: Անկախ քաղաքական նկատառումներից, զրական քայլ էր նաեւ նոր շրջանի պոեզիան արեւելահայ եւ արեւմտահայ հատուածների բաժանելու արմատաւորուած սկզբունքի վերացումը, որը նպաստում է այդ տարիների գեղարուեստական զարգացման միասնական ընթացքի վերականգնմանը:

Գրքի հրատարակութեան հետ կապուած աշխատանքները շարունակուում են նոր պայմանների թեկադրանքով: 1938 թ. Օգոստոսի 17ին Մոսկուայում հրահրուում է ԽՍՀՄ գրողների միութեանը կից ազգային զրականութիւնների յանձնաժողովի նիստ, որը քննարկում է թարգմանական աշխատանքների հետ կապուած հարցեր: Հայ գրողներից անթողոզիայի հետ կապուած խնդիրների արծարծումով կրոյթ է ունենում Ն. Ջարեանը: Նոյն թուականի Հոկտեմբերի 7ին ԽՍՀՄ գրողների միութեան նախագահութեան նիստում քննարկուում է ազգային զրականութիւնների վիճակի հարցը. նախագահութիւնը յանձնարարում է Ն. Ջարեանին, Վ. Կիրպոտինին եւ Հրաչիայ Գրիգորեանին օգնել Պետհրատին՝ արագացնելու «Հայ պոեզիայի անթողոզիայի հրատարակութիւնը»:

1939 թ. Սեպտեմբերից նախ Մոսկուայում, ապա ամբողջ ԽՍՀՄում նշուում է «Աստուայ ծառը» դիցադեբրոյթեան 1000ամեակը: Նոյն թուականի Հոկտեմբերի 20ից Մոսկուայում սկսուում է հայ արուեստի տասնօրեակը, կազմակերպուում են զրական հանգիպումներ: Այդ օրերին պաշտօնական շրջանակներում խօսք է եղել նաեւ անթողոզիայի սպազրութեան մասին, որի մէջ մի ամբողջ բաժին յատկացուած էր էպոսին:

Վերջապէս եօթ տարուայ դժուարին երկունքից յետոյ 1940 թ. Նոյեմբերին Մոսկուայի «Սուղոթեանփենայա յիտերատուրա» պետական հրատարակութեան մակնիչով լոյս է տեսնում «Անթողոզիա հայ պոեզիայի» («Անտոլոզիա արմեանակոյ պոեզիի») գիրքը, ինչպէս սկզբում ասացիւք, որպէս եուէր Խորհրդային Հայաստանի 20րդ տարեդարձին:

Գրքի սպազրութիւնը համարուում է իրադարձութիւն: Այդ կապակցութեամբ «Պրատուս» սպազրում է Վ. Ղազանչեանի «Հայկական պոեզիայի անթողոզիան», «Լիտերատուրնայա զագետաս»՝ Բ. Վարտի «Հայկական պոեզիայի տօնը», «Նովի Միր»՝ Ե. Սիկարի «Հայ ժողովուրդի պոեզիան» յօդուածները: 1940 թ. Դեկտեմբերի 7ին ԽՍՀՄ գրողների միութեան ակումբում կազմակերպուում է անթողոզիային նուիրուած երեկոյ, որը բացուում է Պ. Անտոկոյսկին, զեկուցուում է Վ. Կիրպոտինը: Իրենց կատարած թարգմանութիւնների ընթերցումով հանդէս են գալիս Ս. Ենրվինսկին, Ա. Գատուլը, Գ. Լիպսերովը, Վ. Դերժավինը, Պ. Պանչենկոն, Մ. Սիկտուլը եւ ուրիշներ:

Գիրքն ստեղծելու այս տքնաշուն տառապանքից յետոյ, ի վերջոյ, ի՞նչ էր ներկայացնում այն իրենից:

Նախի ասենք, որ տարիներ տեւած ձգձգումից յետոյ այն յանձնուել է շարուածքի 1940 թ. Մայիսի 22ին եւ նոյն թուականի Հոկտեմբերի 19ին

ստորագրուել տպագրութեան: Տպագրուել է 32 մամուլ հեղինակային ծաւալով եւ այն տարիների համար բաւականին մեծ՝ 20.000 տպաքանակով:

Քանի որ բրիւտովեան ժողովածուն ժամանակին ձեւաւորել էր Մ. Սարեանը, կրկնութիւնից խուսափելու համար այս անթողոզիայի նկարչական աշխատանքները յանձնարարուել էր Յակոբ Կոշոյեանին: ՓԱԹ Կ. Միքայէլեանի ֆոնդում պահուում է «Academia» հրատարակութեան հետ 1935 թ. Մայիսի 11ին Յ. Կոշոյեանի կնքած պայմանագրի օրինակը (տես՝ թիւ 182): Նոյն զիւանում պահուում են նաեւ անթողոզիայի վերաբերեալ Կ. Միքայէլեանին Յ. Կոշոյեանի 1935 թ. Մայիսի 21ին եւ Սեպտեմբերի 19ին գրած նամակները (տես՝ թիւ 359-360):

Կոշոյեանը հայ գրքի յաւազոյն ձեւաւորողներից էր, որի աշխատանքի յաջողութեամբ նմոյշներից են Չարենցի «Գիրք ճամպարի»-ն (1934), «Սասնայ ծոներ»ը (1936), Սայաթ-Նովայի «Սաղեր»ի ժողովածուն (1945), «Հայկական ժողովրդական հեքիաթներ»ը (1955), Վարդան Այգեկցու «Աղուէսագիրք»ը (1956): Նրա վարպետութեան յաւազոյն վկայութիւնն է նաեւ այս անթողոզիան իր եւ արտաքին (կազմը, կողքը), եւ ներքին (կազմի ներսի բացումը, անուանաթերթը, տիտղոսաթերթը, ենթաբաժինները, զիւարերը) ձեւաւորմամբ: Ինքնատիպ ոճաւորումով ընդհանուր առմամբ օգտագործուած են հայ միջնադարեան մանրանկարչութեան տարրերը:

Գրքի անուանաթերթի վրայ որպէս խմբագիրներ նշուած են Սուրէն Յարութիւնեանի եւ Վալերի Կիրպոտինի անունները: Ս. Յարութիւնեանի անունը յիշատակուում է նաեւ որպէս գրքի վերջում կցուած կենսագրականների հեղինակ: Վերջում Յովսէփ Կուսիկեանի հեղինակութեամբ տրուած է նաեւ բացատրական բառարան: Հրատարակչական խմբագիրն էր հայագրի Սոֆիա Խիտարովան: Ո՛չ մի խօսք Միքայէլեանի, Անտոկոյսկու, Տիտոնովի եւ միւսների մասին:

Գիրքը բացուում է «Ճմբագրութեան կողմից» մուտքով, որն այսպիսի սրխայ ծանուցում է տալիս. «Անթողոզիայի հրատարակութեան առաջին քայլերն արուել են 1936 թուին»: Երբտը 1934ն է: Նշուում է, որ գրքի հրատարակութեան ջերմ պաշտպան է եղել Մ. Գորկին. «Նա ծանօթացել է անթողոզիայի համար արուած բազմաթիւ թարգմանութիւններին, բարձր գնահատական տուել հայ պոեզիային եւ երաշխաւորել հայ պոեզիայի անթողոզիայի նմանութեամբ հրատարակել նաեւ ԽՍՀՄ միւս ժողովուրդների պոեզիաների անթողոզիաները»:

Այնուհետեւ խօսուում է գրքի կառուցուածքի մասին, աւուում, որ նիւթերն ունեն ժանրային-ժամանակագրական դասաւորութիւն, որ թարգմանութիւնները հիմնականում արուած են նորովի, բայց եւ օգտագործուած են բրիւտովեան ժողովածուի եւ «Հայկական մուսա» հաւաքածուի (Մոսկուա, 1907, Եուրի Վեյտովսկու եւ Գրիգոր Խալաթեանցի խմբագրութեամբ) թարգմանութիւնները:

Թամենայնդէպս, նշուում է, որ «Անթողոզիայի ստեղծումը Հայաստանի գրողների միութեան, գրականութեան հայ գործիչների եւ ռուս բանաստեղծների համատեղ աշխատանքի արդիւնք է...»: Նաեւ խորին շնորհակալութիւն է յայտնուում բոլորին, ովքեր «համագործակցել են անթողոզիայի կազմման ու լոյսընծայման աշխատանքներին»: Թէկուպէս անհասցէ

այս խօսքերը հաւանաբար ուղղում են Չարենցին, Խանջեանին, Միքայելեանին, Տիտոնովին, Անտոկուսկուն:

«Խմբագրութեան կողմից» մուտքին յաջորդում է «Հայ պոեզիայի զարգացման պատմութիւն» ակնարկը, որն անստորագիր է: Տրւում է ժողովրդի համառօտ պատմութիւնը եւ գրականութեան զարգացման ընթացքը: Այս ակնարկում թէ՛ հարցերի ընդհանուր յուսարանմամբ եւ թէ՛ առանձին քաղաւածքներով օգտագործուած է բրիւսովեան առաջաբանը, թէ՛, ի տարբերութիւն վերջինի, այստեղ կան անցանկալի վրիպումներ: Օրինակ, քրիստոնէութեան ընդունումը հասցւում է չորրորդ դարի վերջը, այն դէպքում, երբ Բրիւսովը նշում է 295, 299 կամ 301 թուերը:

Ահաւոր պատկեր է ներկայացնում նորագոյն շրջանին վերաբերող հատուածը, որը փաստօրէն ներկայացւում է առանց իր հիմնական ղեմքերի՝ Չարենցի, Մահարու եւ այլոց: Բացակայում են նաեւ Ալազանն ու Նորենցը, որոնք եղել են նախնական ծրագրում:

Արժանիներին անտեսելով, անստորագիր առաջաբանի հեղինակները տեղ են տալիս «մի շարք երիտասարդ տաղանդներին» (Ղ. Կոմունի, Բ. Կարապետեան, Գ. Հայրեան, Վ. Արամունի, Հենր. Թումանեան, Մ. Կորիւն), որոնք նրանց նախանշած աճող սերունդն են: Արժեքների ինչպիսի՛ ոտնահարում...

Դրանից յետոյ առաջաբանում խօսւում է «աշուղների նոր՝ խորհրդային սերնդի մասին», որոնք իրենց «արժանի» տեղն են գրաւում զբքում: Եզրակացութիւնն այս է. «Ամբողջ աշուղական պոեզիայում արտայայտուած է ժողովրդական զանգուածների անասհման սերը ժողովուրդների մեծագոյն առաջնորդ ընկեր Ստալինի հանդէպ» (էջ 35):

Ետ չի մնում նաեւ նորագոյն բանահիւսութիւնը. «Հայ բանահիւսութեան հարստութիւնն արտայայտուել է այնպիսի հրաշալի ստեղծագործութեան մէջ, ինչպէս «Աւա Լեմիմի մասին» (ասացող՝ Սենո Ծաղիկեան), որը «զեղարուեստական վարպետութեան տեսակէտից մեր օրերի «Սասունցի Կապի»-ն է, որի մէջ փառաբանում են յեղափոխութեան հսկայ Լենինն ու նրա գինակիցները» (էջ 35):

Նորագոյն շրջանի հայ պոեզիան ներկայացուած է այսպիսի կազմով՝ երկու հանրապետութիւնների «ժողովրդական բանաստեղծ» Զ. Ծակոբեան



Վ. Կորոտսու

կապիտալի գործակալներ, որպէսզի հայ ժողովրդին շեղէին երջանիկ կեանքի ուղուց եւ վերադարձնէին անցեալում նրա ապրած բոլոր սարսափներին: Հետագայում, Չարենցը ընկնում է հակալեզափոխական ցարկոնալիստների ազդեցութեան տակ: Մենք անձնապէս գիտեմք նրա «բարեկամներին», որոնք ազգում էին նրա վրայ: Դրանք էին Բակունցը, Խանջեանը եւ ուրիշներ: ...Նա ստեղծում է մի գիրք՝ «Գիրք նաեւագրի», որ ամբողջապէս ցրտած է որպէս հայ գրականութեան «ազգային յատկանիշների խտացման» թէորիայի իլլուստրացիա («Գրական թերթ», 1937, թիւ 12):

ՎԱՍԵՐԻ ԿԻՐՊՈՏԻՆ

(15 գործ), Ա. Վշտունի (5 գործ), Ն. Չարեան (5 գործ), Գ. Սարեան (7 գործ), Գ. Արտվ (1 գործ), Ս. Տարուցի (2 գործ), Հո. Պողոսեան (2 գործ), Վեսպեր (2 գործ), Սարմէն (2 գործ), Գ. Բորեան (1 գործ), Յ. Շիրազ (7 գործ), Ս. Վահունի (1 գործ), Վ. Գրիգորեան (2 գործ), Ա. Գրաշի (3 գործ), Թ. Հուրեան (1 գործ), Ազունի (2 գործ), Ս. Կապուտիկեան (1 գործ), Ս. Դաշտեցի (1 գործ), որոնց հետեւում են աշուղներ Աշխուժի, Հրկէզի, Աթայի, Պաղայի գործերը: Չնչին բացառութեամբ երկրորդական ու վրիպած անուններ, որոնք գրապատմական տեսակետից բաւականին սխալ ու պակասաւոր պատկերացում են տալիս նորագոյն շրջանի հայ պոեզիայի մասին: Իսկ 1920-1940 թթ. արտերկրի հայ քանաստեղծութիւնն ընդհանրապէս չի էլ յիշուի:

Բացառութեամբ նորագոյն շրջանի, ընդհանուր առմամբ, զբքում բաւարար չափով է ներկայացուած ամբողջ հայ քանաստեղծական ժառանգութիւնը: Նիւթը զետեղուած է հինգ բաժնում՝ ժողովրդական քանաստեղծութիւն, հին եւ միջնադարեան քանաստեղծութիւն, աշուղական քանաստեղծութիւն, նոր ժամանակների քանաստեղծութիւն, խորհրդային քանաստեղծութիւն: Դրանցից առաջին բաժինը տրոհուած է երկու ենթաբաժնի՝ վիպասանք եւ քնարերգութիւն, որոնք իրենց հերթին ունեն առանձին խմբեր:

Ըստ էութեան կրկնուած է բրիւսովեան ժողովածուի կառուցուածքը: Երկրորդ բաժինը Բրիւսովը ձեւակերպել էր «Միջնադարի պոեզիան եւ աշուղների երգը», իսկ այստեղ աշուղներն առանձնացուել են: Պատճառն այն էր, որ աշուղականութիւնը այդ տարիներին պետականորէն խրախուսուած էր, իսկ նորագոյն պոեզիան յատկապէս 1939-1940 թթ. ընդունել էր բացայայտ աշուղական ուղղութիւն: Բրիւսովի խմբագրութեամբ լրջ տեսած զբքում տեղ գտած Սայաթ-Նովային, Ղունկիանոսին եւ Ջիւանունն այստեղ եկել են աւելանալու Գիրջի Նաւեն ու Քիչիկ Նովան, Նիբրանին ու Աէյրաթին, նաեւ ուրիշներ, երեքի փոխարէն՝ թուով տասը աշուղ:

Նոր շրջանը Բրիւսովը ներկայացրել է «Ռուսահայերի բանաստեղծութիւն», «Թուրքահայերի բանաստեղծութիւն» բաժիններով, իսկ այստեղ այդպիսի բաժանում չկայ, երկու հատուածները ներկայացուած են միասին, որն աւելի ճիշտ է: Այս շրջանի բանաստեղծներից բրիւսովեան ժողովածուի համեմատութեամբ բացակայում են Լ. Եանթը, Ա. Չօպանեանը, Վ. Թէքէեանը, Վ. Մալեգեանը, Միպիլը, նաեւ Ա. Տէր-Մարտիրոսեանն ու Ալյին: Աւելացուել են Յ. Ալամդարեանը, Պ. Արովեանը, Մ. Նալբանդեանը, Մ. Աճէմեանը, Լ. Մանուէլեանը, Վ. Միրաքեանը եւ Ռ. Սեւակը:

Հայ պոեզիայի այս երկու անթոլոգիաներում տեղ չի գտնում ժամանակի մեծագոյն քանաստեղծը՝ Ծ. Չարենցը: 1940 թ. ժողովածուի վերջնական տարբերակից նա դուրս մնաց, որովհետեւ ժամանակի արհնետ ձեռքը նրան դուրս էր մղել ասպարէզից: Բայց Վ. Տէրեանից յետոյ Ա. Տէր-Մարտիրոսեանի եւ Ալյիի առկայութեամբ անհասկանալի է մնում Չարենցի անուան եւ ստեղծագործութիւնների բացակայութիւնը Բրիւսովի խմբագրած զբքում:

Փան այս բնոյթի նաեւ այլ վրիպումներ:

Յգրակացութիւնն այն է, որ եթէ «Ամթողոցիա հայ պոեզիայի» զիրքը հրատարակուէր այնպէս՝ ինչպէս նախատեսել էին Զարենցը, Մխչայէլեանն ու Խանջեանը, խմբագրէր Գորկին, կցուէին Տիխոնովի եւ Անտոկոյսկու առաջաբանները, տրուէր հայ պոեզիայի զարգացման պատմութիւնը ներկայացնող լուրջ ներածութիւն, ապա այն անպայման մի նոր էական քայլ կը լինէր բրիտոփեան ժողովածուից յետոյ: Իսկ այս տեսքով այն ճշգրտորէն արտացոլում է 1930ական թթ. քաղաքական պայքարի իրական պատկերը: Բայց եւ, այս եւ այլ կարգի բոլոր թերութիւններով հանդերձ, անթուղիան օգտակար էր, քանի որ առսայեգու ընթերցողի մէջ նորոգում էր հայ պոեզիայի հարուստ պատմութիւնը՝ սկսած հնագոյն ժամանակներից մինչեւ Թումանեան ու Տերեան, լայն ասպարէզ բացում Երրագի պէս օժտուած բանաստեղծի առջեւ:

Ընդհանրացնելով խօսքը, անհրաժեշտ ենք համարում նաեւ ասել, որ համանման ժողովածուները աշխարհին տուեալ ժողովրդի ներկայանալու քայցառիկ հնարաւորութիւններ են, որոնք ազգային մշակոյթների հարրուտութիւնը համահաւաք ընդգրկումով տանում են զէպի համաշխարհային քաղաքակրթութեան գանձարան: Անցեալի աւանդոյթները, վրիպումներով հանդերձ, ուսանելի փորձ են տալիս: Թէեւ վերջին տասնամեակներին, յատկապէս 1960-1980ական թթ., թարգմանական «հնդուստրիան» լայն ասպարէզ հանեց հայ գրականութեան հին ու նոր արժէքները, բայց գործը երբեք չի կարելի համարել աւարտուած: Այսօր էլ աշխարհի ժողովուրդների բոլոր հնարաւոր լեզուներով թէ՛ Հայաստանում, թէ՛ Հայաստանից դուրս պէտք է հրատարակել հայ գրականութեան համահաւաք ժողովածուներ, որպէս աշխարհի հնագոյն գրականութիւններից մէկի դարերով անցած դժուարին, բայց արգասաւոր ճանապարհի վկայութիւն: Իսկ դրա համար անհրաժեշտ է տեղծել հայ գրականութեան թարգմանութեան զիտահրատարակչական միջազգային կենտրոն, որպէսզի պատահական ձեռնարկումներին փոխարինի ծրագրուած գործիակերպը: Դա պէտք է լինի պետականօրէն մշակուած որոշակի գործունէութիւն՝ թելադրուած համաշխարհային քաղաքակրթութեան մէջ ազգային մշակոյթի հոգեւոր գաշտի ընդարձակման նպատակներով:

19.05 - 3.06 1991 թ.
ԵՐԵՎԱՆ

ԴԱԻԹ ԳԱՊԱՐԵԱՆ
(Շաբ. 2 եւ վերջ)

Պ. ԱՆԱՊԵԱՆ

Ն Ա Խ Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

Կ Ա Ր Գ Ո Վ . . .

Անցեալ տարուան Յուլիսի կեսերուն, հայրենի քննադատներէն Պետրոս Դեմիրճեան այս տողերը ստորագրողին հետ, «Գրական քերթ»ին համար, Երեւանի մէջ ունեցաւ հարցազրոյց մը, որ լոյս տեսաւ շաբաթաթերթին Յուլիս 17 թուակիր համարին մէջ:

Այդ հարցազրոյցի Աւետիք Իսահակեանին վերաբերող բաժինին մէջ յայտնուած էր այն կարծիքը, թէ մենք չենք կրնար վարժանեան, մեծարենցեան կամ չարենցեան առումով մեծ բանաստեղծ մը դաւանել Իսահակեանը:

Կ'ըսուէր վարժանեան, մեծարենցեան ու չարենցեան իմաստով եւ ոչ թէ կը յայտնուէր Իսահակեանը ռեւէ բանաստեղծ համարող միտք մը:

Զրուցակից քննադատը չբաժնեց մեր կարծիքը, ըսաւ. «Թոյլ տուէ՛ք ինձ՝ իբրեւ գրականագէտի, շեմաձայնել Իսահակեանի եւ Թումանեանի վերաբերեալ Ձեր տեսակէտներին», եւ այլն, եւ կը կարծուէր, թէ Իսահակեանը մեր գնահատանքէն տարբեր մակարդակի մը վրայ դիտող մարդոց գոհացում տուող գեմիրճեանական առարկութեամբ վէճի նիւթ չէր մնար մէջտեղ:

Այդպէս չեղաւ սակայն:

Հայաստանի նորարոյս թերթերէն «Աետարեր»ի (1992, թիւ 8) մէջ «գրչի հարուածայիններէն» երկու հարուածային նոյն էջին վրայ ստորագրեցին մէկական յարձակողական, որոնց իւրաքանչիւրէն մէկ-երկու նախադասութիւն կարգալէ ետք, մէկ կողմ դրինք թերթը, իսկ քննադատ Եուրի Սաչատրեան նոյն առիթով «Երկիր» թերթին մէջ ստորագրեց գրութիւն մը, ուր կը խարանուէր «Աետարեր»ի հարուածայիններուն մատնած

մարտնչող սովորամորթիներ ու կը պաշտպանուէր կարծիքի ազատութիւնը:

Մենք հեռու մնացինք այդ հարցէն: Իսահակեանի մասին յաճախ յայտնած ենք մեր կարծիքը եւ նոր գրութեամբ հանդէս գալու ոչ մէկ պատճառ կար, մա՛նաւանդ՝ որ Իսահակեանին ի պաշտպանութիւն թոթովանքներ ստորագրած «Ասետաբեր»ի այդ վերջին ու վերջամասց հերոսները առաջին ակնարկով իսկ անդրադարձումի արժանի որեւէ տպաւորութիւն չէին ձգած մեր վրայ:

Խնդիրը բոլորովին փոխուեցաւ սակայն, երբ «Գրական թերթ»ի լոյս ընծայած նոյն հարցազրոյցին առիթով եւ յայտնուած նոյն կարծիքին կապակցարար «Հայաստանի հանրապետութիւն» օրաթերթին (28 Հոկտեմբեր 1992) էջերուն՝ «Գրական ասուլիս» անուն գրութեամբ հանդէս եկաւ նաեւ ծանօթ մտաւորական փրոֆեսէօր Ռաֆայէլ Իշխանեան:

Մեր լեզուին մաքրութեան եւ դարաւոր օրէնքներուն պահպանման նախանձանդիր, Հայոց պատմութեան ճամարտութիւններուն հետամուտ, Վահան Տէրեանի ու Ակսէյ Բակունցի ստեղծումներուն հմայքը տարփողած ու յարգարած անոնց հերոսներուն կենսագրութիւնները առաւելագոյն խղճմտութեամբ կազմած մտաւորական՝ Ռաֆայէլ Իշխանեան մեր եւ շատերուն համարումը վայլած դէմք է, հեղինակութիւն է, հետեւաբար ճիշդ չէ, ճիշդ չ'ըլլար ձեռնպահ մնալ՝ երբ իր կատարած համեմատութիւններուն ու ընդհանրացումներուն առիթով առարկելու քան կայ...

Քանի մը ստողով իր ընթերցողներուն ներկայացնելէ ետք մեզ, Ռաֆայէլ Իշխանեան կը յայտնէ, թէ Սեպեան «յիշեալ հարցազրոյցում նուաստացուցիչ կարծիք է յայտնել Յ. Թումանեանի եւ Ա. Իսահակեանի մասին»: Ապա դասական դէմքերու՝ Շէքսպիրի, Պուշկինի, Տէրեանի ու Վարուժանի գործերը իրենց օրերուն չհամարած մարդոց ցանկը կազմելով կ'առանձնացնէ Իսահակեանի պարագան ու կը յիշէ.

«...Ինչպէս յայտնեցին, գրականագետ Ասիկ Իսահակեանը ցանկութիւն է յայտնել պատասխան գրելու, խմբագիրը հրաժարուել է նման բան տպագրել: Եթէ մէկը կարող է թերթում մի խոշոր գրողի մասին իր բացասական կարծիքը յայտնել, ինչո՞ւ մի ուրիշը չպէտք է կարողանայ նոյն թերթում որպէս պատասխան իր դրական տեսակէտը ներկայացնել»:

Գրականագէտին գրելու տրամադրութիւնը եւ գրուածքը չտպագրելու խմբագիրին շարժառիթները բոլորովին անծանօթ կը մնան մեզի: Միայն թէ՛ չենք կարծեր, որ «Գրական թերթ»ի խմբագիրը Սեպեանին հանդէպ փափկանկատ ըլլալու առանձին պատճառ մը կրնար ունեցած ըլլալ, իսկ թէ Իսահակեանի հետ համեմատած՝ մեծութեան առաւելութիւնը Վարուժանին, Մեծարենցին ու Չարենցին տուած մեր կարծիքին առիթով ինչ կրնար ըսել Ասիկ Իսահակեան, կը մնայ ենթադրութեան սահմաններուն մէջ: Պիտի ըսէր հաւանաբար, որ Սեպեանը կը սխալի, կամ գրական հասկացողութիւն չունի, կամ արեւելահայ բանաստեղծութիւնը կշռելու հաւաստի արժեչափերէն զուրկ է:

Ուրի՛շ:

Գուցէ քանի մը աննպաստ որակումներ:

Յետո՛յ:

Ռաֆայէլ Իշխանեանէն տարբե՛ր բաներ պիտի ըսէր:

Ի՛նչ:

Աւետիք Իսահակեանի ծանօթ ժողովրդական վրայ ձեռնած մեծութեան որեւէ չափանիշ դժուար թէ կարենայ աննախապաշար մտքերուն մէջ փոխել տալ անոր տեղը ու բարձրացնել զայն քիչ առաջ յիշուած դէմքերուն պատուանգանին: Ետտ չմեծցնենք խնդիրը: Եթէ «Գրական թերթ»ի խմբագիրը հրատարեր է Աւիկ Իսահակեանի զրեմիք պատասխանը տպագրելի, Հայաստանի մէջ թե՛րթ կը պակսէր այն օրերուն կամ կը պակսի այսօր՝ հիւրընկալիլու համար իսահակեանական նոր առասպելներ...

«Օրինակ, — կը շարունակէ Ռաֆայէլ Իշխանեան, — կոմունիստական ժամանակաշրջանում «Գրական թերթ»ը ամենազատաւիրում էր մեր մամուլի մէջ, հիմա այդպիսին չէ (կուսակցական թե՛րթ է զգացում): Նոյնիսկ «Հայաստան»ը, երբ «Ստորիդային Հայաստան» էր, անլի ազատամիտ էր, Բամ այժմ: Կուսակցականութիւնը խեղդում է մեր մամուլը, դարձնում տժգոյն, յաճախ՝ հայտնաբացում»:

Ռաֆայէլ Իշխանեանի կենսագրութեան, ստորագրած առանձին գրութիւններուն, երկնած զիրքերուն, կուտակած վաստակին եւ այդ ամէնուն համար մէկ հանգրուանէն միւսը ապրած կոմունիստական տառապանքներուն ծանօթ ընթերցողը, վստահ ենք, մեզի պէս ինք եւս սրտի կակիծով կանգ առաւ այս իրապէս զարմանալի համեմատութեան դիմաց եւ կրկին աչք մը նետեց ստորագրութեան վրայ, ստուգելու համար, թէ իրապէս ի՞ր ճանչցած Ռաֆայէլ Իշխանեանն է «Գրական աստիճան»ը ստորագրած եւ անոր մէջ վերի տողերուն պէս տողեր քով քովի դրած Ռաֆայէլ Իշխանեանը, թէ Ռաֆայէլ Իշխանեան անունով Հայաստանի մէջ կայ ուրիշ անձնատրուած մը եւս, որ զժող է մամուլին մատնած այսօրուան ուզիէն ու Ստալինի որբերուն պէս կարօտով կը յիշէ մամուլը «կոմունիստական ժամանակաշրջանում»:

Չենք գիտեր, թէ Ռաֆայէլ Իշխանեան ինչպէս կրնայ մոռցած ըլլալ «կոմունիստական ժամանակաշրջանում» լոյս տեսած ի՛րր թէ անլի ազատամիտ մամուլին մէջ իր ուսուցիչներուն, իր եւ իր ուսանողներուն ապրած դառնութիւնները, նուաստութիւնները, մղձաւանջները, որոնք կ'արձանագրուէին իրենց հասցէներուն անհոգի կուսակցութեան մը անհոգի պաշտօնեաներուն արիւնոտ վերաբերումներով: «Կոմունիստական ժամանակաշրջանում» այդ մամուլը կը գտնուէր Արտաշէս Ռակերչեանի, Արտաշէս Կարինեանի, Եղիա Չուբարի, Աղասի Վարդանեանի, Գեորգ Աբովի, Նայիրի Չարեանի, Նորայր Դաբաղեանի, Ազատ Վրտունիի, Համազասպ Մամիկոնեանի, Վարդէս Համազասպեանի, Հմայեակ Սիրասի, Հայկ Գեուլիքեանի, Յարութիւն Մկրտչեան, Հրաչեայ Գրիգորեանի, Ջոզար Հրաչեայի եւ ասոնց պէս արտօնեայ քանի մը ուրիշներու քմահաճ տնօրինումներուն լուծին տակ եւ ամէն ոք գիտէ, որ յիշեալներուն տիրապետութեան տասնամեակներուն անարատ մնացած հոգիներէն ոչ ոք կրցաւ արդար ըլլալ ու արդարութիւն ընել արդարներուն, զրպարտուած, հայածուած, բանտային նուաստութիւններու ենթարկուած, աքսորուած, զնդակահարուած Բակունցին, Թոթովենցին, Չարենցին, անոնց օրով խոշտանգուած միւսներուն եւ անլի ուշ շնչահեղձ եղած նորայայտ տազանդներուն, եւ այս բոլորը ո՛չ միայն ստալինեան երեսնամեայ մոսայիկն,

այլեւ՝ բրեժնեւեան լծացման քանամեակին եւս: «Կոմունիստական ժամանակաշրջանում» կարելի չէ բոլորովին բացառել նոյնիսկ Որոշչեւին կապուած «ձիւնհայեան» վեց-եօթը տարիները, երբ անլուր հալածանքներու ենթարկուեցան մտածող բոլոր տարրերը: Յիշելու համար քանի մը հաստը, տանք անունները ռուս Դուդինցեւին, Պորիս Փաստեռնաքին ու մեր ածուէն միայն իր ուղիէն անցած Ռաչիկ Դաշտենցին, լոյսի կարօտ Պարոյր Սեւակին ու «Աննիճոր»ի Հրանտ Մաթեոսեանին:

Ահաբեկչական այս մթնոլորտին ահերջ մորթին վրայ զգացած ու հարեկիչները մօտէն ճանչցած Ռաֆայել Իշխանեան, «կոմունիստական ժամանակաշրջանում» արտայայտութեան ազատութիւնը աւելի ազատ յայտարարող նոյն անձը, անազատութեան ճիրաններուն մէջ, դեռ «էն զիսէն» անձկութեամբ կը սպասէր ճշմարտութիւնը ըսելու եւ գրելու օրւան:

«Այն ժամանակ մտածում էի՝ միթէ չի՞ գալու մի օր, որպէսզի նշմարտութիւնը աստի ու գրոյի: Փառ՛ Աստու, այդպիսի օր եկաւ...» («Պարուն», 1992, թիւ 4):

Այդպիսի օր եկած (փա՛ռք Աստու) ըլլալուն շնորհիւ, ուրիշներու կարգին, նաեւ Ռաֆայել Իշխանեան կրցաւ հարկադիր լուսթեան մէջ զինք տանջած շարք մը ճշմարտութիւններ ըսել: Ահաւասիկ աւելի քան կէս դար «փակի տակ» մնացած իրազարձութիւններուն վերաբերող իր գրառումներէն պզտիկ նմոշ մը, որ լոյս տեսաւ «Խորհրդային Հայաստան» օրաթերթի 24 Յունիս 1989 թուակիր համարին մէջ:

«Հ. Բեկնագարեանը, որի հետ Բակունցը բարեկամաբար աշխատել էր «Զանգեզուր» կիճոքեմագրի խմբագրման ու նկարահանման առիթով, գրոյի ձեռքակալութիւնից յետոյ տէր դարձաւ ընկերոջ բեմագրին եւ աղաւաղելով այն 37 թ. պահանջների համեմատ, Բակունցի դէմ էլ պարտաւարի հրատաբակեց «Խորհրդային Հայաստան» թերթում (1938, թիւ 140), որտեղ նա իր նախկին բարեկամին անուանում էր «նացիոնալիզմի մոլի գայլ», «դաշնակցական ճիւղ» եւ «նողկայի գրչակ», եւ այլն:

«Նացիոնալիզմի մոլի գայլ», «դաշնակցական ճիւղ», «նողկայի գրչակ» եւ նոյնօրինակ գրպարտութիւնները պահանջուած ու պարտադրուած բաներ էին «կոմունիստական ժամանակաշրջանում» լոյս տեսնող թերթերու կողմէ, ի շարքս որոնց, «աւելի ազատամիտ» համարուած «Սոր-իլրդային Հայաստան»-ի, ու Ռաֆայել Իշխանեան, բիւր բիւրերուն հետ՝ տառապելով հանդերձ այդ մահացու գրպարտութիւններուն ի լուր, «կոմունիստական ժամանակաշրջանում» համարեա՛ չզգացուց իր աղաղակը, հակառակ անոր, որ «կոմունիստական ժամանակաշրջանում» ինք արդէն այր էր հասուն ու մամուլը, միշտ ըստ իրեն, աւելի ազատամիտ էր: Ազատութեան ձայն հնչեցնելու հնարաւորութիւն ունեցաւ գորքաչովեան հրապարակայնութեան երրորդ տարիէն սկսեալ, յատկապէս երբ վերջ դրուեցաւ «կոմունիստական ժամանակաշրջանին»:

«Փառք Աստու այդպիսի օր եկաւ» կ'ըսէ Ռաֆայել Իշխանեան տեղ մը, եկած այդպիսի օրուան ազատութիւնը կը վայելէ, լեզու կու տայ «կոմունիստական ժամանակաշրջանում» զինք տանջած «լուռ ցաւերուն», բայց օրը իրիկուն չեղած, այս անգամ չես գիտեր որ հովէն տարուած՝ լռելեայն փառք կու տայ «կոմունիստական ժամանակաշրջանում» հրա-

տարակուսած թերթերուն ազատամտութեան, բարձրադասակ դժգոհելով նոր ժամանակներէն, երբ, ըստ իրեն, «կուսակցականութիւնը խեղդում է մեր մամուլը, դարձնում սոցոյն, յաճախ՝ հայտնյաբան»:

Հայրենական մաքուր ապրումները բնական համարող, Մեծաքանչիյն մաքրութիւնը ամէն բանէ վեր նկատող, ցեղային սրբութիւնները վերաշնչաւորող ու մահացեալ կամ կենդանի արժանաւորները արժանաւորապէս մեծարող այսօրուսն մամուլը կուսակցականութեամբ խեղդուած է արդեօք, թէ այդպիսին էր նուիրական ամէն գագացում ու արժէք սրբապղծած «կոմունիստական ժամանակաշրջանում» լոյս տեսած մամուլը, ուր Բակունցի պէս ազնուարիւն ու մեծաքանքար ծնունդները «նացիոտալիզմի մոլի գայլ», «քաշնակցական ճիւղ» եւ «նողկալի գրչակ» յորջորջող յերիւրանքները այնքան մեծ յարդ վայելեցին այնքան երկար տարիներու վրայ:

Պատահած է, որ կուսակցութիւնը փասէ, իրապէ՛ս փասած է անգամ մը, անգամ ձեւազեղծած է հայ հողին ու դժուարին բուծումի մը ենթակայ դարձուցած է հայրենի մեր ժողովուրդին զգալի մէկ տոկոսին էութիւնն ու մտայնութիւնը եւ ամէն ոք կը ճանչնայ կուսակցականութիւնը այդ ծայրայեղութեան հասցուցած կուսակցութիւնը, ոեւէ մէկէն աւելի Ռաֆայէլ Իշխանեան ի՛նք պէտք է ճանչցած ըլլայ այդ կուսակցութիւնը,— Համայնափար կուսակցութիւնը, որ երբ իշխանութեան տիրացաւ, ամէն ինչ ենթարկեց նեղմտութեան իր հարթիչ զանին, այլասերելով ամէն սրբութիւն, նոյնիսկ հայրենասիրութիւնը, մինչեւ անգամ գրականութիւնը:

Կուսակցականութիւնը փթթեցաւ ու խորշանք ստեղծեց առաւելագոյն չափով մը «կոմունիստական ժամանակաշրջանում» եւ կոմունիստներու օրով, երբ անճանազորժողութեամբ մտնեցան միւս կուսակցութիւններուն ու զազափարական տարրեր հռանքներուն, առաջուր ոչնչացնելով մտածումի ու ապրումի տարրերիչ բոլոր գրեւորումները: Ի դէմս կուսակցականութեան, Ռաֆայէլ Իշխանեան հաւանաբար կը ճանչնայ արիւնտոտ այդ համակարգը, բայց ճիշդ չէ իր ճանչցած այդ միակ օրինակին վրայ ընդհանրացումներ ընել ու արժեւորել վարքագիծը միւս կուսակցութիւններուն, որոնց միջնորոտին ու լայնախոհութեան գօտիներուն տակ համազգային արժէքներ խմորուեցան ու կարկառեցան:

Այս կողմնակի անդրադարձէն ետք, դառնանք ու ըսենք, որ կուսակցականութիւնը չի կրնար խեղդել մամուլը, չէ կրցած խեղդել, եթէ իրաւակարգը բազմակուսակցական է: Այդ պարագային, եթէ մամուլի մէկ անդամը մերժէ ընթացք տալ բովանդակութիւն ունեցող գրութեան մը, միւսը կրնայ հիւրընկալել զայն: Այդ պատճառով է կամ զլիսաւոր պատճառներէն մէկը այդ է, որ մարդիկ տարրեր կուսակցութիւններու գոյութիւնն ու գործունէութեան ազատութիւնը հանգուրժող պետական համակարգի մը կը ձգտին եւ այդ մակարդակին արդէն հասած ուրիշներ կը գուրգուրան լայնախոհութեան խորհրդանիշ իրենց նուսճած այդ զանձին վրայ:

Ամբողջ եօթանասուն տարի տազնապեցանք, տառապեցանք, պահանջեցինք, պայքարեցանք, սպասեցինք ու յուսացինք, որպէսզի մեր հայրենիքը եւս օտոտի նման բախտով մը, ու հիմա, որ տարրեր կուսակ-

ցութիւններ ու տարբեր մտածումներ հանդուրժող ազատութիւն մը նուաճած ենք, «կոմունիստական ժամանակաշրջանում» տիրած անհանդուրժողութեան հետեւանքով ամէնէն աւելի տառապած ու արտայայտութեան ազատութեան անձկօրէն սպասած մեր մտաւորականներէն մէկը ահաւասիկ, Ռաֆայէլ Իշխանեան, մեզի համար բոլորովին անըմբռնելի տրամաբանութեամբ, դէմ կ'արտայայտուի ազատութեան շունչ քայել սկսած այսօրուան մամուլին ու աւելի ազատամիտ կը յորջորջէ այն, որ լոյս կը տեսնէր «աշխարհի ամենաարիւնոտ ու ամենաբիրտ բռնապետութեան» մուրճ ու մանզաղին տակ, «կոմունիստական ժամանակաշրջանում»...



«Գրական բերք»ին մէջ լոյս տեսած հարցազրոյցի ընթացքին մեր յայտնած կարծիքը մատնանշելով ու մեկնաբանելով չէ բաւարարուած Ռաֆայէլ Իշխանեան, այլ աւելի ծանրացնելու համար հաւանաբար Աւետիք Իսահակեանի առիթով գործած մեր մեղքերը, շուրջ երեսուն տարի ետ զացած է ու բացած «Բազմ»ը (1964, թիւ 8) եւ «Հայաստանի հանրապետութիւն» թերթի ընթերցողին պարզած հոն նշուած ««Վարպետ»-ին մէկ Աոր վարպետութիւնը», աւելի պարզ՝ Քրանսացի Ժան Ռիչպէի եւ Աւետիք Իսահակեանի փոխյարաբերութիւնը, որ, ըստ «Բազմ»ի՝ երկրորդ գործը, մեզմ' ասած, առաջինին պատճենահանումը եղած է, իսկ ըստ Ռաֆայէլ Իշխանեանի ուշացած մեկնաբանութեան՝ շրջիկ դիպաշարները օգտագործելու ընդունուած աւանդութեան մը բերումը:

«Տարբեր ազգերի մէջ շրջող այս դիպաշարը, — կ'ըսէ Ռաֆայէլ Իշխանեան, — պէտք է, որ հայ ժողովրդի կամ Արա որեւէ հատուածի մէջ եւս պատմուած լիճի»:

«Պէտք է, որ...»:

Բայց կարելի՞ է միթէ թէական տուեալներով գրական այսպիսի ծանրակշիռ հարցեր լուծել:

Պնդողներ կան, որ անիկա ունի միջնադարեան ծագում մը, բայց անոնք, այդ պնդողները միշտ մութին մէջ կը ձգեն անոր ծնունդ տուած մայր ժողովուրդը, որով այնքան ատեն, որ տիրող անորոշութիւնը չէ փարատած, տուեալ աւանդավէպին չափածոյ ազբիւրը կը շարունակէ մնալ Քրանսացի բանաստեղծին օգտագործումը:

Ժան Ռիչպէի «Գնդօ»ին հէնքը կազմած ու Աւետիք Իսահակեանի օրինակած այդ դիպաշարը երբեք ու բնա՛ւ չի նմանիր ազգէ ազգ շրջող առակային հերոսներուն, իբրեւ շրջիկ դիպաշար դիրին հորովուող ապիւծներուն, գայլերուն, աղուէսներուն, խոզերուն ու աւանկներուն, դանդաղաշարժ կրիաներուն ու արագավազ միւսներուն կապուած հեքիաթնեղուն, ոչ ալ գրականութեան պատմութեան շատ ծանօթ Շէքսպիրի ու

Կեօթեի օգտագործած գրական ու պատմական աղբիւրներուն, որոնց թրուումը, Ռաֆայէլ Իշխանեանէն աւելի քան քսոորդ դար առաջ, ու նոյնպէս աւելորդ յոգնութեամբ՝ կատարած էր ծածկանունով հանդէս եկած մեր նուիրապետական ակնարկներէն առաջինին զահակալը: Գրական կամ պատմական ծանօթ աղբիւրներու վրայ ստեղծագործական բողբոջին նոր երևույթներ առաջացնելու հարցը ուրիշ խնդիր է, եւ բողբոջին ուրիշ՝ նոյն աղբիւրը մէկ լեզուէն միւր փոխադրելու խաղարկութիւնը:

Եւքսիլիոն ու Կեօթէն պահ մը հանգիստ ձգենք՝ իրենց անհանգիստ Օթեյլոններով ու Ծառատներով եւ դառնանք մեր փոքր ածուին, ուր կանգ առնելու ու շրջիկ դիպաշարներու իր տեսութիւնը մեր պարտէզէն վերցուած օրինակներով պարզելու փոխարէն, չենք զիտեր ինչու, ու ճիշդ էջմիրածնայ զահակալին պէս, այդքան հեռուները գացած է Ռաֆայէլ Իշխանեան: Մանրամասնութիւններու մէջ խրի կամ հանրածանօթը կրկին պիտի ըլլար, այսուհանդերձ ըսենք զարծեալ, որ մեր մէջ եւս ոչ մէկ ատեն եւ ոչ մէկուն կողմէ արգիլուած է պատմական դրուագ մը, աւանդական պատում մը, հեքիաթ մը կամ զրոյց մը իւրայատուկ մշակումի ենթարկելու ազատութիւնը, ու միջազգային առիւծներուն ու միւսներուն կարգին՝ մեր Քաջ Նազարներն ու Տորք Անգեղները, մեր Արա Գեղեցիկն ու մերը ըլլալու յախուռն տենդով բռնկած «չամբռնաշուրթ» Ծամիրամները քիչ թիւով մտաւորականներու սնունդ չեն հայթայթած ու, փոխադարձաբար՝ քիչ սնունդ չեն ստացած զիրենք վերստեղծած տաղանդներէն:

Յիշենք տարբեր մէկ-երկու եւ դարձեալ ծանօթ յօրինումներ, զար մը առաջ կառուցուած Բաֆֆիի «Աամուրք» եւ «Աամուրէն կէս դար ետք յարգարուած Կոստան Չարեանի «Տատրագումի հարսը», իրենց յայտնի արբիւրներով, առաջինը Հայոց պատմութեան էջերուն փոռած, երկրորդը՝ Հայ Յնդագիտական պատմութեան, Ռուբէնի չորրորդ հատորին մէջ: Բայց աղբիւրները ո՛ւր, եւ ստացուած ծաւալային ու որակական արդիւնքները ո՛ւր:

Ըսուեցաւ արդէն, որ մարդիկ իրենք իրենց կը ներեն նոյն դիպաշարը օգտագործել, երբ ծանօթին դիմաց անծանօթին տեսիլքը կը խռովէ դիրենք ու իրենց յայտնագործութիւններով նոր երևույթի մը առջեւ կը զնեն ընթերցողը կամ ունկնդիրը եւ ոչ թէ արդէն եղածը նոյն յաջողականութեամբ մէկ լեզուէն միւր կը փոխադրեն:

Այս բոյորէն առաջ ու ետք, պիտի բաւէր սակայն յիշել պարզագոյն օրինակը, առնել «Աստուցի Դաւիթ»ը, որուն զարնուած դէմքերը թիւով քիչ չեն: Այսպէս՝

«Աստուցի Դաւիթ» մը ունի Յովհաննէս Թումանեան:

Նդիշէ Չարենցն ալ ունի «Աստուցի Դաւիթ» մը:

Նիկողոս Մարաֆեանը՝ նոյնպէս:

Յակոբ Օշականը՝ իր կարգին:

Մշակում մը ունի նաեւ Կարօ Սասունի:

Բայց մենք կամ ռեւէ մէկը օր մը օրանց մտքէն չէ անցուցած, թէ յիշեալ հինգ «Աստուցի Դաւիթ»ներէն մէկը պատճենն է միւսին: Որովհետեւ անոնց հերոսները, գործողութեան վայրը, բախումներն ու փոխա-

փայտօթիները նոյնը ըլլալով հանդերձ, իւրաքանչիւրը կը կրէ զինք մշակած հեղինակին հեղինակային կնիքը՝ լեզուի, ոճի, պատկերակերտութեան ու մասնաւորապէս կառուցումի բացայայտ իւրայատկութիւններով:

Նոյնը չէ սակայն փոխյարաբերութիւնը ժամ Ռիչարդի «Գեղօձ»ին եւ Աւետիք Իսահակեանի «Մօր սիրտը» նոտանւորին, որոնց ամփոփումը կատարելէ ետք, Ռաֆայէլ Իշխանեան կը յարէ.

«Թող ըմբերցողը որոշի՝ շրջիկ դիպաշարի այս երկու մշակումներից ըստ բովանդակութեան ո՞րն է գեղարուեստորէն աւելի յարողւած: Տողերիս հեղինակը գերապատուութիւնը տայիս է Իսահակեանի մշակած տարբերակին»:

Բայց հարցը «գեղարուեստորէն աւելի յաջողուած»ին կամ նուազ յաջողուածին չի վերաբերիր: Կը վերաբերի յղացումին: Մանաւանդ կառուցումին: Ու հոգ այդ արժանիքները կը պատկանին ֆրանսացիին: Կան թարգմանութիւններ, որոնք կը գերազանցեն իրենց բնագիրները: Բայց թարգմանութիւնէն առաջ կամ զուգահեռաբար պարկեշտութիւնը կը պահանջէ չմոռնալ բնագիրը եւ բնագիրին հեղինակը:

Զուր է շրջիկ դիպաշարներու առասպելներով արդարացումներ ճարել Իսահակեանի «Մօր սիրտը»եան արարքին: Երջիկ դիպաշարի չբնականք չկայ հոս, կայ պարզապէս ժամ Ռիչարդի «Գեղօձ»ը եւ կայ «Գեղօձ»ին գիպաշարը, որ «Վարպետին» վարպետութեամբ փոխադրուած է «Մօր սիրտը» նոտանւորին մէջ:

★

Իր տեսակէտները, սխալ կամ ճիշդ, շեշտակի ըսելու փնտռուած վարկի մը տէր մտաւորական է Ռաֆայէլ Իշխանեան ընթերցողին մտքին մէջ ու փրատերը «խնամքով թաքցնելու» խոտոր եղանակներու գոնէ՛ մենք չենք հանդիպած իր անունին դիմաց:

Հոս նոյնը չէ պարագան:

Պարզենք:

Սօսելով շուրջ երեսուն տարի առաջ «Բազմ»ի լոյս ընծայած «Վարպետ»իմ մէկ նոր վարպետութիւնը՝ անուն նշմարին մասին, կը խորհրդածէ.

«ՎԱՐՊԵՏ քառը չակերտներում է, ուզում է ասել, որ Իսահակեանը չակերտատր վարպետ է: Իսկ ո՞րն է նրա նոր վարպետութիւնը, նոր բանագորութիւնը պատասխանում է պրո. Սմապեամբ: Նոր, նշանակում է, որ եղել է նաև նախկին բանագորութիւն»:

Այո, ընդ որ, նշանակում է, որ եղել է նաև նախկին բանագորութիւն»:

Ինչպէս տեսանք, Ռաֆայէլ Իշխանեան շատ ծանրացած է նորին վրայ, բայց գիտնալով հանդերձ, որ ընդ որ, նշանակում է, որ եղել է նաև

ՄԱՅՐԵՆԻ ԱԶԲԸ

գրեց՝ ձ. Ն. Վոկոլ

Երիտասարդ մը ուզեւոր երկրէ օտար
Յուպ ի ձեռքն կը դառնայ խընդապատառ.
Մագեր փոշոտ, դէմքն ալ այրած է արեւէ -
Ո՛վ նախ արդեօք պիտ' ճանչնայ ու բարեւէ:

Այսպէս բաղա՛մ կը մտնէ ան հին դուռնէն՝ ուր
Ճիշդ փողոցին դէմ մաքսատրն արդ կը յենուր.
Ու մաքսատրն իր բարեկամն էր այնքան սերտ,
Բաժանակից եղեր էին երկուքը մերք:

Այլ չճանչցաւ զինքն բարեկամը մաքսատր,
Քանզի արեւն խիստ շատ այրած էր դէմքն անոր.
Բարեւ մը պարզ - ու կ'արձակէ մի խոր հառաչ,
Կը թօթափէ ոտքին փոշին, կ'անցնի յառաջ:

Իր սիրտինն պատուհանէն դիտէ հիմա.
«Մաղկատի՛ կոյս, տե՛նչայի՛դ իմ հոգեհրմայ»:
Տե՛ս, չըճանչնար օրիորդն ալ զինքն արդարեւ,
Զի դէմքն անոր խիստ շատ այրած է արդարեւ:

Փողոցն ի վար կ'երթայ յառաջ ա՛լ այն ատեն,
Ու կը կախով արցունք մ'անոր այրած այտէն,
Եկեղեցոյ ճամբէն կ'իջնէ իր մայրիկն արդ -
Լսկ «Բարեւ Բե՛գ» կ'ըսէ անոր երիտասարդն:

Բայց տե՛ս - մայրիկն խընդութենէն կը հեծկլլտայ.
«Ա՛, որքեակ իմ» - կ'իյնայ անոր կործմիմ վրայ.
Իրօք արեւն խիստ շատ փոխած էր դէմքին գոյն,
Մայրենի աչքն սակայն ճանչցաւ որդեակն իսկոյն:

թարգմ. Գ. Յ. ԿԻՒԼԵԱՆ

(«Լոյս» ամսագիր, Պոսթըն, 1907, թիւ 11)

*Նախկին քանագրութիւն», նախկինն մասին բառ չէ արտասանած, հա-
կառակ անոր, որ նախկինը կը գտնուի նորը մատնանշած «Բագին»ի նոյն
թիւին մէջ, նորէն ուղիղ մէկ էջ անդին:*

Ինչո՛ւ:

*Երեւի անոր ճամար, որ նոյնքան պարզ չէ թուացած իրեն Աւետիք
Բսահակեանը անյարմար կացութենէն դուրս բերելու ճգնութիւնը, զոր
այլուր կարծած է պսակել կանխակալ տրամադրութիւններ շարագրելու
մտքով: Եւ որպէսզի այս անորոշութենէն դուրս գանք եւ նոր ու նորագոյն*

ՊԱՆԴՈՒԽՏ ՈՐԴԻՆ

որդեգրեց՝ ԱՒԵՏԻՔ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Դարդը՝ սրտիս, աղփատ ու խեղճ, ցուպը ձեռիս, գլխիկըր.
Շա՛տ տարիներ պանդուխտ եղած՝ նորէն դարձայ հայրենիք.
Կեանքի բեռով մէջքս ծղուած, միտքս շուար ու մոլոր,
Եօքը սարէն, եօքը ծովէն՝ դարձայ նորէն հայրենիք:

Իմ հայրենի գեղի համդում տեսայ մանկուք ընկերիս -
«Ախ, ընկեր իմ», կարօտ սրտով նրա առաջ վագեցի,
Ասի. - «Բարո՛վ, անգին ընկե՛ր, չե՛ս մանաչում դու ինձի».
-Ախրր ես շա՛տ փոխուեր էի... չընամաչեց նա ինձի:

Ցուպը ձեռիս՝ գեղը մտայ, անցայ եարիս տան մամբով.
Տեսայ եարբս վարդը ձեռիմ՝ մեմակ կանգնած դըրամ մօտ.
Ասի. - «Քուրի՛կ, ազիզ տեսիլդ արժանացայ ես բարով...»
Նա էլ ինձի չընամաչեց... - Աղփատ էի ու փոշուս...

Դարդը սրտիս հասայ մեր տուն, տեսայ ձերուկ, խեղճ մօրս.
Ասի. - «Նամի՛, մամբորդ մարդ եմ, գիշերս ինձ իկր կ'ընդունե՛ս»:
Ա՛խ, մէրիկ ջան... վզովս ընկաւ, սրտիճ գրկեց ու լացեց.
«Ա՛խ, բալա՛ ջան, դարիք բալա՛, էդ դո՛ւն ես...»:

1902, Շուշի

*ընթերցողներուն պարզ դառնայ ամէն ինչ, ստիպուած ենք կրկին անգամ
ու դարձեալ ահաճութեամբ արտագրել Ռաֆայէլ Իշխանեանի, տեղին է
ըսել այս անգամ, «խնամքով թաքցրած» նախկինը, գիրմանացի Ճ. Ն.
Վոկրլի «Մայրենի աչքը» եւ անոր աչքով քայլ առ քայլ առաջնորդուած
Աւետիք Իսահակեանի «Պանդուխտ որդին»:*

*Կը յուսանք չըջիկ գիպաշարի առասպելներ չեն հիւսուիր հոս. եթէ
հնարաւոր ըլլար՝ կը հիւսուէին արդէն: Այս մէկուն գիմաց Ռաֆայէլ Իշ-
խանեանի պահպանած լուսթիւնը ուրիշ բացատրութիւն չունի: Ենորհա-*

կալ ըլլանք իրեն սակայն, որ քննարկուած նիւթին կապակցութեամբ նոր
յայտնութիւններ ըրած է ինք: Ձեռնք գիտեր, գիտցանք, որ՝

«Իստիական ունի ման ալ գործեր, որոնց դիպաշարը տարբեր աղբիւր-
ներ ունեն, բայց բոլոր դէպքերում իստիականական հանճարի կ՛որհն են
ստացել»:

Այսպէս կը գրէ Ռաֆայէլ Իշխանեան, ապա կը յիշէ Թաղմորի աւան-
դութեան հետ առնչուող ու ցարդ իբրեւ զուտ իսահակեանական յօր-
նում ընթերցողին ներկայացուած «Յանրձակամ սէր»ը, կ'արտագրէ անոր
քսանհինգ տուներէն առաջին էրէքը ու կը ձեւակերպէ իր մտածումը
թարգմանական գրականութեան մասին:

«Նոյնիսկ սոսկական բարգամութիւնները, եթէ որակ մեծ արուեստով
են արուած, իմքնուրոյն ստեղծագործութեան արժէք են ստանում եւ լիմու
տունակ ազգային գրականութեան զանգեղիք»:

Ժիշդ:

Արուեստով կատարուած թարգմանութեանց արժէքը, ինչ խօսք, մեծ
եղած է բոլոր ազգերուն մօտ ու շատերէն շատ առաջ մենք՝ հայերու զգա-
ցած ենք թարգմանութեանց զանաւորն նշանակութիւնը: Նոյնիսկ տօն
նշանակած ենք արուեստով կատարուած թարգմանութեանց ի փոխու:
Բայց թարգմանութիւնը թարգմանութիւն համարած ենք միշտ ու բնաւ
մտացութեան չենք տուած թարգմանուած գործերուն աղբիւրները կամ
անոնց հեղինակները: Սակայն հարցը թարգմանութեան ու թարգման-
ած կտորներուն վրայ թարգմանիչներուն դրած «հանճարի կնիք»ին չի
վերաբերիր, գերազանցապէս կը վերաբերի հեղինակին ու թարգմանիչին
փոխարարութեան, ուր թարգմանական լաւ ստացուած արդիւնքը,
ինչպէս ըսուեցաւ քիչ առաջ, բնաւ չի կրնար մտացութեան ծոցը նետել
հեղինակը ու հեղինակային պատուանշաններով պնակազարդել թարգմա-
նիւրը:

Տանք աւելի ընդհանրացած օրինակ մը:

Յրանաական գրականութեան մէջ օրին յիշուած ու այսօր բոլորովին
մոռցուած է Մկրտիչ Պէշիկմաշեանի կողմէ «թարգմանութեան» հայացուած
եւ նահապետ Ռուսինեանի կողմէ գրեթէ վերստեղծուած Յրետերիք
Պէարի «Բժ Նորմամտիս» տաղը, որ իբրեւ «Կիլիկիա» կը շնչէ մեր մէջ ու
կ'երգուի մեր հոգիէն ժայթքած հարազատ բխումի մը պէս: Այս առաւե-
լութիւնը կը նշանակէ՝ սակայն, որ պիտի մոռնանք Պէարը եւ առանց
որեւէ նշումի վերապատուութեան նիշեր տանք թարգմանական արդիւն-
քին:

Թարգմանական արուեստը կայ ու կայ, ու քիչ անգամ չէ պատա-
հած, որ թարգմանութիւն մը աւելի հնչողութիւն ձեռք բերէ, քան բնագի-
րը, բայց բնագիրին երկրորդական նշանակութիւն տալու փորձութեան
պէտք չէ մատնուիլ, որովհետեւ եթէ թարգմանութիւնը շնորհ մը կ'են-
թաղէ, շնորհէ մը վեր օժտուածութեան մը արդիւնք է միւսը, յղացումը,
նոր աշխարհի մը տեսիլքը, յայտնագործութեան մը խոտիքը:

Վերադառնալով «Պանդուխտ որդին» ոտանաւորին, պիտի ըսենք, որ
անոր յղացումը բնաւ Իսահակեանին չի պատկանիր, իսկ եթէ զայն պի-
տի ընդունիլք իբրեւ թարգմանութիւն, անհրաժեշտ է յիշել անոր գիպա-
շարը յղացած հեղինակին անունը, այլապէս, նման արարքներ թոյլ տը-

լած մարդոց կու տան այն անունը, որ «Բագին»ին մէջ տրուած է Իսա-
Տակեանին՝ «Մօր սիրտը» եւ «Պանդուխտ որդին» խորագրուած ոտանա-
ւորներուն աւիթով...

★

Նախորդ էջերուն պարզուած ոչ-հիմնաւոր մտորումներուն յար եւ
նման, եւ նոյն հասցեակով, երկու տարի առաջ Ռաֆայէլ Իշխանեան
հրատարակ հանեց ուրիշ տեսութիւն մը, որ ձեռով մը կապ ունի Աւետիք
Իսահակեանին հետ դարձեալ եւ մեկնաբանական իր անողորմեանմբ
չենք խորհիր, որ կը գտնուի չափաւորութեան սահմաններուն մէջ:

Իր հիմնած ու խմբագրած «Լուստորիչ» շաբաթաթերթին մէջ, ան ըս-
տորագրեց «Արդարամանճ, թէ՛ ապաշխարեմ» խորագրով եօթը սինակ-
նոց գրութիւն մը, որ հայաստանեան նախկին ստալիներգակներուն հա-
մառու մարզահամարը կազմելէ ետք, յօդուածին մեկնաբանական բա-
ժինին մէջ կը գրէ.

«Ումամբ գովաբանում եմ 1936ից մինչեւ 1954 թուականներն ընկած ժա-
մանակաշրջանի «Հայ պոեզիան»: Զարմանալի է, երբ հայ բանաստեղծները
համատարած փառաբանում էին աշխարհի ամենասարիմոտ ու ամենաբիրտ
բռնապետութիւնն ու բռնապետիւն, կեղծում, Բճում, դրանից յետոյ ի՞նչ լաւ
բան կարելի է տեսնել այդ ոլորտում: Ենդրեակիները պղծում էին իրենց
շնորհը, անշնորհները իրենց տարերփի մէջ էին» («Լուստորիչ», 1991, թիւ
2):

Ընդգծենք.

«Ենդրեակիները պղծում էին իրենց շնորհը, անշնորհները իրենց տարեր-
փի մէջ էին»:

Անշնորհները՝ իրենց կարգին, բայց արդա՞ր է արդեօք շնորհակենե-
րուն հասցէին բանաձեւուած այս մեղադրանքը:

Ռաֆայէլ Իշխանեան իր թերթին նոյն գրութեան մէջ, ու ճիշդ երկու
սինակ առաջ, ստալիներգակներու շարքին չէ մոռցած յիշել նաեւ Աւե-
տիք Իսահակեանը եւ մատնանշած է անոր սարքած «Ստալին»էն երկու
տող, յառաջաբանով.

«Ստալինին փառաբանելու գայթակղութիւնից կամ շփառաբանելու վախից
գերծ չի մնացել նաեւ մեծ բանաստեղծը, որ պէտք է լաւ իմացած լինի, թէ
ով է իր փառաբանալը: Բայց գրել է:

Ստեղծագործ խօսքդ հզօր եւ անշեղ

Ողջ աշխարհի սրտում կրակ է վառել:

Ռաֆայէլ Իշխանեան հարկաւ լաւ գիտէր, թէ ինչ պայմաններու մէջ
եւ ինչ հանգամանքներու ճշումով Աւետիք Իսահակեան գրեց խնդրոյ ա-
ռարկայ ոտանաւորը, բայց հակառակ ստոր, զայն գասած է շնորհալի-
ներու այն դժբախտ շարքին, որոնք «պղծում էին իրենց շնորհը»:

«Սովետական գրականություն» ամսագիրէն արտագրելով «Բազիմ»-ի մէջ հեղ մը ամփոփուած է Ստեփան Զօրեանի կողմէ գրուած Իսահակեանի «Ստալին» բանաստեղծութեան պատմութիւնը:

Կրկնենք.

«Եւ Իսահակեան գրեց այդ օրան: Եւ դրանից թեքուցան, հանգստացան Հայաստանի ղեկավարները, որ կը վերջանայ վերջապէս Իսահակեանի ճկատմամբ եղած կասկածը, վտանգը: Նրանց երեւի շարունակ յիշեցնում էին, թէ ձեզ մօտ կայ մի այսպիսի մարդ, որ այսօր ժամանակ եկել է արտասահմանից եւ... դեռ չի՛ արտայայտում...»

«Վերեւում կային յատուկ մարդիկ, որ հրահանգում, տարածում ու պարտադրում էին ամբողջ Սովետական Միութեան մէջ Ստալինի արհեստական պաշտամունքը: Եւ ուզում էին, որ այդ պաշտամունքը արտայայտեն առնուաթի մարդիկ»:

«—Երկրում շատերը տուժեցիմ՝ ախորոցեցին, բանտարկուեցին ու սպանւեցին, — ասաց մի օր ինձ, — այս ոտանաւորն էլ եղաւ իմ ուժս» (1962, թիւ 5):

Ռաֆայել Իշխանեան գիտէր, չէր կրնար անձանօթ մնացած ըլլար Իսահակեանի պարած այդ սահմակեցուցիչ հոգեվիճակին, 1938ի «մահախուճապ սերունդներին» գլխուն առկախ «արեգնացեալ կացիւն»-ին, սակայն քիչ մը զարմանալի տնկթուփեամբ, հայրենի հերկի դեռ մնացած քանի մը օժտեալ եւ անօժիտ գրիչները իրար խառնած՝ կը վերարծարծէ անոնց ստալինեան մեղքերը, երեք պատճառ թուելով մարդակեր զազանին զովք հիւսած քերթողներուն հոգեբանական մղումներուն.

«Երեք դէպքն էլ անբարոյականութիւն է. երէ տեսնելով իրենց շրջապատի կեանքը եւ Ստալինի գործերը, հաւատացել են, որ Ստալինը գերհանճար է, արեւ, բարի եւ նման բաներ, Նշանակում է տեսաւ էին եւ ազգի բանաստեղծ լինելու իխաւում չունէին: Երէ իմացել են, թէ Ստալինն ով է եւ կեդձեւով փառաբանել են, մեծ անբարոյականութիւն են արել: Երէ վախից են փառաբանել, զարծեալ մեծ անբարոյականութիւն են արել, Բանի որ կարող էին պարզապէս լռել, մի կողմ քաշուել»:

Մերկ իրականութիւնը այն է, որ շատերուն պէս Աւետիք Իսահակեան ինք եւս չկրցաւ լռել եւ չկրցաւ մէկ կողմ քաշուիլ, այլ շափածոյ սողերով փառաբանեց Ստալինը:

Արդ, ըստ Ռաֆայել Իշխանեանի, Աւետիք Իսահակեանը ո՞ր խումբին մէջ պէտք է դասել:

Տհասներո՞ւ, որոնք «ազգի բանաստեղծ լինելու իրաւունք չունէին»:

Կեղծաւորներո՞ւ, որոնք «մեծ անբարոյականութիւն են արել», թէ՞

Վախկոտներու, որոնք «զարձեալ մեծ անբարոյականութիւն են արել»:

Պատասխաններէն եւ ոչ մէկը կրնայ թեթեւցնել Ռաֆայել Իշխանեանի ծանրակշիռ ամբաստանութիւնը, որ ձեւով մը կը տարածուի 1936-54 տարիներուն Հայաստանի մէջ շնչած գրեթէ բոլոր բանաստեղծներուն վրայ:

Ի հարկէ, այս մօտեցումը մերը չէ, որովհետեւ եթէ ոմանք, կիսատաղանդներն ու արհեստավարժ անտաղանդները իրենց անշնորհութիւնը ստալինականացնելու փութկոտութեամբ ուզուած բաները յանգի ու չափի

տակ առնելով հանդէս եկան, փառաբանական երգերով մրցանակներ կորզեցին, հանգստաւէտ պայմաններու տիրացան, ծափահարուեցան ու փքացան, միւսները «Կարմիր սարսափը» հեռացնելու ստիպումով գրիչ շարժեցին, ինչպէս եղաւ պարագան իրապէս մեծատաղանջ Չարենցի («Երեմ Բայբաբաց»), Բակունցի («Նամակ Ամատումուն»), արչէն վաստակած Իսահակեանի («Մեծ Ստալին») եւ քանի մը ուրիշ արժանատիներու, որոնք ո՛չ միայն ճիւղերու ճիւղերն էին, այլև ստիպուեցան անոր դիեցուցած փոքր ներոններէն Ամատունիին, Մզրուսիին ու Կիրպոտիին անգամ ուղերձներ խմբագրել ու գովք հիւսել:

Ո՛չ, կարելի չէ ստալինեան մեղքերու համար Հայաստանի գրականութեան յիշեալ դեմքերը խղճի մտօք տհաս, կեղծաւոր կամ վախկոտ համարել ու զրկել զանոնք «ազգի բանաստեղծ լինելու իրաւունքէն»:

Մենք այս հարցին անդրադարձանք ըսելու համար մէկ բան, ա՛յն, որ Ռաֆայէլ Իշխանեան Իսահակեանի կամայ զործած մեղքը (մեր մատանշածը) քանակի կը համարէ, իսկ ակամայ զործածը (իր մատանշածը) անքանակի:

Նման հարցերու առիթով օրուան տպագրութեան տակ առաջնորդուելու ոճը փնտրուած արժանիք մը չէ սակայն:

★

Իր «Գրական աստիճան»ին մէջ վերստին անդրադառնալով համեմատական կարգով յայտնած մեր համարումին, փրոֆեսէօր Ռաֆայէլ Իշխանեան կը գրէ.

«Նախ ասեմ, որ Իսահակեանը հայ ազգային մեծ բանաստեղծ է Ոսե Թրանով, որ ոչ Չարենց է, ոչ Վարուժան, ոչ Մեծարեց, այլ հէնց Իսահակեան, եզակի իր բանաստեղծական մտածողութեամբ, իՍՍՐՍօրինակ ռճով, իւրայատուկ զաղափարախօսութեամբ»:

Մենք չենք յիշեր մտատրական մը, որ բանաստեղծ համարած ըլլայ մէկը, որ մտածողութեամբ եւ արտայայտչական բարեմասնութիւններով ինքն իրեն նմանած չըլլայ, բայց ինքն իրեն նմանիլը տակաւին չէ նշանակեր աննմանօրէն մեծ ըլլալ եւ ունենալ մեծութեան համբաւ շահած մեծերուն հասակը: Վարուժանի, Մեծարեցի ու Չարենցի հետ Իսահակեանը բաղդատելու ատենն՝ անոնց սոսկական անունները հաշուի չէին առնուած հարկաւ, այլ նկատի առնուած էին, ըսենք խոտացեալ բառով մը՝ բանաստեղծական անոնց աշխարհները, եւ տարբեր աշխարհներու ձգած տարբեր տպագրութիւններուն հիմամբ կազմուած էր բանաձեւուած նախասիրութիւնը:

Լեռ է Արարատը եւ լեռ է նոյնպէս Արագածը: Եւ իւրաքանչիւրը, բընական է, կը նմանի ինքն իրեն, իր կայուն ու յարափոփոխ արտայայտութիւններով, բայց տարբեր պատկերներ կ'ուրուագծուին մարդոց մտքերուն, երբ արտասանեն մէկուն կամ միւսին անունը, բարձրութեան

տարբեր չափեր: Մէկուն հասակը երեւակայութեանց մէջ կը սլանայ աւելի վեր, միւսին հասակը նոյն բարձրունքին չի հասնիր: Մենք այս առումով յուզած էինք նախասիրութեան հարցը: Երեւի համոզիչ չէր մեր կատարած համեմատութիւնը:

★

Իր «Գրական ասուլիս»ին վերջին սիւնակին մէջ, Ռաֆայէլ Իշխանեան, տարբեր պատճառով, կը յիշէ Չարենցի թումանեանական համարումներէն մէկը.

«Կայ Մեծարեց, կայ Տէրեան, և բազում ուրիշ բանաստեղծներ կան, բայց Թումանեանն է անհաս Արարտը մեր Ոոր Բերթութեամբ»:

«Կոմունիստական ժամանակաշրջանում» քիչ մը նուազ հեղձուցիչ պահու մը Չարենցի սէրը, ուրեմն, բորբոք կը մնար Մեծարեցի ու Տէրեանի նկատմամբ ու նոյնքան բուխ չէր Իսահակեանի հանդէպ, որ դասուած էր «բազում ուրիշ բանաստեղծներ»ու շարքին:

Հարցում. - Նախասիրութեան ինչի՞ր կա՞յ, թէ չկայ Չարենցի վերաբերումին մէջ:

Պատասխան. - Կը կարծենք, որ կայ:

Տարբեր կայուածէ մը ուրիշ օրինակ մը:

«Քազիմ»ի ներկայ համարին մէջ, հայրենի քինադատ Դաւիթ Գասպարեան, խօսելով հայ բանաստեղծութենէն ընտրուած նմուշներ թարգմանաբար որս ընթերցողին ներկայացնելու կոչուած երկու տարբեր ծոզովածուներու մասին, կը գրէ.

«Հայ պոեզիայի այս երկու անթոլոգիաներում տեղ չի գտնում ժամանակի մեծագոյն բանաստեղծը՝ Ե. Չարենցը» (էջ 106):

Ոչ թէ մեծագոյն բանաստեղծներէն մէկը, այլ «մեծագոյն բանաստեղծը»:

Նորիչէ Չարենցին տրուած գերազրական այս մակդիրը (մեծագոյն) լռելիս կը հաստատէ, որ երկու անթոլոգիաներուն մէջ տեղ գտած միւսները «մեծագոյն» չէին: Եւ 1940ին լոյս տեսած անթոլոգիային մէջ հիւրընկալուած միւսներուն մէջ անչուշտ կը գտնուէր նաեւ Աւետիք Իսահակեան:

Քիչ մը անելի առաջ երթալով պիտի ըսենք, որ քիչ չէ թիւը Չարենցը ժամանակի մեծագոյն բանաստեղծը համարող մտաւորականներուն, բայց չենք հասկնար, թէ այլոց լուս կամ բարձրաձայն յայտարարածը ինչու երբեք վրզովում չի պատճառեր Ռաֆայէլ Իշխանեանին եւ միւս վրդովեալներուն եւ նոյնը թելադրող մեր տպատրութիւնը յանկարծ դայթակգութեան դուռ կը բանայ:



Ռաֆայել Իշխանեան կը յիշեցնէ.

«Հայ բանաստեղծներից որեւէ մէկի գործերը այնքան շատ չեն երգուել հայ ժողովրդի մէջ, այնքան տարածուած չեն եղել, որքան Իսահակեանինը: Բաւական կ'աղփատանայ հայ մշակոյթը, եթէ նրանից համեմբ իսահակեանական խօսքեր ունեցող երգերը՝ «Մանկալը», «Ան աշերը», «Սիրեցի եարս տարանը», «Գետակի վրան», «Որսկան ախպէրը», «Հայրենցիկս հեռացել եմ», «Դարդա լացէ՛ր», «Ան մութ ամպերը», «Օտար ամալիճ», «Բինցէրը» եւ շատ ուրիշներ: Այսօր էլ դրանք սիրելի են մեր ժողովրդին ու երգում են շարունակ»:

Ժողովուրդին կողմէ սիրուած ըլլալը բանաստեղծի մը կամ գրագէտի մը արժանիքներուն վերջինը չէ, բայց նաեւ առաջիններէն մէկը չէ անիկա: Գերձախօս օրինակ մը: Ափիւսքի մէջ ամէնէն ժողովրդական գրողներէն մէկը եղաւ Մալխաս, բայց շատ կարդացուած ու խօսուած Մալխասը կրնա՞նք խղճի մտօք դնել գրեթէ չկարդացուած ու հազիւ մտաւորական սեղմ շրջանակներու ծանօթ Յակոբ Օշականին մօտ կամ անկէ վեր տեղ մը:

Եւ յետոյ, մենք մեր կարծիքը յայտնած ենք բանաստեղծ Աւետիք Իսահակեանի մասին եւ ոչ թէ երգուած Իսահակեանին, ու ճիշդ այդ պատճառով չենք հասկնար, թէ ինչու Ռաֆայել Իշխանեան հարկ համարած է կազմել իսահակեանական երգերուն ցանկը եւ խօսիլ ժողովրդական լայն խաւերուն մէջ անոնց գտած ջերմ ընդունելութեան մասին: Անշուշտ լաւ է, որ այդպէս է, թող այդպէ՛ս ըլլայ, մնա՛, ո՛վ կրնայ ընդդիմանալ ատոր, պիտի ընդունինք սակայն, որ երգային այդ արժանիքները բացարձակ Տեղիւնակութեան մը հիմքը չեն կրնար կազմել ու ստեղծել այն պատրանքը, որ արդէն աւելցած ունինք մեծերի շարքում մի նոր, մեծ անուն»:

Նոյն հարցին կապակցաբար, մեզի համար քիչ մը դժուար է պատկերացնել, թէ Ռաֆայել Իշխանեան կամ երգի վերածուած իսահակեանական բնագիրներով այնքան տարուած մեր միւս մտաւորականները ինչպէ՞ս նոյն բարձրութեան վրայ պիտի յաջողին պահել իրենց հիացումը, եթէ մէկ անկիւնէն հետաքրքիր միտք մը ձայն բարձրացնելով ըսէ, որ Իսահակեանի բանաստեղծութիւններուն մէկ զգալի տոկոսը երգուեցաւ զլիսաւորաբար ա՛յն պատճառով, որ անոնք իրենք իրենցմով յազեցած ինքնարաւ արժեքներ չէին, այլ պէտք ունէին երգային նպատակներու: Իրենց գուտ բանաստեղծական որակով այդ «Մանկալ»ները, «Որսկան ախպէր»ները, «Սիրեցի հարս տարան»ները եւ միւսները կրնային արդեօք այսօր ալ չըջիլ ու հնչել ժողովուրդին մէջ, ինչպէս կը շնչեն Ռաֆայել Իշխանեանի կազմած ցանկին մէջ չյիշատակուած ու եղանակային նըպատակներու էապէս անկարօտ նոյնինքն Աւետիք Իսահակեանի ստեղծումներէն ոմանք, ինչպէս, օրինակ, «Ռալեննայում» խորագրուած գոհարը, գոհարային փայլով օտուած միւսները, «Անի»ն, «Ազատութեամ քանգը», «Կեանքից բանկ բանը», եւայլն:

«Զարեմը կը վիրաորուր, — կ'ըսէ Ռաֆայէլ Իշխանեան, — կարդալով պրն. Անապեանի խօսքերը Իսահակեամ-Զարեմը վերը բերուած համեմատութիւնը»:

Ինչո՞ւ:

Համեմատութեան մէջ նախասիրութեան կարգով իրեն տրուած առաւելութեան համար:

Ընթերցողին ծանօթ են Զարեմի կարծիքները Աւետիք Իսահակեանի բանաստեղծութիւններուն մասին, որոնք տեղ մը «ոչ մի ազդեցութիւն ունեն նոր սերնդի բանաստեղծների վրայ», ուրիշ տեղ մը «մահամնայ» են անոնք եւ երրորդ տեղ մը «աշուղական նէյնիմներ» են: Զարեմեցեան այդ տպաւորութիւններէն ետք, Իսահակեան արձակ կամ չափածոյ որեւէ ուշագրաւ գործ չարտադրեց, որպէսզի «դարերից եկած հսկայ պոետ» բարեփոխուած կարծիք մը բանաձեւէր Իսահակեան բանաստեղծին մասին:

Բայց Իշխանեան կը պնդէ, թէ Զարեմը բարեփոխուած, իրեն հետ համեմատած նոյնիսկ գերազանց կարծիք մը ունէր Իսահակեանի մասին, նորէն չափածոյ: Ահաւասիկ անիկա, իր նախարանով ու վերջարանով.

«Բանտում լսելով Իսահակեանի երգերը՝ Զարեմը յուզուած գրում է բաշկիմակի վրայ իր ձօնը Իսահակեանիմ: Մի հատուած.

Որքան զմում - այնքան խոնարհ,
Այնքան անհում եւ այնքան ջերմ

Ես խորմարիում եմ քո առջեւ
Եւ սէր, եւ սիրտ, եւ բնար:

Սիրտը կարող է վեհամար,
Եւ անսարով մրա սրտիմ՝
Երգ ես տուել ժողովրդիմ,
Որ իր երգով անմահանայ:

Այս, կ'ուզէի ես ունենալ
Գոնէ մի երգ այնքան ջերմիմ,
Որ գրէի քուիս սեմիմ,
Եւ մա յաւէտ այնտեղ մնար:

«Յիշեցնեմ մաեւ, որ Զարեմի ամենապիւրի երգը եղել է «Որսկան ախպերը»: Արդեօք վա՛տ կը լինի, եթէ մեծարգոյ պրն. Անապեանը մտածի այս իրողութիւնների շուրջ»:

Ո՛չ, վատ չի լինի: Միայն թէ՛ այւ յիշեցումէն շատ առաջ «մեծարգոյ պրն. Անապեանը», կը կարծենք, մտածած է եւ մինչեւ անգամ շատ մտածած այս իրողութիւններուն շուրջ: Ու Զարեմի «ամենասիրելի» բաներէն ոմանք, երգերն ու երգուած հերոսները անհեթեթ համարող քիչ թիւով երոյթներ չէ ունեցած ան, այդ «մեծարգոյ պրն. Անապեանը»: Չէ պատկանած մա՛նաւանդ «հսկայ պոետ»ին բոլոր տեսութիւններն ու տեսլանները անաւարկելի համարած ու ծաւարուն մենագրութիւններու նիւթ դարձուցած հաշուենկատներու դասուն: Այլսպէս, անոնց մէկ ստուար խումբին հետ ինքն ալ հիացմունքի ճիւղերով դիմաւորած կ'ըլլար

լարենցեան Ալիներն ու մուժիկները, Սուբիիներն ու միւս արիստուաչներ, կոմունարներու պատերն ու ազգի-ազգի թամաշաները, կոմայմանախնե-
րը տակաւին ու անկարեւի ու անկանգնելի միւս ծամածռութիւնները եւ
զիշեր ու զօր իրեն՝ Չարենցին հետ կ'երգէր՝ անոր բա՛րձը գնահատան-
քին արժանացած... «Մեր ամենասիրելի Եղիա Չուբարի «ԳՈՍԱ բարով, չը-
գաս տարով, պարոն հաստիսով» եռչակաւոր երգը»:

Այդպէս չէ եղած սակայն մեր իրականութիւնը:

Չարենցը մեզի համար Չարենց եղած է ու Չարենց կը մնայ իր բա-
բախուն յայտնագործութիւններով եւ ոչ թէ չոր ու արզէն չորցած քմա-
հան տեսութիւններով ու ցուցական կամ հարկային բառակոյտերով:

Դառնանք եւ հարց տանք հիմա, թէ՛ ողբերգական պայմաններու մէջ
զրուած մարդու մը տողերը նոյն այդ մարդուն ողբերգութեան մասի՞ն կը
վկային արդեօք, թէ անոր առողջ զատողութեան, որ Ռաֆայէլ Իշխան-
եան այնքան վստահելի կ'չիւ մը կու տայ Աւետիք Իսահակեանին ձօն-
ւած Չարենցի բանտային յօրինումին:

Աւետիք Իսահակեանին ձօնուած Չարենցի բանտային բանաստեղ-
ծութիւնը համոզումի մը արդիւնքը համարող Ռաֆայէլ Իշխանեան եւ
հայրենի մեր միւս մտաւորականները, նովին բանիւ՝ պէտք է նոյնքան
արժէք տան տնային կարանքի տակ եւ նոյնպէս տաժանելի պայմաններու
մէջ զրուած Չարենցի աւարտած ու անաւարտ միւս զործերուն, բայց,
որքան գիտենք, «միւսները» նման արժեւորումներու չեն ենթարկուած:
Սակայն կարելի չէ նման հակասութիւններու շարունակ տուրք տայ, այ-
սինքն՝ այնպէս կարծել, որ նոյն պայմաններուն մէջ հիւսուած ձօներէն
մէկը մարդիկ սրտարբու համարեն ու տան անոր անքննելի ճշմարտու-
թեան մը ուժը, իսկ միւսները դիմաւորեն իբրեւ ստիպողական փրկագին:

Ըսենք անմիջապէս, որ ակնարկուած միւսներէն մէկը խորագրուած է
«Երրորդ այգարաց» ու իբրեւ «մերրոզ Ուաստագոյն» ձօնուած է նոյնինքն
Ստալինին, եւ կայ «կոմունիստական ժամանակաշրջանում» փակի տակ
մնացած եւ նոր յայտնաբերուած ուրիշ մը, ուր կրկին կը փառաբանուի
Ստալինը եւ նոյն ատեն վստահութեան քուէ կը տրուի Ստալինի ժամա-
նակաւոր վստահելիներուն: Արտագրենք այս վերջիններէն ութնեակ մը.

Իբրեւ մի՛ նորեկ երբի Մովսէս՝
Կառգձիր լեռիմեամ զրով ամհաշտ՝
Եւ — ստալինեամ — իբրեւ մի՛ վաշտ —
Տար համայնական երթով դու մեզ...
Օ, Ամատումի սիրով անեղծ,
Հիճ, հազարամեայ սիրով այն մեծ,
Որ ժողովուրդը — սրտով անկեղծ
Կրել է դարեր իր կրծի մէջ —

«Նայիրեան տօֆին» հռչակուած Ազատի Թանջեանի դաւադրական
սպանութենէն ետք, Ամատունին Ստալինի հրովարտակով դարձաւ Հա-
յաստանի թիւ մէկ իշխանաւորը, որուն գիտութեամբ ու յաճախ հրա-
հանգներով կատարուեցան ստալինեան ահարկու մաքրագործումները,
հայածուեցան, բանտարկուեցան, աքսորուեցան, սրածուեցան Հայաստա-
նի ամէնէն պիտանի տարրերը, «սիրուցըր» Հայաստանի,— գրազէտներ,

պատմաբաններ, դասախոսներ, գիտնականներ, գինուորականներ, արեւստադէտներ, քաղաքական ու կուսակցական ղեմքեր, եւայլն, եւայլն: Ըստ 1937 Ապրիլին իր՝ Ամատունիի իսկ կազմած ու ստորագրած տեղեկագրին, որ վերջերս լոյս տեսաւ «Գարուն»ի (1991, թիւ 5) մէջ, ընդամենը՝

«Անցած տասը ամիսների ընթացքում, կուսկազմակերպութիւնների զգուցեան բարձրացման եւ դաշնակցակազմների, տրոցկիստների, հակայնդափոխական նացիոնալիստների եւ այլ թշնամական կուսակցութիւնների դէմ ծաւալած պայքարի շնորհիւ, հանրապետութիւնում մերկացուել ու ձերբակալուել է անլի ճան 1300 մարդ, որոնց մեծամասնութիւնը դատաւարտուել է, իսկ 1937 թ. Յունուարից յետոյ, այսինքն՝ վերջին ամիսներին յայտնաբերուել ու ձերբակալուել է 600ից անլի մարդ՝ տրոցկիստներ, դաշնակցակազմներ եւ կուսակցութեան այլ թշնամիներ»:

Եւ այլն:

Այս աննախընթաց դաւին քաջատեղեակ բանաստեղծը, այն ալ եղիշէ Չարենցի տարողութեամբ բանաստեղծը, երբ կը նստի ու բանաստեղծութիւն կը գրէ պատմութեան բոլոր արիւնարբունները շուքի մէջ ձգած դերագոյն արիւնարբունի եւ մեր երկիրը սահմանազրական զաւոյժ անգամ մը եւս ծուատած ճիւղին ի գովք, ինչպէս նաեւ անոր դրածոներուն յոյսեր կապող սողեր կը շտայլէ, մարդկօրէն հարկադրուած ենք կանգ առնել պահ մը եւ առանց սխալելու տարակոյսին բսել, թէ նման պայմաններու մէջ գրուած փառաբանութիւնը որակային այնքան նշանակութիւն չի կրնար ունենալ, որքան կրնայ ունենալ անոր գրառման ողբերգական շարժառիթը:

Ո՛չ, Չարենց չէր կրնար այդ օրերուն եւ այդ պայմաններուն մէջ իր ողբերգութենէն դուրս ինկող որեւէ նիւթի ու ռեւէ անձի մասին այրող համոզումով սող սողի վրայ դնել, պիտի դնէր ու զրաւ՝

—Փրկութեան յոյսով (Ստալինին եղած «Ներքող Ուսաստանգրք»):

—Ողջմտանք մը շարժելու հաշիւով (Ամատունիին շտայլուած «Մովսէս»-եան տիտղոսները):

—Մեծ Նեոֆի ու անոր հայաստանեան գործակալներուն մօտ բարեխօս մը ունենալու մղումով (Աւետիք Իսահակեանին ուղղուած ուշացած մեծարանքը):

Ծովը ինկած, ծովէն ալ աւելի ահարկու անդունդի մը մէջ նետուած հոգիի մը ճիչերն են ատունք ու բնաւ ճիչդ չէ տարբեր իմաստներ տեսնել անոնց մէջ:

Կրկնութիւն պիտի ըլլայ, բայց բսնք դարձեալ, որ Չարենց լաւ գիտէր, թէ Աւետիք Իսահակեանին նախանձելու ոչ մէկ պատճառ ունէր ինք, տրուած ըլլալով, որ ոչ թէ «մի երգ», այլ «այնքան ջերմին բազում» երգեր ունէր «Պիրի մանապարհի»-ին, «Էպիֆանական լուսաբաց»-ին, «Տալարան»-ին եւ իր միւս մատենաներու էջերուն, եւ եթէ իր ապրած գոծութիւն մէջ իսահակեանական մեծարանքներ կը քնարերգէր, շարժառիթը, ինչպէս բստեցաւ, պէտք է փնտռել հոգեբանական մղումներու ետին եւ ոչ թէ գրական կայուն համոզումներու...

Աւելի պարզ դարձնելու համար մեր այս տպագրութիւնը՝ թուենք օրինակ մը եւս, ըստ որում Չարենցի այն օրերու արտայայտութիւնները

րէն շատերը, բանաստեղծութիւն ըլլան անոնք, օրագրութիւն թէ նամակային գրառում, պէտք է անելէն ելք որոնող մարդու ճիշդ համարել եւ ոչ ուրիշ բան:

Յիշենք ուրիշ օրինակ մը.

Ռուս քննադատ Վալերի Կիրպոտին, ուրիշ խօսքով՝ Հայաստանի գրողներու զահիճը, ինչպէս օրին որակեցին զինք արտասահմանի ազատ մամուլին մէջ, դահճային յատուկ առաքելութեամբ Ստալինի կողմէ 1937ի Ապրիլի գրկուեցաւ Հայաստան, ուր ժողովներ սարքեց ան ու զեկուցումներ կարգաց թէ՛ բանտային նկուղներուն մէջ իրենց նախամահը ապրող գրողներուն եւ թէ՛ զուրսը զողահար շնչող միւսներուն մասին, իր մուրճն ու մանզազը ուղղելով ամէնէն արժանատրներուն դէմ, թիրախ ունենալով առանձնապէս Չարենցի անձն ու գործը:

Քաղուածներ զահիճին ճառէն.

«...Նա, ով կոնֆլիկտի մէջ է մտնում ժողովրդի հետ, ով գնում է նրա թշնամու բանակը — նա կանգնում է վտանգատր ուղու վրայ: Եւ ահա այդպիսի վտանգատր ուղու վրայ է գտնում այժմ — այդ մասին պէտք է ասել ամբողջ ձայնով — Չարենցը:

«Չարենցը որպէս պոետ իր ստեղծագործութիւնն սկսեց յուսահատութեան երգերից: Նրա առաջին երգերը լի էին խաւարով: Նա կապուած չէր յեղափոխական շարժման հետ... Նրա առաջին երգերի մէջ յուսահատութեան ճոտաներ, մահուան քայտի ճոտաներ են հնչում: Երբ սկսուեց ինվերիալիստական պատերազմը՝ նա ընկաւ ճացիոնալիստների բանակը:

«Հետագայում Չարենցն բնկնում է հակայեղափոխական ճացիոնալիստների աղիքութեան տակ: Մեծ անձամբ գիտեմք նրա «բարեկամներին», որոնք ազդում էին նրա վրայ — դրամբ էին Բակունցը, Խանգեւանը եւ ուրիշներ: Նա ստեղծում է մի գիրք՝ «Գիրք ճանապարհի», որ ամբողջապէս գրուած է որպէս հայ գրականութեան «ազգային յատկանիշների խտացման» քննարկայի իլլուստրացիա» («Գրական թերթ», 1937, թիւ 12):

Այդ օրերու իշխանատր Ամատունիին հասցէագրուած իր նամակին մէջ, անգրագառնալով իր հասցէին արձանագրած Վալերի Կիրպոտինի այս անշուր գրպարտութիւններուն, Չարենց, փոխանակ ընդգծելու, շնորհակալան օղակի մէջ բռնուած մարդու» նոյն հոգիքանութեամբ՝ ո՛չ միայն խոնարհաբար կ'ընդունի կիրպոտինեան յերիւրանքները, այլեւ քիչ կը գտնէ իրեն տրուած անողոք հարուածը: Այսպէս՝

«Ընկ. Կիրպոտինի ելոյթում՝ իմ քաղաքական եւ գրական սխալների եւ մեղքերի մասին ասուած զնահատակամբ՝ իր քաղաքական կոնկրետ բովանդակութեամբ եւ վերաբերմունքային ամբողջ առումով — ներկայումս եւ զրտնում եմ ոչ միայն ճիշտ եւ քաղաքականապէս անմիջեղի, — այլեւ առաւել, բան կարելի է պատկերացնել քաղաքական ներկայ սիտուացիայում, — անմեքի չափով մեղմացած, այլ դժգոհում՝ լիբերալ վերաբերմունքի սահմանակցելու չափ բարեեղի վերաբերմունք»:

Ինչպէս պարզ կ'երեւի, հոս Չարենց անունով մեզի ծանօթ մեծապատակ ու մեծ բանաստեղծ մը չկայ, այլ կայ անել կացութեան մատնուած մարդկային խնկակ մը, որուն թէ՛ ստանաւոր մրմունջները եւ թէ՛ արձակ աղաղակները ունին փրկութիւն հայցող շարժառիթ մը եւ որեւէ աղերս չունին իր ճշմարտութեան աէր մնացած մարդու մը ճշմարտութեան հետ...

★

Եսահեկանութենէ զորկ պիտի չըլլար հաւանարար քանի մը խօսք ըսել նաև Բաժնայէլ Իշխանեանի «Աստիխ»ին առաջին տողերուն մէջ եղած յայտարարութեան եւ վերջին սիւնակին վրայ շօշափուած հարցիկն մասին, որոնք այս անգամ միաժամանակ կը վերաբերին Թումանեանին ու Իսահակեանին:

Ակնարկելով մեզի, առաջին իսկ առիթով, ինչպէս յիշուեցաւ անգամ մը, փրոֆեսէօրը կը յայտնէ, թէ՛

«Գրական թերթ»ին տուած հարցազրոյցում նուաստացուցիչ կարծիք է յայտնել Յ. Թումանեանի եւ Ա. Իսահակեանի մասին»:

Աւետիք Իսահակեանի մասին կանխող էջերուն մէջ ըսուածները եւ անոնցմէ առաջ «Բազմ»ի մէջ կամ այլուր յայտնուած մտքերը կը կարծենք պարզ են եւ աւելցնելիք առայժմ շատ քան չկայ անոնց վրայ:

Հետագայ մէկ-երկու էջերուն արժարձուած հարցերը, ուրեմն, բացառարար կը վերաբերին Թումանեանին:

Ու առաջին հերթին՝ մեր յայտնած «նուաստացուցիչ կարծիք»ին:

Մենք չենք զիտեր, թէ ինչու բանաստեղծի մը համար նուաստացուցիչ պիտի համարուի կարծիք մը, ուր պարզապէս ըսուած է, թէ կան մարդեր, որոնց մտածումներուն ու ազդումներուն մէջ իր վաստակէն աւելի հնչեղութիւն ունին կամ կրնան ունենալ արեւնակից ուրիշ բանաստեղծներու վաստակները: Նման պարագաներու կարելի է համեմատութիւնը կատարողին զրական պատրաստութիւնը, հասկացողութեան չափը կամ մշակած ճաշակը խնդրոյ առարկայ դարձնել, բայց ճիշդ չէ գոյութիւն չունեցող արամադրութիւններ վերագրել անոր, երբ ըսուածին մէջ ո՛չ հայհոյանքներ թոյլ տրուած են, ո՛չ գրպարտութիւններ եղած են, ոչ ալ յերիւրանքներ յերիւրուած:

Հաշուի առնելով յայտնուած այն նախասիրութիւնը, թէ «Ինձի համար Չարեանց աւելի մեծ բանաստեղծ է, քան Թումանեանը», Բաժնայէլ Իշխանեան քանի մը հիասքանչ տպաւորութիւններ արձանագրելէ ետք նշանաւոր Լոռեցիին նուաճած արժէքներուն մասին, Իսահակեանին առիթով յուզած վիրաւորութեան պէս հոս եւս կը յուզէ վիրաւորութեան հաւանականութիւն մը.

«Ինձ թոյլ եմ տալիս ասելու, որ այս դէպքում էլ Չարեանցը կը վիրաւորուի պրճ. Սնապեանի վերը բերուած համեմատութեան համար. Յիշե՛մք.

«Կայ Մեծարեանց, կայ Տէրեան եւ քաղում ուրիշ պոետներ կան,

Բայց Թումանեանն է անհաս Արարաւոր մեր մոր բերքութեան»:

Բաժնայէլ Իշխանեան կը թուէ Չարեանցի թումանեանական միւս հիացումները եւս ու կը յայտնէ իր տիրութիւնը, որ կան հայեր, որոնք թումանեանական արեւի լոյսն ու ջերմութիւնը չեն զգում» եւ հուսկ ապա հարց կու տայ, թէ «ինչի նման կը լինէր հայ մշակոյթը առանց մեր ազգային լուսազոյն օպերաների» եւ առանց թումանեանական միւս յայտնութիւններուն ու մշակումներուն:

Դարձեալ՝

Ձի հասկացուիր, թէ ո՞վ ուրացած է, ե՞րբ ուրացած է, ո՞ւր ուրացուած է Թումանեանի ծառանդութիւնը, որ Ռաֆայէլ Իշխանեան թոյլ կու տայ ինքն իրեն հարստահարուած մարդու դաւանութիւններով խօսիլ ընկերացողին հետ: Նախասիրութեան կարգով յայտնուած առակութիւնը ինչո՞ւ պիտի նշանակէ, որ հայ գրականութեան ու մշակոյթին մէջ կայ ու կայ՝ միայն նախասիրուած սիրելին եւ դիւրին է հետեւաբար սեւ գիծ քաշել միւս բոլոր արժէքներուն վրայ, ուրանալ Իսահակեանի «Պաղեմնայումը եւ բովեննայական միսները, եւ սիրտը փակ պահել թումանեանական «անտակ, անծեր» գանձերուն դէմ:

Մրեւի մտածուած է ամէն զնով հակազդել մեր յայտնած նախասիրութեան, բայց հակազդեցութեան հարուածը աւելի հարուածային դարձնելու համար, դիմացինը ուրացողի դերին մէջ պատկերացնելու միջոցէն աւելի պարկեշտ միջոցներ չէին պակսեր կը կարծենք:

Ռաֆայէլ Իշխանեանի «Գրական աստղիւսին մէջ շատ ընդգծուած են Չարենցի թումանեանական հրաքանչ արտայայտութիւնները, որոնք իրապէս պատիւ կը բերեն «Նայիրի երկրի պայծառ օրհներգու»ին, զեղեցկութիւններն ու մեծութիւնները անարատ սրտով գնահատելու իր իմաստութեան ու բնազդին, բայց ասիկա իր գործն է, իսկ մերը ա՛յն՝ որ նման զեղումները սիրով կարդալով հանդերձ, պարտաւոր չենք զգար անոնց իւրաքանչիւրին չափանիշի մը արժէքը տալ: Այդ մասին Աւետիք Իսահակեանի առիթով բսինք քանի մը խօսք: Հարկ չկայ նոյնը կամ նոյնին մօտ բաներ կրկնելու:

Եղիշէ Չարենց յաճախ ինքզինք դրած է Թումանեանին դէմ-յանդիման եւ Թումանեանին պէս ըլլալու երազներ հիւսած: Մէկը յիշեցուած է մեզի «Գրական աստղիւսին մէջ, հետեւեալը.

Թումանեանի երգերը
 Կարդալիս՝ միշտ ես
 Միտք եմ անում, քէ արդեօք
 Կարո՞ղ եմ ես էլ
 Լինել այնքա՞ն իմաստուն
 Երբ լիմեմ ձեր...

Բանատեղծական իր ըմբռնումներուն, բնազդներուն ու համարումներուն թելադրանքով՝ Չարենց թէ՛ ձեր քերթողներուն բիրեղացուցած իմաստութեան առիթով եւ թէ՛ քոլորովին սկսնակներուն մօտ բնական բխումով ձեւի եկած պարզութեանց զիմաց յաճախ արձանագրած է նախանձախոյզ տողեր: Մերին յայտնաբերած իմաստուն երգերուն մասին նմոյշ մը ունինք վերը: Ահա եւ պատանիին առիթով կատարած «ինքնահամեմատութիւնը».

Քո երգերը բոց, քո երգեր՞՞ հրէ,-
 Բայց այդ կոմերիտ Վահանի նման,
 Դու ե՞րբ ես, դու ե՞րբ ես, դու ե՞րբ ես զրեւ-

Կոմերիտ Վահանը զեռ քանի մը տարի առաջ հողին դարձած քանաստեղծ Վահան Գրիգորեանն է, ու Չարենցի գնահատանքը կը վերանաւորուի անոր առաջին երգերէն «ԱՅՈՒԻ ԵՐՂը» խորագրուած ոտանաւորին, որ սրտամօտ որակ մը ունի եւ պատանի քանաստեղծի մը խանդավառ յոյսեր կապող հմայք մը: Բայց կարելի՞ է երեսնական թուականներու շա-

րենցեան բանաստեղծութիւններուն բոցեղէն ու հրեղէն բովանդակութիւնը անտեսել ու կոմերիտ Վահանի «Անիլիմ երգը» ունկնդրելով՝ դառնալ Չարենցին ու իրեն պէս ու իրեն հետ կրկնելով հարցնել, թէ այդպիսի երգ

«Իս ե՛րբ ես, դու ե՛րբ ես, դու ե՛րբ ես գրեմ»-

Այսպիսի վերաբերումներու մէջ, ծեր ըլլան վերաբերեալները թէ պատանի, ընդդէմ ին նիթականերուն համբուրելի խոնարհութիւնն է, ըսողին հետ պարզուող խորին խորհուրդը եւ ոչ թէ ըսուածին չոր տրամաբանութիւնը: Այլապէս, մարդիկ իրենց մտքերուն մէջ զժուար պիտի տեղաւորէին կոմերիտ Վահանին թէ թումանեանին հանդէպ ցուցաբերած Չարենցի «նախանձը», երբ անդրադառնային մանաւանդ, որ առաջինին «Անիլիմ երգը» թեւաորում է մուսաներու թեւարախումներով լի ու անոնց ծնուցիչ համբոյրներով օժուոն «Էպիքական լուսաբաց»ին մէջ, իսկ երկրորդին իմաստուն երգերը խտէպականացուած են տաղերով, տեսիլներով, խորհուրդներով, թաքնաթաղու՛ր կամ բարձրագոյնակ պատգամներով ալ լեկոծ «Գիրք մանապարհի»ի էջերուն, ա՛յն «Գիրք մանապարհի»ի, որ զբրւած է ոչ թէ օրերու համար,

«Այլ տարիների հեռակայ ու ջիւնը,

Եւ գուցէ, ամզամ, դարերի՛ նորել:—

Վերջացնենք՝ Ինֆայէլ Իշխանեանի առարկութիւն չվերցնող մէկ հաստատումով:—

«...Ըստ երեւոյթին, արեւելահայ բանաստեղծութեան պատմութիւնը, շատ յարգելի պրն. Սնապեանը առիթ չի ունեցել հարկ եղած խորութեամբ ուսումնասիրել, այլապէս կ'իմամար, որ Իւսահակեանը ոչ թէ «զանազան պատմադրութիւններով մեծցուեցաւ, այլ իր գրական մանապարհի սկզբում մեծապէս սիրուեց ժողովրդի կողմից, թափանցեց ժողովրդի մէջ, մանաւանդ որ նրա առաջին շրջանի ստեղծագործութիւններն էլ ժողովրդային մտածողութեամբ էին շարժախում, ժողովրդի բան ու բանով համեմուած»:

Ծիչը՝ այս բոլորը, մա՛նաւանդ պարբերութեան առաջին բաժնին մէջ արտայայտուած մտքերը, ուր «շատ յարգելի պրն. Սնապեանը առիթ չի ունեցել հարկ եղած խորութեամբ ուսումնասիրել արեւելահայ բանաստեղծութեան պատմութիւնը»:

Ծիչը այդ պակասը լրացնելու համար՝ այսօր եւեթ պիտի սկսինք, մեր կարողութեան ներած չափով հարկաւ, հարկ եղած խորութեամբ ուսումնասիրել արեւելահայ բանաստեղծութեան պատմութիւնը, յուսարով, որ այս անգամ հոն չենք հանդիպիր «Մայրնի սիրտը» ոտանաւորին պէս ողբապատկան յարմարեցումներու եւ «Պանդուխտ որդի»ին պէս վոկլեան որդեգրումներու...

ՊՕՂՈՍ ՄԱՍՊԵԱՆ

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՆԱԼԴԻՍՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՎԱՆԷ ՍԷԹԵԱՆԻՆ



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կազմակերպութեամբ եւ Գարեգին Բ. կաթողիկոսին նախագահութեամբ՝ Ոգրբաթ, 28 Մարտ 1993ի երեկոյան, Ամբիփասի Կաթողիկոսարանին մէջ տեղի ունեցաւ մեծարանքի երեկոյ մը, նուիրուած լիբանանահայ ազգային ու մշակութային կեանքին մէջ տունամասկեր շարունակ ծառայած Պր. Վանէ Սեթեանի:

Լիբանանեան զահիճի մշակոյթի նախարար Միշէլ Էտտէի, հայ նախարարներ եւ երեսփոխաններ տնարք Յակոբ Տէմիրճեանի եւ Եանէ Պարտումեանի, պետական երեսփոխաններ Մեթր Թաշիկ Պապիկեանի, Պր. Սուրէն Խանամիրեանի, Միթր ժազ Չուխատարեանի, նախկին երեսփոխան Տաթև Մելիքեանի, Լիբանանի հայոց առաջնորդ Արամ արքեպիսկոպոստ Բէշիշեանի, Հայ Աւետարանական եկեղեցւոյ պետ Վեր. Յովհաննէս Գարեանի, Ազգային Կեդր. Վարչութեան ներկայացուցիչներու եւ սեղծ թիւով ազգայիններու ներկայութեամբ, մեծարանքի այս հանդիսութեան բացումը կատարեց Վեհափառ Հայրապետը:

Վեհափառին խօսքն ետք, յատուկ խօսքով մը հանդէս եկաւ նախարար Միշէլ Էտտէ: Ան նախ բարձր գնահատեց եւ շնորհատրեց Պր. Վանէ Սեթեանը՝ լիբանանեան հայրենիքին անոր մատուցած ծառայութեանց համար, ապա՝ յատուկ կերպով շնորհեց Լիբանանի հայ համայնքին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան քերական անգնահատելի ծառայութիւնները լիբանանեան հայրենիքին: Պատմական ստեղծներու վրայ հիմնուած՝ դրսեայքը ըրաւ հայ ժողովուրդի արժանիքներուն եւ հայութեան քաղաքակրթական գերին:

Ապա, Լիբանանի հանրապետութեան նախագահ Բիլաւ Հրատիի անունով մշակութային նախարար Միշէլ Էտտէ լիբանանեան Օ.Յ.Յ.Ս.Ի.Է կարգի չքանչանով պատուեց օրուան մեծարեալը՝ Պր. Վանէ Սեթեանը:

Ստորեւ Վեհափառ հօր խօսքը:-

«Ես այսօր յատուկ ուրախութեամբ, հոգեկամ գոհումակութեամբ եւ առ Աստուած շնորհակալութեան զգացումներով կ'ողջունեմ ձեզ բոլորդ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս կեդրամակայրին՝ Վեհարանին մէջ: Յատուկ պատիւներս կը յայտնեմ անոր համար, որ այս ետաւոյքը կազմակերպեցիք յանուն մեր Ազգ. Կեդրոնական Վարչութեամբ՝ մեր սիրոյ, յարգանքի եւ երախտագիտութեան արտայայտութիւնը ունենալու հանդէպ անձի մը, որ այս Կաթողիկոսարանին մէջ էր, այս Կաթողիկոսարանին ետս էր, երբ այս Կաթողիկոսարանը դէռ իր այս ներկայ վիճակին մէջ չէր: Երբ

տակալին ոչ մէկ կարեւոր հաստատութիւն իր վերջնական ձեւը գտած էր այս Կաթողիկոսութեան մէջ, այս Կաթողիկոսութեան տարագրային, աճարակային վիճակէն կեդրոնական հաստատութիւն մը դառնալու համարումին ճարտարապետներէն մէկն է այն անձը, զոր այսօր կ'ուզենք պատուել յանձնիմ՝ ՊՐ. ՎԱՀԷ ԱԷԹԵՆԱՆԻ:

Ես իմ սարկաւազութեանս օրերէն կը յիշեմ զինք, Դպրեվանքի ուսանողութեան օրերէն, երբ իմի՞նչ կու գար Կաթողիկոսարան եւ կը զբաղէր թէ՛ ազգային-եկեղեցական եւ թէ՛ մշակութային ձեռնարկներով: Մեր Կաթողիկոսութիւնը իբրեւ եկեղեցական-ազգային կազմակերպութիւն ոտքի վրայ կանգնեցնելու, ցեղասպանութենէն ետք, ցնցուած, տարտղնուած հայութեան յոյսի այս փարոսը կանգնելու գործին մէջ իր բազմադիւս եւ երախտարժան բաժինը ունի Պր. Վահէ Աէթեան:

Երբ տակալին Կաթողիկոսութիւնը կաթողիկոսով մը, եւ Քանի մը վարդապետներով, մատի վրայ համրուող հոգեւորականներով Կաթողիկոսութիւն էր, ան իր լայն բաժինը բերաւ այն հիմնական գործին, որով Կաթողիկոսութիւնը դարձաւ ազգային-եկեղեցական կառոյց, յատուկ կանոնադրութեամբ, 1940ական թուականներէն ստղին: Այդ կանոնադրութեան մշակման, ազգային-եկեղեցական մարմիններու կազմատրման ընթացքին մէջ ինքն ունեցաւ իր որոշադրիչ դերը:

Ահաւասիկ տարիներ անցան եւ Կաթողիկոսարանը իր այդ վիճակէն հասաւ ալյուրուան վիճակին, որուն բոլորդ ծանօթ էք, եւ ձեզմէ շատերը այս վիճակի ստեղծման մէջ ունեցած են, եւ կը շարունակեն ունենալ, իրենց յատուկ բաժինը:

Պր. Աէթեանը մեր եկեղեցոյ եւ ազգի միասնական արտայայտութեան ջատագովներէն, մեկնաբաններէն, պաշտպաններէն մէկն է: Եկեղեցին տեսած է իբրեւ հոգեւոր հաստատութիւն, բայց ո՛չ անբաժանաբար ազգային կառուցային արտայայտութիւն: Իր այդ ըմբռնումն է, որ սեռաւասիկ հառաքանկանօրէն կեանքի կոչուած է մեր եկեղեցոյ դարաւոր աստիճանացի իբրեւ պակշտ եւ նորոգեալ արտայայտութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան այս կառուցուածքին մէջէն: Անկէս այս Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ ունեցած է իր անմոռանալի եւ միշտ յիշելի ու յարգելի բաժինը: Ինձի շփեակուեցաւ այն պատիւը, որ ես ըլլայի զինք Կաթողիկոսարանիս պատուամշանով յարգելու կոչուած կաթողիկոսը:

Այսօր սակայն, որպէս կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, երբ այս յարգամբը կ'ուզեմ ընծայել յանուն մեր Ազգային Կեդրոնական Վարչութեան եւ մեր ամբողջ Միաբանութեան ու մեր Կաթողիկոսութեան բոլոր թեմերուն, կ'ուզեմ նաեւ առանձնապէս եւ շեշտակիօրէն յիշել այն մեծ դերը, զոր Վահէ Աէթեանը ունեցաւ մեր ժողովուրդի կեանքին մէջ մշակութային ծառայութեան եւ առաքելութեան որպէս ասիականներէն մէկը թէ՛ Հայկաի եւ թէ՛ այսօտեղ՝ Լիբանանի մէջ: Այդ առաքելութիւնը արտայայտեց իմի՞նչ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ընկերակցութեան միջոցաւ, ըլլալով անոր նախագահը, ստեղծապետը, սպասարարը, ծրագրողը, աշխատողը եւ Նշան Փայաննեան ձեմարանի «Համագրային» մշակութային առաքելութեան այլազան արտայայտութեանց, հրատարակչական գործի, տպագրական աշխատանքի եւ կազմակերպչական այլազան երեսներու մէջ ան ունեցաւ իր ամէնէն հետք թողնող եւ շարունակութիւն ունեցող գործունէութեան դաշտը: Հետեւաբար, իր եկեղեցական-

ազգային գործին բերած նպաստին համար մենք եկեղեցույ ու ազգային իշխանութեան անունով իրեն արտայայտած մեր յարգանքին մէջ կը միացնենք նաեւ իր մշակութային մեծ առաքելութիւնը, առանց որում եւս դժուար պիտի կարենայի ըմբռնել այն շարք մը իրագործումները, որոնք եղան «Համազգային» մեծ ընտանիքին կողմէ: Լեւոն Շանթ ունեցաւ իր դեկավարի մեծ գերը, ներշնչող դեր խաղաց Նիկոլ Աղբալեան, կազմակերպչական դեր ունեցան Գասպար Իփիկեան, Գառնիկ Գիւլպեան, Կարօ Սասունի եւ ուրիշներ (թոյլ տուէ՛ք ինձի աշատեղ կանգ առնել ուրիշ անուններ չլիշելու համար), բայց այդ բոլորին մէջ յաճախ լուռ կերպով, բայց աշխատունակ, գործնապաշտ, ծրագրային ոճով գործող կարեւոր դէմքերէն մէկը եղաւ Վահէ Աէթեան: Ան ունի, ինչ որ եւ կը սիրեմ կոչել, գիրքի պաշտամունք: Գիրքին հանդէպ ունեցած սէրը եւ պաշտամունքը յափտենական արժէքներու հաւատքին արտայայտական եղանակներէն մէկն է:

Հետեւաբար, այսօր եւ մեր յարգելի պետական մախարարներուն, պետական երեսփոխաններուն, հոգեւոր պետերուն, ազգային ժողովականութեան, մեր հոգեւորական միաբանական դասին, «Համազգային»-ի մեծ ընկերակցութեան ներկայացուցիչներուն եւ բոլորից ներկայութեան կ'ուզեմ այս վկայութիւնը բերել եւ կ'ուզեմ իրեն ըսել. «Հազա՛ր շնորհակալութիւն, սիրելի՛ Վահէ, վարձքդ երբեք պիտի չմոռցուի. կիլիկիոյ Կաթողիկոսութեան պատմութեան մէջ քու անունդ ճակեցիրով պիտի գրուի»:

Կ'ուզեմ մէկ բան միայն անցնել, որ քաղցր է ինձի համար, այն հայրենիքը, որ քու պաշտամունքիդ առարկան եղաւ միշտ, Ույնիսկ այն օրերուն, երբ այդ հայրենիքը շղթամեքով էր կապուած, այդ հայրենիքը, որ այսօր ազատ հայրենիք է, անկասկապ հայրենիք է, ի՛նչ գեղեցիկ գուգաղիպութիւն, որ այսօր այդ հայրենիքէն ներկայացուցիչ ունինք մեր մէջ, յանձին Դր. Լուսինիկ հաշատրեանին՝ Հայաստանի Հանրապետութեան կրօնական գործոց պետական խորհուրդի նախագահին, որ մեր ազգային ժողովականութեան այս նստաշրջանին ինքն ալ մեր հիւրը եղաւ, մեր հրաւերովը եկաւ Կաթողիկոսարան եւ ներկայ գտնուեցաւ յարգանքի այս արտայայտութեան, բերելով հայրենիքի շունչը»:

29 Մարտ, 1993
Անթիլիաս

Հ Ա Ր Կ Ս

Ա Ր Ժ Ա Ն Ա Ի Ո Ր Ի Ն . . .

«Վահէ Աէթեանն ունի, իմչ որ ես կը սիրեմ կոչել, գիրքի պաշտամունք»:

Իր ազգային ու մշակութային երախտաշատ գործունէութեան համար, Պր. Վահէ Աէթեանին ընծայուած ազգային ու պետական պատիւներու առիթով, մեզի համար սիրելի պիտի ըլլար քանի մը տողով ընդարձակել Վեհափառին վերը մէջբերուած հաստատումը, որ երեւոյթի մը տարողութիւնը ունեցաւ եւ ունի մեծարուած այս բացառիկ անձնաւորութեան մօտ:

Գիրքի պաշտամունք ունեցող մարդոց մէջ գոնէ մենք չենք յիշեր ուրիշ անձնաւորութիւն մը, որ այդ պաշտամունքը հասցուցած ըլլար յափշտակութեան այն աստիճանին, որուն բարձրագոյն ոյրտին մէջ գտնուեցաւ շարունակ Պր. Վահէ Աէթեան:

Հայերու մասին գրած օտար բոլոր դէմքերուն, հայազգի օտարագիրներուն ու քիչ-շատ արժէք ներկայացնող մեր հեղինակներուն բոլոր գիրքերէն մէկէ աւելի օրինակներ անձամբ ապահովելով ու հայ մամուլին հին ու նոր հաւաքածոներու մէկտեղումով ան կազմած էր այնպիսի՝ հարուստ գրադարան մը, որ պատկառանք կ'ազդէր հոն ուրք դրած իւրաքանչիւր անձի:

Այսքանը կրկնելի երեւոյթ է՝ պիտի ըստի: Ստուար թիւով գիրքեր ու թերթեր մէկտեղելով հարուստ գրադարաններ կազմած մարդեր եղած են մեր իրականութեան մէջ անցեալին, եւ գիրքի սերով տողորուած եւ միջոցներ ունեցող ուրիշներ կրնան նոյնը ընել վաղը՝ հոս կամ այլուր: Նըկատուած է սակայն, որ հոգ վերջացած են ոմանց սերն ու հետաքրքրութիւնը, մէկտեղելու կիրքին մէջ, տեսանելիին դիմաց: Նման կրաւորական պաշտամունք մը չէր Պր. Աէթեանի պաշտամունքը, գիրք ունենալով չէր բաւարարուեր ինք, կը կարգար ձեռք ձգածը, կը բարձրանար կարգալու երկրորդ արժանիքէ՛ն՝ ալ վեր, միտք կը պահէր կարգացածին առանցքային բաժինը եւ իր արտակարգ ընկալչութեամբ կը տարբարւոյն միտքը մնացածը, կ'անջատեր ոսկին եւ անով կը լուսաւորէր համապատասխան կամ մերձաւոր հարցերը, շրջապատը:

Գիրքերու աշխարհին մէջ անհուն էր Պր. Աէթեանի խանդակաթ գոյովը մասնաւորաբար հին մատենաներու հանդէպ, որոնցմէ հասած իւ-

բաքանչիւր մատուցի համար հոգի կու տար՝ ինչպէս կ'ըսեն, եւ ոչինչ կը խնայէր անոնց ձեռքբերման օգտին:

Ականատեսի վկայութիւն մը.

Տարբեր մայրաքաղաքներու կամ ոստաններու մէջ հայկական հին հրատարակութիւններ յայտնաբերող ու յայտնաբերուած իւրաքանչիւր գործ ծախու հանող ուսուցիչ մը, հանգուցեայ Արտաշէս Տէր Գէորգեան, օր մը շուրջ մէկուկէս զար առաջ հրատարակուած հատոր մը ներկայացուց Պր. Սէթեանին: Լաւ չենք յիշեր անունը, կազմը չենք մոռնար սակայն, շուրջ երեք հարիւր էջոց մագաղաթեայ մատեան մը: Մատուցողը երեք հազար լիբանանեան ոսկի պահանջեց անոր համար: Երե՛ք հազար: Ժամանակը լիբանանեան տաղնապէն առաջ էր, սոլարի հաշուով այն օրերուն հազարէն վեր, պաշտօնեաներու միջին տարեկանէն աւելի մեծ գումար մը: Հափազանցութիւնը զգացնող ծախս մը ուրուացաւ Պր. Սէթեանի դէմքին, բայց առանց առարկութեան բացաւ գանձարկող...: Եւ տարիներու ընթացքին այսպէս քանի՜ մատեաններ ներկայացուցան իրեն եւ թ՛վ կրնար կշռել արժէքը այս նախանձախնդրութեամբ ու այս գնով կազմուած գրադարանին, որ անգարմանելի հարուած մը ստացաւ պատերազմի ընթացքին: Մշակութային ճշմարիտ աղէտ մը, հազա՛ր ափսոս:

Կատարենք լրացուցիչ հաստատում մը.

Պր. Վահէ Սէթեանի ապրումներուն մէջ Վեհափառին առանձնացուցած վերոյիշեալ պաշտամունքին հետ լռելեայն կը հասկցուի թէ՛ւ չըսածին բաժինը, բայց ենթական մօտէն ճանչցած բլլալու բախտը ունեցած մարդոց համար անկարելի է դիմանալ փորձութեան ու չըսել քանի մը խօսք թերեւս շատ քիչերուն ծանօթ այն իրականութեան մասին, որ գիրքերուն հանդէպ ունեցած իր պաշտամունքին առընթեր՝ Պր. Սէթեան ունէր եղբայրական ու հօրենական կապեր գիրք արարող դէմքերուն հետ: Խօսքը, այս պարագային, արդէն դասական գարձած գրողներու գործերը հրատարակելու, արխիւները պատրաստելու, յուշի պատաստիկները փրկելու ամէնօրեայ իր հետապնդումներուն ու հոգածութեան չի վերաբերիր այնքան, որքան կը վերաբերի իր մօտն ու հեռուն ապրած ու ապրող ժամանակակից գրողներուն, որոնք յաճախ վայելիցցին իր բարոյական ու նիւթական հովանաւորութիւնը: Դուրս գանք անորոշութենէն ու տանք անուններ: Այսպէս, Պր. Սէթեանի հոգածութիւնը լայնօրէն ու մեր աչքին առջեւ վայելցցին Սփիւռքի մէջ վաստակած առաջին դէմքերէն Կոստան Ջարեան, Ջարեանէն ետք հրապարակ եկած Անդրանիկ Ծառուկեան, Եզուարդ Պոյաճեան եւ յաջորդ սերունդէն Լուսասոս, իր հերթական խենթութեանց տարիներուն մանաւանդ, Պէլրութիւն միւնչեւ Փարիզ: Առանց Պր. Սէթեանի խորհուրդներուն, առաջարկներուն, հետապնդումներուն, ստեղծած հրատարակչական ճնարարութիւններուն հաւանաբար բազմաթիւ հատորներ լոյս պիտի չտեսնէին, պիտի չմէկտեղուէին մեծարժէք ձեռագիրներ եւ պիտի չկազմուէին կարգ մը խոռոչից դէմքերու արխիւները, որոնց փրկուած մասը մաս կը կազմեն այսօր մեր ազգային հարստութեան:

Պր. Սէթեանի բարոյական կենսագրականին բոլոր երեսներուն մանրամասնութեանց մէջ չենք կրնար մխրձուիլ հոս, բայց չենք կրնար նաեւ

Տարեանցի ակնարկով մը չըսել, որ անասմանափակ էր անոր հետաքրքրութեան շրջանակը, անդիմադրելի՝ ճանչնալու ու վայելելու պապակը, եւ անկասելի՝ իր թեւածումները համաշխարհային ոլորտներուն մէջ: Գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն եւ արեւելեան լեզուներու իմացումին շնորհիւ ան ամբարած էր ճանաչումներու ճոխ մթնոլորտ մը, քիւրեկացուցած էր տեսակետներ, եւ երաժշտութեան, նկարչութեան, քանդակագործութեան եւ միւս արուեստներու համաշխարհայնօրէն նուիրագործուած գլոխգործոցներուն մասին իր տեսակետները կշիռ տնէին նոյն մարզերուն մէջ համբաւուած ներկայացուցիչներու նժարներուն: Պիտի դառնանք սակայն եւ պիտի ընդգծենք կրկին, որ հարազատ արիւն մը կրող բոլոր ընտիր խառնուածքներուն պէս իր հետաքրքրութեանց կիզակետը եղած էր ու կը մնար մեր արուեստագետներուն նուաճած հարստութիւնը, իր առաւելագոյն գորգուրանքին առարկան քաղաքակրթական ու մշակութային մեր արժէքներն էին, մագաղաթային, քանդակային, ձեռագրային, ձեռագործային մատուցները, իրենց յարակից գանձերով՝ հին գորգ, հին դրամ, կեիք, մեր բնազդին, մեր արիւնին, ակնարկին, իմաստութեան թէ բնաւորութեան գրոշմը կրող ամէն արտայայտութիւն:

Անդրանիկ Մառուկեանի եւ Եղուարդ Պոյաճեանի հետ յաճախ կը հանդիպէինք Ալկյան փողոցի իր գրասենեակը եւ մեր միտքը շարժող բազմաթիւ հարցեր հօն կը գտնէին իրենց լուծումները, իր հազուագիւտ հատորներու էջերուն կամ առասպելական իր յիշողութեան սփռած լոյսերուն ներքեւ...

Մենք նոր բան մը կարգացած կամ լսած կ'երթայինք մօտը, բայց կը տեսնէինք, որ մեզմէ առաջ կարգացած կամ լսած է մեր հազորգած նորութիւնը:

Մենք կը կարծէինք, որ մեր լեզուն ըստ բաւականին կը ճանչնանք, նրբերանգի մը մասին վերջին խօսքը ինք կ'ըսէր:

Մենք կը յաւակնէինք ծանօթ ըլլալ հայ գրականութեան ծալքերուն, յայտնութեան մը նորութիւնը իրմէ կ'իմանայինք յաճախ:

Այն անձնաւորութիւնը եղաւ Պր. Սէթեան, մնաց, է՛, որուն ներկայութեան մարդ մշակութային ասպարէզներուն ասպահով կը զգար ու կը զգայ ինքզինք...

Պ. Ա.

ԼՈՍՍ ՏԵՍԱՆ

«Լիպարիտ Նազարեանց»


Արուեստարան, գրող եւ հրատարակաբար Լիպարիտ Նազարեանցի գրական-հրատարակարական գաստակր կորուստէ փրկելու եւ հայ գիրի ու մշակոյթի այս բազմակողմանի նուիրեալը նորահաս սերունդներուն ծանօթացնելու նպատակով, «Յուսարեր» մշակութային ընկերակցութիւնը 1991ին լայս ընծայեց «Լիպարիտ Նազարեանց» խորագրեալ հատորը:

Հ.Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան առիթով հրատարակուած երկերու այս հատընտիր ժողովածուի աշխատասիրած ու խմբագրած է «Եզրիդ» տասնայ վաստակաշատ երգահան, խմբագրար, երաժշտագէտ ու մանկավարժ Երուանդ Յակոբեան»։ Հատորի կազմութեան աշխատանքներուն իր մասնակցութիւնը բերած է նաեւ Մարկրիթ Յակոբեան:

327 էջերէ կազմուած «Լիպարիտ Նազարեանց» անուն հատորը կը բաղկանայ չորս բաժիններէ, — «Լիպարիտ Նազարեանցի կեանքն ու ստեղծագործութիւնը» (աշխատասիրութիւն՝ Երուանդ Յակոբեանի), «Ժողովածու երկերու», «Թատերայտադ» եւ «Յանելուած»:

Հրատարակիչներու կարճ նոթէն ետք, «Կազմողին կողմէ» խորագրեալ ներածականով Ե. Յ. ընթերցողին կը ներկայացնէ երկու տասնամեակ շարունակ եզրկատասայ մշակութային կեանքին վրայ իր յատակ գրողը ձգած Լիպարիտ Նազարեանցի մասնորականն ու հրատարակաբարը, ապա՝ խմբագրական այն առարկայական մտեցումը, որ ուղեցոյց հանդիսացած է վերջինիայ ժողովածուի խմբագրական աշխատանքներուն:

Հատորն ու անոր հեղինակը բնութագրող սեղմ տողերուն կը շարձրգէ Երուանդ Յակոբեանի մուսայուն աշխատանքներուն:



տասնութիւնը՝ «Լիպարիտ Նազարեանցի կեանքն ու ստեղծագործութիւնը»: 41 էջերու վրայ երկարող վերջնայ մեկնաբանութեան, Ե. Յակոբեան գլխաւոր երկու մասերով նախ կը ներկայացնէ Լիպարիտ Նազարեանցի կեանքը եւ հատարակական գործունէութիւնը՝ Երուանէն մինչեւ Մոսկուա, Պերլին, Քիֆլին, Պոլիս, Սոֆիա, Քիֆլին, Մոսկուա, Պերլին, Լոզան ու Փահրէ, իրրեւ գաշնակցական խմբագրար եւ քաղաքական գրծիչ, ապա՝ այս նուիրեալ մասնորական-գրագէտին ըստեղծագործական վաստակը:

Այսպէս, հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ նշանակութիւն ունեցող քաղաքական հանդիպումներու, ժողովներու, համագումարներու եւ քաղաքական ու մշակութային թուականներու մէջ Հ. Նազարեանցի տեղն ու կշիռը արժեւորելէ ետք, աշխատասիրութեան հեղինակը կը շնուի արուեստարան, արուեստի թննադատ, բանաստեղծ ու թատերագրար, ինչպէս նաեւ՝ երաժիշտ եւ երաժշտական ու կերպարուեստի ընծայատ Հ. Նազարեանց գաղափարա-

պաշտ մտաւորականը ներկայացնելու աշխատանքին:

Փաստացի տուեաններու, վաւերացրական ճշգրիտ տեղեկութիւններու եւ ենթական ընտրող վկայութիւններու վրայ հիմնուած այս ամբողջական աշխատասիրութեան կը յաջորդէ «Ժողովածու երկերու» խորագրեալ գլուխը, ուր 56 էջերու վրայ ընթերցողին կը ներկայացուին ընտրող նմուշներ Լ. Նազարեանցի արձակ քանաստեղծութիւններէն, պատմութեան և ռուսերէն ու գերմաներէն կատարած լափածոյ թարգմանութիւններէն:

Հատորին առիժի բաժինը կը սրբանուն Լ. Նազարեանցի արուեստի զանազան սեռերու եւ բնագաւառներու նըսիրուած յօդուածները (175 էջ), որոնք, իրենց կարգին, քառուած են ինքն-նարածանումներու: «Յուսարեք» օրաթերթի 30ական եւ 40ական թուականներու հաւաքածոններէն քաղուած եւ խնդրոյ Հատորին մէջ ներառուած 78 յօդուածները կ'ամփոփուին «Արուեստարան», «Վուխուսական», «Հայ երգի մասին», «Երաժշտական», «Թատրագիտական», «Սիրամոլշական», «Ուսման մասին», «Հրապարակագրական» եւ «Ամսօրաց ղեմ-

քեր» խորագրերներուն տակ: Օրաթերթային ծաւալ ունեցող վերոնշիւ յօդուածները, հակառակ իրենց խիտ տողերուն, ամբողջական գաղափար մը կու տան բազմերես հետաքրքրութիւններու տէր մտաւորական Լիպարիտ Նազարեանցի մասին:

«Երբ մատակոտը կ'իջնէ» թատերախաղը, որ առաջին անգամ հրատարակուած է 1923ին, «Հայրենիք» ամսագրի մէջ եւ 30ամեակ մը ետք լոյս տեսած առանձին հատորով, ինքնակենսագրական բնուիթ ունեցող եւ Գերմանիան իրրի թատերախաղը ընտրած տրամ մըն է, որ «հեղինակին այդ տարիներուն ունեցած անկուսակցական տրամագրութիւններուն եւ փոթորիտ հոգիին արեւազանգը կը հանդիսանայ»:

Լիպարիտ Նազարեանցի երկերու ժողովածուն կը փակուի «Յուսարան» բաժինով, ուր տեղ գտած են եզրկատակայ մշակութային-հասարակական կեանքին վրայ լստակ դրոշմ ձգած այս վաստակաշատ մտաւորականի յիշատակին նուիրուած Գէորգ Զեքիեանի եւ Արսէն Երկաթի հեղինակներն ու Լ. Նազարեանցի անսխալ մէկ բանաստեղծութեան ձեռագրին պատճէնը:

«Կարմիր փոթորիկը»

(Հեղինակ՝ Ծատուր Պէրպէրեան. ֆրանսերէնի վերածնց՝ Մարկրիթ Փերշ)

Հեղինակին կենսագրականը

Աւագանի անունով Աստուածատուր՝ Ծատուր Պէրպէրեան ծնած է 1901ին, Խարբերդ նահանգի պատմական Գոժ գիւղը: Ծատուր մանուկ հասակին կը սկսի յաճախել զգրոց՝ գոհացում ապու համար ուսումնաստեղծ ծնողքին: Հոն վեց տարի անընդհատ կ'աշակերտի իր առաջին օւսուցիչներէն Պետրոս Վարդանեանին: 1914ին կը մանկ գրէ: Բայց Համաշխարհային Առաջին պատերազմին հետեւանքով կ'ընդհատուի երկրորդական ուսման ընթացքը, անկատար ձգելով ընտա-

նիքին կրպը: 1915ին հայրը, մայրը եւ ապա ամբողջ գերդաստանը զոհ կ'երթան թրքական խժոճութիւններուն: Ինք հրաշքով կազատի հաժաղանէն եւ կը դառնայ մեծահարուստ քիւրտի մը ծառան, կրկնով գերութեան տառապանքները:

1919ի զարնան ինքզինք կը գտնէ Խարբերդի որբանոցը, ուր կը պատրաստուի Եփրատ գոլէճի մուտքի քընտնութեանց: 1922ի աշնան, Ծատուր, ուրիշ որբերու հետ՝ կը հեռանայ որբանոցէն եւ կու գայ Պէլրութ, ապա կը հաստատուի Փրանսա: Ատեմ մը կ'աշխատի անհասանելի մէջ եւ քիչ ժամանակ անց կը փոխադրուի Մարսէլ: Եթէր տարի ետք, կ'անցնի Փարիզ եւ կը ծանօթանայ նոր գեմբերու:

Գիշերային դասընթացներու հետեւելով Մատուր Պէրպէրեան կը կատարէ գրական իր առաջին փորձերը: Եօզուածներով կ'աշխատակցի հայկական պարբերական մամուլին: 1967ին, Ծրանասահայ մտաւորականներու ընկերակցութիւնը կը պատուէ Մատուր Պէրպէրեանը «Ա. Հարենց»ի անուան մրցանակով իր ամբողջական երկերուն համար:

Մատուր Պէրպէրեան հայերէնով հրատարակած է հետեւեալ գործերը. «Յաւշի Յամբայ» (1955), «Կարմիր փոթորիկը» (1958), «Ծննդավայր» (1967), «Ժողովարդ մը, որ չուզեց մեռնիլ» (1984), «Քարթ փոսքալ» (1990), «Արձագանգներ» (1990), «Հայկական Սփիւռքի ողբերգութիւնը» (1991):

«Կարմիր փոթորիկը» անուն գործի մ ճիւղը

Հայկական անդորր եւ խաղաղ գիւղ մը: Տղամարդիկ գարնան արեւին տակ կը պարապին հողագործութեամբ, մանուկները դպրոց կ'երթան, իսկ գիշերը ամէնքը կը վայելեն ընտանեկան օժանդակին շերտութիւնը:

Երկու ընտանիքներու զուակները՝ Ջուէն, հայրենիքի սիրով տուրուած երիտասարդ մը, եւ Հայկուհի՝ զգլխիչ վեղցկույթեամբ աղջիկ մը, զիրար կը սիրեն: Երկու սիրահարներուն ծնողները զոհ կ'երթան թուրքերու գործադրած հայասպանութեան: Որքերը կը բաժնուին իրարմէ: Օր մը պիտի կարն-



նա՞ն զիրար գտնել: Ջուէն պիտի կարնա՞յ հայրենիքի համար կոտուելու իր երազը իրականացնել: Ան կրտէ... «Եթէ դուք կը վախճաք անոնց սուրէն, մեր գործն է, ես չեմ վախճար: Եւ յետոյ՝ ի՞նչ կը մերկայացնէ սուր մը: Անիկա կը բանայ վերջ մը, որ կը ցայցնէ ու յետոյ կը մոռցուի: Միշտե՞ս անպատուութիւնը տառապանք մըն է, որ կը նուաստացնէ, որ կը մաշեցնէ, կը սպաննէ»:

Այսպէս, պատմական այս տեքստին մէջ, «Կարմիր փոթորիկը» կը պատմէ երկու երիտասարդներու սէրը, տառապանքներն ու լոյսերը, զորս Մատուր Պէրպէրեան կը նկարագրէ խոր զգայնութիւններով:

Ներկայիս, 91 տարեկան՝ Մատուր Պէրպէրեան կը բնակի Փարիզ:

ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ԼՈՒՐԵՐ

«ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒՔԵԱՆ»Ի ԱՆՈՒԱՆ ՄՐՑԱՆԱԿ

Արցախեան ազգային ազատագրական նորոշեայ պայքարը հայրենասիրութեան փորձաքար զարկաւ մեր ժողովրդի համար:

Այս փորձութեանը անհաղորդ չըմնացին նաեւ լրագրողները, որոնցից շատերը իրենց գրչով, իրենց նախրումով, իրենց տրանսկրիպտով եւ բառ հարկի՝ իրենց գէնքով միացան ազատագրական պայքարին: Նրանց թուում էր եւ «Ազատամարտ»ի թղթակից

ՆՈՐԱՅՐ ՄԱՐՈՒՔԵԱՆ:

Նորայրը «ուռջին գծի տղայի» իր բարոյականութեամբ ազատամարտի

ժամանակագիրը եղաւ եւ ազատամարտիկի հոգու թարգմանը: Նա զոհուեց ինքնակիզը ձեռքին եւ իր վերջին տողերը գրեց սեփական արեամբ:

«Ազատամարտ»ի խմբագրութիւնը յայտարարում է Նորայր Մարութեանի անուան մրցանակաբաշխութիւն՝ արցախեան ազատամարտին նուիրուած յաազոյն ակնարկի, ռեպորտաժի համար: Սահմանուած է «Նորայր Մարութեան»ի անուան մրցանակ, որը կը տրուի յաազոյնին («Ազատամարտ», 28 Փետրուար - 4 Մարտ 1993):

ԱՐԴԷՆ ԱՏԱՑՈՒԵԼ ԵՆ

«Ազատամարտ» շարաթաթերթի խմբագրութիւնը արդէն ստացել է հայ ազատագրական պայքարին ու մեր ազատամարտիկներին նուիրուած արեւստի եւ զբաղանդութեան յաազոյն սահղմագործութիւնների մրցանակաբաշխութեանը ուղարկուած առաջին գործերը: Դրանք սեղ կը գտնեն «Ազատամարտ»ի գրական-գեղարուեստական յանդուածի՝ «Վարուժան»ի էջերում, եւ այդպիսով կը ներկայացունեն նաեւ հանրութեան կարծիքին:

Ուրախայի է, որ մրցանակաբաշխութեանը մասնակցում են ո՛չ միայն հայրենասերակ, այլև՝ արտերկրի մեր զբողները, նկարիչներն ու երգահանները:

Ներկայացնում ենք մրցանակաբաշխութեան յանձնարարի կազմը.

- ԱՇՈՏ ԱԴԱՄԵԱՆ
- ՌԱԶՄԻԿ ԴԱՒՈՑԵԱՆ
- ՍԷՅՐԱՆ ԽԱԹԱՄԱՃԵԱՆ
- ԵՌԻՐԻ ԽԱԶԱՏՐԵԱՆ
- ՌՈՒԲԷՆ ՅՈՒԱԷՓԵԱՆ
- ՄՈՒՇԵՂ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ
- ԱՐՄԷՆ ԵԷԿՈՑԵԱՆ
- ԱՐՉԱՄ ՈՍԿԱՆԵԱՆ
- ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆ
- ԱՂՈՒԱՆ ՎԱՐԴԱՆԵԱՆ
- ՎԱՀԷ ՕՇԱԿԱՆ

Յանձնարարումը 1993 թ. տարեփերջին (նախապէս յայտարարուած էր Յունիսին) կ'ամփոփի եւ կը հրատարակի մրցութի արդիւնքները:

Նախատեսուած են մի քանի մրցանակներ («Ազատամարտ», 28 Փետրուար - 4 Մարտ 1993):

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱՆ

Գարեգին Բ. Կաթողիկոս

**ԵՍ ՅԱՂԹԵՑԻ ԱՇԽԱՐՆԻ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱՅՈՒԹԻՒՆ**

(Թոհեր)

Անթիլիաս – Լիբանան, 1993, 206 էջ

Աբրահամ Ալիքեան

ԾՂՐԻԹԸ

(Բանաստեղծութիւններ)

Պէյրոթ, 1993, 80 էջ

Յարութիւն Պէրպէրեան

ԱՆՏՄԱՆ ԵՂԱՆԱԿ

(Բանաստեղծութիւններ)

Մոնրէալ, 1993, 90 էջ

ԼԻՔԱՆԱՆ

Հատավաճառ (զոյգ թիւ)
Տարեկան բաժնեգին

1500 Լ. Ռ.
9000 Լ. Ռ.

ՍՈՒՐԻՍ

Հատավաճառ (զոյգ թիւ)

80 Ս. Ռ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին

40 Ամերիկեան տոլար

پاكين
مجلة شهرية ، ادبية فنية وعلمية
المدير المسؤول
السيد ارتين كارنيك قرانجيان

•

PAKINE
REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire
Dr. A. KHATANDJIAN

•

Բ Ա Գ Ի Ն
ԱՄԱՍԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Խմբագիր
ՊՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ

Խմբագրութեան անդամ
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Հասցէ՝
Centre Culturelle SHAGHZOYAN
Bourdj Hammoud - Liban